



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ltn  
1669

1999

# ՀՌԻՓՄԻՄԷ

ԿԱՄ

ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀԵՅՇԱՏԱՆԻ

ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂՅՈՒԹԻՒՆ

ԱՆՑԻՔ ՏՕԼ ԹՈՒԱԿԱՆԻ ԾՆՆԻԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ



Գրեաց Ծերսահն

Ի ԱՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ



ՈՒՍՏՈՎ (ԳՆՆԻ ՎԵՐԱԿ)

ՏՊԱՐԱՆ ՅՈՎ ՀԱՆՆՈՒ ՏԷՐ-ԱՐԻԱՀԱՄԵԱՆ

1876—ՈՅԻՆ.

ՀԵՂ  
1669





Հ ՈՒ Փ Ա Ւ Մ Է

Ասի գիտելու թէ Աստիաւն է կրկին ծնել  
 իւր ձորէն. է՛՛ 13.  
 Литоер. Д. Сироткина. Дозволено Цензурою  
 К. Сем. Пашкановъ.

ՀՈՒՓԱՒՄԷ

ԿԱՄ

ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՊԵՏԱԿԱՆ ԻՆՏԵՆՏԵՆԳ ՀՈՒՓՈՒՄԻՆ

ԱՆՑԲ 301 ԹՈՒԱԿԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ ԲՐԻՍՏՈՒՐ

Литоер. Д. Сироткина. Дозволено Цензурою



ՌՈՍՏՈՎ (ԴՆԵՔ ԳԵՐԱՍ)

ՏՊԱՐԱՆ ԹՈՎՆԱԾՈՒ ՏԵՐ-ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

1875-ՌՅԻԳ

ՄԵԾԱՐՈՅ ՀԵՅԱԶՆ, ԱԶՆՈՒԱՀՈՒԻ ԱԶԳԱՍԷՐ  
ԳՐԻԳՈՐԻ ԹՈՎԱՍՏԵԱՆ ԵԳՆԱԻՈՐԵԱՆ.

Հնդեաասան դարք են գլել գլորվել այնուհետև մինչ մեր  
բազմահոգակ ազգի նախնեաց և մեծամեծ գործովք  
յղիացեալ աշխարհի մէջ տեղի են ունեցել այս անօրինակ  
ճգնութեան անցքն, որ ռահադուուն է գտնվել մեր Քրիս-  
տոնէական Արօնի Առաւորվելոյն, և Պարթևազեան Գրի-  
գորի երկամբք՝ Հօրն Արկնաւորի որդեգրելոյն. և յայնմ օրէ  
սկսեալ մեր Մայրն Աթոռոց Սուրբ Էջմիածին՝ այս ազգա-  
պարծանք եղելութեանց յիշատակն անջինջ է պահել իւր  
սիրածին զաւակաց սրտերի մէջ, զնոյն ինքն գնաշխար-  
հիկ ճգնուհին գլուխսիսմէ ի գիրկս իւրոյ Մայրութեան իսան-  
զակաթ սիրով գորովանաց զգուելով:

Մինչդեռ ես մտածում էի այս հազար և հինգ հա-  
րիւր եօթանասուն և հինգ ամեայ դիպուածոց հնացած  
յիշատակն նորոգել մեր համազգեաց մտաց մէջ, մերձակայ  
մայրաքաղաքէն ստեպ հասանում էր լսելեացս Մեծարոյ Հա-  
յազինդ զանազան սիրագործութեանց ուրախառիթ լուրն,  
և աստուածապարզ և հարստութեանդ յօգուդ ազգի կի-  
րառութեամբ՝ այլոց բարի նախանձ վառելոյ քաջայարմար  
բարի օրինակօք ծաղկապսակաւորութիւնդ. և թէպէտ չու-  
նէի ո՛չ երես առ երես ծանօթութիւն, և ո՛չ գրաւորական ինչ



Доволено Ценсурю. С.-Петербургъ, 20 Ноября 1874 года.



41669-60

3B. 1674

հաղորդակցութիւն, սակայն միայն բարի համբաւոյդ յաճախութեամբ կազդուրեալ՝ ցանկանում էի այս իմ աշխատութիւնս նուիրել Ձեր անուան, քաջայոյս գոյով որ Վուք կարէք գնահատել:

Այս օրերս լսեցի ուրախութեամբ սրտի և հոգւոյ, որ Սեծարոյ Հայազնդ ի ձեր հարանութիւն էք խօսել իմ անգուգական, բարեկամի՝ հաւատարիմ որդւոյ Հայրենեաց դուստրն, որոյ գերդաստանի մէջ տեղի ունեցաւ այս տարւոյ առաջին քառորդն եղերական դիպուած մի, որով Քոկենաց նոր կցորդ ընտրածի բարեպաշտ և մատաղամարդ Սայրն յարտասուս ընկղմեաց իւր երբեմն բարեբաստիկ տունն, յանդառնալի ուղեգնացութիւն հեռանալով, և որով զաւակունք նորա օրիորդք, յորոց մի էր և Քո ընտրեալն ի հարանութիւն՝ հանգոյն ընկերաց այս պատմական անցից դիւցազնուհոյն, անսիտի արտօսը ցողելով տեղատարափ թացին նորա դիակնացեալ մարմինն, և բոլոր գերդաստանի ուրախութիւնն ընդ նմա թաղեցին ի հող գերեզմանի:

Աս՝ որ ըստում ժամանակաց յարատևութեամբ տեսել էի այն ժրագլուխ կինն՝ որպէս այդի վայելուչ յանկինս երջանիկ տանն այնորիկ, և զզաւակունս նորա որպէս մատաղատունկս նունենեաց շուրջ զօրհնեալ սեզանովն նորա, ի փղձուկ սրտիս ուխտեցի, ձեռամբ նորոյ փեսայիդ նորա և որդեգրիդ տեսունագրելով այս երկասիրութիւնս անմոռանալի յիշատակի նորա, որպէս փունջ անթարշամ ծաղկանց դնել ի վերայ գերեզմանի նորա. ձեռամբ Քո ասեմ, ով մեր ամենասիրելի Հայրենեաց Հայաստանի պարծանաց Միւնեաց քաջաց աշխարհի բարեշատ աւիդ բարունակ, որ աւասիկ հան-

դերձեալ ես քո ուրախաբեր փեսայութեամբ մտանել յայն տուն թախծեալ, ընդ երեկոյս հանգուցանել զլալիս, և առաւօտուց հրաւիրել ի նոյն զցնծութիւն. զի դարձցի սուգ նորա յուրախութիւն, զերծցին քուրձք նորա և զգեցցին զբերկրութիւն:

Այսու խորհրդով ողևորեալ պարծանս ինձ համարիմ այս իմ աշխատութիւնն ուղերձել Սեծարոյ Հայազինդ, տիրապարգև ճոխութեամբ բարգաւաճելոյդ, զի որդիական սէր ազգասիրիդ հանցէ ի ներքուստ փոշոյ հնութեան զբազմադարեան կոթող յիշատակի, ըստ տենչանաց և կանգնեացէ զայս յաւիտենական արձանագիր յիշատակաւ որպէս անուան հանգուցեալ զղքանչիդ Տիկնոջն Սրբուհի Նդիայեան խրտձեան, զոր անողոք վիճակ օրհասի զրկեաց ի սիրալիր տեսութենէ որդւոյդ և փեսայիդ, նոյնպէս և նոր օրդեգրութեանդ, որով յաւեժացի սրտեռանդն մտերմութիւն որդւոյդ և նոր փեսայիդ, և երախտապարտ հայրենակցաց մերոց առիթ ընձեռեացէ օրհնել զպտուղս տարւոյ քաղցրութեան քո, անմահութեան աւանդելով զբարեհամբաւ հայրենասէր առաքինութիւնս ջերմեռանդ զաւակիդ նորա:

ՊԱՐՈՒԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ



թէ որոյ աշխատութիւն է, և երբ է ի լոյս ընծայեալ, և ո՞ր, ոտանաւոր է, թէ ընդարձակ շարադրութիւն. նոյնպէս գլխովին անձանօթ եմ, թէ կայ արդեօք ուրեք այս առարկայի վերայ գրուած ինչ մեր կամ օտարազի լիզուաւ, բայց ի Մովսիսի խորենացոյ ներբողէն, և Նովիտաս Վաթողիկոսի անլուդական „Անձինքէն“: Բայց ես սորա գրութեան ժամանակն ոչ առաջինն և ոչ վերջինն եմ ունեցել առաջևս, և թէ ինչ ինչ ի նոցանէ կան սպրդեալ սորա մէջ, շարժառիթն ոչ այլ ինչ է համարելի, բայց եթէ միայն իմ անուշադրութիւնն:

Գ. Գ.

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այն գիտաւորութեամբ չեմ ի լոյս ընծայել այս երկասիրութիւնս, որ թատերախաղի հանդոյն հանդիսանայ տեսարաններ ի ստեաններումն, այլ որ ծառայէ ազգի ընթերցասիրաց որպէս տեսարակ ընթերցանելու հաց՝ հաւասար այն բիւրաւոր տեսարակաց, որովք ճոխ է մեր ազգային ընթերցարանն, և երբէք չէ կարօտել սորա նմանեաց: Մական եթէ որ բարեհաճի երբ և իցէ գրել այս առարկայի վերայ թատրոնական խաղարկութիւն ինչ, սորա մէջ կարող է գտանել նիւթ բազում, եթէ միայն կամենայ արդէն առձեռն պատրաստէն օգուտ քաղել: Իսկ եթէ այս խի բանասիրութիւնս կամենայ համառօտել, կարող է երկրորդ յեղանակն գրելովին գանց առնել. և առ առաւելն՝ առաջինն և երկրորդն համանգամայն ի բաց դնել, որով կհամառօտի կիսով չափ: “Նոյնպէս կարող է՝ երրորդ, չորրորդ և հինգերորդ յեղանակներէն բազում ինչ յապաւել: սա խոր պարունակութենէն չի կորուսանէր ինչ:

Թէպէտ բանաստեղծութեան աւելի սանձարձակութիւն եմ տուել, բայց և պատմական աւանդութենէն չափազանց շեղեալ չեմ, այլ կամեցել եմ ցոյց տալ, թէ անցքն այսպէս ևս կարէր տեղի ունենալ: Այլ թէ ումանք դիւաց և գերբնական աներևութից հաղորդակցութենէն դայթակղութեան շարժառիթներ կամենան քաղել, առաւել նախընտիր կհամարէի եթէ բանաստեղծական կամապաշտութեան գրէին, քան թէ միջնադարեան ազգեցութեան, յորմէ նշխարք իմն համարին պահեալ: Չայնք հնչեալք ի սանդարմասից անդնդոց — որոց ոչ մտապիւր լինին խաղութեան անցից: Գոթողիայի յառաջարանութեան մէջ կայ յիշած, որ Հովսիսիմն անուամբ ունեցել ենք մէկ եղերիբրութիւն. այլ ես այն տեսած չեմ, և չգիտեմ:

Handwritten text in Armenian script, likely bleed-through from the reverse side of the page. The text is dense and difficult to decipher due to the cursive style and some fading.

ՆՈՒՓՍԻՍ  
ՓՐԿՈՒԹԻՒՆ ԶԱԹԱՍՏԱՆԻ

ՅԵՂԱՆԱԿ ԱՌԱՋԻՆ

ՊԼՏԱՆԻ Ը

(Տեսարանն ցուցանէ զՍարգսիէ և նոստալ է գահ է դժոխս, ընկղմեալ է խորս արտամութեան:  
Իերձնայ Բելիար, և տեսեալ զԹախիծ նորս՝ զարմանայ.)

ԲԵԼԻԱՐ

Բեզ, զըւարթնն, չէ վայելում ոչ արքամութիւն, ոչ թախիծ,  
Գու չէի՞ր որ՝ երկինք վերին քեզմով էք միշտ բերկրալից:

ՍԱԴԱՅԷԼ

Իմ բերկրութիւն քողարկիւմ է տաաւաութեան ըստերով,  
Նըզօր Որդին նայաստանի բուռն է հարեւ պինդ ձեռով:

ԲԵԼԻԱՐ (գժկամակ)

Ի՞նչ գործ ունի այն նըզօրն նայաստանի ծագաց հետ,  
Որ նայկակայ ժամանակէն հոգին և սիրտ իւր մեզ ետ:

ՍԱԴԱՅԷԼ

Գիտեմ, զիտեմ, Բելիար ջան, մեհեաններ էլ շատ ունին,  
Եւ մեզ պաշտող երկրպագուք շատ են և էլ շատ կըլինին,  
Բայց ի՞նչ օգուտ մեհեաններէն, սոցին է զընում ձեռներէս,  
Իմ Ընահիտն պիտի մընայ Փայտի առջև սևերես:

Բ Ե Լ Ի Ա Ր .

Չարմանում եմ այդ խօսքերէդ, որ դու այդպէս վըհատ ես,  
 Ի՞նչ կայ, որ մենք չըկարենանք շուռ տալ, երբ և հրամայես.  
 Մոռացել ես այն շրջօրի քանի անգամ արածներն,  
 Եւ շայաստանն յախրջտակել մեր ձեռքէն դուն դործածներն.  
 Սարողացաւ իւր կամքն առնել, թողի՞նք մենք ազգն իւր ձեռքին,  
 Գարձեալ ազգ չէ՞ր, որ զինքն զոհ էր բերում միշտ մեր կամքին:

Ս Ա Դ Ա Յ Է Լ .

Ճին անցքերն ես ի միտ բերում, որպէս թէ ես մոռցել եմ,  
 Որ շրջօր իւր անձեռագործ պատկեր կանգնեց մեզ ընդդէմ.  
 Խղզեց ցաւոյ անլոյծ կապանքն, որով կապուած էր Աբգար,  
 Յետոյ քարոզ աշակերտաց հասցընում էր անդադար:

Բ Ե Լ Ի Ա Ր .

Եւ ի՞նչ . միթէ քաջութիւնն, մէկ սեղ նըւանդ երեցաւ,  
 Եւ կամ շրջօրն մեր հընարներն խախտանէ ինչ մարթացաւ.  
 Ո՞չ կարացինք այն իւր պատկեր, որ ապում էր Գաստառակ,  
 Վարով ցեխով անհետ առնել զըրան զըլխին յաշտարակ:  
 Կամ առաջին աշակերտին՝ հանգերձ հըմուտ ծերերով,  
 Չր կարացի՞նք լուռ համբացնել զարհուրելի վաղերով.  
 Վանի՞ անգամ առաքելոյ արխն հոսեց շայաստան.  
 Որ աշխարքում այնքան թուով աշակերտաց ոսկերք կան.  
 Թագաւոր չէ՞ր ինքն Սանատրուկ, որ իւր դուստրն խողխողեց,  
 Ի՞նչ կամեցանք, որ զլուխ չսծինք, կամ մեր դէմ ո՞վ խիզախեց:

Ս Ա Դ Ա Յ Է Լ .

Ինձար՝ ես միթէ չէ՞ր Արաուազդին հասկացնողն,  
 Թէ Գրիգորն շայր Անակն էր Մեծ Խտարովու խողխողողն.  
 Երանի՞ թէ չըլիեր այնպէս, Գրիգոր երթայր Պարսկաստան,  
 Արաաշիրէն կամ Շաղուհէն ժառանգեր թագ պարթևեան:

Այն հանգամանք շատ փոխուեցան, էլ այն նախկին օրերն չեն,  
 Որ Գրիգորն վերայ ընկնի, շայք իւրեանց վերջն չըլիչեն.  
 Եր վըճիւ կայ շայաստանի բընակչաց և մեզ համար,  
 Այն երկրումն ոչ է մնալոյ անահատական մէկ տաճար.  
 Ես որ երեկ որս զընացի դէպ առ Աթու շրջօրի,  
 Լքսեցի թէ նոր հրաման է եղել յերկինս և յերկրի.  
 Որ մէկ աղջիկ դայ շայաստան մեր զօրութիւն խորտակել,  
 Եւ Սանդըխտոյ շաւղօք զայս այն շրջօրին հպատակել:  
 Այն օրիորդն ի պարանոցն ունի շեղ ինչ այն Փայտէն,  
 Որ սքանչելօք Պատրանիկէ ժառանգել էր արմատէն.  
 Խակոյն ասի Սամայէլէն, որ երթայ և խմանայ,  
 Թէ ի՞նչ աղջիկ այն Փայտն ունի, կամ թէ ո՞վ է՝ լաւ ճանչնայ:

Պ Ա Տ Մ Ե Լ .

Ս Ա Դ Ա Յ Է Լ, Բ Ե Լ Ի Ա Ր և Ս Ա Մ Ա Յ Է Լ:  
 Ս Ա Դ Ա Յ Է Լ (առ Սամայէլ):

Դու դարձել ես, թէ դեռ պիտի ապրապրանքիս նոր երթաս:

Ս Ա Մ Ա Յ Է Լ .

Չէ, զընացի և յետ դարձայ. ժըրութենէս կը խիթան.  
 Այն օրիորդն որանցի՞ հուսի գիտեցի մեր շատում,  
 Ի՞նչ ես կարծում. չօխիսիմէն է. կայ աներջան մէկ վանքում:

Բ Ե Լ Ի Ա Ր .

Պարանոցին էլ այն Փայտ կայր. դու տեսար այն փոքրիկ ծիւղ:

Ս Ա Մ Ա Յ Է Լ

Ես աղջրկան հաղիւ տեսայ, նորա շուրջ կայր այն Լըրկիւղ,  
Որ մեզ մէկ օր վեր երկրնքէն գըլըրել էր ի գեհեան:

Ս Ա Դ Ա Յ Է Լ

Կարելի՞ չէ արդեօք որ այն վանք փոխարկուի ի մեհեան:

Բ Ե Լ Ի Ա Ր

Թող այդ սնտօի մտածութիւնքդ. մեզ չէ այժմիկ պիտոյ Անք:

Ս Ա Մ Ա Յ Է Լ

Աքնի մէջէն այն աղջրկան երնէկ հանել կարենանք:

Ս Ա Դ Ա Յ Է Լ

Լաւ ասացիր: Մէկ լոյս ծագեց իմ մըտքիս մէջ, Սամայէլ,  
Ես կարող եմ այն աղջրկան կըռապաշտի կին անել.  
Միթէ քիչ կան լաւ պատանիք. թող հարս առնուն աղջրկան:

Բ Ե Լ Ի Ա Ր

Երբ մեզ վերէն վայր կործանող Աջն է նորին պահապան:

Ս Ա Դ Ա Յ Է Լ

Ի՞նչ փոյթ. միթէ՞ Նա վերըստին պիտի մեզ հետ վէճ մընի:

Ս Ա Մ Ա Յ Է Լ

Ա՛հգ ինչ պէտք է. իմ աչք սաստիկ խըստողում էր լոյս Փայտի:

Ս Ա Դ Ա Յ Է Լ

Չեմ կարող որ այն Փայտի տեղ անգին գոհար ակներով  
Նորա կուրծքն պըճնազարդեմ, որ Փայտն հանէ իւր ձեռով:

Բ Ե Լ Ի Ա Ր

Այդ ո՛վ գիտէ. գոհար ակունք կարե՞ն նորան շըլացնել,  
Որ նա այն Փայտ յօժարանայ իւր շըլնքէն հեռացնել:

Ս Ա Դ Ա Յ Է Լ

Կարելի է որ այն Աջն էլ օրիորդէն հեռանայ.  
Այն ժամանակ և Հռիփսիմէն ի հարկէ մեզ կը մընայ:  
Երթամք ի Հում, ուր Սամայէլ Հռիփսիմէին է դիտել,  
Տեսնեմք արժէ՞ այն երկիւղին որ մեզ է արդ շուրջ պատել (երթայ):

Պ Ա Տ Կ Ա Ն Ի Գ

(Տեսարանն ցուցանէ զանչուք խուց Մենաստանին, որ ի Հում, ուր Հռիփսիմէ ի ծունր էջ-  
եալ հանդէպ խաչելութեան՝ աղօթէ: Սողայէլ ի հեռուստ մերձենայ ի լուսանցոյց երդ  
յարկին և հայի):

Ս Ա Դ Ա Յ Է Լ (Միայնակ):

Ո՛վ... այս կուսին էլ խօսք չիւյ, գեղեցկութիւնն չափ չունի.  
Սորա առջև Հեղինէն էլ նըման է մէկ աղախնի.  
Ափրողիտէն մէքիչ կուգայր, բայց նորա դէմք շատ լերբ են,  
Ուր որ լինի այս օրիորդ՝ պիտի այլ գեղ ո՛չ յիշեն:  
Այսպէս չըքնաղ էր նախամայր, մինչ անմեղ էր՝ չէր խարված:  
Սարրա էլ շատ դեղեցիկ էր, Ռեբէկ, Ռաքէլ ընտրուած,  
Եւ Յուդիթ էլ, կամ Նսիթեր էլ և կամ Շուշան՝ լաւ էին,  
Իայց մէկ բանով այս աղջիկէն գոնէ պակաս կըլնէին.  
Սա, գիտես թէ, Մարիամն է կըրկին ծընել իւր մօրէն.  
Այսքան շքեղ վեհ օրիորդ ո՛վ էր տեսել դեռ մեզմէն.  
Եւ սրբան է Արարչապետն ընտրել յըզել Հայաստան.  
Միթէ վարժի՞չ պիտի դառնայ, կամ Տիգրանեանց քարոզ Տան,  
Ինչպէս Մագդաղ գեղն չըքնաղ օրիորդն Մարիամ,  
Կարմիր ձուով Տիբերի տանն, սա էլ կըլնի, թէ թոյլ տամ:

ՊԵՏԻՆԻ Կ.

(Մինչ Սառայել հայի սարեալ ընդ լուսամուտն, դայ առ նա Բեկար):

Ամենապատիւ Տէր....

Ս Ա Դ Ա Յ Է Լ (շնորհով):

Չայնդ կարէ:

Բ Ե Լ Ի Ա Բ (նեղեալ):

Մեծ զոյժ ունիմ....

Ս Ա Դ Ա Յ Է Լ (նշ հայելով յերես նորա):

Մեծագոյնն այսակեղ է:

Բ Ե Լ Ի Ա Բ:

Առաջնորդ մեր, մէկ ականջ գիր իմ բոխալի համբաւոյն:

Ս Ա Դ Ա Յ Է Լ:

Փակ են ականջքս, խելքս է տարել այս կուսանի չափ գեղոյն:

Բ Ե Լ Ի Ա Բ:

Ի՞նչ կոյս է դա... քո վեհ աթոռ կործանիւմ է Հայաստան:

Ս Ա Դ Ա Յ Է Լ:

Ի հարկէ որ կր կործանվի, թէ այսպէս գէնք բազմանան:

Բ Ե Լ Ի Ա Բ:

Օհնրին շատ մեծն Հայաստան է, զիս կենդանի է Գրիգոր:

Ս Ա Դ Ա Յ Է Լ (տարափելով յետս նայեցաւ):

Ի՞նչ ես խօսում, այ չար լեզու, պաշարեց անձնս դող բողոր.  
Գրիգոր ի՞նչպէս կարէ լինել վերստում ցարդ կենդանի:

Բ Ե Լ Ի Ա Բ (զայրացեալ):

Գրիգոր ի խոր վերապի անդ ի Հրեշտակէ պահպանի:

Ս Ա Դ Ա Յ Է Լ (անհարկն հետաքրքրութեամբ):

Կու քո աչքով տեսար նորան, թէ լրսածներդ ես ասում:

Բ Ե Լ Ի Ա Բ (ատամուներն կրծելով):

Աչքով տեսայ որ Հրեշտակի հետ իրնդադին էր խօսում:

Ս Ա Դ Ա Յ Է Լ (տարակուսեալ):

Մի՞թէ նորէն երկինց կամար պիտի փրչի գրլիններուս:

Բ Ե Լ Ի Ա Բ (յուսահատեալ):

Երեւի թէ էլ Հայաստան չի մընար մէջ ճանկերուս:

Ս Ա Դ Ա Յ Է Լ (Թախծաղին):

Թէ Հայաստան ձեռքէս երթայ՝ միթէ Աղուանք կըմընան.  
Վ իրք կամ Արվիսս իմ պաշտօնին կանուխքի սէրն կունենան.  
Ասիայի մէջ այն Հրգօրն այնքան պինդ կու հաստատվի,  
Որ չի մընար իմ մեհնաց աւերակաց և քար մի:  
Տես՛ր՝ թէ ի՞նչ անակընկալ հանգիպեցանք փորձու թեան.  
Բաւական չէր Գանիէլի յառիւծուց գուբ ընտակելն,  
Կամ Յոնանու ի փոր կիտին երեքօրեայ նաւարկելն.  
Գրիգորին էլ տասնուհինգ ամ իւր թեոց տակ է ծածկիլ:  
Ուստի՞ զիսնամ՝ թէ չար օձից կըզակներն է սանձարկիլ:  
Մեր կասկածանք չէին անհիմն՝ որ մէկ աղջկի պիտի դայր,  
Անահատական ձօն դահամանց խողաօրսպուռ վախճան տայր.  
Խոսրովիդուխա օրիորդէն էինք ընդ վայր զգուշանում,

Ար Գրիգորի ազատութիւնն չըլլղանայր իւր մըտքում,  
Եպիրատին՝ որ խմորված էր սիրով այս նոր պաշտօնի,  
Յառաջին իսկ ճակատամարտն թողնը անկեալ ի գեանի.  
Բայց տեսար թէ ո՛ր է թաքչում մեր աչքերից այն աղջիկ,  
Խնդրէ այնպէս հընարներ որ անցցէ զինև այս շանթիկ:

Բ Ե Լ Ի Ա Ր (քաջալերեալ).

Մի վըհատիր՝ ո՛վ գերազոյն իշխանութեան Տեղակալ.  
Փութա՛հ հաննիլ Հայաստանի շըրջադարձին ընդդեմ կալ:

Ս Ա Դ Ա Յ Է Լ (երգիծախառն).

Յիմար՝ խօսում ես ձիգ ու կարճ, չես հասկանում ոչինչ բան,  
Հայաստան բնաւ չի փոփոխվիր առանց այս մէկ աղջկան.  
Ես ատում եմ՝ դու չես լըսում, խելքս առել է այս կոյսը.  
Միայն սորան այս տեղ պահելն է մընացել իմ յոյսը:

Բ Ե Լ Ի Ա Ր (գլուխն երկնցուց, նայեցաւ, և տեսաւ Հռիփսիմէին).

Ե՛ս ա՛ն անկնապատիւ Տէր . . . .

Ս Ա Դ Ա Յ Է Լ (շառագնեալ՝ աչաց մէջ ծաղր).

Տեսար:

Բ Ե Լ Ի Ա Ր (ընդարմացեալ).

Ե՛ն երանի թէ չը տեսնէի, ա՛ս աչքս բըռնէր կուրութիւն:

Ս Ա Դ Ա Յ Է Լ (գորովախառն).

Վո կուրութիւնն, ի՞նչ էր կարող տալ մեր գործոյն օգնութիւն:

Բ Ե Լ Ի Ա Ր (կարկամելով).

Ե՛ս այն օրիորդ . . . .

Ս Ա Դ Ա Յ Է Լ (դժգոհ).

Եհա՛, սա՛ է:

Բ Ե Լ Ի Ա Ր (շուտեալ).

Ս ս սա՛ պիտի դայ Հայաստանին պաշտող Փայտին անելու:

Ս Ա Դ Ա Յ Է Լ (մտերմարար անյոյս).

Արբան պիտի հընար գըտնենը Հոռմայ միջին պահելու,  
Ար սա չերթայ Հայոց աշխարհ . . .

Բ Ե Լ Ի Ա Ր (աչքերն վառելով).

Այն ինչ հընար . . . .

Ս Ա Դ Ա Յ Է Լ (տարակուսանօր).

Վանքէն հանել, և հարս անել, պատուով փառօք շուրջ պատել:

Բ Ե Լ Ի Ա Ր (հեապքեր).

Հայաստանի ճանապարհներն դոյաւ հընար է փակել:

Ս Ա Դ Ա Յ Է Լ (թերայոյս).

Երբոր այս տեղ սա հարմանայ, էլ չի երթար Հայաստան,  
Եւ ո՛չ Գրիգոր Խոր Վերապէն կիւնէ մեզ արոյեան:

ՊԱՏԱՆԻ Ե.

(Եսիւ եղև հնչին զանգակի և Հռիփսիմէ գնաց աղօթել: Սարայէլ և Բելար մացին):

Ս Ա Դ Ա Յ Է Լ (լի բերկրախառն զարմացմամբ).

Տեսար, ի՞նչպէս էր իւր քալուածք, ի՞նչպէս իրանն, ի՞նչ դիտակ:

Բ Ե Լ Ի Ա Ր (շառագնելով).

Թէ չընէր բանս մեզ նախատինք, էր մարմնացեալ ոմն Հրեշտակ:

Ս Ա Դ Ա Յ Է Լ (գլուխն շարժելով).

Ի՞նչ կըլինին մեր պաշտօններն, եթէ սա Փայտն քարոզէ:

Բ Ե Լ Ի Ա Ր (յուսակուր).

Հայք ամենայն երեսներն կը դարձնեն Անահատ:

Ս Ա Դ Ա Յ Է Լ (տատամուծեամբ).

Երևի սա պիտի երթայ, որ Գլխորին հանել տայ:

Բ Ե Լ Ի Ա Ր (դժկամակ).

Նա էլ պատրաստ, որ Հրգորի պաշտօնէից մէկ դառնայ:

Ս Ա Դ Ա Յ Է Լ (անոյս կամապաշտուծեամբ).

Ես չեմ թողնիր, որ այս աղջիկ իւր ոտք հանէ Հրոմէն.  
Տեսէք, թէ ի՞նչ շաւիղներով սա դուրս կուգայ այս վանքէն.  
Ինչիւր, քո մեծ ճոխութիւնդ պիտի շինեմ ես գործի,  
Որ իւր կամքով Հրոխիսիմէն մեր ծուղակաց որս լնցի:

Բ Ե Լ Ի Ա Ր (պաշտպանակէս).

Միթէ՞ ես զանձ կամ ճոխութիւն պիտի խնայեմ այս միջոց.  
Բողբովն դուրս կը հանեմ, ինչ կայ ի խորս դրժուտոց:

Ս Ա Դ Ա Յ Է Լ (ողևորեալ).

Մենք էլ երթանք ու տեսանենք, թէ սոցա ի՞նչ է մաղթանք:

Բ Ե Լ Ի Ա Ր (արհամարհանք).

Միթէ՞ ուրիշ աղօթք զիտէ՞ արգելական չընչին վանք:  
Վո՞ր ցանկացածն՝ մաղթանքներն չեն, մաղթողին ես որոնում.  
Երևում է, որ Հրոխիսիմէն քո սէրն իրաւ է գրաւում:

Ս Ա Դ Ա Յ Է Լ (ակամայ նուաճեալ).

Ի՞նչ սուտ ասեմ. թէ այս աղջիկ մէկ կերպ չընկնի իմ ճանկը,  
Ինձ համար մեծ բեռն կըլնի իմ այս փառաց պըսակը:

ՊԵՏՆԵՐ Օ:

Բ Ե Լ Ի Ա Ր (առանձին).

Այ՛ն քո փառքին ու պըսակին, ի՞նչ փառք պըսակ դրժուրումն.  
Չը պահեցիր փառք ու պըսակդ, մինչդեռ կայիր երկինքումն.  
Եստուածանալ էր ցանկանում յիմար խելքի աղքատը,  
Հրգորի դէմ դրոնց իւրեան ուղղեց պակաս ճակատը.  
Իսկ Նախո՛հ չէր կարող սորա կամքին դառնալ հրպատակ,  
Ձեռքն առաւ իւր բարկութեան շանթն ու հրբատ ու կայծակ,  
Գուաց ահեղ. սասանեցան տիեզերաց հիմք խորինք,  
Մագաղաթի պէս գելլելով դալարեցան լայն երկինք.  
Մեզ էլ հասաւ արդար ցամառն սարսափելի այն հարուած,  
Որով մինչև այսօր քաշումենք սոսկալի խոր խոցուած.  
Ե՛յ անիրաւ, դու հողեղէն ես և ո՛չ թէ մարմնաւոր.  
Ընդէ՛ր է բեզ հրբապուրում այս օրիորդ գեղաւոր.  
Վեզ ո՛չ կարող է կին լինել, ո՛չ տարփածու, ո՛չ սեղեխ,  
Միայն դովաւ ցոյց ես տալիս, թէ ո՛րքան բարբո՛ղ է մեղմելի:  
Մէկ օր փառքի էր քո փափաք, մէկ օր զոհեց, պաշտապանց,  
Ե՛յժմ էլ սրբան ես ցանկանում, որպէս թէ է անգիւտ զանձ:  
Ե՛յնպէս բանի պիտի ցանկաս, որ մեզ մէկ օր շահ բերէ,  
Ինչպէս էին Վերգինիա, Ալեուպատրա, Հեղինէ.  
Ե՛յ, իրաւ, է Հրոխիսիմէ անզուգական գեղեցիկ,  
Սագայէլն առ ի՞նչ պիտոյ է հրաշագեղ այն աղջիկ,  
Տեսէք, զընում է իբր թէ աղօթքներն տեսնելու,  
Սուտ է բոլոր, լոկ ուզում է նորա դէմքին պըշնելու,  
Երթանք տեսնենք՝ թէ էլ ի՞նչ յիմար գործեր կը գործէ,  
Ի՞նչպէս պիտի աչքերն արնկէ, ու շըրթունքներն կըրծմըրծէ:  
Հընարա ի՞նչ է, ձեռքի տակն եմ. թէ լինէի ինքնիշխան,  
Յոյց կուտայի թէ վիարդ է զիւաց պիտոյ և արժան  
Հողեղինաց հետ մաքառիլ: Սա փոխանակ մըրցելոյ.

Գրնում է որ հընար զըռնէ՝ նորա զիտակն տեսնելոյ,  
 Շատ ցանկալի բան է ազքատ կուսից ձայնիւ աղօթեիւ,  
 Ծընրազրութիւն կատարելըն, և կամ երգովք նուագելըն:  
 Չէի՞նք լսել Մոսիսի քոյր Մարիամի երգածըն,  
 Որ թըրուկով էր նըւագում Փարաւոնի կորածըն.  
 Նա ուրախ էր որ Խորայէլ Ազիպատուէն էր պըրծել,  
 Մենք էլ ցընծում էինք որ ծով այնքան էր մեր ծոց ածել:  
 Մինչ ժողովուրդ զիակների հագուստ, զէնքն էր սըկլըրում,  
 Մենք զըժոխքում ծովահեղձոյց զոհերն էինք համբարում:  
 Շէն թող մընայ Մոսիսի այն հրաշագործող զաւազան,  
 Որ երեսուն հազար հեծեալք մեր ձանկ մատնեց մէկ վայրկեան.  
 Քանի՞ անգամ էր նոյն ցըլով մեր զլըկըններն ջախջախել,  
 Բայց վերջապէս կարողացաւ լաւ հատուցումն վըճարել:  
 Այն էլ վատ չէր մինչ հրաւիրեց անդրանկաճախ սուսերն.  
 Ճոխ աւարօք լըքըլկեցան մեր ամենուս ծոցերն.  
 Այնպէս անցքի երգեր լինին, ականջ զընենք, ըլմայլենք,  
 Այնտեղ, անշուշտ գիտեմ, պիտի մենք յաղթական երեկնք:  
 Գեորայի երգն էլ լաւ էր, որ Բարակին էր զովում,  
 Մինչ Սիսարա տաղաւարում արեան մէջ էր թաւարում,  
 Տասըն հազար Արբայեցիք մէկ օր էին աշխատել,  
 Տիրուսի զօրք Քանանացւոց մէկ քանի բիւր մեզ մատնել:  
 Ասեմ թէ վատ էր այս երգըն, զովարան էր այն մարտին,  
 Որ քան զամեն մարդկային զօրձ քաղցրախորձ էր մեր սըրտին.  
 Սուսեր դառել էր ուղեցոյց, ուղին ուղիղ դէպ զհեան,  
 Մենք անաշխատ մըթերեցինք անբաւ զոհ մեր զանձարան:  
 Գեղեցունի աղաղակն էլ, թէպէտ երգ չէր, այլ քաղցր էր,  
 «Սուր Տեառն և Գեղեցունի» մէկ ցանկալի նըւագ էր.  
 Քանի՞ հազարք այն ձայնի հետ էին թափվում Տարտարոս,  
 Մենք ներս առինք ուրախութեամբ այն մէկ մեծ ազգն բարբարոս.  
 Արախտապարտ էինք նըրանց. Մադիամ լաւ էր զործել,  
 Բաղաամու սըւած խըրատ աջողակ էր զօրձ ածել.  
 Վախեցել էր Բաղակ սաստիկ Խորայէլեան խուժանէն,

Որ լայնարձակ անապատում թափառում էր սպառազէն:  
 Մէկ հընար էր ուզում զըռնել որ այն չարէն աղատի,  
 Որ ինչ կարող էր նըրան հասնիլ արշաւանէն Մոսիսի:  
 Մէկ խորթ եղբայր ունէր Բաղակ՝ Բաղամ էր անուանեալ,  
 Սորա մէկ մօր որդիք էին, բայց հայրերն այլ և՛ այլ.  
 Մէկ տես թէ հին յիշատակներն ինձ ո՞րքան տեղ հեռացրին,  
 Եւ մըտքիս մէջ ինչ մտացած անցած անցքերն նորացրին:

ՊԵՏԻՍԻ Է.

ԱՆԱՀԻՏ (Ճածուկ մօտ դաւով Բեկիարին, ասաց).

Հին անցքերն ես միտքըդ բերում, լըսում էի խորհածըդ,  
 Լապտերի պէս երևում էր Մադայեկն հեզնածըդ.  
 Ինչ որ խօսում ես մըտքումըդ՝ ամենեքին հողի ենք,  
 Ամեն զաղանիքդ մեզ յայտնի են, համ լըսում, համ տեսնում ենք:  
 Երթանք նորա յեանեցըն, ես հեռուէն կընայիմ,  
 Գու թէ կամիս մօտիկ զընա, այսօր երգոց սիրա չունիմ.  
 Բայց կարծում եմ, որ Մադայէլ մըտաց մէջ մէկ բան ունի,  
 Նորա ցաւ չէ այն օրիորդ, ոչ նորին դէմք գեղանի:

Բ Ե Լ Ի Ա Բ.

Գիտեմ որ նա սոսի Գըրիգորին է հայթայթում խափանել,  
 Որ Հայոց ազգ չըյօժարի նորան զուբէն զուրս հանել:

Ա Ն Ա Հ Ի Տ.

Այն նոր վըճիւն Հըլօրինն է, արգելումն տալ չէ հընար,  
 Եւ ով դրա բնդդէմ կանգնի՝ կը պատժըվի չարաչար:

Բ Ե Լ Ի Ա Բ.

Յիմար ենք որ ընդդէմ կենանք, պիտի թոյլ տանք իւր կամքին,  
 Յետոյ զօրծերն յուշիկ հեզիկ մենք կամփոփենք մեր ձեռքին:



Ա Ն Ա Հ Ի Տ .

Միթէ այդպէս չէ՞ կամենում Մարայէլն էլ տնօրինել,  
Միթէ ուզում է Հըզօրի կամքին սատան ելանել.  
Մեծ սրխալանք պիտի անէ, մեծ պատուհաս կը քաշէ,  
Չանգակների ձայնը դադրեց. Մաղայելը մօտ քրչէ:

Բ Ե Լ Ի Ա Բ .

Չէ. դեռ պաշտօն չեն ըսկրսիր, պիտի ամենք ժողովին,  
Ես հին անցքերն էի յիշում որ այս աղօթք յուշ բերին.  
Ռաբէլ մեռաւ ու թաղուեցաւ, Յակօբ ունէր երեք կին.  
Մէկն էր Լիա, Լաբանի դուստր, եօթն զաւակաց մայր տիկին.  
Չէրիա, Բալլա հարձեր էին, որդիք ծընան Յակօբէն.  
Ծաղկում էր տուն Խարայէլի տանն և երկու որդւոցմէն:  
Փոքրիկ նախանձ ընկաւ սրբտերս, որ հանգիստ էր ծերունին,  
Եսինք „պէտք է մէկ խաղ խաղալ նորա անդորր տան միջին“.  
Ես դըրդեցի Ռուբէն որդւոյն, որ Բալլայի հետ նընջէ,  
Եյն միտքով որ այս տառապանք Խարայէլին միշտ տանջէ:  
Բալլա ծընաւ որդի Բէոր, մէկ վիմի մօտ բնակեցուց.  
Խարայէլի սերունդէն էր, երկիր նորան ածեցուց:  
Դամանակաւ սա կին առաւ, որ անունն էր Սեպփորա,  
Եյս կընոջէն էր Բաղամբի զաւակաց Բէորայ:  
Բէոր մեռաւ անապատում. Սեպփոր եկաւ Ղզղիպտոս,  
Եւ Բաղամբ երբ զարգացաւ՝ դառաւ մէկ մեծ նըրբախօս,  
Սեպփորա էր այն ծընուցիչ, որ մանկանցն էր սպրեցնում,  
Փարաւոնի գործի դառած երեխանց չէր մահացնում,  
Եյն Հըզօրն էլ որ սովոր է այսպէսներին վարձատրել,  
Բակրեց այն աղքատ կընկան քիչ քիչ բարեօք փոխատրել:  
Սեպփորա շատ հարբատացաւ, մէկ ձօխ մարդոյ կին դառաւ,  
Եւ այս երկրորդ ամուսնութեամբ Բաղակ որդին ունեցաւ:  
Աջողակ էր յոյժ այս Բաղակ, նըրան միշտ էր օգնական  
Իւր մօտ արած գըթութիւնն Երբայեցուց մանկութեան.

Մալբացիք Մաղխամու հետ համաձայն ընտրեցին  
Նորան իրանց Գեհնարայի մէջ թաղաւոր առաջին:  
Յաւ էր մեզ մեծ, որ Հըզօրն նորան այսքան օգնում էր,  
Մենք մէկ հընար գործ ածեցինք, որ Հըզօրին բարկացներ.  
Երբ Խարայէլ Եգիպտոսէն հըրաշքներով դուրս եկաւ,  
Եւ դէպ յերկիր Եմօրհացուց արշաւանք իւր ըսկրսաւ.  
Մենք Բաղակի սրբտի մէջ մեծ ահ ու սարսափ ձրգեցինք,  
Եւ Հըզօրի ժողովըրդեան դէմ դիմամարտ կանգնեցրինք:  
Գեա Խարայէլ շատ հեռի էր անապատում ման դալիս,  
Որ մենք նորա արած բաներն այլ կերպ էինք ցոյց տալիս.  
Ետում էինք Բաղակին թէ „ահա այս ազգ եկել է  
Եգիպտոսէն ճանխայ բըռնած մինչ քօ երկիր հասել է.  
Ոչ թէ միայն կարող է քեզ քօ աշխարհի մէջ ջընջել:  
Եյլ և ինչ որ քօ չորս կողմերն կան, հանդերձեալ է լափել“:  
Յետոյ մեղմով միտքը բերինք իւր Բաղամբ եղբօրը.  
Որուն նոյնպէս շատ գործոց մէջ պէտք էր ածում Հըզօրը.  
Բաղակ զըրկեց, բերել տըաւ Բաղամբին իւր կուշտը,  
Նորան պարգև շատ խոստացաւ, որ փարատէ իւր վեշտը.  
Սակայն Հըզօրն չէր կամենում կորուստ մասնել Բաղակին,  
Բաղամբին էլ էր խըղձում ի պատիւ իւր մօր գործքին.  
Քանի անգամ Հըրեշտակ զըրկեց Բաղամբին խըրատեց,  
Որ Բաղակի սիրով չըլնի Խարայէլին քարընկէց:  
Բաղակ ուզում էր, որ այն մեծ Խարայէլին նըզովէ,  
Որ նորա դէմ վըստահութեամբ ինքն իւր ուժին ժողովէ.  
Եյլ Բաղամբ ամենուրեք Խարայէլին էր օրհնում,  
Եւ նորա մեծ հանդերձելոց յաջողութիւն քարոզում:  
Մինչև այս անդ Բաղամբը պաշտօնեայ էր Հըզօրին,  
Նորա խօսքերն մեծ զօրութեամբ զգուշացուցին Բաղակին.  
Բաղակ ճանչցաւ որ Խարայէլ է իւր նախնեաց ազգակից,  
Տեղի տըւեց պատերազմէն, չեղաւ այլոց մարտակից:  
Բայց Մալբայ, Մաղխամու այլ ցեղերի իշխանքն,  
Չը շատացան նովաւ, ինչ որ ցայս վայր արաւ Բաղակըն.

Բաղամին կաշառ արւին և պահեցին ծածկապէս,  
 'Նա ըսկրսեց օր ըստ օրէ նրբանց խորհուրդ տալ պէս պէս:  
 Ետևմ էր թէ «Խորայէլին անհրնարին է յաղթել,  
 Մինչև նրբանց հրնարք չանէք ձեր կուռքերը տալ պաշտել»:  
 Բայց Խորայէլ ունէր Մոսէս, կըւապաշտիլ չէր կարող,  
 Սիւնն ամպեղէն և հրեղէն էր այն ազգի պահպանող:  
 Մենք զըրդեցինք Բաղամին, որ խեղճերուն քիչ օգնէ,  
 'Նա էլ ոսկոյ սիրոյն համար խորհուրդ արեց ի սրբակ:  
 Եսաց «Թողէք որ ձեր զըստերք այն ազգի հետ խառնակվին,  
 Եւ իգամը Խորայէլին որսան ի ցանց Ղանձիկին»:  
 Մաղխամու և Մովսրայ օրիորդներն զօրացան,  
 Իւրեանց յիմար տարիաճուացն կուռք պաշտելոյ որսացան:  
 Մենք ըսկրանք ուրախութեամբ ծափ տալ հանդէպ Հըզօրին,  
 'Նա հասկացուց իւր բարկութիւնն ակնարկելով Մոսիսին:  
 Յառաջ վազեց անդ Փենեհէս, խոցեց Օւամբրոյն և Վաղըւոյն,  
 Վրասն ու չորս հազար հատ էր արգասիք այն հարուածոյն,  
 Մոքա ամենք մեր ձեռք եկան, այն սեղ զըրինք ամենին,  
 Ուր որ երկու հարիւր յիանովք զըրել էինք Վաղանին:  
 Եյս մէկ փոքրիկ նախաձաշիկ էր տակաւին մեզ համար,  
 Մոցա վըրէժ այն ազգերէն Մոսէս խընդրեց չարաչար:  
 Եյս իսկ միջոց, Բաղակի պէս, մեր հաստազուրխ Մաղայէլ,  
 Սարսափելի կոտորածէն ինքն ճողորեց Յորին էլ,  
 Չը հասկացաւ անխելք զըրումն, որ Յորայ այն փորձութիւն  
 Մէկ հրնարք էր, որովք Հըզօրն նիւթեց նորին փրօկութիւն:  
 Եյս մարտախումբ Յոր ևս եղև հըրաւիրած ի սիզբան:  
 Բայց նա չասաց թէ Մոսէս է իւր մերձաւոր ազգական,  
 Հըզօրն ըզՅոր իբրև աւանդ Մաղայէլին պահ տուեց,  
 Եյն յիմարն էլ ուրախացաւ՝ որ իւր կամաց նա մատնվեց:  
 Մինչ զեռ կայր Յոր վիւրք լըյեալ՝ բարեկամաց ըզբօսանք,  
 Հըզօր մեղմով յառաջ տարաւ անօրէնութեանց իւր սահմանք:  
 Երբ խըմբեցաւ ձախտամարտ՝ կոտորվեցաւ Մաղխամ,  
 Կոտորածի խըւաններումն ընկաւ և ինքն Բաղամ:

Գրիգորին էլ այդպէս արաւ, պահեց այն Խոր Վիրապում,  
 Իսկ մեր արխամարն կարծեց թէ նա իւր հօր վըրէժն է քաշում:  
 Եյլ ինչպէս արք երևում է՝ այս Բաղակայ փախուսան է,  
 Խոր Վիրապում պահած Գրիգոր՝ Յորայ ի ցաւս թաքուսան է,  
 Մենք ի՞նչ կընինք թէ Գրիգորին էլ նա այնպէս փոխաարէ,  
 Ժամանակայ փորձութեանց զէմ բաղմնագատիկ վարձատրէ:  
 Ի հարկէ որ շատ քաղցր էր մեզ Մաղխամու կոտորած,  
 Վարք զըրեցան որ այնպէս ինչ երկրի վերայ չէր դիպած:  
 Եյն մէկ համեղ ծաշ էր բացվել: զէպ ի դրժոխք առուներ  
 Յորդահոսան կոհակներով բերում էին հողիներ:  
 Շատ լաւ մարդ էր Մոսէս ծերուն, մեզ շատ օգուտ էր բերում,  
 Ոչ այր, ոչ կին, ծեր կամ տղայ կամ օրիորդ էր ընտրում:  
 'Նորա նըման էր և Յեսուն քաջ, մեզ շատ էին շահ տալիս,  
 'Նոցա սուրէն անթիւ բիւրներ էին զրժոխք միշտ դալիս:  
 Բայց լաւ ընթրիք Մաղխամէն մեզ ուտեցուց Վեղէնն,  
 «Սուր Տեսուն և Վեղէննի» էլ գեղեցիկ մէկ Սիզնոն:  
 Խընջոյք բացուեց զրժոխքի մէջ, ամենեքեան յաղեցան,  
 Վինեւոյ կարասք դատարկ էին, ողջն էլ արխամք լըցուեցան:  
 Արեւիլ է այնպէս ձայներն երբէք մըտոխց բաց հանել,  
 Երանի թէ միշտ յաջողեն այնպէս ձայներ մեզ համենել:  
 Մէկ լաւ երգ էլ Վաւթի համար էին երգում զուսանըրն,  
 Երբ որ նորան գովում էին օրիորդք և կուսանըրն:  
 Ետևմ էին՝ Սաւուղ եհար հազար, Վաւթի թիւրաւոր:  
 Ընդդէմ Վաւթի փառում էին ձեռն Սաւուղայ զօրաւոր:  
 Թեպէտ Վաւթի մէկ Վողիաթ էր տակաւին ըսպանել,  
 Բայց ժողովուրդ շատ հազարներ նորա հետ էր կոտորել:  
 Եյն օր էլ մեծ հացիկըյթ էր Տարսարոսի դահլիճում:  
 Երեամբ էին խոր անդունդք լի, մենք լոյ արւինք այն լիճում:  
 Վան զոյն առաջ Յեփթայէն էլ, Սամուէլն էլ, Սաւուղն էլ,  
 Մեր առաջէն ծաշ կամ ընթրիք-խահ շատ էին բաց արել,  
 Բայց մէկն էլ չէր այնպէս քաղցրիկ, ինչպէս Վաւթի արածըն:  
 Մէկ էր, ասկայն շատ բիւրք կարժէր ի մեր սեղան բերածըն:

Այլ ինչ երգ որ Գաւիթ երգեց Գեղըուայ սարի անկերոց,  
 Գերազանց էր քան զամեն երգ, ահա այն էր Երգ Երգոց.  
 Այն օր Սաւուղ իւր Որդւոց հետ եկաւ հասաւ մեր սեղան,  
 Նորան իւր խկ սուրն էր դըրել խոյ վերաւոր ի կործան:  
 Եթէ Գաւիթ կամ Սամուէլ այն մարտի մէջ լինէին,  
 Այնպէս ահեղ կոտորուածներ չէին հասնիր Սաւուղին:  
 Ի՞նչ լաւ էր որ Սամուէլին վաղ զղզեցուց Աեգ Սաւուղ,  
 Գաւթին էլ չէր ներում մօտ զալ անշուշտ մահու մեծ երկիրը,  
 Եթէ Գաւիթ մընայր այն տեղ, ինչպէս Անքուս էր կամում:  
 Ոչ ծեր Սաւուղ կընկներ կործան, և ոչ որդիքն յայն ռազմում:

ՊԵՏԿԻՐ Բ:

ԲԵԼԻԱՐ Է ԱՆԱՀԻՏ.

(Մօտ եկան ճանիկ, Մամն և Դադոն և կանգնեցան).

Ճ Ա Ն Ճ Ի Կ.

Լսել էք դուք այն նոր համբաւ որ դըժոխքում է փրովել:

Բ Ե Լ Ի Ա Ր.

Ես նոր համբաւ չունիմ լրսած, ո՞վ գիտէ, ի՞նչ է խօսվել,  
 Որ դըժոխքում բան են շինել բերնէ բերան յանձնելով,  
 Բաղասամի էշն է իբրու խօսել մարդկան բարբառով:

Գ Ա Գ Ո Ն.

Վեղ շողփաղփանք են երևում, բայց մենք ունինք մեծ երկիրը,  
 Կենաց ծառի հին արմատէն բուրբոջել է նոր ընձիւղ:

Ա Ն Ա Հ Ի Տ.

Ի՞նչ զարմանք է, կը պատահի. մեծ երկիրը բան չըկայ:

Ճ Ա Ն Ճ Ի Կ.

Ընձիւղի հետ դարձեալ ուրիշ մեր կորստեան նըշան կայ.  
 Ի հարկէ որ վախնալու չէր, եթէ լինէր լոկ ընձիւղ.  
 Ընձիւղն ունի մէկ նոր ծաղիկ, ծաղկան վերայ կայ պըտուղ:

ԲԵԼԻԱՐ (գունափաթ).

Գուք ձեր աչքո՞վ էք տեսել, թէ յայլոց լրսածն էք պատմում:

Գ Ա Գ Ո Ն.

Մենք ինչ որ ենք աչքով տեսել, այն էլ ձեզ ենք հաղորդում:

Ճ Ա Ն Ճ Ի Կ.

Ես այց էի հին տաճարիս աւերակաց գրնացել,  
 Յանկարծ տեսայ հեռաստանէ, որ մութ տեղ լոյս էր ծագել.  
 Մօտ գրնացի, աչքով տեսայ այն նորասբանչ փոքր ընձիւղ,  
 Եւ զարմացայ՝ երբոր գրսայ վըրան ծաղիկ և պըտուղ:

Ա Ն Ա Հ Ի Տ.

Ինչո՞ իսկոյն անհետ չարիք, չը կոխեցիր ոտներով:

Ճ Ա Ն Ճ Ի Կ.

Ղաղաճանօթ Վերորէն կայր իւր բոցավառ սուտերով:

ԲԵԼԻԱՐ (շուարված).

Այն լաւ լուր չէ՛. պիտի շուտով ծանուցանել իշխանին:

Ճ Ա Ն Ճ Ի Կ.

Ահա նա ևս նըտակ է այն պատուհանում տաճարին:

ՊԵՏԿԻՐ Թ.

Մարայէլ. Բելար, Անահիտ, Դադոն և ճանիկ.

Բ Ե Լ Ի Ա Ր.

Ամենապատիւ Տէր:

Ս Ա Դ Ա Յ Է Լ .

Երևի նոր համբաւ ունիս, և ուզում ես ինձ յանձնել,  
 Չընի՛ կենաց ծառի ընձիւղն քեզ էլ է փոքր վախեցրել.  
 Ես այդ վաղուց էի տեսել, բայց ձեզ ասել չուզացի,  
 Տեսնեմ ճանձիկ և կամ Գազոն ե՛րբ կիմանան, ասացի:  
 Պատուհներըն երեք էին, դէպ արևելք են ծրուված,  
 Հայաստանում Երրորդութեան պաշտօն կընի հաստատված:  
 Բայց՝ բանի մէջ՝ եթէ էլ կայ, — եթէ թողնուք այս կուսին,  
 Որ սա երթայ ու հանել տայ Խոր Վերապէն Գրիգորին:  
 Իսկ սա մինչդեռ Հում է ընկած, և Գրիգոր կայ խոր գուբում,  
 Նորածաղիկ ընձիւղներէն բընաւին չեմ վախենում:

Ս Ա Մ Ա Յ Է Լ (յանկարծ երևեցաւ).

Թէ առանձին նըշան չընի այն ընձիւղի երևելն,  
 Եւ ի՞նչ պիտէր Վերոբէի հրանիւթ սըրով այդ կանգնելն.  
 Չէ: Հորն այն մէկ նոր հանդէս է երևի պատրաստել,  
 Մեզ ո՛չ թէ ասա, այլ երկընթուսն էր հարկաւոր լըրեսել:

Ս Ա Դ Ա Յ Է Լ (հէգնօրէն).

Եպա ընդէ՛ր աստ վաղեցիք, և չըգնացիք դէպ երկինք:

Ս Ա Մ Ա Յ Է Լ

Ճանապարհին դիզաբարդվել են խորք բողբոսք և լերինք:

Ս Ա Դ Ա Յ Է Լ (հասաշածօք).

Ուրե՛քն խցեալ էր ճանապարհն, որպէս քեզ է, նոյնպէս ինձ:

Ս Ա Մ Ա Յ Է Լ (դուին քերելով).

Վարելի էր թէ զըսնէիր դու մէկ հընար . . . .

Ս Ա Դ Ա Յ Է Լ (դուն ժպտանօք).

Վորա համար ի՞նչ հընար կայ, երբոր Հըլօրն կամենայ,  
 Մենք չենք կարող կալ հակասակ մեր չարութեամբ դէմ՝ Նորա .

Ամենայն ինչ կը կատարէ թէ երկընթուս, թէ երկրում,  
 Եւ հաճեցած ժամանակին՝ համանդամայն զըժոխում:  
 Մեզ մի միայն այս աշխարհն է տըւած տեղի հանդիսի.  
 Այն էլ երբոր Նորա ձեռն ամփոփ մընայ մեկուսի,  
 Եպա եթէ Նա օգնական յայտնիլ ուրեք կամենայ,  
 Մեզ մի միայն զըլուխներըս խոնարհեցնել կու մընայ .  
 Իրաւի է խոնարհութիւն գիտես թէ չէ մեզ վայել,  
 Բայց ի՞նչ անես, երբ չես կարող բուռն բազկին դէմ դընել:

Բ Ե Լ Ի Ա Բ (յայթանակաւ).

Ես առաջ էլ այդ եմ ասել, պիտի թոյլ տանք խօր կամքին,  
 Զեաոյ գործերն յուշիկ մեղմիկ ամփոփենք մէջ մեր ձեռքին:

Ս Ա Դ Ա Յ Է Լ (զուարճախօսութեամբ).

Ամենայն տեղ խելօք դու ես, բայց մէկ լեզու ունիս չար,  
 Որ իմ վերայ բամբասանօք յարձակում ես անդադար .  
 Միթէ չէ՞ի՞ ես իմանում քո առանձին մըտածմունք:

Բ Ե Լ Ի Ա Բ (ջատագովելով).

Մո՛ւտ էր ասածս, թէ անիրաւ, կամ վըրիպակ սըխալմունք:

Ս Ա Դ Ա Յ Է Լ (չառագնելով).

Ո՛չ սըխալ է և ո՛չ սուտ խի, բայց ասելդ է աւելորդ .  
 Այդ ցօփ անդուռն շողփաղփանաց՝ կագ կըռիւն է հետևորդ:

Բ Ե Լ Ի Ա Բ (բարկութեամբ).

Կագ ու կըռւէն փախչողն ո՛վ է, մեր մէջ սէրն ի՞նչ գործ ունի .  
 Ըզգոյ՛ լ կացիր սըխալմունքէն, քան զամեն լաւ այն կընի .  
 Եպա եթէ դու լսկըսիս աղօթքներուս կալ զընին,  
 Մի կարծեր քո իշխանութեամբ կապանք զընել իմ լեզուին:

Ս Ա Դ Ա Յ Է Լ (զինքն արդարացնելով).

Ես չեմ զընում լեզուիդ կապանք, լեզուդ բայց է և արձակ,

Ի՞նչ էլ կամիս՝ կարես խօսիլ, խօսի՛ր ուրեմն համարձակ .  
 Իմ դատողն ու դատապարտողն դեռ ո՛չ գիտեմ թէ ո՞վ է,  
 Հարցու՛ր համակ անդրնդայնոց, իմ զործ նոցա կամքով է .  
 Միայն դու ես ինձ հակառակ, բայց այն էլ ո՛չ ամեն ժամ,  
 Տրտունջ կանես ամեն բանի, այլ ինձ հետ ես յարստամ .  
 Որ օր ջղերքս հեթանոսաց յարուցինք զուր խռովութիւն,  
 Եւ ի սնտոխ գահավիժեալ՝ չտեսաք զվհիսն խորութիւն .  
 Մինչ թագաւորքս ընդ իշխանացդ ի վեզ կացաք յանդիման,  
 Վասն Օծելոյն մինչ ի Միոն պատմէր Հօր իւր ըզհրաման .  
 Ինձ հետ ես և ինձ հետ կըլնիս՝ մինչ անշէջ այն հուր վառի,  
 Որ ի կենտրոն Տիեզերիս զեակդեաց ձեռն Հրօրի:  
 Գու նրման ես պառաւ կընոջ, որ իւր զործերն զործելով,  
 Ար բըրթմընջէ, կը տրուարուայ՝ շեթունքները կըրծելով .  
 Բայց էլի իւր անելի զործ այլոց կամաց չի յանձնիր,  
 Մինչ կէս գիշեր նա կաշխատի, թէ և աչքերն չի տեսնիր:

ԲԵԼԻԱՐ (ցասմամբ).

Հա՛, ես նրման եմ պառաւի, հին արարքդ եմ միտք բերում,  
 Աստարածներդ եմ յուշ ածում, և զուր տեղ չեմ բամբասում:

ՍԱԴԱՅԷԼ (հեղհորէն).

Միթէ ունիս յոյս իմ վերայ զըրպարտութիւն էլ բարդել:

ԲԵԼԻԱՐ (մղեգնեալ).

Ո՞վ է կարող քեզ մէկ զործով սուտ աւելցնել, զըրպարտել .  
 Ի՞նչ կայ որ դու չըլնիս գործած, այնպիսի դէպք միթէ կա՞ն,  
 Որ դու զործով զըլուխ բերած չըլնիս երբէք մէջ մարդկան:  
 Յետ որոյ Հօրն Սանդարամեաք աւրեց, քանդեց, վերացաւ,  
 Քո ո՞ր զործին դոյզըն բթացաւ, կամ ո՞ր զէն քո խամբացաւ .  
 Հոռմ հաստելով զահդ անխարխուլ լայնացուցիր նեղ գեհեան,  
 Թէ հինգ հողիք Եդեմ ելին, բիւբք Տարտարոս խոր սուզան .  
 Լչլ ի՞նչ են հին խեղճ Փարաւոնք՝ համեմատեալ այն անձանց,  
 Որովք Հոռմ է միշտ ձոխացնում անեղը դահլիճն զիւցազանց.

Սկլայք, Մարիտք, Տիբերք, Աէյեանք, յետին դարուց Հերոդէսք,  
 Մի քան ըզվի գերազանց են ճրգնում պըճնել քո հանդէսք .  
 Խեղքդ առել էր յաջողութիւնն . մոռցել էիր Սանդուխտին,  
 Որ իւր արեամբ խրամաստել էր զորմունս ամրոց Անահային .  
 Այնքան մնացիր յախրութեան մէջ, մինչև Գրիգոր զուրն ընկաւ,  
 Եւ Հոփսիսիմէ ահա զըլխիդ հանդոյն շանթից կախուեցաւ:

ՊԼՏԱՆԻ Ժ.

(Ցեարանն ցուցանէ զներքին կողմն մատրան, ուր ի սեղանի կայ եղեալ խաչ և աւետարան . և յանդիման նոցա աշտանակ: Լուսարար կոյս մի վառէ զմամղէն: Մտանէ ի մատուռն Գայիանէ, և զհետ նորա Հոփսիսիմէ, Կունէ, Մանէ և այլք թուով եթմանասուն և երկու, որք զեռեղին յերարանչիւր վայրս հանդէպ սեղանոյ: Սաղայէլ կայ մերձ առ պատուհանին և առնթեր նորա Բելիար, և շնչեն: Իսկ Դազոն, Շանճիկ, Անահայ, Սամայէլ, Մամն կան հեռի):

ՍԱԴԱՅԷԼ (շնչալով).

Տես, Բելիար, այս կուսից մէջ ի՞նչ ջերմեռանդ հողիք կան:

ԲԵԼԻԱՐ (նոյնպէս շնչալով).

Սոցա հոգիք արդեօք մէկ օր մեզ էլ պիտի օգուտ տա՞ն:

ՍԱԴԱՅԷԼ (սեղեկ).

Քանի որ այս վանքի մէջն են՝ ի՞նչ օգուտ մեզ սոցամէն:

ԲԵԼԻԱՐ (նոյնպէս).

Արօսնց վանքէն շուտ հաննին էլ միթէ կախուած չ՞մ մեզմէն:

ՍԱԴԱՅԷԼ (փոխալով).

Ես էլ այդ եմ արդ մրտածում, որ այս անփորձ կուսանաց,  
 Մէկ հընարքով վանքէն հանենք . թող կին դառնան իշխանաց:

ԲԵԼԻԱՐ (ժպտալով)

Ես կարծում եմ որ շատ կուսան վանք է մրտնուժ ակամայ,  
 Օժիս չունի՝ որ ձոխ փեսի, հարսըն դառնալ կարենայ.  
 Բարեզք կըլնէր թէ սոցա դէմ ծածուկ դանձեր բանայինք.  
 Յետոյ սոցա հողոց եռանդ և ջերմութիւն տեսնէինք:  
 Վանի սքա այսպէս աղքատ վիճակի մէջ կան ձընշած,  
 Ի հարկէ որ չարս պատի մէջ պիտի մընան որոշած:  
 Այլոց փառքերն, այլոց կառքերն, այլոց շքեղ պըճնութիւն,  
 Սոցա սրբոց մէջ աներկբայ կը սերմանեն ցանկութիւն:  
 Ոչ պըճնատեր երեւեցաւ, ոչ ձոխ հարուստ այն շրջոր,  
 Աղքատութեամբ եկաւ զընաց և բազմեցաւ յաջմէ շօր:  
 Սքա երբ չեն գրանում զանձեր, աղքատութիւն են ընտրում,  
 Եւ ասում են «մենք շրջորի անցած ճանփան ենք պըտրում»:  
 Ի՞նչ ենք պահել խոր անդունդում արծաթ ոսկին լուսափայլ.  
 Հանենք բաժնենք, տեսնենք՝ կըմնան սոցա նախկին զոյն և քայլ:  
 Աղքատութիւն սոցա վարել է այս անել արդէլան,  
 Սքա էլ այժմ աղքատութեամբ են սոնքանում մէջ մարդկան.  
 Փեսայ չըկայ, սա ակամայ պահում է իւր կուսութիւն.  
 Սէր չը զիտէ, իւր կրօն և ուխտ պահպանում է եռանդուն,  
 Եթէ սքա հարբատանան, էր պիտի յնին միտան.  
 Ի՞նչ պատճառաւ նեղ մութ խցերն քաղցած ծարաւ կրկենան:  
 Երիտասարդք և պատանիք, ձոխ հարսնացուք որ տեսնեն,  
 Յայտնի չէ որ Բաղէից պէս մէկ մէկ վանքէն կը հաննեն.  
 Կարելի է որ դուրս չելլէ Վայիանէն մի միայն,  
 Այն էլ միայն այն պատճառաւ, որ չէ ի տիւ իւր ծաղկան:  
 Հըռիփսիմեայ համար ոչինչ էս այժմ ասել չեմ կարում.  
 Նըրան յարմար... այս էլ ի՞նչ է, քահանայ է ներս մրտնում:

ՍԱԳԱՅԷԼ (շնորհով)

Ստեփանոսն է երևի, եկել է որ ժամ ասէ,  
 Չը զիտն թէ քահանայն է, որ պիտի ժամն ըսկրէ:

ՊԼՏԻՆԻ ԺԱ

(Քահանայն սկիզբն արար երեկապաշտման. և զկնի Տէրունական աղօթից, սաղմոսաց և մաղթանաց, ի վախճան խաղաղականին կուսանք ծուր կրկնեցին և երգեցին):

ԳԱՅԻԱՆԷ (սկանի ի ձայն)

Մինչև յէրբ, Տէր, ոչ ողորմիս սուրբ խորանիզ նոր ուխտի,  
 ՀՈՒՓՍԻՄԷ (ի ծուկս անկեալ)

Ո՛չ առնես այց նոր Սիոնի, Տան փառաց Վո Անդրանկի,  
 ԿՈՒՍԱՆՔ (համախումբ)

Չոր իւր արեամբ մաքրեալ սրբեաց և հարսնացոյց շնորհօք,  
 Չի ծընեալ Վեզ որդիս լուսոյ պըսակեցի Վո փառօք:

ԳԱՅԻԱՆԷ

Միթէ յանյուշ մոռացութեան մասնեցի մահ Վո Որդոյ,  
 ՀՈՒՓՍԻՄԷ

Ո՛չ յիշեցի, զոր Նայն երեր պատարագ մեծ Սուրբ Մարմնոյ:  
 ԿՈՒՍԱՆՔ

Չոր յարգանտի Ամբիժ կուսին ընդ իւր Անձին միացոյց,  
 Եւ ի սեղան քառաթեւին զսհ ի հաճոյս Վեզ մատոյց:

ԳԱՅԻԱՆԷ

Գարձ առ մեզ Տէր ողորմութեամբ, զըթաւ և Վում պատկերին,  
 ՀՈՒՓՍԻՄԷ

Գըթա՛ Տէր մեր Վո զըթութեամբ, զի գործք եմք Վո Սուրբ ձեռին,  
 ԿՈՒՍԱՆՔ

Որ ի հողոյ կենդանածնեալ արարիւր Վեզ օթեան,  
 Եւ պըճնեցեր անմահութեամբ, անձառ սիրոյդ ի նըշան:

**Գ Ա Յ Ի Ա Ն Է**

Օ ազեա ի մեզ զողորմութեանդ զանբաւ զանհուն ճառագայթ,

**Հ Ո Ւ Փ Ս Ի Մ Է**

Եւ խորտակեալ զայթակրողին զաներևոյթ որոգայթ,

**Կ Ո Ւ Ս Ա Ն Բ**

Չ ի պաշտեսցի երկրպագեալ քաղցրիկ անուն մեր Փրօղին,

(Գ Ա Յ Ի Ա Ն Է և Հ Ո Ւ Փ Ս Ի Մ Է ձայնակցութեամբ ամենեցուն):

Եւ կանգնեսցէ զիւր յաղթանակ ահեղ նըշան Սուրբ խաչին,

(Ս Ա Դ Ա Յ Է Լ և Բ Ե Լ Ի Ա Ր Թ աւուրելու զահագիտին ի խոր Տարտարոսին):



**Յ Ե Ղ Ա Ն Ա Կ Ե Ր Կ Ր Ո Ր Գ**

**Պ Ա Տ Կ Ի Ր Ա**

(Ցեաբանն ցուցանէ զՍաղայէ և զԲեղար ի խոր Տարտարոսի յորսնս անկեալ ի լճին ՏՃՏՅՅ  
ի հեծութիւնս):

**Ս Ա Դ Ա Յ Է Լ**

Ա յն օրվանէն, երբ մեզ Հրօն երկրնքէն փայր զըլորեց,  
Եւ իմ անունս, որ Փայլակն էր, «Անկեալ-հրեշտակ» փոխադրեց,  
Ես այսօրվան նրման երբէք չեմ գոհալիտ զբարկած,  
Եւ խայտառակ ծրծումի ի մէջ՝ մինչ պարսմոց չեմ թաղված:

**Բ Ե Լ Ի Ա Ր**

Ես էլ ի՞նչ տեղ և երբ էի պսակս սաստիկ կործանվել,  
Գու միայնակ առիթ ետուր այս հարուածիս ենթարկվել,  
Հռիփսիմէ կոյսն խելքդ էր տարել, լաւ էր որ դու մարդ չէիր,  
Ապա թէ ոչ, այն աղջկան քեզ հարսն պիտի կոչէիր:

**Ս Ա Դ Ա Յ Է Լ**

Հերիք խօսիս, Բեղար ջար, իմ ցաւերս ինձ հերիք են,  
Գու ևս վըշտեր մի աւելցուր. մեզաղբանք ի՞նչ կարիք են.  
Այդ խօսքերով-խոհ թեւերդ չեն նորոգվիր, պընդանար,  
Եւ հարուածի ցաւերն քեզմէն-խոհ բընաւ չեն մեղմանար:

**Բ Ե Լ Ի Ա Ր**

Ի հարկէ որ ոչ երկու թեքս կը նորոգվին, ոչ փետուրք,  
Ոչ ցաւք աղեացս կը մեղմանան, ոչ փարիս խիթք, ոչ սարսուռք.  
Բայց ես դարձեալ պիտի կըրպիմ, ընդէր պիտի մօտենանք,  
Այն տեղ, ուր որ պիտի աղօթք անեն մարդիկ կամ կուսանք:

Ս Ա Դ Ա Յ Է Լ .

Միթէ արօթք մեզ խորտակեց, կամ կուսանաց երգե՞լը,  
Մեզ կայծակի նրման հասաւ ահեղ անուան յիշե՞լը .  
Եօթանասուն երկու կուսանք միարեւրան ասացին,  
Թէ կանգնեսցէ զիւր յաղթանակ ահեղ նրշան Աուրբ Խաչին :

Բ Ե Լ Ի Ա Բ (կողկողագին).

Վայ, վայ, կրքին ծանրանում են իմ խորտակված թեւերը .  
Իւրապատիկ աւելնում են կուշտ ու կողիս ցաւերը .  
Ինչէ՞ ես դու բերան բերում այն կուսանաց երգածը,  
Ներանք չէի՞ն, որ մեզ վերայ բերին այս մեծ հարուածը .  
Կուսանք ասին, մենք լլսեցինք, ու փառքերըս ըստացանք .  
Եւ ի՞նչ պէտք է մեզ կրքինէլ այն մեր գէմ արած աղաչանք .  
Տեսա՞ր, ի՞նչպէս զօրութիւն կայ այն սոսկալի անուան մէջ :

Ս Ա Դ Ա Յ Է Լ .

Ես կարծեցի, թէ շրջօրն այն կրքին մարտիւ մեր գէմ էջ .  
Եւ բարկութեան իւր կայծակունք նորոգ թափեց մեր զգլին .  
Եւ արձիճի նրման տուեց ծարմութիւն մեր թեւերին :  
Չարմանք բան է, որ այդ անուն բազում անգամ ենք լլսել,  
Երբէք այսպէս փորձանաց մէջ չէինք այսչափ խոր սուգել .  
Երևի թէ այս ևս մէկ նոր երախտիք է շրջօրէն .  
Որ այսուհետ պիտի Նորա անուն մէջ չըսիչեն :

Բ Ե Լ Ի Ա Բ .

Շատ սոսկալի սեւարան էր . եօթանասուն երկու կոյս,  
Որ շրջօրին էին դրել իւրեանց հաւատ, սէր և յոյս .  
Երբ ձայնեցին միարեւրան... եօթանասուն երկու շանթ,  
Նոցա բերնից դուրս բրդեցին, մեզ զլրեցին յայս վեկանդ :

Ս Ա Դ Ա Յ Է Լ .

Վիչ մինաց որ դու էլ պիտի այն անունըն յիշէիր .

Եւ իմ փորի խիթք ու ցաւերն նորոգ պիտի շարժէիր .  
Եւ այդ ընդէր ենք այսպէս թրմիած, և յուսաբեկ վըհատած,  
Մըծուճի մէջ այրվում ենք . խոհ ոտներս էլ չե՞ն կանգած .  
Վեր կաց, դուրս գանք այս մութ տեղէն, սիրտս ըսկրնաւ նեղանալ :

Բ Ե Լ Ի Ա Բ (խոտու նայելով).

Վո այդ սիրտ դեռ նոր ըսկրնաւ խորխորատի մութ ըզզալ .  
Եյն շանթերի ահեղ փայլերն ինձ զարկել են կուրութեամբ,  
Ես դուրս էլ գամ, էլ չեմ կարող ինձ ըսկրնել տետութեամբ .  
Կամ Սողոմոնյ հարուածն է այս, որ աչքիս մէջ լոյս չբեցայ,  
Կամ եզիպտեան շոշափիլի խաւար ու մութն է ներկայ :

Ս Ա Դ Ա Յ Է Լ (բուռն աւնելով տէճին).

Չէ . քեզ միայն այս մութ տեղում խաւարն այնպէս է թրուում,  
Որ կարծում ես, թէ շանթիկներն աչացդ մէջն են միշտ փայլում .  
Չը գիտես որ՝ այս է անրոյս ահեղ խաւարն արտաքին,  
Եյս տեղ մենք էլ, որ հրեղէն ենք, լոյս չենք կարող տալ մութին .  
Մի վախենար, մենք շուտով չենք այն շանթերից կուրանար,  
Վեռ շատ պիտի գործեր գործենք . շարժիր և մի՛ ծուլանար :

Բ Ե Լ Ի Ա Բ (կողկողագին).

Հուստոս ինձ, Տեղակալ տէր, թոյլ են ձեռքս էլ, ոտներս էլ,  
Ոչ վեր կենալ եմ կարանում, ոչ նրստիլ և ոչ շարժել,  
Խող որ մէքիչ հանգրտանամ, ջախջախուած եմ չաչարար .  
Ինձ թրուում են որ հարուածներ նորոգվում են անդադար :

Ս Ա Դ Ա Յ Է Լ (դժկամեց).

Թէ ճշմարիտն ես դու ինձմէն ուզում լլսել, խմանալ,  
Ես էլ ի նոյն ի պատժի կամ, բայց կամում եմ դիմանալ .  
Փոյթ չէ, մէքիչ պառկինք այս տեղ, խոհ մեր տեղն ենք դրժխորում,  
Թէ աթուում լինինք նրստած, թէ ընկրված ծրծրմում :  
Վանի որ այն միտս է գալիս, եթէ Վրիզոր կենդան է,



Եւ Հայաստան օգնել նրան պիտի երթայ Հոփսիմէ :  
Ձեռքս ու ոտքս թուլանում են, կարծում եմ թէ Հըլօրըն,  
Պիտի մեր դէմ միևսանգամ նորոգէ այն մեծ օրըն,  
Եւրօր նրան Փայտի վերայ կախուած տեսաւ Խնայէլ,  
Ու չինացաւ, եթէ այն Փայտ իւր և մեր դէմ է կանգնել :

ԲԵԼԻԱՐ (Թախճապին)

Թէպէտ դրտանք պէս պէս հընարք այն Փայտ ի խոր թաղերը,  
Բայց ի՞նչ օգուտ, որ այն Փայտէն թոյլ սրւինք ծխղ կրտրելը .  
Չը կարացինք ամբողջ ծածկել . Պատրոնիկէն մասն աւաւ .  
Եյս այն մասն է, որ մեր գրչին անտանն լի ցաւ դաւաւ,  
Ե՛ր, կրչին՞ մէկ այնպէս օր, որ այս մասն էլ թաքցընենք .  
Պարել է, թէ այդ ճանիով մէքիչ հանգիստ դրտանենք :

ՊԵՏԻՐ Բ.

(Սասնայէլ եկն ի մթան անդ, և եղիտ դետա յորտայս անկեալ յերես ծծմբային լճին) :

ՍԱՄԱՅԷԼ (առ Սաղայէլ)

Լճնապատիւ Տեղակալ :

ՍԱԳԱՅԷԼ (ունքն չցնելով Սասնայէլին)

Է՛հ, զարմանք են, Բելիար ջան, բո այդ ասած խօսքերըն .  
Երևի որ դեռ չըզխես Հըլօրի խոր միտքերըն .  
Հոփսիմէին-խոհ խնայանք, մէկ աղջկէ էլ ուրիշ կայ,  
Որոյ ձեռքով նա մեր պահած Փայտն էլ պիտի զրաննէ տայ :

ԲԵԼԻԱՐ (զարհուրեալով)

Ե՛ս քեզ այդ էլ նոր տըրտոց, փորիս մէջ նոր աղաքար,  
Որպէս թէ վիշտ, ցաւ, ստուապանք սրտիս խորքումն սակաւ կար :

Ի՞նչ հնար արդեօք պիտի զրտնեն, կամ ի՞նչ հընար բանեցնեն,  
Որ այն Փայտն աղբի տակէն, այրի մէջէն դուրս հանեն :

ՍԱՄԱՅԷԼ (հառաչելով խօսքի մէջ մտաւ)

Երկու հարիւր յիսուն տարին մօտենում է այն օրից .  
Մինչ այն Փայտն հընարներով մենք մասնեցինք Հըրէից .  
Նօքա շատ լաւ կատարեցին մեր դիւական ցանկութիւն,  
Եյն Փայտ գրչին մէկ այրի մէջ՝ ըզգոյշ, ծածուկ և թագուն,  
Յետոյ, տեսնեմ, որ ըսկրսան այրի դրտանն աղբ կուտել .  
Եյն աղբ ո՛չ թէ միայն այն այր, ծածկեց բոլոր այն սարն էլ :

ԲԵԼԻԱՐ (յուզոց հանելով)

Եյն սարըն չէ՞ր, որ մեր տունըն հիմնայատակ տապալեց,  
Չըլնէր Սոմնաս հանդերձապետ, որ այն սարը միտք բերեց .  
Ձըրհեղեղ այն լաւ էր շինել, հաւասարել բորբըն,  
Բայց Երրահամ, Մեկքիսեղէի ձեռք առնելով Հըզօրըն,  
Քիչ քիչ մարդոց միտքն էր բերում զըրախտըն կամ Աղամին .  
Վամ խկ այն տեղն, ուր որ Վայէն մեր ճանկ մասնեց Արեղին :

ՍԱԳԱՅԷԼ (մտածելով)

Մարդիկ մինչև այսօր էլ չեն հաստատութեամբ իմանում,  
Թէ Գլախտ Աղեմ ո՞ր տեղումն էր, և ի՞նչ տեղեր են զընում :  
Մեկ ի՞նչ փոյթ է, թող սըտըրտեն, թէ որ զրտնեն, պարծենան .  
Եյն մենք զխանք, մենք ենք ծածկել, մարդիկ ինչպէս կիմանան :

ԲԵԼԻԱՐ (կարեկցութեամբ)

Չարմանք բան է, իւր կեանքի մէջ մէկ օր չասաց Հըլօրըն,  
Թէ Աղեմի նախկին տեղըն էր Չիթենեաց այն սարըն .  
Քեր որ միշտ իւր աշակերտաց հետ զընում էր, նրատում էր,  
Եւ ուր միշտ իւր խըրատներըն Հըրէից հետ խօսում էր :

ՍԱԳԱՅԷԼ (աշխուժով)

Եյն պատճառաւ բերնով չասաց, որ գործով միշտ էր ցուցնում,

Ես գիտէի, որ Ադամի հետքն էր այն սեղ որոնում.  
 Քաջայարմար անուէն զրտանք նորա վերայ դրոշմել,  
 Մարդասէր բառն կարէ բարւոք նորա վարք բարք որոշել.  
 Եթէ ասէր, լաւ իմացէք, ահա՛ դրոսխտ այս սեղ էր,  
 Եւ կենաց ծառն իմ՝ Հօր ձեռամբ Առջ բըլրումն արնկած էր,  
 Գողգոթան էլ այն բըլրուն է, ուր որ Աբէլն էր հիմնել  
 Իւր սուրբ սեղան, և նորա մօտ ողջակիզվեց խոհ ինքն էլ,  
 Ամենիան էլ այն սարն էր, ուր որ Աայէն էր զոհում...  
 Ադամայ հողն այն սեղէն էր, ուր արդ ոսկերքն են հանգչում,  
 Եւայ այն սեղ կողէն հանուեց, ուր գերեզմանն է Իւր Մօր.  
 Եյն դէցամուլ ազգ Հըրէից Աստուած կանէր հին և նոր,  
 Նա իւր դործքով էր ցոյց տալիս, բայց բերանով չէր յիշում,  
 Չասաց, որտեղ էր հին Ադին, այլ ինքն այն սեղ էր շըրջում:

ՍԱՄԱՅԻԼ (նոցա բերնէն խօսքն առաւ).

Ուտի սուաւ հողն Ադամայ, ինքն ևս անդ խկ մահացաւ,  
 Եւ Ադամի չորցած գըլուխն այնտեղ այն օր երեցաւ.  
 Իւր մարմինն էլ այնտեղ թաղուեց, ուր որ Աբէլն էր թաղուած,  
 Զըրհեղեղէն ժամանակներն աւազ խիճով լըբըրված.  
 Մեղքխեղէկ էր անդ թաղուել, թաղողն եղև Աբրահամ.  
 Իւր նախահօր ոսկերտուաց անքուն պահողն յարածամ,  
 Սոմնաս այս վէմն էր փորվորել, որ Ասայի անխարկեց.  
 Յետոյ Յովէփ սեպհականեց, անձին շերիմ պատրաստեց:  
 Գեթսեմանին, ուր որ Ադամ մէկ օր հանդիտա քրնել էր,  
 Եւ Մարդասէրն նորա կողէն Եւայ կուսին հանել էր,  
 Ժամանակաւ Մարիամու նախնեաց դատաւ սեպհական,  
 Նորա այրում է արդ թաղուած բոլոր այն մեծ Գերդաստան.  
 Մարդասէրն էլ բազում անգամ զիշերն անդ էր ազանում,  
 Ընդորր սեղ էր առանձնութեան, անդ իւր մահն էր միտք անում.  
 Մերձ բըլրին չէր որ Հըրջըրն գէպ առ իւր Հայրն համբարձաւ,  
 Ինչի՞ն պէտք էր բերնով ասել, երբ նըշան տալ մարթացաւ:


ԲԵԼԻԱՐ (գուխն շարժելով).

Մենք ենք միայն յանցանաց տէր, որ աչքաբաց չենք կենում,

Երբ որ գիտենք, թէ կան հնարներ, վասն էր չենք այն դործ զընում.  
 Լաւ չէ՞ որ մենք յայտնենք բոլորն, որ մարդիկ այն կուռք շինեն,  
 Մեղ քան զայն էլ ի՞նչ է պիտոյ պըտրել ուրիշ զօրեղ զէն:

ՍԱԳԱՅԻԼ (հեղեղով).

Թեթևամիտ ես, Ինչուար, և չես վերջներն միտք բերում,  
 Բարիքնէն յետ Հըրէայք էլ կուռք կամ դիք չեն պաշտում.  
 Ոչ նախահօրց ժամանակներն կարելի էր այն յայտնել,  
 Եւ ոչ երբ որ Մարգարէներն գալիս էին քարոզել:  
 Նորա յորժամ փախադէլի էին անում զըրախտըն,  
 Ես ջանք էի զընում միայն խախտել նոցա հաւատըն...  
 Սոսիսական հին խըտրութիւնք կուռքերի սեղ կանգնեցի,  
 Մարդասէրն այն ծէսերուն նոցա զոհել զըրոզեցի.  
 Բայց լաւ չարի, ի խաբս ընկայ, մոլորվեցայ, փոշման եմ,  
 Միւս անգամ այսպիսի մեծ սխալանք պիտի որ չանեմ.  
 Ոչ թէ յայտնեմ այն սեղերն, այլ յայտնածն էլ հընարով  
 Գիտի նոցա ձեռքէն առնում, և թաքցընեմ մէկ կերպով.  
 Հընար չըկայ, այն Փայտ պիտի ժամանակաւ զրտանվի,  
 Նորա պաշտօն ամեն աշխարք պիտի փըռվի, տարածվի:



ԲԵԼԻԱՐ (հարցնելով).

Չեմ հասկանում, թէ ի՞նչ հընար պիտի զընես այն աղջիկ,  
 Որ իւր կորած սեղէն հանէ չարչարանաց այն դործիք,  
 Ոչ ապաքէն Արուստղէմ նոր շինեցաւ, հինք չէ,  
 Ի՞նչպէս պիտի այն օրիորդ Փայտն անդունդէն դուրս կանչէ:

ՍԱԳԱՅԻԼ (աշխուժով).

Մենք խոհ բոլոր Արուստղէմ զոհեցինք այն խորհրդին,  
 Որ չամբնայ աշխարհ գալոյ ինչ յիշատակ Հըրջրին.  
 Իէթ լեհէմն էլ կործանեցինք, Յորդանանն էլ ծածկեցինք,  
 Արուստղէմն էլ քանդեցինք, Նազարէթն էլ ջընջեցինք,  
 Բայց ի՞նչ էլ որ մենք արարինք, ամենն էլ էր թոյլ տալով,

Հրգորն իւր ժողովրդեան դէմ փակել էր իւր գորով .  
 Եւ Հրէից միտքը դարձրի Հրոմնայ դէմ սուր հանել .  
 Սուր : Սուր բերեց քաղցրիկ Տխոսս , ապրտամբին նրամնել .  
 Կայխախայ Աննայի հետ զրժոխքի մէջ նրստեցան .  
 Երրահամու զոգն էլ չեկայր , սորա դառան վէմ անկեան ,  
 Եյն տաճարն էլ որ Տարտարոս առանձին տեղ շինուեցաւ .  
 Եւ կամարս քահանայիք ծայրէ ի ծայր լըցուեցաւ .  
 Սինեդրիոնն , որով զհոսեց այն Սուրը Հրգորն և Աննահ :  
 Անորջ եկաւ այն արդեւան , ուր որ կային Սնդք ու Սահ ,  
 Պատրոնիկեայ զալըն կասկած ձրղեց խոցուած սրտամբն .  
 „Զր լինի թէ կայսերք էլ գան“ , ինքս ինձ ասի մրտըումնս :



**ՊԵՏԿԱՆԻ Գ.**

(Մանն եկաւ և գտաւ այն երեքին մութ տեղն , և մնաց լուս .)

**ՍԱԴԱՅԷԼ (Հարունակելով).**

Ի՞նչ զարմանք էր նրանց դալն էլ , Փայտի սպաշտօնք ամեն տեղ ,  
 Օր ըստ օրէ դառնում էին ընդունելի և զօրեղ .  
 Եւ աջ այն Փայտն ծածկել արի , յետայ կորցրի քաղաքն էլ ,  
 Յետոյ տաճարն էլ քանդեցի , ինչպէս Ինքն էր գուշակել .  
 Երուսաղէմ նոր շինուեցաւ , դարձեալ դառաւ մեծ քաղաք ,  
 Տեսնեմ՝ կրկին զօրանում են նորա միջին բրխտանկայք .  
 Արբիանոս կայսեր սիրտն զբոլորեցի հրնարբով ,  
 Երուսաղէմ քանդեց սրբով , այրեց մաշեց կըրակով .  
 Օգուտ միայն ինձ այն եղև , որ յաճախեց կատրած . . . .  
 Եյն օրվանէն Հրէից ազգն ամեն տեղեր կայ ցըրուած .  
 Մէկ Հրէայ ազգիկ գատաւ Արբիանոս կայսեր կին ,  
 Արբիանոս նորա սիրով շինեց քաղաքն այն կրկին .  
 Քառակուսի սարկապատրստ այն առնելոյ միջոցը ,

Գողգոթան էլ մէջն ընկաւ , որ առաջ կայր միշտ դաւար :  
 Զը հաճեցայ կայսեր զործոյն . ասի „անունն զէթ փոխուի“ .  
 Եւ նա Լչլա Կապիտոլին կոչեց անուն քաղաքի :  
 Եւ կարծեցի նախ թէ Հրոմնայ Կապիտոլինն խօսքէն է .  
 Բայց խնացայ որ Ադամի նոր գըտած չոր զըլեկն է ,  
 Զանք և ձրղուեքս միայն արի այն որ աղբիւսն մեծանայ .  
 Մինչև այս օր տեսնում էք-խոհ , ի՞նչքան էլ տի բարձրանայ ,  
 Բայց թէ ասած այն աղջիկ դայ Երուսաղէմ քաղաքըն ,  
 Եյն աղբիւսներն կը մաքրովին , և դուրս կուգայ այն Փայտըն :

ԲԵԼԻՍԷ (Ղտացած).

Հերակլեաի պէս սպաքէն պիտի դարձնեն Յորդանան ,  
 Որ այնքան աղբ յարգահոսան այն գետին տալ մարթանան ,  
 Եպա թէ ոչ՝ ուրիշ հընար արկարանամ մրտածել .  
 Թէ այն աղջիկ ի՞նչ հընարներ արդեօք կարէ զործ ածել :

ՍԱԴԱՅԷԼ (Ժպտալով).

Երի՛ ասեմ , թէ ի՞նչ հընար կը յաջողէ զըտանել ,  
 Որ այն աղբիւս դարձեալ Հրէից ձեռօք զօրէ փրացնել .  
 Զայն կը հանէ կիզ՝ համբաւով , թէ անդ գանձեր թաղուած կան ,  
 Կը տարածէ հրաման սատովի , որ անդ հրէայք մօա չերթան .  
 Մէկ քանի տեղ էլ քանի բուռ ոսկի արծաթ կը սրիտէ ,  
 Թէ կարող ես այնուհետև Հրէից սանձել , փորձ փորձէ .  
 Հրէայք կերթան Գողգոթայէն որ այն գանձերն զողանան ,  
 Եւ թէ մի որ սխաւած ոսկեայ դահեկան մի գըտանէ .  
 Արծաթամու հրէից խելքն նորին լըրով կը տանէ ,  
 Ի սէր ոսկոյ այն աղբի կոյա մոմի նրման կը հալվի .  
 Ոչ որ կարող չէ խմնալ , թէ այն աղբ ո՞ր կը տարվի ,  
 Երկու հարիւր յիսուն ամաց զիջեալ աղբիւսն զողանալ ,  
 Բաւական է երկու ամիս , երկու տրամ աղբ չի մընալ :

ԲԵԼԻՍԷ (զարմանալով).

Իրաւ խելօք ես , Սադայէլ , այդ հընարքին խօսք չեկայ ,

Գող հրէից ձեռքով ոչ աղբ, սարն էլ վախեմ, որ երթայ.  
Եյնուհետե բարեաւ մընա պիտի ասենք աշխարքին,  
Երթանք մրտենք մեր ծակածուկ, ինչ որ կայ մէջ դրժուրքին,  
Եւ Բեւիարդ չի պոշարվիր, կը մոռայվի անունն էլ:

Ս Ա Դ Ա Յ Է Լ (շտապելով).

Միթէ աւել բարերաստի՞ն պիտի լինի Սաղայէլ.  
Մենք այն օրն իսկ սրբապնդանք. երբ Հըզօրին մեռցըրինք,  
Նորա մահուամբ մենք ինքներա մեզ վերք մահու հասցըրինք.  
Ընդէր մոռցանք հին հին անցքերն, մոռցանք Ուրբաթ օրերը,  
Որ Երարիչ այն օրն ըստէպ էր անում մեծ գործերը:  
Ուրբաթ օր չէր, որ Եզամին, բռն մ' հող առած մարդ կազմեց,  
Եւ իւր անձաւ նրանմութիւնն հոգւոյն վերայ դրոշմեց:  
Գողգոթայի սարի մօտէն ձեռքից բրունած իջոյց ձոր,  
Հանդարտաբայլ անոյց նորան ճանապարհըն այն բորբ.  
Տարաւ Գըրախա Չիթենեաց սար, Գեթսեմանի պարտիզում,  
Միւս Ուրբաթ օրն չըսեսանք որ Եւայի հետ էր զուգում:

Բ Ե Լ Ի Ե Բ (յուշ իւր դանձարով).

Իրաւ ասիր, ո՞վ Երուսեակ, Ուրբաթ էր այն մեծ օրն էլ,  
Որ կարացինք մենք Եւային խարել, լուսէն մերկացնել.  
Եզամ Եւայ նոյն Ուրբաթ օրն այն վիճակէն դուրս եկան,  
Եւ այն իսկ օրն Երուսաղէմ ի դէմ Գրախտին բնակուեցան:

Ս Ա Դ Ա Յ Է Լ

Ուրբաթ օր էր, որ Այայենն էլ մահու մասնեց Երէկին,  
Ընմեղ արեամբ ուռղեցաւ դատապարտուած այն գետին.  
Որ փուշ տատասկ պիտի բերէր. այն ևս մանրիկ տատասկ չէր,  
Երբոր որդւոց մին կայր մեռած, միւսն էլ կատղած կը փախէր:

Բ Ե Լ Ի Ե Բ.

Ուրբաթ օր չէր, որ հողագունան ջրհեղեղով կործանվեց:

Ս Ա Մ Ա Յ Է Լ

Ուրբաթ օր չէր, որ Քամ Եւային մերկ տեսաւ ու ծաղր արեց:

Մ Ա Մ Ա Ն (խօսի մէջ մտնելով).

Ուրբաթ չէր որ Մելքիսեղէկ Եբրահամի դէմ ելաւ.  
Հացով զինով իւր տասներորդ ծառան ծոռին երեցաւ:

Ս Ա Դ Ա Յ Է Լ.

Եյն էլ Ուրբաթ պատահեցաւ, որ Եբրահամ Սահակին,  
Պիտի զօհէր, բայց նորա տեղ կախուեց խոյն ի Սաբէկին:

Բ Ե Լ Ի Ե Բ.

Ուրբաթ Սահակ Լսաւի տեղ օրհնեց խարոզ իւր որդւոյն,  
Յակօր Ուրբաթ տեսաւ ճանիին սանդուղք ի մէջ երազոյն:

Ս Ա Մ Ա Յ Է Լ.

Ուրբաթ եղբարք անպատում վաճառեցին Յոսէփին:

Մ Ա Մ Ա Ն.

Ուրբաթ նորան բանտ արկանել դահճապետին տընց կին,  
Յովսէփ ճանչցաւ իսկոյն զիւր քոյրն, բայց նա զեղբայրն չըճանչցաւ.  
Պանդրխտութեան մէջ իւր եղբօրն մեղինով թակարդ լարվեցաւ:

Ս Ա Դ Ա Յ Է Լ.

Մոսէս Ուրբաթ Եզիպտոսէն Իսրայէլին չազատեց,  
Որ մէկ հարմամբ գաւազանի Արմիր ծովն պատարեց:

Բ Ե Լ Ի Ե Բ.

Ուրբաթ չէր որ Մաղէկի դէմ պատերազմ խըմեցաւ,  
Մոսէս բազուկըն բարձրացուցած մինչ երեկոյ կանգնեցաւ:

Ս Ա Մ Ա Յ Է Լ.

Եյն օր պիտի հասկանայինք, չը թողնուինք վերստին,  
Որ Գողգոթա բազկատարած կախվէր Հըզօրն ի Փայտին:

Մ Ա Մ Ա Ն.

Ուրբաթ օր չէր, որ Յորդանան զետէն անցաւ Տապանակ,  
Երկրպիւսն պարխազ անկան, և անմատոյց բուրբ Եօթնեակ:

Ս Ա Մ Ա Յ Է Լ

Եւ միտք չարի որ այսքան անցք դուշախութիւն կանէին,  
 Միայն մէկ հաս ուրբաթ օրվան, երբ պիտի իմ դէմ գային.  
 Յոհաննէսի մահն էլ բընաւ զգուշութիւն ինչ ինձ չ'առ թեց,  
 Ար յուսացեալ Փրօղի զալուսան զբժոխոցս մէջ աւետեց:  
 Գոնէ պիտի Ղազարոսի յարութեամբ աչք բանայի,  
 Ար յարութիւն պարգեւողն էլ զբոնից ներս չաւնուի.  
 Յոհաննէսի ձայնարկութեամբ ոտքի ելան նոր ու հին,  
 Եւ նախաստեղծն նոր աւետիս ըսկրսեց տալ Եւային.  
 Եսաց, ահա, Երկրորդն Ադամ հասաւ նըպատս Առաջնոյս,  
 Ինձ անկասկած հաւատացոյց աննըռուը ձայն բարբառոյս:

Մ Ա Մ Ո Ն

Եբէլ կանչեց, „Ճամանակն է, որ իմ արեան վըլէժըն  
 Երգարութեան հասուցանէ Մեղաց, Սոհու շրբէշըն.  
 Ենպարս Երեմբ Մահուն խայթոց ժանգահարուած հասանի,  
 Եւ Մեղաց հուրն զօրեղ Փայտէն անգօր մինայ, շիջանի:“

Ս Ա Մ Ա Յ Է Լ

Եւայ կանչեց, „Ադամ, ես քեզ չասի՞ թէ իսկ այն զիշեր  
 Ես մանկարարձ եղէ տղին, որ Մարիամ ծընել էր.  
 Եյն այրումն էր իմ գերեզման. կէս զիշեր էր, զարթեցայ,  
 Մանուկն առի, համբուրեցի, կրթիկն հանդիստ պատկեցայ.  
 Աոյս էր Սուրբ Մայրն, ծընածն Եստուած, Տրդայն էր ծեր հինաուրց.  
 Երկնից երկրի Ստեղծողի ծնող Օրիորդ զեռաուրց.  
 Ես ճանչցայ և աւետիս տըւի քեզ դէպ Գողգոթայ,  
 Եթէ քո չօր սակրոսեացդ այցելու է այս Տրդայ:“

Բ Ե Լ Ի Ա Բ

Ադամ ասայ, „Թէ քո ձայնիկդ չը լըսեցի, ո՞վ դու կին,  
 Բայց մէկ ուժգին ցընցումն ըզգայ հողում վըտած իմ մարմին.  
 Աարծեցի թէ Երարաչապիան կրթիկն ինձ մօտ է եկել:

Եւ կամենում է ինձ հողից նորաստեղծել և կանգնել:  
 Իսկ ախանջեա մէկ ձայն եկաւ, Բէթղիհէմ էր ձայնողը,  
 Եսում էր թէ՛ էլ ոյժ չունի օձաջամբ այն պրտուրը.  
 Կենաց ծաւն է արմատացել, Ադամ, քո մօտ թ ապանում,  
 Եւստ կը տեսնես քեզ վերըստին երանական Ազինում:“

Ս Ա Մ Ա Յ Է Լ

Նոյ էլ վաղեց առաջ եկաւ, նախածնողաց հետ խօսեց,  
 Եսաց, „Ես էլ քեզ մօտ էի, երբ այդ իսկ ձայն քեզ լըսեց.  
 Ինձ էլ ուրախ աւետիս ետ, թէ ցաւքեցաւ ջըրհեղեղ,  
 Միւս անգամ պիտի մարդոյն մեղքէն փրկէ Փայտն ահեղ:“

Բ Ե Լ Ի Ա Բ

Երրահամ էլ տեղէն կանգնեց, գողցեց հողիքն վայր զըրեց,  
 Աւ նախաստեղծ գերիներին աչքելոյս տալ ըսկրսեց.  
 „Ինձ հաւատո՞ւ, ասաց Ադամ, մեր նախահայր առաջին,  
 Ար էլ չիշիր Իսահակայ տեղ Սարեկայ խոյ զոհին.  
 Պատարազաց Օրէնրագիկն նոր ողջակէզ բերվելով,  
 Իսահակին պիտի փրկէ Աբէլիան սուրբ արիւնով:“

Պ Ա Տ Ն Ա Բ Գ

(Մինչ մաթն տեղն սորա սյուզես խօսում էին, եկաւ նոցա մէջ Անահիտ, բայց նորա իրանց խօսակցութիւնն առաջ տարան):

Ս Ա Մ Ա Յ Է Լ (հառաչելով)

Թէպէտ ամենն էլ մրտքումս էր, այց զեռ չէի հասկացած,  
 Քառասուն օր էլ փորձեցի, կեցաւ ծարաւ ու քաղցած,  
 Աչ հաց ուզեց և ո՞չ պատիւ, և ո՞չ թագին ցանկացաւ,  
 Ես խարուեցայ, Նորա մարմին, իմ աչքերիս քօղ զարձաւ,  
 Եյրի կընօջ որդոյ յառնելն որ պատահեց Նայինում,  
 Կամ Յայրոսի զըստեր անցըրն չերեկեց ինչ իմ աչքում:

Եղիսէն էլ էր յարուցել, ոչ թէ միայն կենդանի,  
 Եյլև ոսկերքն մինչդեռ թաղուած կային ի հող տապանի.  
 Իսկ Վազարու չորեքօրեայ ըսկրսել էր և հոսել,  
 Երկու քոյրերն առաջ եկան, նրան արտասուօք գութ շարժել.  
 Որ ցաւակից լիցի նոցա, եղբօր մահըն պատմելով,  
 Նա ևս պատուեց բարեկամին իւր արտասուքն թափելով:  
 Ես հանգամանքն վաղ գետէի, որ Նա Նըրանց սիրում էր,  
 Եւ Վազարու Նըրան սրտանց ընդունելով պատվում էր.  
 Ի յիշատակ սիրոյն երբ օր Վազար ընկաւ իմ ճանկը,  
 Չեռքին, ոտքին ու շըլնքին դրի իմ ծանր կապանքը.  
 Եւ դրժօխքի մէկ քրնջուժը ամուր կապած, կաշկանդած,  
 Եյն չորս օրը Վազարուր մինաց բանտում արգելած.  
 Յանկարծ լուուեց ահեղ այն ձայն «Երի գուրս ել Վազարէ»  
 Վազարու իւր շղթայք կապանք հանեց ձեռք ու ոտներէ.  
 Պառկած տեղէն ելաւ կանգնեց որդէս թէ բնաւ մեռած չէր,  
 Տեսնեմ, շղթայքն ձեռքով բռնեմ, պարանոցէն հանում էր,  
 Ես շուարուած էի դեռ ևս, արդեօք բռնեմ, արգելեմ,  
 Եւ իւր նախկին տեղն, ուր առաջ էր կարկանտած ես գրեմ,  
 Բայց տեսայ որ այն մէկ ձայնի արձագանքն մարմնացած,  
 Չեռն է մըխել իմ խորշիներս հետազօտել ջահ վառած.  
 Եյն դարապետ, որ կարգած էր Վազարուին պահպանել,  
 Ոտք և ձեռքն յետեւ կապած, գետնի վերայ էր փրօվել.  
 Որքան կային Վազարուներ ի սկզբանէ աշխարհի,  
 Եմենեքեան ոտքի ելլան, երբ եղև ձայնն լսելի.  
 Վազարուի աչք և երես վարչամակով էր ծածկած,  
 Արտաւնեքով էր ինքն պատած, երկգապինդ ըզմբուսած.  
 Բայց ուղիղ դնում էր դէպ ի դուռն և ճանխան չէր խտտում,  
 Կենդանուց պէս էր ման գալիս, և ոտք չէին գայթակղում.  
 Վախեցայ թէ մի գուցէ ձայնն մէկ էլ հընչէ իմ տանըն,  
 Եւ տակն ի վեր անէ դրժօխքն, բանդէ իմ հին դարանն.  
 Կամ ինքնին գայ և ներս մըանի. հետո ըսկրսի մարտընչել.  
 Գիտես որ այլ շաւիղ չունինք Տարտարուէն դուրս փախել.

Եսի թոյլտամ, որ հեռանայ, ձեռքէս դուրս գայ Վազարու,  
 Որ չմըանի Սանգարամեք՝ Մեծ ստեղին մեր Քրիստոս:  
 Եյլ նա մըտքումն ունեցելէ իմ ամուրքս էլ մըտանել,  
 Եւ այն Փայտով՝ Մեղաց-Մահու ձեռնակապերն հատանել.  
 Վազարուի այն յարութիւնն իբրև հնար ինչ ձեռք առի,  
 Իշխանք և ծերք առ հասարակ ընդդէմ Հզօրին կանգնեցրի,  
 Եշակերտաց մէկի սիրարն ինձ քաշեցի՝ որ մատնէ,  
 Եւ այս մատնիչ, դուք-խոհ գիտէք, մեր սիրական Յուդան է,  
 Քո գանձերին էր ցանկանում, իմ պատուելի, Բեյխար,  
 Միտք չէր բերում, որ այն Յիսուս էր իւր ներող բարերար:

Մ Ա Մ Ո Ն

Թանդ չը նրոտաւ մեզ այս փաճառ. թէպէտ առաջ շատ ուզեց,  
 Բայց երբ տեսաւ փայլուն արծաթն, երեսնին ևս յօժարեց:

Ս Ե Դ Ա Յ Է Լ

Չեմ խմանում թէ այն միջոց ինչ մարտ միտք յըզացայ,  
 Իմ տան կորուստ իմ գօրութեամբ փայտոյ բերել փութացայ,  
 Հազար հնարներ ի գործ եղի՝ մինչև ամենք ոտք ելան,  
 Նիկողիմոս Յոսէփի հետ իմ գաղտնի բարք չըտեսան,  
 Կայիափա քահանայիւք արարի ձեռքս մեծ գործի,  
 Եւ հրէական ծերակոյտ ինձ աւանդեց սիրտ և հողի:

Ա Ն Ա Հ Ի Տ

Երուսաղէմ շատ մարդարէք էր կուլ տըւել և սպանել,  
 Ոչ առաջին և ոչ վերջին կարծեօք պիտէր սա լինել.  
 Գեռ վեց ամիս չէր անցել որ Յոհաննէսին ճանփեցինք,  
 Սալմէի ոտից կաքաւ սքանչահարաշ բան ցուցինք.  
 Կարապետին տարել էինք, Հետևորդին ևս տաննք,  
 Եստղն ասինք մեր ձեռին է, Երևն էլ շուտ մըտընենք:

ՊԼՏԱՆԻՐ Ե .

(Ռեդեգոր եկաւ, և ուզում էր խօսակցութեան մէջ խառնուիլ, բայց ոչ որ ականջ դրեց նորան, ամենքեան կամենում էին իւրեանց միտքն յայտնել)

Ս Ը Մ Ը Յ Է Լ .

Եկաւ հասաւ Պատերի Տօնն՝ հարբած էին շքեայք,  
 Իմ կողմանէ ժողովորդեան հետ խօսեցան քահանայք,  
 Ամենայն ինչ պատրաստեցի. բաղարջակեր Տօն եղաւ,  
 շինգշաբաթի երեկոյն, ի վերնատան բազմեցաւ,  
 Ես ևս եկայ Յուդայի հետ՝ նորա սըրտում թաք կեցած,  
 Ինչպէս մէկ օր Եւայի մօտ՝ օձի լեզուի տակ նրսսած .  
 Ինձ չէր տեսնում մեսասանից մէջէն բնաւին և ոչ ոք .  
 Մի միայն նա էր ինձ տեսնում սասուածային իւր աչօք :  
 Պառն կերաւ այլոց նրման, յետոյ լըւաց ոսները,  
 Յետոյ առաւ հացն ի ձեռն, ասաց «Եւէք այս հացը»,  
 Բաժակ արւեց, ասաց «Երբէք». շացրն՝ Մարմին էր ասում,  
 Պինին՝ Երիւն. այս խօսքերէն ես բան չէի հասկանում,  
 Մի ասեր որ Մարմին-Երիւն այն մրտքով է նա ասել,  
 Ար միւս օրն Փայտի վերայ պիտէր նոր զոհ սահմանել :  
 Երբ վերջացրուց այն ընթրիք ևս, վերնատունէն դուրս ելաւ,  
 Միտն սարից իջաւ ձորքն : Մինչ նա Աեդրոն մօտեցաւ,  
 Ես Յուդային փութացուցի քահանայիցն ի ժողով . . . .  
 'Նորա աչքն արդէն կուշտ էր զանձանակի շօր փողով . . . .  
 Եռաւ զինուորք, հասաւ պարտեզ՝ որ Ձիթենեաց հովտումն էր,  
 'Նա մութ սեղնն բրունտղների դարոյն վըստահ մընում էր :  
 Եկաւ խուժանն : Յառաջընթաց ամենեցուն էր Յուդան .  
 Եւ կատարեց, ինչ զեր որ անդ էի յանձնել ես նրբան,  
 Բըռնել արւեց, տարաւ հասոյց Երուսաղէմ քաղաքն,  
 'Նորան մահու արժան տեսան իշխաններն և ծերբքն :  
 Մէկ էլ տեսնեմ, որ մեր Յուդան փոշմանութիւն ցոյց արւեց,  
 Տարաւ արծաթն քահանայից փարիսեցուց շղարուանց,

Եսաց, «Մեղայ, որ Ենպարտին արիւնն ի մահ մասնեցի . . .  
 Լաւ խնայեք, որ արդար է, Ենմեզ, բընաւ մեղք չունի» :  
 Մինչև հասայ Յուդայիս մօտ, վաղեց զընաց զեօղ արեան,  
 Մէկ հատ նուշի ծառ հաւնեցաւ, արաւ ինքեան կախաղան,  
 Հասայ, ասի. «Յուդա, ի՞նչ են այս քո արած գործերըն,  
 Ինչի՞ համար քո երեսուն արծաթ տարար տաճարն .  
 Կամ այժմիկ էլ ի՞նչ է պատճառն որ ուզում ես խեղդ բնկնել,  
 Աւ իմ շրքեղ յաղթանակներն չես կամենում տեսնել» :—  
 —Մուտ ես ասում՝ կանչեց Յուդայ, ես չեմ փախչում հանդիսէն,  
 Բշտապում եմ այն Յաղթողի զարշապարաց յեակէն,  
 Ար երբ մըսնի քո տարտարոս և քարուքանդ տապալէ,  
 Երդարոց հետ ինձ էլ զըթայ, և զեհնեհ դուրս հանէ :—  
 «Ի՞նչ ես խօսում, ես հարցուցի, յիմար ես դու, թէ ի՞նչ ես,  
 'Նորա համար փայտ եմ տաշում, այն է նորա մեծ հանդէս,  
 'Նա ի՞նչպէս է կարող զալ և Սանդարամետ մըտանել,  
 Կամ Տարտարոս այնպէս կերտուածք է որ՝ զօրէ՞ կործանել :  
 Յուդան առ այս պատասխանեց, Ես բեզ պատմեմ ո՞վ եղբայր,  
 Թէ երբ նորան մասնում էի՝ իմ մըտքիս մէջ ի՞նչ բան կայր,  
 Ես-խոհ 'Նորա աշակերտն եմ, և ամենայն ինչ զխոսեմ,  
 Թէ նա աշխարհ ինչպէս պիտի փրկիէ, վաղուց տեղեակ եմ,  
 Բայց լաւ չէի հասկացել թէ՛ այն ժամանակ հասնելէ,  
 Ար նա պիտի մեռնի և իւր մահուամբ մեզ կեանք պարգևէ :  
 Քանի՞ անգամ տեսել էի, որ նա զինքն փրկիւ էր,  
 Երբ որ նորան ուզում էին բըռնել՝ նա խոյս արւելէր,  
 Ասի մտքումն ի՞նչ մեծ մեղք է մէքիչ փողեր առնելն,  
 Աւ հըրէից յիմար աղգին հընարներով խաբելն .  
 Տեսայ որ աղղն մարդ էր պըտում, որ իւր համար զէն շինէ,  
 Եւ նորանով մէքիչ նորա քարոզութեանց դէմ զընէ,  
 Ես կանգնեցայ այն մտքով թէ՛ փողերն կառնում, կըմատնեմ,  
 Յետոյ կըրկին կապաշխարեմ, ներողութիւն կը զըսնեմ,  
 Մանաւանդ որ չէի կարծում թէ՛ նա ի մահ կ'մատնվի,  
 Ետում էի «Երբ էլ ուզէ՛ փախուսաւ կուտայ, կըփրկվի» ,

Ես ինձ համար մէկ առուսուր կանեմ այն գործ մասնութեան,  
 Ես կրմանեմ, նա կրփախչի, լաւ հընար չէր ձօխութեան:  
 Բայց բանն այնպէս չը վերջացաւ, ինչպէս որ ես կարծեցի,  
 Խեղճի վերայ Մարգարէից խօսքը պիտի կատարվի.  
 'Նա պիտի գայ, քանզի Վրժոխքդ և Հողիններն ազատէ,  
 Երթամ շուտով՝ որ ինձ էլ հետ արդարներուն այց առնէ.  
 Միայն Ապէն պիտի մընայ, ջրհեղեղն մարդիկին,  
 Արուսպարիշտք, Ասուղ արքայն, որ բազանեցինք զինքն,  
 Եզիպտացիք ծովահեղձոցը, Աստուածամարտ Փարաւոն,  
 Եւ մէկ քանի ամբարիշտներ, որով լըն էր Բաբելոն:  
 Ես հասկացայ բանի նիւթըն, իմացայ որ Սա նա էր,  
 Արում Ադամ իւր ծընընդովք անդընդոց մէջ մընում էր,  
 Ասի՛ լաւ է որ խախանեմ բսպանութեան խորհուրդըն,  
 Պիղատոսի կընոջ ընդ փոյթ փոխեցի միտքն ու սիրտըն:  
 Ե՛յլ զօրացաւ ձայն ամբոխին և Պիղատոս վախեցաւ,  
 Իմ աթոռիս կործան զընողն՝ Փայտի վերայ կախուեցաւ:  
 Յուդայ թէպէտ ըշատուում էր, որ զեհնեում հանդիպի,  
 Բայց ես եղբօրս իմ զըրկաց մէջ եյբայրարար պահեցի,  
 Ար նա շուտով չըխեղդրվի, և շուտ չըրթայ Տարտարոս,  
 Աւր մըտել էր աւար առնուլ Փայտէն կախուածն այն Վրիստոս.  
 Չարմանք բան էր այն օրվան բան, ինքըն անշունչ Վողգոթայ,  
 Հողով մըտաւ Վրժոխոց մէջ, տեսնեմ Փայտն էլ ձեռին կայ,  
 Փայտն կըռուեցուց զըրանդներուն, զըզըրդեցան հիմունքըն,  
 Խորտակուեցան ամուր նիզերն, հաստակառոյց զըրունքըն,  
 Ընթիւ անհուն զէք, այսք, ողիք, բիւրք բիւրուց հրէշք խաւարի,  
 Չարհուրելի ճիւտադք ասեղք և արհաւիրք վեթխարի,  
 Աւրուականներն սրովք բըրովք դուրս թափեցան վեհերէն,  
 Ար յայն Փայտին Մեռանողն Հողին զէպ ներքս չընդունեն,  
 Մահն ու Մեղքըն Վժոխոց անգամ բըստըմնել զարհուրանք,  
 Առաջ թողլով եկան՝ իրանց փառաց աթոռն և դարանք,  
 Մահ իւր սրաբերան մանդաղաւ վնզեց նորան շահեցնել,  
 Իսկ Մեղք բընքոյշ պըքրանդներով կամենում էր շըլայնել.

Ե՛յլ նա Փայտին երբ ես հարուած, Մահըն կորոյս իւր մանդաղ,  
 Խայտառակուած հորնեցան Մեղքի հրատոյրք պատրանք չընաղ:  
 Անդամանդեայ սրախսպք և ումք ապակեոյ պէս պայթեցան,  
 Եւ պղնձաձոյլ բուրքը աշտարակք կործանելով՝ վըշրեցան,  
 Փայտ խորտակեց ամուր կապանք և երկաթի շղթայքըն,  
 Բսկիզըն արին մեղուաց հանդոյն մէկ մէկ դուրս դալ հողիքըն,  
 Ադամ, Եւայ, Աբէլ ու 'Նոյ, Աբրահամ, Յօր և Մոսէս,  
 Խորայէլէ հին 'նահապետք՝ աղատուեցան իմ բանտէս,  
 Սասանել էր իմ հրաշափառ աթոռ և դահ ի հիմանց,  
 Գեանին փըռուած մընացել էր շըքեղ քերուր զարդ բարձանց,  
 Մեծակառոյց իմ ապարանք որ չէր տեսել ոք իշխան,  
 Աւերակաց հանդէտ մընաց մէջ տըխրամած խոր մըթան,  
 Ես էլ ի՞նչ տեղ էի հասել, ձեռքս և ոտքս կոտըրտած,  
 Խաւարային անդունդներում ընկած կայի շըղթայած,  
 Մահն ու Մեղքըն անմըխիթար կային քաղցած և ծարաւ  
 Մինչև Յուդա պարանոցին խեղդըն պընդած ներս չեկաւ,  
 Աբրահամի նըման նորան բազմեցուցինք զըժոխըում.  
 Ար իւր գործոց կըցորդներին հանդիատ տեղ տայ իւր զօգում,  
 Վաղվաղում էր Ապիխափա Աննայի հետ այն տեղ դալ,  
 Պէտք էր նոցա աշխատանաց արժանաւոր տըխաուր տալ:

Պ Ա Տ Ա Ե Ր Չ.

(Եկաւ ճանճիկ և լուռ նստաւ առընթեր առաջնոց)

ԲԵԼԻԱՐ (առ Սաղոսէլ.)

Ամենապատիւ Տէր.  
 Ես տեսնում եմ՝ որ դու Փայտէն լըղապատառ ես եղել,  
 Բայց արի լըր, ես այն Փայտի աղագաւ լաւ եմ խորհել,



Այնպէս կանեմ՝ որ նա բազմաց սրբոց թակարդ կրդաւնայ  
Որին ոսկւով որսալ չըլնի՝ այն զէն կառնեմ դէմ նորա:

ԱՍԿԱՏԻԼ (կեսածպիտ).

Շատ յանդուգն է քո այդ խորհուրդ, որ Պօղոսի պարծանքն,  
Կարծում ես թէ կարես փոխան զինուց առնուլ քո ձեռքն.  
Միթէ մարթին նորան հրպիլ, ո՛չ ապաքէն այն փայտն էր,  
Որ մեզ հասաւ կայծակի պէս, պիտի խապաւ չըբացնէր:

Բ Ե Լ Ի Ա Բ.

Միթէ պիտի նորան մերձեմ, ո՛վ Հրդօրի Տեղակալ,  
Ո՛վ Առաջնորդ դժոխայնոց՝ Փայլակ վերուստ փայր անկեալ,  
Վանի՞ հազար և բիւր մարդ կայ փառքի պատուոյ յանկացող,  
Նորան աւել կը որոնէ, ով չէ պատուող, ճանաչող,  
Այսուհետեւ-խո՛հ չեն կախուիր այն փայտէն դող, աւազակ,  
Գոյն ինչ պիտի երկայնամանք, մինչև հասնի ժամանակ,  
Այն Փայտ ունի յաղթանակել, չենք կարող այս խափանել,  
Աշխարհի մէջ իւր լոյս կրօնի անշուշտ պարտ է տարածել,  
Ինչպէս ահա այս երրորդ դար՝ նորա պաշտողք անհամար,  
Յանուն Փայտին մեռանելով՝ ասուեցան սուրբ և արդար,  
Այսպէս դեռ ևս շատ թաղաւորք Փայտով կառնին բարեպաշտ,  
Հո՞մ քաղաք ևս պիտի ստանայ շատ ինքնակալք Փայտապաշտ.  
Շատ քրիստոնեայք կառնուն այն Փայտն, կրհեւանան աշխարհէն,  
Եւ ամայի անաստուամն նովաւ մեզ դէմ կ'երանեն:

Բայց այնպէս էլ օրեր կուգան, որ ի պատիւ այն Փայտի,  
Կրճեռնարկին մարդիկ զնիլ, թըշնամանալ մէկ մէկի,  
Կամ ով նորան պաշտպան կանգնի, կառնու վըրէն այն նըշան,  
Նըշան պիտի պատճառ նիւթէ մեծ մեծ կուուց և արեան.  
Յայնրմհետէ պարզեի պէս նըշան կառնու յաղթողը,  
Այն նըշանին աչք կը արնկին՝ թէ աւազակն թէ գողը,  
Յայտնի է որ խառն կերթան և անարժանք և արժանք,  
Չը գիտես որ մարդ անկուպար կրսիրէ փառք և պարծանք,  
Արուեստիք ևս այն կրատանան, փողով, լեզուաւ, արարքով,

Միջոցներ ևս շատ կընիւթեն, ի՞նչ չեն հաներ հընարբով,  
Վանի՞ արժանք բերանաբաց պիտի հային հեռուէն.  
Մինչ հայկաստիք պըճնազարդած ամենուրեք ձեմ կառնեն:  
Կեռ-խոհ այն փայտն մեր ձեռին է, աղբիւսների մէջ թաղած,  
Այդ լաւ դիտենք որ չի մընար շատ ժամանակ թաքուցած,  
Է՞ր երկընչես, թող դեռ դուրս գայ, կենաց ծառի կրտոր չէ՞,  
Իսկ այն ծառին ի՞նչ չարարինք. դըրախտ անգամ կորած չէ՞.  
Մենք ի նանիր եմք չարք մաշվում, թէ կըլաղթէ մեզ փայտըն,  
Յաղթըվելից եմք զանգիստում, միթէ թեթեւ էր շանթըն,  
Որ մեզ հասաւ ահեղ այն օրն, երբ մենք ընկանք երկինքէն,  
Եւ սատանայ փոխարկուեցաւ մեր պատուանուն շրջաակէն:  
Սատանայ ենք, սատանայ ենք ուրեմն լինինք միշտ սատան,  
Որ այն աղջին չը յաջողէ երբէք հասնիլ Հայաստան,  
Խոհ կանխաշարժ անօրէնութիւնք մեզ ըստ կարի յայտնի են,  
Որ մինչև Հայք աչք չըբանան՝ աշխարհ չի զնար մեր ձեռնէն.  
Երթանք խրքինք մեր՝ մեծ դահլիճն, ուր որ կայ քո դահ փառաց,  
Հրաման հանենք, որ ժողովին աւագը այսոց և դիւաց,  
Խորհուրդ անենք և չըյայտենք նոցա մեր այս կործանումն,  
Մեր խորտակին ո՛վ էր կարող տեսնել այս խոր խաւարումն:

(Սրաներն քթերի տակն ձիծաղում են.)

Մանաւանդ որ այս էլ-խոհ մեզ արդէն լըրիւ յայտնի է,  
Որ մինչդեռ մերն է Հո՞մ քաղաք՝ յաղթանակն էլ միշտ մերն է,  
Այն տեղ ընդփոյթ չի վերջանար կըուոց պաշտօնն, ես գիտեմ,  
Թէ կուրք չըլնին՝ մարդ կըլինի, ես մէկ հընար կընիւթեմ.

ԱՄԵՆ-ԲԵԱՆ ԲԱՐՉՐԱՉԱՅՆ.

Կեցցէ մեծ Հո՞մ, կեցցեն մեր հնարք ընդդէմ Փայտին յաղթական:

Յ Ե Ղ Ա Ն Ա Կ Ե Ր Ր Ո Ր Գ

ՊԵՏԿԵՐ Ա.

(Տեսարանն ցուցանէ Պատգայէլ նստեալ ըստ առաջնայն ի դահ ի Դժոխս, և զիւսհրահայլ բազմութիւնն սնդնայնոց անդ համախմբեալ. զիւսն առաջատարով կողմեալ ի բազմականին՝ յորս երևին Սամայէլ, Ասահիտ, Բելիեգոր, Մաման, Մողբ, Բելիար, Ճանձիկ, Դադան, Աստարտ.

Ճ Ա Ն Ճ Ի Կ.

Հրամանն շնորհեալ ինձ խօսելոյ, ո՞վ շնորհի Տեղակալ,  
Ես եկել եմ հեռաստանէ և ունիմ ձեզ մեծ գոյժ սալ:

Ս Ա Մ Ա Յ Է Լ.

Թէ աւետեաց համբաւ չըկայ՝ գոյժն էլ պիտի ընդունինք,  
Պատմէ՛, լսենք թէ ի՞նչ է գոյժդ, մինչ լսելոյ կամք ունինք:

Ճ Ա Ն Ճ Ի Կ.

Գոյժն իմ այն է, որ Գրիգորն այն Արտաշատում կենդան է:

Ս Ա Գ Ա Յ Է Լ.

Եյդ նոր գոյժ չէ. մեր ականջին արդէն այդ վաղ ժաման է:

Գ Ա Գ Ո Ն (առ Սաղայէլ).

Ես ևս գիտեմ մէկ նոր համբաւ, այլ գուցէ թէ լսել էք:

Ա Ն Ա Հ Ի Ց (առ Սաղայէլ).

Հռիփսիմէի բանն է ասում, այլ դուք նորան տեսել էք:

Ս Ե Գ Ա Յ Է Լ (առ Ճանձիկ և առ Դադան).

Որքան արթթ կըլինէր ինձ, որ ես ձեզմէն լսէի.

Ճ Ա Ն Ճ Ի Կ.

Կարծում էի թէ՛ այդ բանին տեղեակ միայն ես էի:

Բ Ե Լ Ի Ա Ր.

Չէ՛ զընացինք, աչքով տեսանք, գեղեցիկ է այն կոյսը,  
Իայց և Գրիգոր ի նանիւր է դրել սոսկ նորան իւր յոյսը:

Ս Ա Գ Ա Յ Է Լ.

Ես այսօրվան ձեր մեծ ժողով այն միտքով եմ հրաւիրել,  
Որ մէկ խելքով խորհուրդ անենք՝ թէ ի՞նչ հնար կայ այդ ջըրել:

Բ Ե Լ Փ Ե Գ Ո Ր.

Հնար սոսկ այն է՝ որ այն չըքնաղ օրիորդն— Հռիփսիմէն,  
Չը յաջողէ Մասիս հանիւր, կամ չեւանէ խակ Հոռմէն:

Մ Ա Մ Ո Ն.

Ի՞նչ լաւ կըլնէր թէ Հռիփսիմէն Հոռմ քաղաքէն դուրս չըգայր  
Որ ամենայն քրիստոնէից չար օրինակ չըդառնայր,  
Նրստէր վանքի մէկ անկիւնումն. ուտէր, խրմէր և քրնէր,  
Երկրէ երկիր շուրջ յաճելով ինձ խոչ և խուժք չըկանգնէր,  
Ի՞նչ գործ ունէր Արուսաղէմ, հետի զընաց Հրոռմէն,  
Չը վանգիտեց երկար ճանիփէն, ոչ արևէն, ոչ ցրտէն,  
Վաղըից քաղաք ու գիւղից գիւղ ծանրութարակ երթալով,  
Որքան մեհեանք քանգել արեց իւր անդադար խօսելով:  
Փայտի վերայ կախուած Հրգորն լաւ առաքեալ է դրտել,  
Եյս Հռիփսիմէն ընդդէմ գիւաց նոր Պօղոս է յայտնըվել.  
Սարսափելի ահեղ անունն, որնոր յիշել վախում եմ,  
Գիշեր ցերեկ բերնումն ունի և զընում է տարադէմ.  
Նորա ճանիփն բարձր լեռան ցածացնում է իւր կատար,  
Չորերն լըցվում են և դառնում հարթ ճանապարհ հաւասար:  
Սուր սուր ժայռերն կակղանում են նորա ոտքի տակումը,  
Փուշ դառնում է վարդ մանուշակ, Հռիփսիմէի ճանիփումը:  
Ս երուստ յերկնից ոչ մանանայ, ոչ լորանարգ է գալիս,  
Ես ամեն տեղ իւր ընկերաց ճաշ և ընթրիք է տալիս.  
Եղկայի համար ազոան էր ամեն օր հաց բերում,  
Չեմ հասկանում, սա ի՞նչ տեղից է ճանիփերումն այն ճարում.

Ենջուր ցամաք անապատումն Մոսէս ջուր տուեց մէկ անգամ,  
 Աս ամեն լեռի ապառաժից աղբիւր հանեց բարեհամ:  
 Մէկ տեսնէիք՝ թէ ինչպէս էր Գողգոթայում սորա կեանք,  
 Առաւօտեան աստղ դեռ ուր է, որ պուխ լերին են կուսանք,  
 Բերնով սաղմաք են մըրմընջում, աչքերն լերն են արտասուօք,  
 Վահանայք փոյթ կատարում են զիշերաժամն իւր սարօք,  
 Հրեշտակ յերկնից է վայր իջնում, պատկառանք կանգնում է,  
 Իսկ այն տեղի դէմ յանդիման, ուր որ պահած այն Փայտն է.  
 Երբ սիկզն է անում Հրեշտակն իւր բուրվառէն խունի ճըխնԼ,  
 Աղբն այն բոլոր բոցափայլեալ ըսկըսում է բորբոքվել,  
 Նորա հանդէպ այնուհետեւ ի՞նչ է անկէզ մորենին,  
 Ի՞նչ է այն վէմ, որոյ յետնէն երևեցաւ Մովսէսին,  
 Փայտն ու բլեռք, պըսակ, պատանք և վիմափոր գերեզման,  
 Աղբի տակէն արևի պէս թափանցում են յանդիման,  
 Մեծ Փայտէն մէկ կամար լուսոյ է դէպ այն ծիւղն ձևանում,  
 Ար Հռիփսիմէն է կրում կախած պարանոցէն իւր ծոցում:  
 Գընա յետոյ այն կուսանաց կարողացիր լըռեցնել. . .  
 Երևազալ չէ մարթանում նըրանց այն տեղ դալ տեսնել:  
 Երուսաղէմ ծայրէ ի ծայր լըբըրբէլ են ընկերօք,  
 Խեղճ Հըրէից են դուրս անում հաստ բըրօք ու սուսբօք.  
 Խորհըրդարար այն տեսարան նորոգվեցաւ վերըստին,  
 Ինչ որ երբեմն նախաստեղծից պատահել էր Հին Ադին.  
 Ազամ Եւայ Եդեմ դրախտից արտաքսեցան տարադէմ,  
 Աւ Վերոյլէն պահպանում էր նորա դըռներն նոցա դէմ,  
 Այլ նա շնորհեց իւր մահակից աւաղակին նոր հըաման,  
 Ար այն փակած դըռներն բանայ գերեզարձին յանդիման.  
 Մէկ Յուդայ էլ է գոյացել քրիստոնէից մըտերիմ,  
 Նորան յայանի է թէ ուր է հին թշնամոյ նոր շիրիմ,  
 Նախավըկայ ըՄտեփանոս Մարկաւաղին աղգական,  
 Հօրից որդոյն աւանդութեամբ հասանում է ամեն բան:  
 Ա՛լ դիտէ թէ այժմ էլ ո՞ր կողմ պիտի երթան այս կուսանք,  
 Շատ են սիրում այն տեղ շըրջել, ուր թաղած են մեռասանք:

Ա Ն Ա Հ Ի Տ .

Մէկ տեսնէիք, երբ Նիկոմէդ եկան, ուր կայ Առաւլառէ,  
 Ի՞նչ արտասուք թափեց նորա մարմնոյն վերայ Հռիփսիմէ:

Ճ Ա Ն Ճ Ի Կ .

Ապա երբ որ Աղեքսանդրիա եկան սոքա խըմբովին,  
 Ի՞նչ սըրտեռանդն արտօսը հեղին Նեքտարինեայ ի շիրմին:

Ա Ն Ա Հ Ի Տ .

Հալում մաշում է ինձ կասկած որ Սանդխտոյ գերեզման,  
 Պիտի սոքա այց ելանեն, թէ կանուխ թէ անազան:

Ս Ա Պ Ա Յ Է Լ .

Երբ որ Սանդուխտ Բիւրականում երևեցաւ Արմբատին,  
 Ար Արտաշէս մանկան պահէ ծածուկ առ դրան Գարեհին,  
 Վառասանաթիւ օրիորդաց հարամ չէր նա գուշակել,  
 Կարծեմ թէ այս Հռիփսիմէն է, որ կերթայ անդ լոյս ծագել:

Դ Ա Գ Ո Ն .

Գիտես թէ այն նահատակաց ձեռօք տընկած նըռնենեաց  
 Սոքա ճեպով դնում են ջուր տալ և կամ օգնել արգասեաց:

Ա Ն Ա Հ Ի Տ .

Կարծեմ սոցա դէմ փակ բռնել Հայաստանի ճանապարհ,  
 Բացի փետոյ գոյացնելից չըկայ ուրիշ էլ հընար:

Ճ Ա Ն Ճ Ի Կ .

Ա՛լ կայ մէջերս հընարիմոց, պէտք է նըրան այս յանձնել,  
 Ար նա մէկի սիրտ սերմանէ՝ սորան իւր հարսն անուանել:

Մ Ա Մ Ո Ն .

Կան Պատրիկներ, Օջրապետներ կայսերական դըրանը,

Մէկնումէկին պիտի դըրդէ, որ փութացնէ այդ բանը :

Ս Ա Դ Ա Յ Է Լ .

Լաւ է ասածդ , Մամոն իշխան , ի՞նչպէս տեսնէ Պատրիկը  
Հռիփսիմէի չըքնաղ տիպար , երբ միշտ փակ է գիտակը ,  
Յերեկներն ման չեն գալիս , միայն գիշերն են գընում ,  
Առաքելոց փերեզմանին գաղտագողի այց առնում .  
Այն թաղերում , ուր Վրիշտոնեայք են համախումբ բընակված ,  
Ո՛չ մեհեան կայ և ո՛չ բազին և ո՛չ շրքեղ մէկ շինուած .  
Սոցա վանքն էլ այն թաղումն է , այն տեղ Պատրիկ չի երթար ,  
Թէ և երթայ , բայց Հռիփսիմէ Պատրիկին չի երևնար :

Մ Ո Ղ Ո Ք .

Եթէ լինէր Հռիփսիմէն մէկ պրծ՛նասէր օրիորդ . . . .

Ս Ա Դ Ա Յ Է Լ .

Ես էլ զիտեմ՝ որ կը լինէր մեր գործ յաջող և ուղղորդ :

Բ Ե Լ Ի Ը Բ .

Ես ու Մամոն ոսկի արծաթ և գոհարներ զանազան  
Կը ձօնէինք , և զարդարուած կը յաճախէր մեր մեհեան :

Գ Ա Գ Ո Ն .

Սընտի ցոյց չըկայ նորա սըրտի միջին բընաւին ,  
Եւ իւր հազից չէ հեռացնում պատառատուն հընտին ,  
Չէ ասում թէ կայսերադն եմ , անարգում է գոհարը ,  
Վան զամեն զարդ զերազանց է դատում Քայտի նըշխարը :

Ա Ն Ա Հ Ի Տ .

Նորան փառքով կամ ձօխութեամբ անհընար է շըլացնել .  
Հարկաւոր է ուրիշ հընար սորա համար գոյացնել :

Ս Ա Դ Ա Յ Է Լ .

Լմօթ չէ՞ մեղ յայտ յանդիման արկարանալ , այս կուսին

Մեր ուզեցած պատանուց հետ կապել , առնել ամուսին :  
Ո՛ւր է մեր հին Աուպիդոնեան սիրաբորբոք վըքինը ,  
Ո՛ւր է կորել Ափրդիխեայ քաղցր ու անոյշ սեւաինը :

Ա Ն Ա Հ Ի Տ .

Գիցուք թէ սուտ էր Երուտես , խոհ Աստղիկ չէ առտապել ,  
Հեղինէին Թէսեւի ձեռք չէի՞նք առաջ մենք մատնել :  
Հռիփսիմէի կերպարանքով մէկ տապեաի կերելիմ ,  
Երբոր տեսնեմ սիրահարուած՝ կերթամ այն վանք կըղօղկ ,  
Խոհ Պատրիկն էլ կուգայ յեսնէս ու այն կուսին կուզանէ ,  
Այն տեղեցն էլ կորզել հանել այնուհետ ի՞նչ խհ հողն է :

Ս Ա Դ Ա Յ Է Լ .

Նախատաջին անհընար է Հռիփսիմէի կերպն առնուլ ,  
Ապելլէսին էլ հարկ կըլնէր նորա հանդէպ շատ պըշնուլ ,  
Գէպ այն վանք էլ չես յանդրդնի փախչելով մարդ զհետ ձըգել ,  
Հռիփսիմեայ վըգէն կախած փայտ կըլնի քեզ միշտ արգել :  
Հապա դառի՞ր Հռիփսիմէ :

Ա Ն Ա Հ Ի Տ (օրիորդի կերպ մանկելով .)

Ահա ես էլ ձեզ Հռիփսիմէ , տեսէ՛ք նըման եմ թէ ո՛չ :

Մ Ո Ղ Ո Ք (աստիկ ծիծաղելով .)

Հռիփսիմէն նախ և առաջ ո՛չ սուտ ունի , ո՛չ էլ պոչ :

(Ամենքեան ծիծաղում են :)

Մ Ա Մ Ո Ն (ծիծաղն չկարելով սանձել .)

Վիթրդ քըթին չէ նըմանում , արծիւի քիթ ես շինել ,  
Նորա տիպն է Հոտեական , դեռ այդ էլ չես նըշմարել :

Գ Ա Գ Ո Ն .

Ո՛չ իրանդ է նորա նըման , ո՛չ աչքերդ , ո՛չ ունքերդ ,

Բ Ե Լ Ի Ա Բ .

Ի՞նչ ես կախել, Անահիտ-ջան, կոպտատարազ ուրնդունըրդ :

Ս Ա Դ Ա Յ Է Լ .

Մէկ կոնք բերէք ջըրով լիքը, կամ մէկ բիւրեղ լաւ յըզկած, Որ Անահիտ իւր կերպարան այն սեղ աեսնէ նըկարած :

ԲԵԼՓԵԳՈՐ (բերում է) .

Ահա կոնքն էլ և բիւրեղն էլ, դէ՛հ Անահիտ, լաւ նայէ :

ԱՆԱՀԻՏ (նայելով բիւրեղին) .

Պատառտուն հին ձորձիկըս նորա ձորձին նըման է,  
Այլ զլուխ է յոյժ անձունի, մազերս երբէք չէ նմանում.  
Նորա հերք են դեղձան գանգուր և հոպոպեօք վայր կախում  
Աղուամազ են և նըրբաթել, սիրոյ համար պատրաստած,  
Իսկ իմ մազերս շէկ ու գորշ են: փըշերի պէս վեր դիզում  
Նորա գխակք օղակ օղակ կուրծք և լանջք են քողարկում.  
Իսկ իմ հիւսկէնք կօտօշներխ հեա աջ ու ձախ են ցըցում,  
Այլլատինեայ Տիկնոջ պատկերն առել էի աջողակ,  
Երբ ուղեցինք Արքատունն սալ առնել այն գործ այլանդակ,  
Ի՛նչպէս էի ես հրաշագեղ, զիմրդ նաղով պըտըտում,  
Այլլատինոս ինքն էլ էր ինձ Ղուկրետիա համարում:

Ս Ա Դ Ա Յ Է Լ .

Ուրբաթ օրվան մէկ շահն էլ այդ մեր զօրութեան է հասել,  
Որ ո՛չ մարդոյ կերպ ենք դառնում, ո՛չ պատդամքն են մնացել .  
Գեւ չէ՛ հասնում խեղքս թէ այն ճըջին ծովէն ո՞վ հանեց,  
Որ երեք հեղ յայսնի լրտուեց թէ՛ Պան աստուած վախճանեց:

Բ Ե Լ Ի Ա Բ .

Այժմիկ չէ մեզ յոյժ հարկաւոր հին մաշուած անցք հասկանալ,  
Ի՞նչ շահ պիտի հասանի մեզ, թէ կարնանք այն իմանալ.

Գու ես մեր մէջ քան զամեն դե իմաստնադոյն Սաղայէլ,  
Եւ դու միայն կարես սորա համար մէկ հնար զըսանել .  
Եկ այս մեծ գործ դու ըստանձնիր, խոհ մենք էլ ենք օգնական,  
Թէպէտ վըստահ եմ որ միայն ինքդ ես լինիս բաւական:

(Առանձին) .

Չը հասկացաւ դատարկագլուխն, որ իրան ծաղր եմ անում,  
Ատում եմ թէ շուխիսիմէի յեանէն ման դալ ես կամում,  
Գընա, յիմար, ուռած ուռած, զլուխդ-խոհ լաւ փըջեցի,  
Լիայոյս եմ որ՝ մէկ քանի սեղ պատահիս հարուածի,  
Իսկզբանէ էլ դու չէի՞ր մեր կործանունն պատճառը,  
Ինչի՞ պիտի պահաս մընան քեզմէն փորձանքն ու չարը,  
Սիրտդ կըզվի էր փախադում, ահա քեզ լայն ասպարէս,  
Անդ Գըրիգորն է, ասա շուխիսիմէն, դուրս եկ ապա ի կըրկէս,  
Սորանք ո՛չ փառք են որոնում, ո՛չ փող, ո՛չ գահ, ո՛չ պատիւ,  
Ո՛չ մարմնական ինչ հեշտութիւնք, ո՛չ հաց, ո՛չ ջուր ցայդ ու տիւ:

Ս Ա Դ Ա Յ Է Լ .

Թէպէտ այս գործ զըժուարին է, բայց ո՛ւմ պիտի յանձն առնենք,  
Գըժվար, դիւրին մեր պարտիւն է՛, էլ մենք պիտի վերջացնենք . . . .  
Ինչիար, դու շատ խելօք ես, թէ ճըշմարիտ խորհուրդ տաս,  
Այլ շատ անգամ քո լարերից հանում է ինձ մեծ վընաս .  
Առաջ գործերն հեշտացնում ես, մինչև թակարդն ես զըձում,  
Յետոյ էլի քան զամենըն առաջ ինքդ ես ծաղր ածում:  
Ճըշմարիտ է՛ որ շուխիսիմէն պիտի շուռն դուրս չըգայ,  
Ապա եթէ սոն դուրս դնէ՛ էլ փըրլութեան յոյս չըկայ .  
Կերթայ ուղիղ դէպ շայտասան, ո՛չ ծով կասէ, ո՛չ ցամաք,  
Գըրիգորին էլ հանել կուտայ, մենք պիտի մնանք խայտառակ:  
Ծանր է յոյժ լուծս, որ վըէս զըրիւր, բայց էլ ուրիշ հընար կայ,  
Ինձ հարկաւոր է ձեռն մըխել, աեսնենք զըլխիս ի՞նչ կուգայ:

ԲԵԼԻԱՐ (առանձին).

Գալոց բաներն յոյժ յայտնի են, կամ կայծակ է կամ հըրատ,  
Բայց քեզ զարձնալ չեմ կարծում թէ շանթիկը զառնան ինչ խորատ,  
Պայքարի մէջ ինքզեա մըտնում և հարուածներն հրախրում,  
Ինչե՞ր ես իմ ծաղրածութիւնն իմ երեսիս դէմ բերում:

ՊԱՏԿԵՐ Բ.

(Տեսարանն ցուցանէ զառեան ծերակուտին Հոռոնայ, յորում մտնալ են ի խորհուրդ վասն ժառանգութեան Աթոռոյ: Սաղայէլ ի նմանութիւն Պրոտերիտի Պարոկի նստեալ ունին դնէ բանից աստեաթստութեան, զոր ի Բեմբէն ասնէ Տերտուլիոս աստեարան: Ատեանն լի է բազմութեամբ աստեաթայաց, հանդիսականաց և սորսաւորաց:)

Տ Ե Ր Տ Ո Ւ Լ Լ Ի Ո Ս .

Օգուտ մեծի կայսերութեան է պահանջում այդ բանը,  
Որ ինքնակալ հըրօր կայսրըն ոչսօր լսէ մեր ձայնը,  
Եւ յանձն առնու ամուսնանալ, ժառանգ թողուլ իւր զահին,  
Որ երկպառակ մարտ չը տեսնէ տէրութիւն յետ իւր մահին,  
Գիտենք որ յոյժ է սիրում նա իւր Պրիսկէ թաղուհւոյն,  
Ելլեթերիս արժանի է նորա քրնքոյշ այն սիրոյն,  
Բայց ի՞նչ անենք, որ ամուլ են, մեզ ժառանգ է հարկաւոր,  
Սիրէն զըշխոյն մեր անյաջող բազդից չեղաւ բեղմնաւոր:

(Տերտուլիոս, իջանէ ի բեմբէն.)

Ն Ա Խ Ա Գ Ա Հ .

Իրաւացի է այս պահանջ, չունիմ բան ինչ հակառակ,  
Ինքնակալին անշուշտ անկ էր ունիլ վաղուց մէկ ժառանգ,  
Ընդէր առաջ չըխօհեցանք, մեղադրելի ենք սաստիկ.

Գիտիլիտիան քրսան ամբ են, որ տիրում է աւասիկ:

ՊՐՈՏԵՐԻՈՍ (Սաղայէլ).

Ո՞վ էր կարող մրտաբերել, թէ Պրըիսկէ ամուլ է,  
Տեսնում էինք, որ օրէ ցօր անձնով գեղով փրթթում է,  
Այսօր չեղաւ, էգուց կըլնի, մենք մեզ էինք միշտ խաբում,  
Պայսերուհեաց ուրախառիթ յղութեան էինք ըստասում,  
Թէ զհանայինք որ մեր այն յոյս պիտի դերև ելանէր,  
Ի հարկէ որ ծերակուտէն զոնէ մին այն միտք կանէր:

ՊԱՏՐԻԿ (առաջին).

Թէ ճշմարիտն խոստովանիմ, ամենայն օր մրտքումն էր,  
Երբէք մրտքէս դուրս չէր գալիս առաքինի գործ կայսեր.  
Նա Հրոռոնայ կայսերութեան հիմունքն արաւ հաստատուն,  
Ելլ առաջվան պէս չէ նեղում մեզ անկուպար բրոնութիւն.  
Ներոնների դարերն անցան, օրէնք, հանգիստ տարրացան,  
Սորա երկիւղ սանձարկել է բարբարոսաց արշաւան.  
Նորա համայն արած գործերն ինձ միշտ այն են յիշեցնում,  
Թէ բարերար մեր ինքնակալ ժառանգ թողնել չէ ուզում.  
Բայց կայր հնար ինչ ձայն հանելոյ, ամենեքեան միասին  
Չէինք պընդէր թէ այդ խնդիր անարդանք է մեր մեծին:

ՍԵՐՎԵԼԻՈՍ (աստեարան ելեալ ի բեմբէն).

Մնորդի էր Յուլիոս կեսար, Օգոստոսին որդեգրեց,  
Տիրերիտան էլ նոյն կարգաւ իւր հայրագրին յաջորդեց.  
Եթէ սա ևս որդեգրութեամբ մէկին ժառանգ անուանէ,  
Ո՞վ պիտի այն նորա կամքն ընդդիմութեամբ խափանէ:  
Գաղմատացի է քաջն արանց, ոչ ունի ոք ազգական,  
Վերջին ծաղիկ էր Պրիսկէ, իւր ցեղի մէջ գեղազան.  
Կամ թող մէկին ժառանգ կարգէ, կամ ամուսին զրտանէ,  
Ելլ յոյս չըկայ որ յըղանայ չըքնաղ զըշխոյն Արէէնէ:

(ՍԵՐՎԵԼԻՈՍ իջանէ ի բեմբէն.)

ՊԱՏՐԻԿ (Երկրորդ).

Անցեալ տարի չէր որ մի ոմն յիշեց կայսեր այդ բանն,  
Նա ցոյց տուեց, թէ չէ հաճոյ իւրեան յաջորդ անունն.  
Ասկածում եմ որ երբ լսէ, թէ մենք ժառանգ ենք կամում,  
Իսկոյն ասէ, թէ «աթուէս ես կամաւ եմ հրաժարվում»:

Պ Ր Ո Տ Ե Ր Ի Ո Ս.

Ինձ ևս այսպէս է թըւում որ աւել յօժար է կայսրն,  
Քան թէ դժբեւ իւր ամուսնոյն, դատարկ թողուլ աթոռն.  
Նորա հոգւոյ մէջ կենդան են շուռնական նախնեաց վարք,  
Նորա գործքով նորոգվել են առաքինեաց դարք և բարք:

Ն Ա Խ Ա Գ Ա Հ.

Քիչ կան քեզ պէս, Պրոսպերոս, ողջամիաներ շըսումում,  
Ամենքեան լայն և արձակ հեշտութեանց են միա դընում.  
Նոյա համար թէ Օգոստոս, թէ Աինկիննատ, թէ Ներոն.  
Մի և նոյն է. քանրար չարժէ մեր այս դարում մի բնիոն.  
Այն անձինք որ Տարբան վախէն արժանի են գլորվել,  
Չամաչեցան կեսարների գահում բազմած երեխլ.  
Ի նանիր ենք Մարիոսին կամ Միլլային մեղադրում,  
Ար բռնաւորն քան ըզնոսա աւել քնաս չէր բերում.  
Մինչդեռ սա չէր ի գահ ելլել, ի՞նչ էր վիճակ տէրութեան,  
Ամեն զինուոր չէր մրտածում վերտանել այն աստիճան.  
Մեծ է այժմեան երջանկութիւն, որ շըսումն է վայելում,  
Միայն փոքր ինչ նահանգներում Վիկինիոսն է դրրդում.  
Երախտապարտ ենք ամենքս էլ մեծի կայսեր այս շնորհաց,  
Պիտի լինինք միշտ ցանկացող նորա փառաց, պարծանաց:

ՊՐՈՏԵՐԻՈՍ (Սարգսէլ).

Այսեր փառաց և պարծանաց ոչ չափ կայ արդ, ոչ կոտար,  
Մեր այժմեան հոգ պիտի լինի որ այնք մրնան անվթար.  
Օր ըստ օրէ ծերանում է, չունի զաւակ ժառանգորդ,  
Ո՞վ գիտէ թէ նորա յեսննէ ո՞յք կը յառնեն կալ յաջորդ.

Այլ եթէ նա զաւակ թողնէր, մենք ևս չէինք շըւարիւ.  
Եւ ծերակոյտն նորա որդւոյն կարէր մարդիչ ինքն կարգիւ,  
Չեմ կարծում թէ էլ ունենանք այնպէս տրգեղ ինքնակալք,  
Ինչպէս էին Տիրերէն յետ յաջորդք անմիտ բրունակալք.  
Մէկ խորհուրդ եմ կամում յայտնել, ծեր եմ, խնդրեմ, որ ներէք.  
Թէ անձոռնի էլ լինի խօսքս, փոյթ չէ, կամիք, ծաղը արէք,  
Բազում անգամ կայսերուհին է կայսեր հետ ըզբօսնում.  
Պատահում է որ միասին ծերակոյտ ևս են մրտնում.  
Մէկ օր եթէ դիպուած լինի՝ որ եբլուսն էլ այստեղ գան,  
Լաւ կըլնէր որ ատենաբանն կայսերուհւոյն ուղղէր բան:

ՆԱԽԱԳԱՀ (զարմացմամբ և հրճուանք).

Բարւոք ասիր, Պրոտերիոս, կայսրուհին կին ըզգօն է,  
Ուր որ ամենքս տրկարանանք, նա միայնակ այն կանէ,  
Նորան կայսրն էլ ունին կըզնէ, ինքն էլ պիտի ցանկանայ,  
Որ ամուսնէն իւր աթոռին յաջորդ զաւակ ունենայ.  
Ես այդ իսկբիդ շատ հաւնեցայ, և չը պիտի դադարեմ,  
Երբ էլ յաջող դիպուած գըտնենք, անշուշտ պիտի կատարեմ:

Փ Ա Ս Ս Ա Բ Ա Ն.

Պրոտերիոս նոր չէ գոված. նորա ամեն խօսքերըն  
Այնպէս չըքնաղ հազուադիւս են, ինչպէս ազնիւ ակներըն,  
Ես ևս էի այդ մրտածում, որ թագուհւոյն յանձնըվի,  
Նա կարող է իւր ամուսնոյ սիրտ և հոգին գըրաւի.  
Ի հընումն էր շըսումայ մէջ միակնութիւնն պատուաւոր.  
Այս քանի՞ դար է որ տիկնայք ամեն տեղ են բազմաւոր.  
Քաջ գիտենք որ շայաստան էլ բազմակնութիւն մրտել է.  
Բանաստեղծք են ասել Արայն ի սէր տիկնոջ զոհուել է.  
Արշակունիք չըյարգեցին միակնութիւն Տիգրանեանց:

ՊՐՈՏԵՐԻՈՍ (քթի սափ).

Բարւոք արին, շայերն անով չէր որ մերոնց ընկան ցանց.  
Քանի որ այդ կայ շայաստան, շայոց հոգին իմրս է,  
Տիգրան իւրեան Չարուհին ինչ որ կամի, այն ասէ:

(Փաստարանն շարունակում է):

Շատ աւելի լաւ խորհուրդ է, թող աշխատի կայսրուհին.  
Խնդրել կայսրէն, որ նա ընտրէ իւր համար նոր ամուսին,

(Շնչին առ դրան ծերակուտին, պահպանք և դահիճք վեր ի վայր վազեն: Լեւել լինի թէ դառ  
կայսրն Գիողիտիանոս և կայսրուհին Պրիսկէ յատեան):

ՊԵՏԻՆԻ Գ.

(Վարադոյր դրան ատենին վերանայ, և կայսրն ուղեկցութեամբ կայսրուհեոյն մտանէ. ծերակոյտն  
յառնէ յիւրաքանչիւր գահաւորակէ և կայ յոտին. կայսրն ելանէ և գահոյս արքունի, յաջմէ որոյ  
բազմի թագուհին: Ամենեքին երկիրպագանեն ինքնակալին խոնարհեցուցեալ զշուրխս: Կայսրն ուղ-  
ջունէ զնոսա բարեհամարոյր քաղցրութեամբ):

Դ Ի Ո Վ Լ Ե Տ Ի Ա Ն Ո Ս.

Ողջոյն ընդ ձեզ, աւագորեար, իմ տէրութեան հաստարան:

ԾԵՐԱԿՈՅՏՆ (Քաբերան).

Կեցցէ, արքայդ մեր ինքնակալ, կեցցէ, Տիկինն դեղազան:

Կ Ա Յ Ս Ր Ն.

Շնորհակալ եմ, իմ մեծամեծք, սիրայրական ձեր ձայնէն:

Կ Ա Յ Ս Ր Ո Ի Հ Ի Ն

Գոհ եմ ձեզմէն, շարք պատուականք և ձեր անկեղծ կեցցէէն:

(Ծերակոյտն բազմեցաւ, և Լոնեարանն ել ի բեմին):

Տ Ե Ր Տ Ո Ի Լ Լ Ի Ո Ս.

Օգոստափառ կեանք հրգօր, աւագախումբ այս ատեան,  
Այսօր խորհուրդ արաւ իւր մէջ վասն Հռոմայ տէրութեան.

Չարհուրելի են երևում մեզ վաղանցեալ օրերըն,  
Երբ դէպ յաթոռ արքայական ռահ էր հորդում սուսերըն.  
Իշխանութեան քո ժամանակ է Հռոմայ ոսկեդար,  
Այս օրերի երջանկութիւն անզոյդ բաղդ է մեզ համար,  
Սեւ մառախուղ է շուրջ պատում, երբ գալիս է մրաքերըս,  
Թէ այնպէս օր էլ կըլինի, որ կորչի այս կեանքերըս:  
Այս բարեք կեանք, որ մենք ունինք, քո կեանքի հետ է կապած,  
Մինչդեռ կաս դու առողջ, զուարթ, մենք ապահով կանք կեցած.  
Այլ դու մարդ ես մահկանացու, կուգայ և քո էլ վախճան,  
Այդ չար օրերն վերջ կըբերեն Հռոմայ արդի դըրութեան,  
Չունինք այլ որ Գիողիտիան, Կատիլինայք շատ ունինք,  
Եթէ այսօր փակես աչերդ, վաղն ոտնակոխ կըլինինք.  
Աշխարհախումբ այս մեծ քաղաք աւար կընկնի խուժանին,  
Կարգք և օրէնք պիտի լռեն, անտէր մընան որբ Լայրին.  
Ապա եթէ ժառանգ թողուս, այս ամեն չար կը մերժուի,  
Քո յաջորդի անձին մէջն էլ դու կըլինի միշտ կենդանի.  
Նսասան է արդ քո աթոռ, թըշնամիք չեն խըլըրտում,  
Եւ Հռոմ անդորր իւր դարնեաց տակ, հանգիստ կեանք է վայելում.  
Այն օրվանէն երբ կայազգի Տրոյատ յաղթեց Հռոչէին,  
Չեն մերձենում ոչ Գոթք, ոչ Հոնք մեր լայնարձակ սահմանին.  
Ե՛կ ինայէ, կայսրդ հրգօր, այս քո շնորհած պարգևաց,  
Խընայէ, քո հրպատակաց, անմեղ ազանց և ազլաց.  
Ապահովէ, նոցա կեանքն, ինչպէս այժմ է ապահով,  
Փարատէ մեր սըրամուժիւնն ուրախառիթ խոստումներով.  
Թող քո բերնէն լրսէ այս մեծ աւագախումբ ատեանըն,  
Թէ յօժար եմ, ինչ ինձ ինզրէ, ծերակուտի դիւանըն.  
Մենք ցանկանում ենք ունենալ քեզմէն յաջորդ քո գահին,  
Կամում ենք որ ինքնին լինիս դաստիարակ ժառանգին.  
Որդեգրութեան չեմք յօժարում, քո ցեղն է մեզ ըզձալի,  
Տուր մեզ ժառանգ քո աթոռոյ, քեզմէն սերեալ մէկ որդի:  
Յանկալի էր քո տէրութեան, որ այդ երեք թագուհեաց,  
Գէթ մէկն ասուէր Օգոստամայր, Հայր շնորհելով հայրենեաց.



Նախասահման տրնտեսութիւնն զլացաւ այս մեր բաղձանքն,  
 Որով տակաւ նըւաղում է շուտայ փառքն ու պարծանքն.  
 Բայց անըստառ է վերնայնոց՝ ներքնոց վերայ զթութիւն,  
 Վաջայոյս ենք որ այս վերաց չէ պատճառ քո ամբութիւն.  
 Երեք դրեցք չետուն զաւակ, դուցէ թէ տայ չորրորդն,  
 Հայրենիքն է խնդրում այս զոհ քեզմէն գահիդ յաջորդն.  
 Հայրենասէրք են թագուհիք, պատրաստք տալ զոհ Հայրենեաց,  
 Յօժարութեամբ պիտի հայցեն յաւելուլ թիւ թագուհեաց.  
 Գու, Պրիսկէ Օգոստափառ, չուղեն գրկումդ ունենալ  
 Եւդ աթուոյ ժառանգաւոր հանդերձեալ կայսր ինքնակալ.  
 Եթէ լինի սիրոյ պրտուղ քո զուգակցի, մեր կայսեր,  
 Եւ նորան դու հըրահանդես, ինչպէս կուզեն օրէնք մեր.  
 Եմեն մանկունք շուտայեցոց մեր առջին են զարգանում,  
 Մենք ամենի հրահանգութեանց քայլքն ենք մի մի համարում.  
 Միայն կայսերք են մեր աչքէն ամենայն տեղ ծածկըւած,  
 Չենք իմանում, թէ ո՛ւր և ե՛րբ են վեհանձինք կըրթըւած.  
 Օգոստոսի գահի վերայ յանկարծ նըստում է զինուոր,  
 Ուսմի մէջէն առաջացած՝ փոյթ դառնում է բռնաւոր.  
 Ուն՝ ք իւրեանց զեղեցիկ մօր պրոոյգի մէջ են եկած,  
 Բազումք պաղշտ և թուլամորթ ախտակրութեամբ որդեգրած.  
 Եւսպէս սրգեղ վարք ու բարքէն ի՛նչ էր հընար մեզ յուսալ,  
 Միայն մընաց նոցա չարեաց աւերակաց ափսոսալ:  
 Ուրեմն դու, դըլնոյդ փառաց, միտք բերելով հին ու նոր,  
 Համազգային սեղանում զանձնդ զոհ ողջակէզ դի՛ր բոլոր.  
 Գու մեր կողմէն խնդրէ կայսերն, որ ընտրէ նոր ամուսին,  
 Եւ նորամէն շնորհէ շուտայ ժառանգ, յաջորդ իւր գահին.  
 Սովաւ երբէք ո՛չ նորա սէր պիտի քեզմէն պակասի,  
 Եւ ո՛չ Եզգի և Հայրենեաց դէպ քեզ պատիւ նըւազի.  
 Գու մայր ես մեր, նոյն Գըլնոյին ևս կըլինիս մայրագիր,  
 Նորա զաւակ քեզ կըլինի թոռն և որդի ազգընտիր:

ԿԱՅՄՐՈՒՂԻՆ (առ կայսր).

Վաջիդ արանց պիտի չըլնի աղերս ազգին հակառակ,

Վանորոյ ես իմ աղաչանքս ևս եմ տալիս հանդանակ,  
 Ընկալ քո այս աւագախումբ մեծաւորաց աղաչանք,  
 Եւ Մեծ շուտայ գահի համար մեր Հայրենեաց տուր ժառանգ.  
 Միթէ չըկոյ տերութեան մէջ այնպէս չըքնաղ օրիորդ,  
 Որ յաջողէ քեզմէն ծընիլ. քո աթուոյն ժառանգորդ.  
 Թո՛ղ նըկարիչք բերեն ի ցոյց ո՛րքան կուսից պատկերք կան,  
 Եւ թէ ուրիք գիտեն այլ ևս՝ թո՛ղ նոքա էլ ի յայտ գան.  
 Եյն պատկերաց մէջէն ընտրենք, ես ևս քեզ հետ կըլինիմ,  
 Վո ընտրածին, քաջ յայտ է քեզ, որ ես ևս շուտ կըհաւնիմ.  
 Նորան առ քո ամուսնութիւն. դուցէ որդի ծընանի,  
 Եզգի բաղձանքն կըկատարուի, գահիդ յաջորդ կըլինի:

Բ Ե Մ Բ Ա Ս Ա Ց.

Եմեն Պատրիկք իւրեանց դըստերց թո՛ղ աստ բերեն պատկերներն,  
 Մենք հասցընկնք առ թագուհին, որ նա ցոյց տայ և կայսերն,  
 Թէ շուտայ մէջ, թէ այլ ուրիք ի լայնարձակ տերութեան,  
 Ուր միանգամ չըքնաղազնդ օրիորդներ զարգանան,  
 Վաղաքսպետք և թաղապետք նըկարել տան պատկերն,  
 Որ յաջողէ թագուհիդ մեծ, մէջէն առնուլ ընտիրն:

ԿԱՅՄՐՈՒՂԻՆ (առ կայսր).

Ես յօժար եմ այս խորհըրդոյն, դու ևս պիտի յօժարիս:

ԿԱՍՅՐ (արտասուք յաչ).

Մեծ է ինձ զոհս. բայց յաղթական է սըրտիս մէջ սէր ազգիս:

Ծ Ե Ր Ա Կ Ո Յ Տ.

Կեցցէ վեհանձն Գիտիլետիան, կեցցէ դըլնոյն ազգասէր,  
 Կեցցէ Տիկինն Օգոստաղանց, կեցցէ Մայր մեր որդեսէր:

ԿԱՅՄՐՈՒՂԻՆ (առ ծեսակոյտն).

Մի՛ մեղադիր լինիք դուք ինձ, որ ես չէի ցարդ ասում.  
 Ես այդ մասին ամենայն օր էի կայսեր հետ խօսում.

Իրաւ նա ինձ խընայում էր, կարծելով թէ կըտրուամ,  
 Եւ շատ անգամ կեղծ էր հաշուում սիրալրական խորհուրդն իմ.  
 Ես ի՞նչ անեմ, որ նա նախնեաց առաքելնեաց էր նմանում,  
 Աղջախոհ էր, միակնութիւնն էր խկրղզէն պահպանում.  
 Իմ և այլոց աղաչանքով առաւ երկու ամուսին,  
 Երեքինս էլ ամուլ էինք, որդի չըստինք մեր փեսին.  
 Չեմ ատում թէ կարելի է. քաջայոյս եմ ձեր բազդէն,  
 Ար կըծընի դահին յաջորդ թագաժառանգ չորրորդէն,  
 Ի՞նչ օր կըլնի այն ինձ համար, երբ նորահարսն թագուհին  
 Եւր յըզութեան նըշաններով բերկրութիւն սոյ աշխարհին,  
 Եսենարանն ճարտարութեամբ էր կամում ինձ համոզել.  
 Արպէս թէ ևս չեմ կարենար, որպէս կին մարդ, այն ուղիւ,  
 Չեմ Պորկիս՝ Աստուծոյ դուստր, բայց զո՞հ բերել շատ կարեմ,  
 Աորիղանոս չէ ամուսինս, այլ ևս շուտայ տիկին եմ:

ԾԵՐԱԿՈՅՏՆ (հրճուանք).

Կեցցէ Պրիսկէ, կեցցէ Տիկինն, փառք շը ունայ և պարծանք:

ԿԱՅՍՐՆ (յոսս ելեալ).

Ծերակուտիդ են յանձն լինում յարգել տիկնոջդ հըրամանք:

(Յատենէն գուրս են դալիս կայսրն և կայսրուհին):

ՊԱՏԱԿԻ Գ.

(Յեսարանն ցուցանէ զսենեակ ոստիկանութեան, ուր յիւրաբանչիւր թաղից Հոռոմայ բերեն նկարիչք զպատկեր օրիորդաց: Սաղայել ըստ նմանութեան միոյ ի լրտեսեց մերձենայ պատկառանք առ թաղապետն եւ խօսի).

ԼՐՏԵՍ (Սաղայել).

Ինձ, որ այսօր զըրկել էիր այս ինչ թաղըն լրտեսել,  
 Յանկարծ դիպաւ անօրինակ մի օրիորդ տեսանել,  
 Քրիստոնէից արգելական միանձնուհեաց վանքումն  
 Լսապրում նա, կարծեմ նմանն չիք և շուտայմիջու մին:

ԹԱՂԱՊԵՏ (առ թաղական կենդանադիրն).

Գնա՛ ուրեմն, ո՞վ նըկարիչ, զօրականօք մուտ այն վանք,  
 Տես որ կուսին չըթաքցընեն ընկերակից իւր կուսանք:

ԼՐՏԵՍ.

Շատ լաւ է քո կարգադրութիւնն, բայց դու տեղեակ չես վանքին,  
 Պիտի ծածուկ նըկարագրենք չըքնաղ տեսիլ այն կուսին.  
 Նորա խուցն նեղ և մութ է, այն տեղ չէ մարթ նըկարել,  
 Մանաւանդ որ այն կուսանին չենք կարող լաւ նըկատել.  
 Թող զօրականք սանդուղք առնուն, ևս էլ նոցա հետ կերթամ,  
 Թէ ո՞ր տեղէն պիտի զըննէ նըկարիչըն, ցոյց կուտամ,  
 Նորա օրն եօթն ութ անգամ աղօթքի են հաւաքվում.  
 Չըքնաղ այն կոյս, սև շորերով վանամօր մօտ է չորում.  
 Վանքի դըռներն փակ են լինում, մարդ չէ կարող ներս մըանել.  
 Պարիսպներէն պիտի իջնենք, որ կարնանք մէկ բան տեսնել:  
 Եյն սանդուխտով առաջ դըրսէն կելլենք պարիսպ, վայր կիջնենք,  
 Յետոյ սանդուխտն պատուհանի մօտ կը դընենք, որ տեսնենք  
 Թէ այն կուսանն սեղանի դէմ ի՞նչպէս աղօթք է անում,  
 Եյն իսկ ձեռով և նըկարիչն կը նըկարէ տախտակում:  
 Թէ բըռնութիւն, թէ զօրութիւն, կարծեմ, այստեղ պէտք չեն դար,  
 Փոփոխութեանց մէջ կըլինի նորա դիտակն անդադար.  
 Նա չի՛ նըստիր երբէք հանդարտ, որ պատկերն նըկարեն,  
 Նա իւր կամքով հարսնանալու չի ելանէր այն վանքէն.  
 Եյս տեղ հնարներ պիտի նիւթվին, որ այն աղջկունք չիմանան,  
 Թէ նորանց միշտ դարանակալ է տաճարի պատուհան:  
 Գաղանիք պիտի լինին ամեն օր մեր այն տեղ մուտ և ել,  
 Ար կուսանքէն ոք չը կարծէ, թէ ուզում ենք նըկարել.  
 Երկու երէք օր չենք կարող կատարել այն նըկարըն,  
 Նորա համար պիտի ձգնի կենդանադրաց հանձարըն,  
 Մանաւանդ որ նըկարիչն պիտի ընտրէ այնպէս դիւք,  
 Ար կարենայ տալ տախտակին չըքնաղ կուսի հոգւոյն ձիւք,  
 Ճարտար զըրիչ է հարկաւոր, ներկ է պիտոյ գոյն ըզգոյն,

Սուր տեսութիւն, ճշգրիտ հայեացք, արհեստին քաջ հըմուտիւն,  
Բստուերագիծն ճիշդ աւանդել, դամ քան ըզգամ սրբագրել.  
Թող ուշանայ կենդանագիրն, արգասիքն է պարտ ընտրել:

Թ Ա Ղ Ա Պ Ե Տ.

Եւէք սանդուխտ և զընացէք. ես յօժար եմ ձեզ հետ դալ,  
Միայն չուզեմ ընկերութեամբս ձեր դործերին վընաս սալ:

Լ Ր Տ Ե Ս.

Մենք էլ ծածուկ պիտի մըանինք, որ մեզ ոչ որ չը տեսնէ,  
Եւ մեր գաղտնի երումուան Օրիորդաց չ'իմացնէ.

Եյս պատճառաւ լաւ է որ մենք այն տեղ երթանք զիշխրով,  
Երբ որ ամենք այն վանքի մէջ զբաղած լինին աղօթքով,  
Գիշերային աղօթքներն երկարատե են լինում,

Որ քրիստոնեայք իւրեանց լեզուաւ զետ հըսիումն են անուանում:

(Յետոյ աւանձին).

Մենք ևս էինք մէկ ժամանակ զիշեր ցերեկ փառասարում,

Մինչ կայինք մեր տեղն, չէինք շըրջօրի դէմ մաքառում.

Երանաւէս էր մեր վիճակ, միշտ լուսոյ մէջ համակած,

Եյն լոյս էլ միշտ էր շըրջօրէն մեզ անմահից հաղորդած.

Եյժմիկ ինչպէս սոքա այս տեղ, մեր ընկերք ևս երկնքում,

Յամենայն ժամ երանութիւնն աղօթքի մէջ են զընում:

Երբ Եզամին Մարդասէրն իւր պատկերով զարգարեց,

Եաւ հողըն և իւր մասամբք նորան արդի կերպ սըւեց.

Եյնուհետև օրէնք եղաւ երկընքումն էլ երկրումն էլ

Չեռագործի համար միայն միաբերան աղօթել.

Նոցա համայն աղօթքների իմաստ, կարծեմ, այսքան է,

„Ողորմեա Գու սրբոց մարդկան, զորս ստեղծեր հող յերկրէ.

Ե՛լ է խընդիր քո պատկերին, որ հողածնին շնորհեցեր.

Եւ ըզգործս սուրբ ձեռաց Բոց երբէք անտես մի՛ առներ:“

Չեռագործըն՝ մարդկան ազգն է, մենք բանիւ ենք ըստեղծուած.

Մեզ նըման են արեւ, լուսին և ամենայն արարած,  
Միայն մարդոյն էր այն պատիւ, որով շըրջօրն յիւր ձեռն  
Եաւ հողըն, մարդ ձեւացոյց և տըւեց իւր պատկերըն,  
Եյն պատկերըն, որ զըրոշմեց մարդոյ հոգոյ երեսին,  
Մենք լաւ կերպով յաջողեցանք զուսագեղել վերստին,  
Կարծեմ որ նա երբ նայեցաւ նախ կողածնի զիտակին,  
Չարհուրելով ասաց նորան, „Թէ՛ ո՛չ գիտեմ զքեզ ո՞վ կին:“

ՊԵՏԻՆԻ Է.

(Տեսարանն ցուցանէ զհասիճ արբունեաց, ուր կայսրն Գիսկղեստիանոս և երեք Թագուհիք նորա  
բազմաւ են ի դահոյս, աւագախումբ ծերակոյսն կայ յառնինն Մատուցանեն զպատկեր Հոփի-  
սիմեայ: Ամենեքին սքանչանան ընդ վայելուչ գեղ նորա):

ԱԼՅՍՐՈՒՀԻՆ ՊՐԻՍԿԷ (հեացեալ).

Ո՞ր տեղ զըսայք այս օրիորդն, շըռումայ մէջ չեմ կարծում:

ՈՍՏԻԿԱՆ (համակրութեամբ).

Ո՞ղջ լեր, Տիկին Օգոստատիառ, քեզ ողջութիւն ենք հայցում.  
Եյս Օրիորդ շըռումայ մէջ է, Քրիստոնէից վանքումըն,  
Երգելական Մենաստանի աղջկերանց միջումըն:

ՊՐԻՍԿԷ.

Ի՞նչ աղջկունք են, այդ ի՞նչ վանք է, Վէստեանց կարգէ՞ն չըլինի:

ՊՐՈՏԵՐԻՈՍ (Սոգայեւ).

Նոքա Վէստեանց չեն նըմանում, չունին պաշտօն կրրակի,  
Երբ մըտնում են վանքերի մէջ, ուխտ են զընում կուսութեան,  
Յուսարով թէ մէկ օր պիտի հասնին երկնից հարսնութեան:

ՊՐԻՍԿԷ (դժկամակ).

Միթէ երկինք փեսաներով լը՞ն են, որ այն կուսանաց  
Ամենայն օր, ամենայն տեղ զըսներ բանան հարսանեաց.

Ո՞վ է երկինք ելլել մէկ օր, կամ յերկնից ո՞վ է իջել.  
Ես այսպիսի առասպելներ Յունաց մէջ էլ չեմ լսակ:

Գ Ի Ո Վ Լ Ե Տ Ի Ա Ն Ո Ս.

Եյս այն աղանդն է, որ կայսերք երբեմն էին հալածում,  
Ներոնին ևս շատ մարդիկ կան, որ դովաւ են բանբասում.  
Ես էլ քանի անգամ սոցա մոլորութեան դէմ կայի,  
Բայց մէկ օգուտ իմ տէրութեան սովաւ տալ ոչ կարացի.  
Մոլորութիւնն տարածվում է, լիքն է շրում ծայրէ ծայր,  
Շագարաւոր օրիորդներ վանքում մընում են անայր.  
Երեք հարիւր տարի առաջ մէկ շրէյ է խաչուել,  
Եմեն աշխարհ այն Խաչելոյն յետնեմէն է մոլորուել.  
Մարդ թողնում է իւր սունն ու տեղ, անապատներն է ընկնում  
Թէ՛ «ես Նորա խաչըն եմ առել, նորա յետնէն եմ գընում»:  
Այս աղջիկունք, այրի կանայք հրոսժարվում աշխարքէն,  
Թէ՛ «իմ Փեսայն այն Խաչելոյն է, նա պիտի դայ երկինքէն»:  
Շագարաւորք և բիւրաւորք մէկ փեսայի են մընում,  
Մէկըն բիւրին ի՞նչ փեսայ է, խելքըս երբէք չէ հասնում:

Պ Ի Ս Կ Է (կիսաժպիտ դժգոհութեամբ).

Չլինի՞ թէ շուխիսիմէն էլ լինի այդ նոր աղանդէն,  
Որ իւր Փեսին սպասում լինի, թէ պիտի դայ երկինքէն:

Պ Բ Ո Տ Ե Բ Ի Ո Ս (անդորր).

Թէպէտ և նա, այո՛, մրտել է այդ մրտքով այն վանքըն,  
Բայց ահամայ են բընակում վանքերի մէջ կուսանքըն.  
Շրպարա աղջիկ էր շուխիսիմէն, տընանկ ծնողաց էր զաւակ,  
Չունէր բաժինք պաշտատական, այլոց ծաղուց նըշաւակ.  
Ըստ իւր քրմաց փեսայ չ՛գտաւ, մընացել էր քընջումըն.  
Եսոց «երթամ ծածկեմ ամթիս, թաքչիմ կանանց վանքումըն»:

Պ Ի Ս Կ Է (անհանդուրժ).

Վ անք ասածըն ի՞նչպէս սուն է, նրման է մեր արքունեաց:

Պ Բ Ո Տ Ե Բ Ի Ո Ս.

Վ անքըն նոյն է, ինչ օթեան, կամ իջեան, կամ թէ սուն,  
Ուր միանգամ կարող է մարդ գըտնել անձին բնակութիւն.  
Բայց սոցա մէջ վանք առել է մէկ օտար ձև մեկութեան,  
Ու դառել է աշխատանքէն փախչողների բընակարան.  
Խաչելեան իւր վերջին գիշերն մէկ վերնատանն հաց կերաւ,  
Եյն վերնատուն յետոյ նորա աշակերտաց տեղ դառաւ,  
Մէկ պատմագիր այն վերնատան անունըն վանք էր գըրել,  
Եւ քրիստոնեայք Վ անք անունըն այն տեղիցն են սովորել.  
Ուր մէկ քանի արք կամ կանայք ուրեք հաւաք են բնակում,  
Եյն տան անուն իւրեանց միջին ընդ փոյթ վանք են յորջորջում:  
Բայց վանքերըն յետոյ քիչ քիչ իւրեանց ձևերն փոխեցին,  
Մէջերն խրցեր և տաճարներ, աղօթատեղ շինեցին.  
Խրցերըն նեղ նեղ սենեակք են, մանր և մըթին ճըգնարան,  
Խկ Տաճար՝ տեղ աղօթից է, բայց մեր աստուածք անդ չըկան,  
Շրբապուրիչ վայրեր են վանք, շատերին են պարտակում,  
Եմեն սունից փախըստականք նոցա մէջ են թաք կենում:

Պ Ի Ս Կ Է.

Ի՞նչպէս գըտաք այս աղջկան, պատկերն ի՞նչպէս առեցիք,  
Եյս հրաշագեղ կենդանագիրն քանի՞ օրում նկարեցիք:

Պ Բ Ո Տ Ե Բ Ի Ո Ս.

Ի՞նչ ծածուկ կայ. որ աշալուրջ լըտեսք շոռմայ բաց չանեն.  
Երբ ծանուցին ոստիկանին, խկոյն կարգ դրեց ինքն իրեն.  
Պատկերահանն քանի գիշեր գընաց ծածուկ այն վանքըն,  
Պատուհանէն միայն տեսաւ աղօթից ժամ կուսանքըն.  
Շրուխիսիմէն, տեսնում ես որ, աղօթում է ծունկ չորած,  
Եւ ձեռներըն եռանդազին, համեստութեամբ տարածած.  
Նչքերըն չէ հըպարտութեամբ դէպ ի երկինք բարձրացրել,  
Եւ ո՛չ յանդուգն սեղանումըն գըրած իրաց բեւեռել.  
Չես իմանում, թէ նա ինչի՞ վերայ է իւր աչք ուղղած...  
Եսում են թէ այն շրէյն էլ այս կերպն է միշտ ունեցած...

Վրժուարութեամբ է նրկարուել այս հրաշագեղ պատկերըն,  
 Սանդուխտներով էին անցնում բերդի նրման պատերըն,  
 Բայց եթէ այժմ Հըւսիսիմէ կուսին բերել կամենաք,  
 Պիտի նորա մայրապետին նախ ձեր ձեռքըն ունենաք.  
 Ուղարկեցէք աիկնանց մէկին, որ պառաւին աստ բերէ,  
 Այն ծեր կինն, վանամայրըն, և անուէն է Վայխանէ.  
 Պառաւն պիտի չըհասկանայ, թէ ինչե՞ք էք հրաւիրում,  
 Տիկին նորան պիտի ասէ, թէ թագուհին է կոչում.  
 Կամենում է լրսել ձեզմէն ձեր կրօնական խօսքերը,  
 Նոքա յօժար են միշտ խօսիլ նոր աղանդի անցքերը.  
 Նորան պիտի այնպէս ցոյց տալ, թէ փոխուել է ձեր խորհուրդ,  
 Եւ կամում էք ծածուկ շնորհել քրիստոնէից արձակուրդ:

ՊՐԻՍՎԻ: (առ մին ի տիկնանց).

Գընա՛ ուրեմն, Մեղանիա, ըզգուշութեամբ վանք մըտի՛ր,  
 Վայխանէ մայրապետին ծածուկ ինձ մօտ հըրաւիրի՛ր:

Պ Ր Ո Տ Ե Ր Ի Ո Ս.

Եսա՛ նորան թէ թագուհին այսօր փոքր ինչ տրկար է,  
 Երի և քո աղօթքներով առողջութիւն ընձեռէ՛: (Մեղանիա դնաց).

Դ Ի Ո Վ Լ Ե Տ Ի Ա Ն Ո Ս.

Հնարագէտ ես, Պրոտերիոս, սկանջ էի ես զընում,  
 Երբ դու վանքի կամ նրկարչի բաներն էիր բացադրում.  
 Եփսոս, որ դու միշտ չես կարում ծերակուտի մէջ նրստիլ,  
 Ծերացել ենք դու էլ, ես էլ, էլ չենք կարող նորոգիլ:

Պ Ր Ի Ս Վ Է (ժպտալով).

Ի՞նչ ես խօսում, կայսրդ Հըրօր, ազգըն ժառանգ է խընդրում,  
 Խակ մենք ահա՛ հարմնացու ենք արդ քեզ համար պատրաստում:

ՊՐՈՏԵՐԻՈՍ (առ կայսր).

Մի՛թէ դու ևս, ո՛վ ինքնակալ, հասել ես իմ հասակին,  
 Վեռ այր ես դու քառասնամեայ, ութսունամեայ է իմ տին.

Վրսան ամբ են որ Հըռոմայ տէրութիւնն է երջանիկ,  
 Վրսանամեայ էիր տիովք, որ վրթթեցաւ քո ծաղիկ.  
 Նիհար էիր և վատառողջ և չեյար դէմ Հըռչէին,  
 Հայ պատանին ելաւ ընդդէմ այն վայրենի վարաղին,  
 Այնուհետև տասնըհինգ ամ էլ վըրայէն անցկացաւ,  
 Եւ Հըռոմ քաղաք քո բաղլի տակ զօրացաւ և մեծացաւ,  
 Վո երկիւղըն ամենուրեք խաղաղութիւն տարլացոյց,  
 Եւ Պարսից սուր արեւելքումն Տըրդատայ ահն ըրթացոյց:

Պ Ա Տ Ա Ն Բ Օ.

(Տեսարանն ցուցանէ գարձեալ զնոյն գահընէն ի նոյնութեան, մտանէ ի ներքս Պայխանէ ընդ Մեղանեայ: Ամենեցուն աչք գառնան ի նա: Խօսին շըշալով):

ՊՐԻՍՎԻ: (առ Դիոկլետիանոս).

Ի՞նչ փառացի կերպարանք է, Հըռոմայ աիկնաց մէկ հասն է:

Գ Ե Ո Վ Լ Ե Տ Ի Ա Ն Ո Ս (առ Պրիսկէ).

Բարձրահասակ, չքնաղերան, սեւազգեստեալ շքեղ է:

Գ Ա Յ Ի Ա Ն Է (պարկեշտութեամբ, այլ բարձրաձայն).

Ողջոյն ընդ քեզ, կայսերուհի, քո հրամանաւ եմ եկել:

Կ Ա Յ Մ Ր Ո Ւ Հ Ի (շորհաշուք կերպիւ).

Բարի եկիր, Վայխանէ, այո՛, ես եմ քեզ կոչել:

Գ Ա Յ Ի Ա Ն Է.

Մեր Վարդապետն վաղ է ասել, որ մենք պիտի հնազանդվինք,  
 Երբ ատեանում նորա անուան համար կանգնինք ու դատուինք:

Կ Ա Յ Ս Ե Ր Ո Ւ Հ Ի.

Ես քեզ այսօր ո՛չ դատելոյ, ո՛չ պատժելոյ եմ ձայնել.

Վեզմէն կամիմ մէկ աղջըկայ մասին խօսք ինչ հարցանել:

(Պատամբ ցոյց է տալիս պատկերն).

Գու այս կուսին ունի՞ն տեսած, կամ կոյ այսպէս Օրիորդ:

ԳԱՅԻԱՆԷ (շառագնած).

(Առանձին) Յիսուս Փրկիչ, Վո Աջ և Խաչ ինձ արդ լիցին ռահահորդ.  
(Բարձաձայն) Այո՛, սա մեր վանքի մէջ է, շըռ իփսիմէ իմ սանն է:

ԿԱՅՍԵՐՈՒՂԻՆ (յոտու ելեալ).

Շըռ իփսիմէն մեր համայնիցս հաճոյացած կուսանն է.  
Մենք ընտրել ենք նորան կայսեր, ազգի կամօք, հաբսնութեան,  
Ուրախ ենք որ այն Օրիորդ յանձնած է քո մայրութեան.  
Գու էլ դեռ ևս չես պառաւած, և կարող ես հարսնանալ,  
Վեզ զբժուար էր կայսեր հանդոյն որ բարերար ըստանալ.  
Եսա իրաւ, շըռ իփսիմէն, ես կարծում եմ, քո դուստր է,  
'Նորա զխտակ' կերպարանացդ շատ աւելի նըման է:

ԳԱՅԻԱՆԷ (ժպտաւով).

Իրաւացի են ձեր կարծիք, շըռ իփսիմէ իմ դուստր է,  
Բայց նա ինձմէն միայն հողուով, բարոյապէս ծընել է,  
Ես չեմ սուել նորան այն կեանք մարմնաւոր իմ ծըննդեամբ,  
Այլ եմ ծընող լով հողուոր, կրօնական սուրբ սննդեամբ.  
'Նա սերեալ է Արլաւդիոս մեծի կայսեր ցեղիցըն,  
Պատրոնիկէ կայսրուհին էր նորա նախնեաց սողիցըն.  
Թէպէտ ես էլ դուստր եմ շըռուայ, բայց չեմ այնպէս վեհագնեայ,  
Ինչպէս որ է շըռ իփսիմէ կոյսըն զըշեոյ թագազնեայ.  
Ուրախ եմ յոյժ որ իմ Սանիկ ձեր մօտ շընորհ է զըտել,  
'Նորան աւել էլ ի՛նչ է պէտք, քան թէ կայսեր հարս լինել:

ԿԱՅՍԵՐՈՒՂԻՆ (ուրախ ուրախ).

Փութա՛ ուրեմն, Գայիանէ, շըռ իփսիմէին բեր դարպաս,  
Կառք թող զայ և թող հագնի ոսկեճամուկ պերճ կերպաս:

ԳԱՅԻԱՆԷ (շնորհաշունք).

Օրհնեալ լիցին կամք Տէրուհւոյդ, եթէ այդպէս կը կամիք,  
Բայց ես էլ մէկ խորհուրդ ասեմ, տեսնենք, զուցէ կը հաւնիք.  
Շըռ իփսիմէ քրսանամեայ պատանի է զարդացած,  
Երկոտասան ամաց հետէ ի մենատտան բընակված.

'Նա Յիսուսին է խոստացել ուխտաւք զուզիլ հարսնութեամբ,  
Եւ այժմ նա այդ բարի խորհուրդ չի յանձն առնուր զիւրութեամբ.  
'Նորան պէտք է ամբք բանիւք ընտելացնել այդ գործին,  
Թէ կառք ասնէ կամ թէ ակնայք, մեծ ցաւ կանէ իւր անձին.  
Այլ ես վըստահ եմ անյողղողդ, որ նա իմ ձայն կը լսէ,  
Եւ ինչ խորհուրդ որ ես յայտնեմ, նորան զիւր կուհամոզէ:  
Ինձ ժամանակ տըւէք հինգ օր, որ ես խօսիմ առանձին,  
Չէ կարելի յանկարծ յայտնել որ վէրք չառ-թէ իւր սըրտին:  
Եթէ բան իմ ձեզ հաճոյ է, թոյլ տըւէք ինձ, որ երթամ,  
Վեցերորդ օրն շըռ իփսիմէին հետքս առած կըղաւնամ.  
Եպա եթէ կամենում էք նորան փառքով փաթութել,  
'Նորա կուրծքն զոհար ականց մանեակներով զարդարել,  
Թէ կամ ունէք նորան կառքով փոխել դէպ այս ապարան,  
Այդ ձեր կամքն է: Բայց արքունիք չիլնիր նորան հարսնարան:  
Ո՛վ է կարող նորա սըրտէն արտաքսել սէր Յիսուսի.  
Ո՛վ է կարող նորան ասել, թէ չես դու հարսն Վրիստոսի,  
'Նա մինչ այսօր խաչեցելոյն եղել է միշտ խաչակից,  
Յուսամ որ և այսուհետեւ կարէ լինել մահակից:  
'Նորան ո՛չ փառք, ո՛չ կառք, ո՛չ սէր, չեն մարթանար խարբալել,  
'Նորան ո՛չ զարդք, ո՛չ հեշտութիւնք կարեն բընաւ զըրդուեցնել.  
'Նորա համար ամենայն օր բաց են երկնից զըռներըն,  
'Նա ամեն օր տեսնում է իւր անմահ փեսի պատկերըն.  
'Նորան կարէք բըռնի բերել, այլ իւր կամքով նա չի գար,  
Յօժարութեամբ ոչ մէկ մարդոյ հարս կոչուիլ չի կամենար.  
Թէ կամենաք, կարէք փորձել, բայց յետոյ հնար չիլնիր.  
Շըռ իփսիմէն ինչ որ ասէ, մէկէլ իւր խօսք չի փոխիր:  
Այլ թէ հաւնիք իմ ասածին, ես պատրաստ եմ ծառայել,  
Իմ դուստրըն է. ինչե՞ պիտի չը ցանկանամ հարս տեսնել.  
Բայց բըռնութիւն կըբըլթանայ նորա կամքի յանդիման,  
Բըռնութեան դէմ նորա սեռըն կըլնի անշուշտ յաղթական:  
Գուցէ թէ դուք չը հաւատայք իմ ասածիս, փորձ փորձէք,  
Շըռ իփսիմէի մատաղ հասակ ընկձնըն հեշտ ինչ կարծէք.

Որքան կուսից մահ տեսել է շում այս վերջին երեք դար.  
Նորա մահըն քան զամենայն պիտի լինի հրաշափառ:

ԳՆՅԻԱՆԵ (ահասարսուռ).

Քո ասելով, այս օրիորդ գերաշխարհիկ էակ է,  
Որ փախչում է յօժարակամ կայսերական պրսակէ:

ԳՆՅԻԱՆԵ (հրճուակի).

Նորա Փեսայն կայսր է կայսերց, թագաւորաց թագաւոր:

ԳՆՅԻԱՆԵ (հեզնութեամբ).

Այդ ասելով խեղճ կուսանաց մահ է հասել բիւրաւոր:

ԳՆՅԻԱՆԵ (ժպտաւ է դէմ).

Բիւրաւոր մահ հասել է բիւր խոստովանող կուսանաց,  
Սա պատրաստ է բիւր մահ մէնակ ընդունիլ հետ ամնջանաց:

Պ Ր Ի Ս Կ Է.

Ազաւում եմ, քեզ Մայրազիր շուփսիմէի չքնաղին,  
Մի՛ բարկանար այն խօսքերէն, ինչ ասաց իմ ամուսին.  
Գու ցարդ մայր ես շուփսիմէի, իմ ևս պիտի մայր լինիս,  
Ո՛չ խրցերում, այլ արքունեաց դահլճաց մէջ բընակիս.  
Ես յօժար եմ քո խորհրդոյն, որն որ լաւ է, այն արա.  
Գու ազատ ես, գարձիր փութով քո Սանի մօտ և դընա.  
Ո՛չ թէ հինգ օր, այլ վեց-եօթն օր, քեզ ահա տամ ժամանակ,  
Թէ պէտք լինի գանձ, եկ առնուլ ինձմէն գործիդ օժանդակ.  
Այժմ ևս որքան որ կամենաս, առ թէ արծաթ, թէ ոսկի,  
Կարելի է թէ շուփսիմէ այն տեսնելով՝ դայ խօսքի:

ԳՆՅԻԱՆԵ (ժպտալով).

Թէ՞ ասացի, որ նորան չէ կարող յաղթել ճոխութիւն,  
Մենք ուխտել ենք միշտ պահպանել աղքատութիւն, մերկութիւն,  
Թողէք խօսիլ ինձ նորս հետ, երբ ասածիս յօժարի,  
Ես անյապաղ իմաց կաննմ, քեզ վնհափառ թագուհի:

Պ Ր Ի Ս Կ Է.

Շատ լաւ կանես, այն ժամանակ կառքով փառքով կըբերենք.  
Քեզ և քո կոյս օրիորդաց, մեծամեծաց հարս կանենք.  
Փութա՛ ուրեմն, սիրական մայր, շուփսիմէի հետ խօսիլ.  
Որ կամենայ ուրախութեամբ շրջօր կայսեր հարս ասիլ:

ՊԼՏԱՆԻ Է:

(Տեսարանն ցուցանէ գրահիճ արքունեաց, ուր կայ թախծագին ծերակոյտն: Գիտղեփանոս  
և Պրիսկէ գունամթափ պնան յայտոյս և յայն. պրետորական զինուորք վեր է վայր վազեն.  
ամենեքեան ևն խօսիլեալ և ամբոխեալ):

ԳՆՅԻԱՆԵ (որոտաձայն).

Ո՞վ է բերել այդ չար համբաւ, շուտով նորան ներս բերէք:  
(Ներս են բերում Սուրհանդակներին):

Գ՛ռնք էք տեսել այն աղջկանց. որտեղ տեսաք, պատմեցէք:

ՄԷԿ ՍՈՒՐՀԱՆԳԱՆԵՆԿ.

Արկիլիոյ նաւով եկանք, նաւահանգիստ որ հասանք,  
Մէկ մեծ նաւ կայր պատրաստ կեցած, առազատած, մենք տեսանք  
Որ սևազգեստ շատ աղջկունք մէջը մըտան շտապելով,  
Եւ նաւն ելաւ իւր կայանէն հողմոց յաջող շնչելով:

Պ Ր Ի Ս Կ Է.

Գուցէ նորա չէին ընկերք շուփսիմէի, այլք էին:

Ո Ս Տ Ի Կ Ա Ն.

Երբ լսեցի, իսկոյն զնացի, վանքում կուսանք չըկային.  
Շարքուփորձի ժամանակին շըջակայքում լսեցի,  
Թէ այդ կուսանք, քանի օր էր, որ զհետ էին փախըտի:

ԳՆՅԻԱՆԵ (ժպտալով).

Ես ձեզ հրաման էի տրել, որ կարգէիք պահապան:

Ո Ս Տ Ի Կ Ա Ն .

Իմ կողմանէ կատարուած էր ձեր պաշտելի հրամանն ,  
Այն վանք պատած շուքանակի էր աչալուրջ դէտերով .  
Երևի թէ մէջերն կային շաղուածք նոցա մրտքերով ,  
Որովհետև շաան են թողել իրանց յանձնած տեղերըն :

Դ Ի Ո Վ Լ Ե Տ Ի Ա Ն Ո Ս .

Ուրեմն նոքա ևս փախել են այն կուսանաց հիտերըն :

Ո Ս Տ Ի Կ Ա Ն .

Պուսաստանի շրջակայքումն էլ տրտունջ էր երևում ,  
Բազումք կայսեր այս ընտրութեան չէին հաւան սրբտերում .  
Ատում էին . վասն էր կայսրն քրիստոնեայ կոյս հարան ընարեց ,  
Հռոմեական օրիորդաց վերայ արատ դըրոշմեց :  
Եթէ չըքնաղ այն Հռիփսիմէն չը կամենար դիք պաշտել ,  
Կայսրըն նորա սիրոյն համար , մեղ խաչ պիտի տայր պատուել .  
Ինչպէս որ ես եմ արդ կարծում , բոլոր վանքի շրջակայք ,  
Լիքն են խտրն բնակութեամբք , յայտնի , ծածուկ քրիստոնեայք .  
Այս քրիստոնեայք կեցել են լուռ , բայց սրտտերում են ուրախ ,  
Մի միայն մեր կրթնակիւք՝ ընտրութեան դէմ են խիզախ .  
Իսկ բրթմնջիննն սգարդ յայտնում է որ բազումք յայնց նախանձով  
Օրիորդաց օգնել են , որ ճանկայ գրանեն հընարբով :

Պ Ի Ս Ս Կ Է .

Գուք ջըրուեցիք դէպ յամեն կողմն նոցա յեսնէն խընդրակներ :

Ո Ս Կ Ի Կ Ա Ն .

Ես խի և խի ամեն կողմենք տարածեցի հեծեակներ :

Պ Ի Ս Ս Կ Է .

Այդ ամեն դեռ չէ բաւական . գրեցէք խիոյն հրամանն ,  
Որ ամեն կողմ , ամեն աշխարհ , ամեն քաղաք և աւան  
Հրովարտակներ թող տարածվին , որ ուր ուրեք երևին ,  
Իսկոյն անշուշտ և անյապաղ ըզգուշութեամբ յետ բերվին :

Պ Ի Ո Տ Ե Ր Ի Ո Ս .

Եւ առանձին այսր աղագաւ պատգամ տաստիկ և դեսպան ,  
Թող փութապէս անապարէ առ Տըրդատ դէպ Հայաստան :

Պ Ա Տ Ա Ն Ե Ր Ը :

(Տեսարանն ցուցանէ դարձեալ զՏարտարոն , որ Սաղայէլ յանկեան ուրեք կայ դձկեալ տրտում իբր անթապարտ . շուրջ զնովաւ դարապետը դժոխոց , ոմանք թախծեալ և ոմանք ի ներքուտ ուրախ) :

Բ Ե Լ Ի Ա Ր (յարձակելով) :

Ես չասացի՞ , թէ քո խելքըն այն օրիորդն տարել է :

Ս Ա Դ Ա Յ Է Լ (զհասութեամբ) :

Ո՞վ կը կարծէր թէ մէկ պառաւ Արուսեկին խարել է .  
Աբիմէլէք դառայ այսօր , մէկ կին վերուստ քար ընկեց ,  
Թագս էլ ընկաւ թաւաղըլըր , և գաղաթս էլ ջախջախեց :

Ս Ա Մ Ա Յ Է Լ .

Խարէութիւն թէպէտ լաւ է ի մէջ մարդկան , որ լինի ,  
Սակայն անթ պիտի քաշենք , թէ մեր դէմ ևս այն բանի :

Ս Ա Դ Ա Յ Է Լ .

Ճըշմարտութիւն են քարոզում , բայց սուտն էլ չեն մոռանում ,  
Գայիանեայ երկաջրի խօսքն սոսկ ես էի հասկանում .  
Ես խաղացի լըբանսի դեր , Պրոտերիոս էլ դառայ ,  
Եւ սիրտ կայսեր ըզգուշութեամբ լըցի սիրով դէմ նորա :

Բ Ե Լ Ի Ա Ր (հեզնութեամբ) :

Ամեն արածդ թէպէտ լաւ էր , այլ արգասիքն ի՞նչ մընաց .  
Հռիփսիմէն վանքէն փախաւ , դէպ Հայաստան արդ գընաց :



Ս Ա Գ Ա Յ Է Լ

Ես առ Տրդատ էլ ուղղեցի կայսեր պատգամ և դեսպան,  
Ինքս էլ ահա կամիմ երթալ այսօր անշուշտ Հայաստան.  
Բայց ի՞նչ անեմ Փայտի ծիղէն, մօտիկ երթալ չեմ կարում,  
Ապա թէ ոչ այն աղջկերանց կարգելուի սարերում:

Դ Ա Գ Ո Ն

Եղիսէի գերեզմանն էր անյայտ ծածուծ մինացել.  
Մեզանից մին, չգիտեմ թէ ի՞նչ. մրտօք էր այն լոյս ածել  
Տանում էին մէկ հատ մեռել. ասպատակներ երեցան.  
Այն դիակըն ըշտապելով ձրգեցին այն գերեզման.  
(Մեռելն իսկոյն կենդանացաւ): Մենք էլ մէկ հնար գրտանենք,  
Սարերի մէջ ասպատակաց ահ և երկիւղ տարածենք.  
Գուցէ խուճապ ըշտապելով փայտն այն ուրեք կորցրենն.  
Եղիսէի ոսկերք չըկան, որ կապ մահու լուծանեն:

Բ Ե Լ Ի Ա Բ

Նա առաջ իւր կեանք կը զօհէ, քան Փայտն անձնէն հեռացնէ,  
Ի՞նչ զօրութիւն կայ մեր ձեռին, որ ահ նորան դողացնէ.  
Բարեք կըլնէր, որ Սադայէլ ուրիշ հընար գրտանէր,  
Այն Փայտի գող յափըշտակող քրիստոնէից կանգնեցնէր:

Ս Ա Գ Ա Յ Է Լ

Յոյժ լաւ ասիր, Բեւիար ջան, միտքս ծագեց մէկ նոր լոյս,  
Քրիստոնէից մէջ եկ ձրգենք դէպ առ այն Փայտ նոր խրախոյս.  
Թող ամեն տեղ, ուր էլ երթան այն սևազգեստք տարադէմ,  
Ուխտաւորաց բազմութեան հոյլք ջերմեռանդ վան նոցա դէմ.  
Նա երբ տեսնէ, թէ գալիս են Փայտի համար այն Հայերն  
Եւ չէ կարում նոցա աչքէն ծածկել չըքնաղ իւր պատկերն,  
Անշուշտ այն Փայտն թաքցընելոյ համար վրդէն կը հանէ  
Որ մարթանայ ինքն էլ պահուիլ հետաքրքիր խուժանէ.  
Այն ժամանակ կարենք նորան երկրէ երկիր հալածել,  
Որ նա չերթայ դէպ Արտաշատ այն Գրիգորին լոյս ածել:

Բ Ե Լ Ի Ա Բ

Եթէ երթայ Վաղարշապատ Տրդատ տեսնէ լաւ կըլնի՞:

Ս Ա Գ Ա Յ Է Լ

Ես Տրդատին ոտք կը հանեմ, որ խաղայ դեր Փեսայի:

Բ Ե Լ Ի Ա Բ

Վայ թէ Տրդատ ինքն էլ դառնայ մեր աստիւղն արբանեակ:

Ս Ա Գ Ա Յ Է Լ

Չէ. այդ չենիր մինչ Գրիգորին չհասնի աղջիկն օժանդակ.  
Հօխիսիմէին լարենք ծուղակ, Հայոց անենք դիւահար,  
Եւ Գրիգորին խոր Վիրապում ուղարկենք մահ չարաչար:  
Խմ աչալուրջ Բեւիար ջան, երթանք ինձ հետ Հայաստան,  
Համախրմբենք մեր զօրութիւնն՝ ինչ Տարտարոս պահած կան.  
Քան զայս նեղ օր չե հասնիր մեզ, ի՞նչ ենք պահել մեր հին զէն,  
Օգնենք միմեանց որ Հայաստան չկորցէ Հօրն մեր ճանկէն:  
Եւ դուք Ղանձիկ և Անահիտ, Հօխիսիմէի պատկերըն,  
Բերէք մեզ հետ Վաղարշապատ, և թաքցըրէք խորշերըն,  
Որ երբ հարկերն բրոնադատեն, կարողանանք դուրս հանել,  
Եւ նորամով Հայերու մէջ այն հարսանիք դիւրացնել:

Յ Ե Ղ Ա Ն Ա Կ Զ Ո Ր Ր Ո Ր Գ  
Պ Ա Տ Կ Ե Ր Ը

Տեսարանն ցուցանէ զգահին՝ Տրդատայ յարբանիս Վաղարշապատ մայրաքաղաքի, ուր կան  
բազմաւ Տրդատ յիւրում արքայական գահի, և աւարտեան յիւրաբանչիւր բարձս: Անդ էր  
Օտայ Ամատունի Մաղխազ և Հազարապետ աշխարհին՝ յաջմէ Տրդատայ, Արտաւազդ Ման-  
դակունին Սարապետ զօրութեան Հայոց՝ յաջնկէ արքային. Միհրան բղշն Գուգարաց և  
Վրաց՝ որդի Արտաշի և եղբայր Շապհոյ Սասանեանց Պարսից արքայի. Բազարատ Ապետ Բազ-  
րատունի՝ Թագադիր արքայ. Վահան Ամատունի՝ ի ծագիւեալ տիս պատանեկութեան. Մա-  
նածիհր Ռշտունի՝ երիտասարդ զուարթածաշկի. Մամիոն Տենազն. Ալուկ Էլիան Ալկունեաց.  
Տաճատ Աշոցաց տէր՝ զինակիր արքայի. Ագաթանգեղոս Առեւարդապետ. Ներքինապետ. Գահ-  
ճապետ. Սուրճանդակապետ, սուրճանդակք և այլք բազումք. (Կերս է մտնում Գարապետն).

Գ Ա Ր Ա Պ Ե Տ (Երկրպագեալ արքային)

Ողջ լիւր արքայ. Հում՝ քաղաքէն պատդամաւոր է եկել:

Տ Ի Ր Ա Տ (դժկամակ)

Հրրաման է նորեկ դեսպանն՝ Գլխանիս մէջ ներս ածել.

(Առանձին). Ա իրացս ըսպիք, որ ծածկրվել էին դոյզն ինչ կեղերով,  
Պիտի կրկին արիւնայի նորոգվին սուր ճանկերով:

ՊԱՏԳԱՄԱԲԵՐ (ներս մտաւ և երկիր եպագ).

Ողջոյն ունի քեզ, արքայ քաջ, շնորհայ հրգօր ինքնակալ:

ՏՐԴԱՏ (դժգոհ).

Ի Տըրդատայ ողջոյն կայսերն անկ է լինել ընկալեալ:

ՊԱՏԳԱՄԱԲԵՐ (մատուցանելով կայսեր թուղթն).

Հաճեաց յինէն առնուլ կայսեր հըրովարտակն սիրալիբ.

ՏՐԴԱՏ (առնում է նամակն և առանց նայելոյ վերայն).

Ատենադպիր, առ այս նամակ և բարձրաձայն ընթերցիր:

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ (բաց է անում փաթոյթն և ընթերցում է).

„Գաշնակից մեր և բարեկամ, դիւցազն Տըրդատ թագաւոր,

„Հիւսիսայնոց հրամանահասն, արքայ քաջ և զօրաւոր.

„Գիտկեան կայսրը շնորհայ, ձեզ ողջոյն է առաքում.

„Եւ բազդի մեծ յաջողութիւն է աշխարհիւ փախարում:“

ՏՐԴԱՏ (առանձին).

„Քարուք կ'ընէր եթէ խալաւ մոռանայիք Տըրդատին,

„Եւ թոյլ տայիք որ բուժէին բոլորովին խոցք սրբախն:“

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ (շարունակէ).

„Համանգամայն, Տըրդատ արքայ, քեզ գիտութիւն թող լինի,

„Որ շնորհայ մէջ այս միջոցիս տեղե կալաւ զիստուած մի.

„Գու գիտես որ չունիմ զաւակ և ոչ ժառանգ աթոռոյս,

„Ազգն համախումբ և ծերակոյտն բռնի զըրեց հարկ զըլտոյս,

„Որ ես չորրորդ ամուսնութեամբ դահիս յաջորդ ընծայեմ.

„Կարծելով թէ նոր թագուհեաւ որդի ծնանիլ կարող եմ: —

ՏՐԴԱՏ (առանձին).

„Այդ պատրուակ չէր և յայնժամ տասնեհինգ ամ վաղազոյն,

„Որ Սիրէնէ գըշտոյն չքնաղ ընարեալն իմ ի հարսնութիւն,

„Մինչ դառնայի ի պայքարէն, ուր կործանեալ էր շրոջէ,

„Եւ ընդ առաջ ասելով ցիս, Տըրդատ զհարսնոց ճանաչէ:

„Խակ դու որպէս երբեմն Նինոս յափըշտակեց զՇամիրամ,

„Քեզ ի կնութիւն առեր բլնա, յողբ համակեալ տարածամ:

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ (շարունակէ).

„Ես հարկեցայ հընազանդիլ և ընտրութիւն արարինք,

„Քրիստոնէից Անքերի մէջ մէկ չքնաղ կոյս յայտ բերինք.

„Իրաւ չքեզ օրիորդ էր, և անունն էր շնորհայ,

„Իայց մեզ խաբեց՝ կուսին փախոյց իւր մայրազիրն Գայիանէ:

ՏՐԴԱՏ (առանձին).

„Ո՛վ կ'յոժարի շարժուն դիակն ինքեան փեսայ անուանել,

„Եւ իւր դուստրն՝ որդանց բաժին չորչոր կմախաց հարսն անել:

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ (շարունակէ).

„Եթէ երբէք այն սևազգեստք ձեր կողմերումն երեւին,

„Այն սևերին մեծ ու պըստիկ կոտորել սուր բընաւին.

„Խակ մէն միակ շնորհային, թէ քեզ լինի հաճելի,

„Ես յոժար եմ, պահէ՛ք քեզ մօտ, թող գոնէ քեզ հարս լինի:

ՏՐԴԱՏ (առանձին).

„Ո՛րքան չքնաղ լինի այս քո հետազօտած շնորհային,

„Չէ բընաւ կարող բազմիլ յայն սիրա, ուր կայր բազմեալ Սիրէնէն:

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ (շարունակէ).

„Ապա թէ ոչ, ուղարկէ ինձ: Եթէ յարգես այս պատգամք.

„Մեծ հաճութեամբ պիտի լինիս մեծարած քո եղբօր կամք:

ՏՐԴԱՏ (նախ առանձին).

„Տասնեհինգ ամ անցնելից յետ նոր խելքն գլուխն է եկել,

„Ինչ որ արդ իւր ձեռում չունի, այն ինձ պարգև է զըրկել.

„Գէթ այսուհետ թող աչք բանան մեր խղճալի շայերըն,

„Գայլի նըման իրանց թաթով լընուն իրանց գործերըն.

„Յոյս չունենան արևմուտքէն, չունենան յոյս ոչ ուստէք,

„Սոսկ իրանց մէջ խընդրեն հընար, իսկ յօտարաց՝ ոչ երբէք:

ՏՐԴԱՏ (առ պատգամաւորն).

Ողջոյն իմ տան, առ ձեր կայսրն, կը կատարուին կամք նորա.

Թէ այս կողմն է շնորհային կոյս, անշուշտ ընդ փոյթ յայտ կուգայ:

(Առանձին) շնորհայ կողմն փախած կուսանք, իմ երկրին չեն հարկաւոր.

շնորհայ երկրէն փրչած զեփիռք անգամ կը լինին թունաւոր:

(Յայտնի) Ամենայն կողմ հրոսակք երթան, տանին սաստիկ մեր հրաման,  
 Գաւառապետք արթուն լինին որ փախուստ տալ չը կարնան.  
 Գիւղք և քաղաքք հետադռտեն, պրտրտեն այն յողջրկանց,  
 Գլանողին էլ թող խոստանան ի տրտիտուր մեծ մեծ գանձ.  
 Մեզ հարկաւոր չէ օրհորդ, Աշխէն Տիկին ողջ լինի,  
 Իմ ողջախոհ ամուսինըն պարգեւել է ինձ որդի.

(Առ նախարարս) Փոքրիկ Խոսրովս հընգետատան ամեայ կայտատ և ուշիմ,  
 Թէ օգնեն դիք, այն պատանին պարծանք կըլնի գահին իմ:

(Պատգամարներն երթայ).

**ՊԱՏԱՆԻ Ի.**

(Տեսարանումն յանկարծ ներս է մտնում Խոսրով: Ամենքեան ակնածութեամբ սուրի վերայ  
 են ելանում և գլուխներն խոնարհեցուցանելով միարեան ասում են մեզ).

Ահցցէ քաջիկ Արքայորդիդ, քի պանծասցի շայաստան:

ԽՈՍՐՈՎ (զուարթագին).

Շայաստանի սիւններն դուք էք և զօրավիգ հայրենեան:

Տ Ի Դ Ա Տ.

Ուրախ եմ յոյժ, իմ Խոսրովիկ, որ յարգ կուտաս իշխանաց,  
 Սոցա սէրն է քեզ հարկաւոր թէ տանն, թէ գէմ թըշնամեաց:

ՕՏԱՅ (նստուցանէ զխոսրով առ իւր).

Մեր թըշնամիք քո երկիւղէն զուճ են նկել սասանաճ,  
 Շապուհներից արդ շայաստան ո՛չ ահ ունի, ո՛չ կասկաճ:

Ա Բ Տ Ա Ի Ա Ջ Դ.

Շապուհ այժմիկ չի յարծակիր, բայց կողմնակի կըզըրդուէ,  
 Ասում են թէ Գեղուհնին է զուրս կանչում լեռներէ:

Ա Ա Ա Ն Ա Մ Ա Տ ՈՒ Ն Ի.

Շայրս ասում էր, թէ Գեղուհնն աղգական է շրջէի.

Նշքօրորդիք են Անակայ արիւնապարտ Պարթեւի:

Բ Ա Գ Ա Բ Ա Տ Ա Ս Պ Ե Տ.

Շին ժամանակ չորս քաջ եղբարք անկան բազկէ մէկ Գաւթի,  
 Որ զիւցայն ոմն հանդիսացաւ հանդոյն մերոյն Տըրդատի.

Նոցա մէջ ևս կայր հին նախանձ, մէկ մէկ եղան ի կործան,

Գեղուհնն զուր է մէջ մըտել, մեր զիւցաղնին ախոյեան.

Պարեւի է թէ գալիս է ի հատուցումն իւր պարտքին,

Թէ նա էլ գայ, իւրեանց պարտիքն տըւած կըլնին երեքին:

Խ Ո Ս Բ Ո Վ:

Մէկն է շրջէ, միւս՝ Գեղուհնն, ապա ո՛րն է և երրորդն:

Ա Բ Դ Ա Ի Ա Ջ Դ.

Գրիգոր որդին Անակայ, որ ընկաւ Վ իրապ խորտաբորան:

Խ Ո Ս Բ Ո Վ:

Այդ խորտաբորան ո՛ր երկրումն է, դեռ այդ տեղ ես չեմ գնացել:

Օ Տ Ա Յ.

Արարատեան գաւառումն է խոր Վ իրապն է, չեն լսուել:

Խ Ո Ս Բ Ո Վ:

Թէ խոր Վ իրապ կայ կամ ի՞նչ է, ես չեմ երբէք իմացաճ:

Մ Ա Ն Ա Ճ Ի Հ Ի Ռ Շ Տ Ո Ի Ն Ի.

Վայ Արտաշատ քաղաքի մէջ. գազանանոց է եղաճ:

Խ Ո Ս Բ Ո Վ (առ արքայն).

Այժմ ևս կա՞ն անդ գազաններ. երնէկ մէկ օր երթայի...

Տ Ի Դ Ա Տ.

Մէկ օր տանիմ քեզ խոր Վ իրապ. - ըլլօսանաց չէ տեղի:

Խ Ո Ս Բ Ո Վ:

Պատժած Գրիգորն ո՛վ է ապա, է՛ր է ձրգուել խոր Վ իրապ:

Տ Ի Կ Ա Ս .

Նորա Ենակ հօր դաւանօք մեռաւ Խոսրով մեծ՝ քո պապ :

ԽՈՍՐՈՎ (դժգոհութեամբ).

Արժանի՞ է հօր յանցանաց վրէժ խնդրել որդոցմէն :

Տ Ի Կ Ա Ս (շփոթեալ).

Չէ՛ այն Գրիգոր երես դարձոյց մեր ազգային կրօնցմէն :

Մ Ի Հ Բ Ա Ն Ս Ա Ս Ա Ն Ե Ա Ն .

Նա ասում էր, թէ Ենահիտ՝ Հայաստանի չէ պաշտպան,  
Երկնից երկրի կայ Արարիչ, նա է տիրող և մարդկան :

ԽՈՍՐՈՎ (առ Միհրան).

Կարծեմ դու էլ մեր Ենահիտն քո աստուած չես ընդունում,  
Հուր և արև է քո պաշտածն, նորանց միայն ես պառուում :

Մ Ա Ն Ա Ճ Ի Հ Բ .

Գրիգորի այն քարոզած մարդն աստուածորդի է եղած,  
Որ Հըրէից աշխարքի մէջ կախաղանումն է մեռած :

Ս Լ Ո Ւ Կ .

Կախաղանում մարդ են խեղդում, նորան փոկով չեն խեղդել,  
Այլ քառաթև փայտի վերայ հեղուսիւք են բեւեռել :

Ա Ր Տ Ա Ի Ա Ջ Դ .

Խաչ են ասում այն փայտակերտն, և Հում շատ են գործածում,  
Աւազակաց, հուղկահարաց նորա վերայ են խաչում .  
Բայց մեծ զարմանք է որ Գրիգոր իւր քարոզած Աստուծուն,  
Միշտ կամ խաչեալ էր անուանում, կամ խաչ ելեալ յօր մահուն :

Բ Ա Գ Ա Բ Ա Տ .

Լաւ աստուած է այն աստուածն էլ որ խաչուի ու մեռանի .  
Մենք լսել ենք որ մեր Աստուածն յախտեան կայ կենդանի :

Ա Ր Տ Ա Ի Ա Ջ Դ (առ Բաղարատ).

Գուհ հրէայ ես, այն խաչեալն էլ կարծեմ հրէայ է եղել,  
Մէկ լաւ քըննէ, չըլնի՛ թէ քո ազգիցն էր նա ցեղել :

Բ Ա Գ Ա Բ Ա Տ (շառագնէղով).

Թէ և ազգաւ ի հրէից եմ, բայց ութ հարիւր արդ ամբ են,  
Որ իմ նախնիք, գերի հրէայք, այս աշխարհի բնակիչք են,  
Իսկ այն խաչեալն երկու հարիւր յիսուն տարի հազու կայ .  
Ես ո՞ր կարգով պիտի լինիմ ազգակից կամ ցեղ նորա :  
Սակայն պապուս պատմութենէն լսել եմ յօր մանկական,  
Որ Արգարի կենաց վերջին տարիքն եղել է մէկ բան .  
Հրէից ազգէն ճարտար բրժիշկ է Արգարի տուն եկել,  
Ենթուժելի ցաւոց նորա փարատութիւն ընձեռել .

Նորա համար աւանդութիւն մինչև այսօր կայ պահած,  
Թէ ձեռք դնելով բրժիշկել է ամենայն ցաւ հիւանդաց :

Նա ևս այդ խաչն է քարոզել, և Արգարին համոզել .  
Արգար փակել է մեհեաններն, խաչ պաշտել տալ է ուղել :

Այլ յետ մահուն Արգար ծերոյն, մինչ տիրել է Սանատրուկ,  
Չէ կամեցել բրժիշկ հրէի բերած կրօնին կալ ըստրուկ .

Ո՛չ թէ միայն այն բրժիշկին դահճի սակրով է սպանել,  
Այլ և իւր դուստր Սանդուխտ դըշտոյն անխիղճ ի մահ է մատնել :

Մ Ա Ն Ա Ճ Ի Հ Բ .

Ես էլ լսել եմ իմ ծնողէս՝ մինչ Ալեսի դետափումն,  
Չուզեց Գրիգոր զո՛հ նրւիրել Ենահիտական մեհեանումն .

Վերմապեա իւր յորդորակօք յուշ էր բերում Արքային,  
Թէ Սանատրուկ ի սէր կրօնին ի՞նչ էր արել Թադէին,

Գեռ յայտնի չէր թէ մահապարտ Ենակայ էր նա որդի .  
Արքայն կամէր դարձուցանել դէպ ի պաշտօն Ենահիտի .

Երբ իմացաւ Արտաւազդէն Գրիգորի իսկ ո՞վ լինն ըն,  
Այն ժամանակ դատակընքեց ի խոր Վիրապ տարագրելն :

Ա Ր Տ Ա Ի Ա Ջ Դ .

Ինձ ևս ծանոց հաճատ իշխան, այն որ այժմ է Օխնակիւր,  
Թէ նա չասէր, գուցէ Գրիգոր չըլնէր անգամ տարագրի .

Արքայն նման էր վառած հնոցի: բոցն հասնում էր մինչ երկինք,  
Իւր բարկութեան որոտմունքէն դող էր բռննել ձորք, լերինք:

ՏՐԻԱՏ (ժպիտ Ի շքութեամբ)

Հաւատաւ ինձ, Օտայ հայրիկ, որ բարկասիրտ չեմ այնքան,  
Արրոխ վերք կայր, որ հոռւ եղև մրցցանակիս դաւաճան,  
Հրոչէի դէմ մրանիլն ի վէպ արժէր վարձուց առաւել,  
Վան որբան կայսրն յանդորր ելեալ պատշաճ վարկաւ պարգևել,  
Իմ հօր աթոռն դարձուցանել, միթէ դուք ոչ կարէիք,  
Ամ տեսնել զիս նախնեաց ի գահ իշխանքդ իմ ոչ կամէիք,  
Ամ լեզէնք Հռովմական աւանց ձերոյ օգնութեան,  
Ա՛յ յաջողէի՛ն զիս բնաւ երբէք հանել յաթոռ հայրենեան.

Օ Տ Ա Յ

Ո՞ղ լեր, Արքայ, քեզ քաջ յայտ չեն, Հօր աւուրց հին անցքերն,  
Թէ Արտաշէր ի՞նչ հնարներով մոյժ մեր աշխարհն իւր սուսերն.  
Խոսրովդուխան ես կորցեցի, դքեղ Արտաւազդ ազատեց,  
Մեր ազգատոհմն հանդոյն քոյոյն մահու ճարակ աւլ դատեց:  
Մինչդեռ Խոսրով Հայր քո ուժգին հալածում էր զԱրտաշէր,  
Լըրտեք նորա դարանակալք զեղեալ կային մեր երկիր.  
Միայն Անակ չէր մահապարտ, մեր մէջ կային դաւաճանք,  
Որոց, մահուամբ Արքայ Հօր քո, ի յայտ եկին խարդաւանք.  
Սոքա էին արգելառիթ մեր քաջ ձերոց միութեան,  
Մինչ որբ մընաց աթոռ նախնեացդ՝ չեկաց ժառանգ տէրութեան.  
Եղբարք քո քաջք առաքինիք ոչ մարթացան յաջորդել,  
Պարանակալք չէին թողնում ազգասիրաց միջնորդել.  
Որբան խորհուրդք մենք խրմբեցինք, նոքա արին ցիրուցան,  
Մինչ մարթացան ոտք Արտաշէի գօրօք կոխել մեր սահման:  
Երբոր տեսանք՝ թէ նախարարք չեն յաջողում միանալ,  
Նախընտրեցինք մանկանց առնուլ և աշխարհէն հեռանալ:  
Իսկ թագուհի մայր քո չքքնաղ մասնէր եղեալ դարանի,  
Եւ պաշարեալ կայր նենդութեամբ դաւաճանից ընտանի.  
Որք բանադնաց էին գաղանի ընդ Արտաշէի և Պարսից,  
Ուխտել էին մասնել զնոսա ի ձեռս վարձեալ սրիկայից.

Թէ չընէին այս դաւադիրք, Արտաշէի չէր յաջողիր  
Սրմբակակոխ առնել զօրաց իւր հեծելոց մեր երկիր.  
Ո՛ւ ազդ Հայոց միայն ի վնաս իւրոց շահուց աջողակ,  
Ի՞նչպէս դիւրաւ է յանձն առնում իւր բարեաց կալ հակառակ.  
Մինչ ճըշմարիտ Հայրենասէրք, Արշէլ եղբայրդ անդրանիկ,  
Յաթոռ եդին արքայական, որպէս ազգի տէր բընիկ,  
Հակառակորդք երկրորդ եղբօրդ „Աեցցէ՛ արքայ“ կանչեցին,  
Արին Ա աղարշ, թաղաժառանգ յաջորդին դէմ կանչեցին:  
Արշէլ փեսայ էր տան Սինեաց, Արտաւազդայ մերձաւոր,  
Ա աղարշ առել էր հարսնութեան դուստր Օլբրայի իմ եղբօր:  
Զան եդինք ես և Արտաւազդ ազգային մարտ խափանել,  
Մեր փեսայից դէմ երեցանք, որ չուղեցինք սուր հանել:  
Արշէլ ցասեալ Արտաւազդին, Ա աղարշ իրմէն զիս մերժեց,  
Բամբիշ մայր քո հարսանց առթիւ, երկուքին ևս անարգեց:  
Պարսկաստանէն արծաթ ոսկի Արասիսի պէս էր հոսում,  
Հայրենադաւ կաշառառուաց ծոցն ու գրբպան ձոխացնում.  
Չէին ըզգում կոյր ազգադաւք, որ երբ Պարսիկք բռնանան,  
Ո՛չ թէ միայն ոսկին արծաթն, այլ և կեանքերն կը բառնան:  
Լըր խաբեբայք չեն տար ոսկի, մինչ այն ոսկիք լար կըրնին,  
Ուր ոտք խարուած անմիտ զոհից իբր ի թակարդ կըմբռնին:  
Ուշ բացուեցան աչք պատրելոց, դահճաց ձեռին զըզացան,  
Առջ նոքա մահ զըրկեցին, որք մատնեցին զՀայաստան.  
Յետոյ հասաւ ազգասիրաց արեամբ առնել փոխարէն  
Երկանց՝ որովք պաշտպանեցին ազգին՝ Պարսից սուրերէն.  
Այլ արդէն յոյժ բռնացել էր դահճաց տապար ընդ վազեր,  
Արքայական տանէն միայն մնացել էիք Վու ընդ քեռ.  
Թագուհի մայրդ և հակաթոռ երկու եղբարքդ քաջարիք,  
Իւրեանց կեղծեալ պաշտպաններէն գաղանեօք կրեցին շատ չարիք:  
Որոց եղև թագ և պրսակ ի ձեռս Պարսից մասնութիւն,  
Եւ տարապարտ մահ քաջազանց, և պաշտպանաց գերութիւն:  
Նոյնոց մէջէն կայր Արտաւազդ ևեթ, և ես տարագիր,  
Վաջալերող յազատութիւն չունէր զոք ազդ և երկիր.

Իմ ջանք այն էր, որ չմերձին յԱնի ամրոցն ոտք Պարսից,  
 Պահում էի ծիծառն նրման բոյնս ի սողնոց և յօձից.  
 Տիւ և զիշեր շրջում էի ի ձեռին մերկ սուսերը,  
 Որ անվտանգ մրնան զըշխոյն և աշխարհի գանձերը.  
 Բայց և այնպէս մուտ էր զըսել յամուրն պարսիկ խորամանկ,  
 Որ օրհորդն ծիրանածին կուզէր առնել առեւանկ.  
 Ե՛յլ ողջամիտ իմ Սանուհին նախադասեալ սէր ազգի,  
 Արխեաց առ ոսն ամենայն զոհ սիրատուցոր առուզի:  
 Լըսվում էր անդ, որ օրէ ցօր զարգանում ես հասակաւ,  
 Եւ Երտաւազդ քեզ կրթում է, որ յապագայն լինիս լաւ.  
 Բայց դաւաճանք, որ որդանց պէս գոյանում են մարմինէն,  
 Չար համբաներ էին բերում քո աղազաւ ի Հոռմէն:  
 Որպէս թէ դու հրահանգվելով հոռմէական բանակում,  
 Վո մայրենի լեզուն անգամ ես ի սրտէ անարգում.  
 Երտաւազդէն հեռացել ես, Լիկինոսին ես յարել,  
 Մի ի Հոռմայ վայրենամիտ ըմբշամարտից ես դառել:  
 Երտաւազդն էլ կին է առել Ռողալիա յորջորջուած,  
 Որով ազգի մէջ բացել է լայն ճանապարհ օտարաց:  
 Հայոց սերունդք պիտի դիեն կաթն այլազգի մօր ըստեանց,  
 Եզդ փորք-առ-փորք առնու օտար տարր յիւր արիւն դիւցազանց,  
 Վասն այն երբոր ես կամեցայ քեզ մօտ դեսպան առաքել,  
 Որովհետեւ քո չարութեան համբաւ վաղ էր հըռչակել  
 Հայք ո՛չ միայն չըմարթացան յօժարիլ մեր պատգամաց,  
 Ե՛յլ և մինչ գունդը Հոռմայ եկին, չըմիացան այն զօրաց.  
 Չէին մոռնում Հայք Տիգրանայ, Միհրդատայ հին անցքերն,  
 Եւ Երտաւազդ մեր արքայի խարդաւանաց շղթաներն.  
 Տրայանոսի դէմ Պարթևաց բաղմալըրդով արշաւան,  
 Եւ Հոռմայ մի ի նահանգաց կոչել նոցա զՀայաստան.  
 Եւ ի դիմել Սասանեան տան ի ծագ անտէր մեր երկրին,  
 Ի պապենի նիրհելն անշարժ Հոռմէական սուսերին:  
 Մինչ Երտաւազդ չեկաւ յԱնի և իւր աիկնոջ չըբերեց,  
 Հայոց Տիկնաց ծանօթութեան յարգանօք չըմեծարեց,

Հայ մեծուհիք համոզուեցան Ռողալիայի տեսութամբ,  
 Եւ իմացան, որ Վարդուհի է նա կոչուած հարսնութեամբ.  
 Իսկ Հայերէն քաղցրիկ լեզուաւ որ խօսում էր անվրթար,  
 Ե՛յն Տիկնոջ մէջ չերեցեաւ ազգավրնաս անձն օտար.  
 Իւրաքանչիւր կին համոզեց իւր ամուսնոյն քաղցրութեամբ,  
 Որ ճանաչեն թէ չէ Հոռմ քեզ օտարացրել կրթութեամբ.  
 Ե՛յն ժամանակ Հայք իրմբեցան՝ քո առաջէն զընացին,  
 Եւ դէպ յաթու քո հայրենեաց լայն ճանապարհ քեզ բացին:

S. P. U. S.

Չարմանալի են մեր ազգի ատելութիւն և կամ սէր,  
 Բայց յաղթանակն միշտ զրաւում է կեղծուպատիր ազգասէր.  
 Թէ ես իրաւ սրբտով յարեալ լինէի յազդ ինչ օտար,  
 Լէ՛ր կընարէի կենաց տարազ զինւորական լուծ զըժար.  
 Վըսանամեայ ծաղիկալ աիովք միթէ միայն էր կրօնս  
 Յառաջադէմ զարգանալոյ կենցաղական իմ հանդէս.  
 Վանի՞ չըքնաղ ճոխ օրհորդք ժառանգք մեծաց կալուածոց,  
 Յողոց հանեալ հրաւեր անում էին իւրեանց ինձ ի ծոց.  
 Ե՛յլ Երտաւազդ և Վարդուհի յուշ ածում ինձ անդադար,  
 Թէ ո՛չ կարէ լինել երբէք Տիգրանուհի կոյս օտար.  
 Երբայորդի էին ասում, արիւն հօր քո չէ՛ չորցել,  
 Եւ ո՛չ արիւն բամբիշ մօր քո ծարաւ երկիրն է ծըծել.  
 Երիւն եղբարցդ և անմեղ քերցդ հատուցումն է պահանջում,  
 Տըրդատ՝ փութա՛ ի Հայաստան, ցայդ ու ցերեկ են կանչում:  
 Եզգամասնիչք, հայրենասէր երեւելով սրկամարաց,  
 Իմ պատճառաւ Երտաւազդի դէմ խայթոցներն են լարած.  
 Եւ Վարդուհին իւրեանց չարեաց պատրուակ են ձեռք առել,  
 Որ յաջուին ազգի սրտէն քաջ Երտաւազդն տարազրել.  
 Բայց թէ ազգի սէրն իմ սրբաում լինէն ունէր ինչ արժէք,  
 Իրախասպարաւ Երտաւազդայ պիտի ամենքդ զձեզ կարծէք:  
 Չիս բամբասել են իբրու թէ մոռացել եմ հայութիւն,  
 Երտաւազդին զըրպարակել թէ ուրացել է ազգութիւն.

Բայց Երտաւազդ ի սէր ազգի և ի պարծանս հայրենեաց,  
ինձ պաշտպան էր տիւ և գիշեր ի բազմակերպ փորձանաց:  
Իմ որբութիւնս սոսկ հարկ դրեց Երտաւազդին կին ածել,  
Որ ձեր անտէր արքայորդին կարնայ ի նմին մայր գրտնել:  
Ես արդարեւ կրմունայի լեզուն և ազգն հայրենի,  
Թէ Երտաւազդ յիւր հարսնութիւն չըհրաւիրէր զՎարդուհի:  
Իւր ծայրագոյն ճիգն այն եղև, որ հայերէն սովբեցնէ,  
Նոցա երկուց խօսակցութիւն իմ կրթութեան զբարոյն է:  
Լըսել է որ Հայոց լեզուաւ հռոմէական հրնութիւն,  
Ենչուշտ նախկին էր Վարդուհեայ ինձ աւանդեալ պատմութիւն.  
Երբ ի դահլիճ ժողովէինք յերկայն գիշերն ձրմերան,  
Կամ պարտիզի մէջ նրստէինք՝ յաշնան, գարնան, յամարան,  
Վարդուհի իւր Վերգիլիոն էր բաց անում և պատմում,  
Երկայն ժամերն իւր պատմութեան ըզբօսանօք կարճացնում:  
Երբ ես միտայ զինւորաց կարգ, արդէն լըրիւ զիտէի,  
Ըմեն հին և նոր անցք ազգաց՝ որոց անուանք են յայտնի:  
Հայոց՝ Տիգրան, Պարսից՝ Ալեքս, և Հռոմուլոս և Նումայ,  
Արիկինատոս և Վամիլլաս, և Շիպիոնք Հրոմայ.  
Յունաստանի պարծանք Եթէնք, Եղիոնեան զիւցազուրք,  
Երիտիդէսք, Թէմիստոկէսք և նոցին վեհ արութիւնք:  
Մակեդոնեան Եղեքսանդրոս աշխարհակալն մեծանուն.  
Եւ Պարթեաց Երշակունեաց դէմ Սելեկեանց յաղթութիւն.  
Կարթագինեայ և Տիւրոսի վաճառաշահ տուրեաւ,  
Նախանձաբեկ սրբախց հրապոյր որպէս խարոյկ բոցավառ.  
Եյս ամենայն լըսել էի և սրբօխ մէջ կայր դրոշմած,  
Նախանձեղի իմ գաղափար Յունաց Ադրոսն էր ընտրած.  
Խաւիոյ մէջ Օգոստոս և կամ Աեսար Յուլիոս,  
Կամ ինքնակալն Վեսպասիան, և կամ որդին իւր Տիտոս:  
Մեր նախնեաց մէջ բողոքեց կային, որոց քաղցր էր յիշատակ,  
Թէ՛ Երուանդեան Մեծն այն Տիգրան, թէ՛ Պարթեկեան Վաղարշակ.  
Ո՛չ Քրտերքսէսք և ո՛չ Երշակք էին երբէք ցանկալի,  
Միհրդատեան մարտք ապարդիւն չէր ինձ զովում Վարդուհի.

Որբան ախորժ էր ձայն ծափուց և հրքունանաց բազմութեան,  
Որք բերկրալիւ բերէին խունկ իմ պանծալի արութեան.  
Մինչ դառնայի յաղթանակաւ ի մարտական կրկիսէ,  
Կամ աւարօք ձոխ պերճացած ի թատրական հանդիսէ,  
Եյնքան հաճոյ էր իմ նախնեաց զիւցազն անձանց գովութիւն,  
Որոց բերան Վարդուհեայ սայր առաքինեաց պերճ անուն.  
Եյսպէս էին Վահագն, Վահէ, Երդվարդ Սիւնի ազգասէր,  
Եւ Երտաշաս, Եննիբաղայ ասպրնջական հիւրասէր:  
Ես մի միայն բանակի մէջ ընդ զորապետ ընկերաց,  
(Վայ քեզ Տրդատ, կորիւն առիւծ, ընկեր էիր այն կատուաց),  
Գործ կածէի դաղմատացուց հռոմէավար այն բարբառ,  
Որ Արիկերոնք, Ոքրատիօսք էին հարթել ձոխաբար.  
Իսկ մինչ ի տան էի լինում՝ Երտաւազդ և Վարդուհի,  
Միշտ այն լեզուով էին խօսում, որ էր բնիկ իմ մայրենի,  
Մէկ բառ չէին ներում հանել չըթանցս մէջէն այլազգեաց,  
Եսում էին այդ բառ պահէ զընել ի գործ մէջ զօրաց:  
Երբ Գրիգոր ինձ հանդիպեցաւ, էր սոսկական զինւոր մի,  
Ես սիրեցի ըննա հոգով վասն հայախօս իւր լեզուի.  
Եյնուհետև որպէս առանին, նոյնպէս զօրաց բանակում,  
Ես անխափան իմ հայրենի լեզուաւ էի միշտ խօսում:  
Գրիգոր անդեակ էր հինգ լեզուաց՝ Հայոց, Պարսից, Եսորաց,  
Յունաց, Հելլէն պերճ բարբառոյն, և բարգաւաճ Հռոմոց.  
Ես մէկ լեզու աւել քան զայն՝ բարբառ Գոթաց գիտէի,  
Որ զօրաց մէջ խօսակցութեամբ ինձ սեպհական արարի:  
Միթէ լեզուքն ուսանելով պիտի ճընշե՞ ազգութիւն,  
Հռոմէական բարբառ սըրտէս կարե՞ մերժել հայութիւն:  
Եյլ այն սնտախ լըրք որ սրիւնել էին ոստիք՝ Հայաստան,  
Ելին հընարք իմ ատելաց զաղտնի գործեաց Շապուհեան  
Հռոմէամու էին արել զըժբաղդ որդիս հայրենեաց,  
Վատ օրինակ վարուց, որ զոհ էր իւր ազգին անձնուրաց:  
Հայք, ձեր սըրտերն ասպարէս են, ուր ազգազաւ, կեղծաւոր,  
Միշտ կարող է դարնազարդիլ զերթ նահատակ զօրաւոր.

Ահանջներդ է միայն լայն բաց զըրպարուութեանց տալ տեղի,  
 Իսկ աչք և միտք կամաւ փակեալ, անտես առնել իսկն յայտնի.  
 Մեր անցեալներն պիտի լինին ապագայից օրինակ,  
 Այլ մեր այսօրն կըլանում է միշտ երեկեան յիշատակ.  
 Այնքան թըմբած է մեր հողին, որ բընաւ միտք չեն առնում,  
 Թէ թըշնամիք մեզ դէմ յաւերժ ի՞նչ որոգայթք են լարում.  
 Է՞ր պիտի շայք լինին թոյլ որ դառնան այլոց խաղալիկ,  
 Այսօր Պարսիկք, վաղիւ շոտմք, յետոյ խուժիկ կամ շընդիկ.  
 Է՞ր են լսում թըշնամեաց խօսք, և կամայն են հպատակում,  
 Վառնում նոցա ձեռին բաճ, բրիչ, ազգի հիմունք փըրփորում.  
 Մի՛թէ սակաւ են փորձ առել որ հայրենեաց դաւաճան,  
 Վաշառատուի ձեռք յաւէտ է ժամանել կախաղան.  
 Ո՞ր մասնիչն է մէկ փառաց մէջ, ո՞ր դաւաղիրն բաղդաւոր,  
 Ո՞ր խարդախողն է ժառանգել պատիւ և բարձ փառաւոր:  
 Ո՞վ քան զԱնակ կարէր երբէք առնել գործ մեծ տան Պարսից,  
 Է՞ր Արտաշէր ոչ ետ տրիտուր արքայասպան սրիկայից.  
 Ընդէր շըռչէ և կամ Վրիգոր ոչ ի Տիսրոն դիմեցին,  
 Ո՞չ ապաքէն թագ Պարթեաց էր խոտացած հարց նոցին:  
 Մին երեցաւ ի գլուխ Ղոթաց, միւսն շըռոմայ բանակում,  
 Մին ինձ հետ էր մենամարտել, միւսն ինձ էր ծառայում:  
 Եթէ չըլնէր անիրաւեալ՝ մըրցանակէս խորելով,  
 Ինձ ապառում բան Վրիգորի դուցէ թողոյր անվըրդով.  
 Այլ մինչ աւ իմ պատգամ, Վրիգոր՝ այս փունջ տար ձօն Անահաին՝.  
 Պատասխանեց „Չեմ տանիր, զի երկըրպազու եմ Խաչին“,  
 Արծեցի թէ հայրենի դահս կըրկին ձեռքէս է խըլում,  
 Եւ ապարօշս՝ այն խաչելոյ ոտից ներքոյ թաւալում:  
 Արծեցի թէ ականջիս մէջ մի ոմն ծածուկ շըշընչեց,  
 Եւ իմ հոգոյ փակած աչքերս արթընցնելով բաց արեց.  
 Ասաց. „Սորա հօրն Արտաշէր էր ուղարկել հօրդ դաւել,  
 Սորան Շապուհ է առաքել քո կեանք ի մահ գըրաւել.  
 Սորա հայր՝ քո հօր արևու վերայ սև քօղ տարածեց,  
 Որդին եկել է որ որդւոյդ կենաց լինի մահընկէց:

Սա գնացել էր Տիսրոն քաղաք թագ պարթեան ըստանալ,  
 Շապուհ սորան յետ է զըրկել քո վերայ ձեռն ամբառնալ.  
 Վրիգոր եկել է Խոսրովեան արքայորդւոյդ խողխողել,  
 Վատարել այն գործ ինչ Անակ կիսակատար էր թողել:

ՊԼՏԱԿԵՐ Գ.

Խ Ո Ս Ի Ո Ա:

Այնքան խաչեալ և խաչելեալ և խաչանուն յիշեցիք,  
 Մինչև մըտքիս մէջ յանկարծ մէկ մոռացած անցք վարթուցիք.  
 Այսօր եկան քանի բամբիշք տիկին մօր իմ տեսութիւն,  
 Եւ զարմացմամբ ըսկըսեցին ասել մէկ նոր պատմութիւն.  
 Վաղարշապատ մեր քաղաքի շըրջապատած այգեստան,  
 Սև հագուստով քառուռն յիսուն խաչի պաշտող աղջկունք կան.  
 Թէպէտ լեզուքն չեն հասկանում մեր քաղաքի տանտիկնայք,  
 Բայց զարմացրել են անպատում նոցա նըշանք և հըմայք.  
 Ասում են թէ միայն գնելով ձեռք ի վերայ հիւանդին,  
 Բըժըշկութիւն են պարգևում կաղին, կուրին, լուսնոտին.  
 Բորոտներն մաքըրվում են, ջերմողին տապն է թողնում,  
 Ամենայն օր քաղաքացիք զունդագունդ են անդ դիմում:

ՏԻԳԱՏ (հետաքրքրութեամբ).

Չը լինի՛ թէ այս նոքա են և մեր քաղաք են հասել.  
 Թող շուտ երթան ըսպատատարք այգեստանեայք լըրտեսել.  
 (Սպասուորք դնում են).

Մէկ տեսէք թէ կայսեր նամակ ո՞ր ժամանակ է գըրած.  
 Նոքա այսքան մեծ ճանապարհն ի՞նչպէս և ե՞րբ են արած:

Ա Գ Ա Թ Ա Ն Գ Ե Ա Ո Ս.

Վայսերական այս հրովարտակ շատ է ճանփումն ուշացել.  
 Այնուհետև համարեալ թէ եօթն ութ ամիս է անցել:

Օ Տ Ա Յ.

Եօթն ութ ամսումն ի հարկէ շատ ճանփայ կարող էին դալ,  
 Թեթևաքայլ աղջրկունք են, ի՞նչ նոցա խուժ պիտէր կալ:



Տ Ր Դ Ա Տ

Սքանչելք են թէ այս աղջկունք Վաղարշաստ գրանրվին,  
Մեր քաղաքի այգեստանեայք նոցա ոստեղք կրլնին.  
Չեն կարող այլ ևս խուսավել, բոլորից աստ հարս կանեմ,  
Եյն մէկն որ կայսր է պահանջել, ուղիղ ի Հոռոմ կուղարկեմ:

Բ Ա Գ Ա Ր Ա Տ Ա Ս Պ Ե Տ

Չեր կայսեր հետ եղբայրութիւնն կրկին պիտի նորոգվի,  
Լսէ Շապուհ և բարկանայ, նորէն ի մարտ պատրաստվի:

Վ Ա Հ Ա Ն Ա Մ Ա Տ Ո Ւ Ն Ի

Սատանայի եղբայրութիւնն աւելի մեծ պատիւ չէ,  
Այստի գրլին յամբոց կրկին իջանեոց չէ Հըս չէ:

Մ Ա Մ Գ Ո Ն

Երբ պիտի այն Շապուհ լսէ. շատ որ պիտի անց կենայ  
Որ նա Հայոց աշխարհի անցք լսէ ու բան հասկանայ:

Ս Լ Ո Ւ Կ

Չէ ճրջմարիտ այդ քո կարծիք, Սատանեան տուն Պարթև չէ,  
Շապուհ աւել բան զիւր ծընող Մեծն Արտաշիր ըզգոյշ է.  
Հայաստանում նորա լըտեպ իւր հօր օրէն են չըջում,  
Մենք ենք թըրիած, որ ուշադիր այս բաներին չենք լինում.  
Պարսիկք որդն են, որ անդադար կըրծում են մեր ծառերըն,  
Իսկ մենք օձից խնամք տանելով պահում ենք մեր ծոցերըն:

Ա Ր Տ Ա Ի Ա Ջ Դ

Թէ բարեկամն անօգուտ է, թէ թշնամին անվընաս,  
Իմ համարմամբ մի և նոյն է, թէ ն բիւր հատ ունենաս.  
Մենք Շապուհին տըինք իրրատ նա էլ իւր տուան չէ շարժում,  
Նորան միայն եկչոտներն են վիշապ կամ օձ համարում:  
Թող Հոռոմ մեզմէն ձեռն ամիտի, մենք Շապուհէն չենք դողար,  
Իսկ միշտ Շապուհ կանգնի մեր դէմ, Հոռոմայ թակարդք են մեզ չար:

Մ Ա Ն Ա Ճ Ի Հ Բ

Հայաստանի դիրքն է այնպէս, թէ միշտ իւր զօրք պահէ վառ,  
Ոչ ջուրք կըլնին նորան ահեղ, և ոչ հուր ինչ բոցավառ.  
Ելլ թէ արբայք յորս պարապին և ի զբօսանս ցայգ ու տիւ,  
Ե՛ր թըշնամիք չեն մեզ պատժիր ասպատակօք և մարտիւ.  
Վաղընջուց մեր առած ասէ, դըռներդ ամուր փակ պահիր,  
Եւ դըբացեաց հարևանաց զող մի ասեր ի նանիր:

Ս Ո Ւ Բ Հ Ա Ն Գ Ի Ա Կ (ներս է մտնում)

Հրոսանկներից մէկ քանիսըն լերդափըրվուր յետ դարձան:

Տ Ր Դ Ա Տ

Թող ներս դան: (ներս են մտնում քանի հոգիք):  
Ի՞նչ նոր համբաւ էք մեզ բերել:

Ա Ռ Ա Ջ Ի Ն Հ Ր Ո Ս Ա Կ

Ինձ Արտաշատ էին զըրկել. հասայ տեղոյս այգեստան,  
Տեսայ այգեսայ մօտերումն որ շատ երթեկ մարդիկ կան,  
Ըզբօսանաց ժամանակ չէր. կասկած ընկաւ սըրտումքս,  
Չըլնի՞ թէ այս նոքա են, ինքս ինձ ասի միտքումքս.  
Մըտայ այգոյ խոր տեղերըն, տեսայ օտար աղջկունք,  
Սեւ սեւ հաղուտ էին հագած. . . .

Տ Ր Դ Ա Տ

Ի՞նչ բարբառով էին խօսում. նոցա հետ ևս խօսեցա՞ր:

Ա Ռ Ա Ջ Ի Ն Հ Ր Ո Ս Ա Կ

Չը խօսեցայ, Տէր իմ Արքայ, և խօսիլ իսկ չէր հընար.  
Եյնքան խուռն էր բաղմութիւնըն, որ մօտ երթալ չըկարցայ,  
Եսի չըլնիմ ժամավաճառ, իմաց անել յետ դարձայ:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Հ Ր Ո Ս Ա Կ

Ես թէպէտ և չըխօսեցայ, բայց խօսածներն լսեցի,  
Հասկացողներն ասում էին, թէ լեզուքն են Տալացի:

ՏՐԿԱՏ (դէպ առ նախարարս),

Իտալացի է բարբառներն, այդ առաջին նրշանն է,  
Սեւադգեստած աղջըլունք են, անշուշա կայսեր ցուցածն է.  
Եյսօր կայսեր նամակ հասաւ, այսօր նորա երևցան.  
Թէ իրաւի նորա լինին, այն չէ հրաշք նորաշնան:

Օ Տ Ա Յ.

Թէ նաւասարդ ամիս լինէր, այդեքաղ ժամանակ,  
Պասէինք հայ աղջըլունք են և գիւղացիք բովանդակ.  
Իայց սև հագուստ մեր գիւղականք արք և կանայք չեն սիրում,  
Հայաստանի որդան կարմիր նորա չն՝ միշտ վայելում.  
Իայց մուսղանք հարցանել թէ ի՞նչ էր նոցա հագուստն,  
Պամ թէ ի՞նչպէս նրկատեցիք նոցա աւանին ապրուստըն:

Հ Ր Ո Ս Ա Կ Ք.

Մեր տեսածըն մաղեղէն էր, ասուի, ցըլիսի, բըրդեղէն:

Օ Տ Ա Յ.

Հի՛ն էր թէ նոր հագուստներն, մէկ ձև ցուցէք ձորձերէն:

Հ Ր Ո Ս Ա Կ Ե Ր Կ Ր Ո Ր Գ.

Չորձիկներն պատառոտուն և կիսամաշ հընտաիք,  
Գըլիէն վայր սև բօղ էր ծածկոյթ, ամենից մէջքն կան դօտիք.  
Գօտիէն վայր պարկի նրման քըղանցք գեսնին են քըսվում,  
Եպրուսա չունի՞ն, ո՞վ կայ գիտցող, մինչ իրենք չեն երեկում:

Մ Ա Ն Ա Ճ Ի Հ Ր.

Եյգւոյ միջին ո՞ր անդ կըլնի ողորմելեաց բնակարան,  
Իացօթեայ են, թէ տաղաւար ունին խորան կամ վըրան:

Հ Ր Ո Ս Ա Կ Ք.

Ելումուաներն հընձանումն էր, թըլի թէ անդ են բընակված,  
Վ ըրէներից երևում էր, որ նեղըլթեամբ են մաշված:

Ա Ր Տ Ա Ի Ա Ձ Դ.

Հոռմէն մինչ ի Վ աղարշապատ եօթն ութ ամիս քարշ զալն,  
Ի՞նչ կամիած կայ՝ որ կը ձըգէր նոցա մէջ մաշնուհալն.  
Մէկ իմանաք՝ թէ ի՞նչ պէսպէս երկիրներ կան ճանկումը,  
Եւ ո՞վ գիտէ՝ թէ ո՞ր կողմէն էին փախչում մեր կողմը.  
Մանաւանդ թէ ի՞նչ պատճառաւ մեր Հայաստանն ընտրեցին,  
Ելեան լերինք կամ Վարդատեան ապաստանիլ չուզեցին.  
Պին էր գըլուի գաղթականաց, Վարթազիկնայ հիմնադիր,  
Սորա ո՞ր նոր ոսկեգեղման արդեօք ելին ի իընդիր:

ՊԵՏԻՐ Գ.

(Ի ներքս մտանն՝ որք առաքեալ էին լուսեօղ զայդին).

ՊԱՐԱԳԼՈՒԻ ՍՊԱՍԱՆՈՐԱՅ.

Յաւիտեան կայ՝ Արքայդ Հըղօր՝ յերջանկութիւն հայրենեաց,  
Եկել ենք տալ համար մերոյ լըրտեսութեան արգասեաց.  
Մինչ գընացինք այդեստանեայք, մըտանք ի մէջ բաղնութեան,  
Ականջ զըրինք և լսեցինք նախ ինչ խօսում էր խուժան,  
Յետոյ տակաւ գնացինք այն կողմ՝ ուր որ կային աղջըլունք,  
Եչօք տեսանք նոցա շափն, են օրիորդք մաքրասունք.  
Հընոտեաց մէջ են փառացի, սև հագուստի մէջ պայծառ,  
Նեղութեանց մէջ՝ ուրախ, զուարթ, քաղցած ծարաւ են կայտառ.  
Իտալական է բարբառներն՝ ծանօթ բաղնաց մերոնցմէն,  
Որոնք դեռ նոր դեսպանաց հետ վըրադարձել են Հոռմէն:  
Ոմանք նաև ասում են թէ նորանց ի Հոռմ տեսած կան,  
Պասկած չէք որ սոցա համար՝ կայսր ուղարկած էր դեսպան.  
Երբոր յուշիկ խըռանի հետ հընձանին մերձ գընացինք,  
Ամենայն ինչ առջևներս էր, հարցուփորձերն թողեցինք:  
Հընձանի մէջ են բընակվում, երեսունեօթն հողիք են,  
Ղըշմարիտ է ամեն համբաւ, մայրապետն է Վայլանէն:

(Յանկարծ ներս մտաւ Վ աղարշապատայ Ոստիկանն).

Ո Ս Տ Ի Կ Ա Ն

Տէր իմ Արքայ, ողջ ընդ և կեանց զբարթադին յաւիտեան,  
 Գէտ այգեստան ինձ առաջնորդ էր տիրական քո հրաման.  
 Արք և կանայք, ծերք և տղայք արգույ մէջ են անհամար,  
 Ախտաժեատց բրժըշկութիւնք են կատարվում անդադար,  
 Վաջ յայտ է քեզ, որ մերազնեայք կրօնասէր են եռանդուն,  
 Տեսնելով որ առանց դեղոց դեղ են անում ցաւերուն.  
 Չարմանալով հիանալով ապուշ կրթած կեցել են,  
 Եւ ոտընիս չեն կամենում առնել իւրեանց տեղերէն.  
 Շատ նեղութեամբ եմ մարթացել հընձանի մէջ մտանել,  
 Ուր այն խեղճերն յաջողել են իջեան ինչ զբտանել.  
 Թըշուառութեան մէջ են ամենք, ոչ հաց ունին՝ ոչ ապրուստ,  
 Միայն իւրեանց աղօթքի մէջ խնդրում են այն ի վերուստ.  
 Յուշուններէն ազգի ազգի կանանց զարդեր են կազմում,  
 Եւ մէկ պատառ ցամաք հացի հետ են սիրով փոփոխում.  
 Նոցա լեզուն հասկանալով այսքան և եթ իմացայ,  
 Որ մեզ համար են արտասվում, մեզ համար է սուղ նոցա.  
 Միայն մի հատ Աստուած ունին, և միշտ նորան են դիմում,  
 Սուրբ են կոչում և ահաւոր, անմահ, հըզօր անուանում.  
 Բայց մի և նոյն միջոցումն ընծայում են նորան մահ,  
 Ի՞նչ Աստուած է՝ որ մեռել է, մինչ եղել է ինքն անմահ.  
 Իբրբ թէ նա չարչարուել է՝ մեզ կամելով ազատել,  
 Եւ յաղթելով մահին, մեղքին՝ մեզ փրկելիչ է անուանվել.  
 Ոչ զոհ ունին, ոչ ողջակէզ, վառ էր փոքրիկ մոմեղէն,  
 Խուռնկ և զբմուռս էին ծըխում մաքուր փայլուն բուրվառէն:  
 Բայց երդերն քաղցրաձայն են, մեր քրքումհեաց երդոց պէս,  
 Շատ համաձայն են նըւագում, եղանակներն են պէս պէս.  
 Երեւի թէ անծանօթ են մեր փառաւոր կրօնին,  
 Չեն ճանաչում մեր Աստուծին, մեր ոսկհհատ Անահատին.  
 Մեզ կարծում են խաւարի մէջ՝ մոլորված ու կորուսած,  
 Եւ աղաչանք են միշտ անում՝ որ լոյս ծագէ մեզ Աստուած.

Այն Աստուածն էլ որ խաչեալ է՝ ի՞նչ լոյս պիտի մեզ ծագէ,  
 Ի՞նչպէս պիտի օգնէ նա մեզ, և խաւարէն ազատէ.  
 Ո՞ր խաւարն է մեզ շուրջ պատել, որ մենք մէջն ենք խարխալում,  
 Ի զուր ընդ վայր խեղճ աղջրուկք մեզ համար հը են ողբում:

Տ Ր Դ Ա Տ

Այդպիսի խօսք այն Գրիգորն էլ մէկ ժամանակ էր ասել,  
 Ես չեմ ուզում միւս անգամ հին բարբանջանքը նոր լըսել.  
 Գու այն կուսին կարողացան տեսանել մէկ հընարքով,  
 Որոյ համար կայրըն նամակ էր մեզ գրել իւր կրնքով:

Ո Ս Տ Ի Կ Ա Ն

Ես մի միայն մէկին տեսայ, քառասնամեայ կըլնէր:  
 Տ Ր Դ Ա Տ

Այդ երեւի մայրապետն էր, իսկ շուրջիսին այնտեղ չէր:  
 Ո Ս Տ Ի Կ Ա Ն

Չեմ իմանում՝ Արքայ հըզօր, ես չունէի հըրաման,  
 Յանդրգնութեամբ վեր վայր առնել նոցա անդորր օթեվան:

Մ Ա Մ Գ Ո Ն

Լաւ է արեւ՝ որ նոցա դէմ չէ ցոյց տըւել բըռնութիւն,  
 Անդոր կուսից վայելուչ է հովանաւոր քաղցրութիւն:

Բ Ա Գ Ա Ր Ա Տ Ա Ս Գ Ե Տ

Իսկ իմ կարծեօք պատշաճ կըլնէր քանի տիկնայք ուղարկել,  
 Նոքա կարող էին երթալ, և ամեն ինչ նըկատել:

Տ Ր Դ Ա Տ

Աշխէն տիկնոջ դահլիճում արտ չըկան արդեօք մեծուհիք:  
 Խ Ո Ս Ր Ո Ա

Տիկին մայրիկս խրախճան ունի այսօր թէ ճաշ թէ ընթրիք:  
 Տ Ր Դ Ա Տ

Ներքինապետ՝ զընա և տես՝ թէ ո՞յք տիկնանց են եկել.  
 Ես կամենում եմ իսկ և իսկ դէպ այգեստան առաքել:

(Ներքինապետն զնաց).

Առաջ միայն երկու բամբիշք են հարկաւոր ուղարկել,  
որ երթան ու ծանօթանան և կարենան ճանաչել  
Բայց Երբայ քաջ, հարկաւոր է յղել միայն այնպիսին:  
որ զոնէ փոքր տեղեակ լինին իտալական բարբառին:

Զրկարծեմ թէ հայ տիկնաց մէջ գրտանվէ կին լեզուադէտ:

Բ Ա Գ Ա Ր Ա Տ Ա Ս Պ Ե Տ .

Միթէ կարծում ես որ Տիկնայք Հայոց խապառ են արդէտ:

Ա Ր Տ Ա Ի Ա Ջ Դ .

Սակաւք կային բանալի մէջ, երբ մենք դարձանք Հրոմէն,  
որ իւրեանց հետ բերում էին հռոմայեցի կոյսերէն,  
Նոքա ամենք արդ մեր մէջ են, և տիկնայք են իշխանաց,  
որ միմեաց հետ դարձեալ խօսում են բարբառով դաղմատաց:

Ն Ե Ր Գ Ի Ն Ա Պ Ե Տ (Վերադարձաւ):

Կեցցէ Երբայ. Տիկնոջ սպասն վաթսուն բամբիշք կան արդէն,  
Եւ դեռ քանիք ուշացել են, բայց աներկբայ գալոց են.  
Եւբայուհին նոցա մէջէն ընտրեց այնպէս բամբիշներ,  
որ եկել են Յունաստանէն, զիտեն նոցա բարբառներ.  
Մին է Տիկինն Արտաւազդայ՝ դայեակ քաջիդ՝ Վարդուհի,  
Միւսն ամուսին Սանաճիհրայ՝ Արլաւդիա Ուրշտունի:

Օ Տ Ա Յ .

Եյդ երկուք յոյժ բաւական են, առաջ դոքա թող երթան,  
Եւ ամեն ինչ որպէս հարկն է ըզգուշութեամբ իմանան:

Ջ Ի Ն Ա Կ Ի Ր .

Բայց հարկաւոր է այն տիկնանց նախ և առաջ պատուէր տալ,  
որ հասկանան թէ ի՞նչ է պէտք նոցա այժմէն իմանալ:

Ա Ր Տ Ա Ի Ա Ջ Դ .

Թող իմանան թէ արդարեւ այս այն փախչող կուսանքն են,  
որոց համար պատգամաւորն էր ուղարկված կայսերէն:

Ջ Ի Ն Ա Կ Ի Ր .

Կարծեմ այդքան չէ բաւական, այն ևս պէտք է իմանան,  
Թէ այն չըքնաղ օրիորդ ևս կայ ի մէջ այն բազմութեան:

Բ Ա Գ Ա Ր Ա Տ .

Իրաւ ասիր, եօթն ութ ամսում նա կարող էր մեռանիլ,  
Կամ թէ մէկ այլ անակրնկալ փորձանքի մէջ պատահել:

Ջ Ի Ն Ա Կ Ի Ր .

Ղիցուք թէ ոչ մեռած է նա, ոչ փորձանքի մէջ ընկած,  
Բայց այս տիկնայք պիտի լինին պաշտօնի մէջ աչքաբաց.  
Արեւի է որ Հրոփսիմէն է օրիորդ զեղեցիկ,  
Եյլ ոչ այնքան հըրաշագեղ, որպէս կայսերն է կարծիք:

Օ Տ Ա Յ .

Մեզ ի՞նչ փոյթ է նորա զեղոյ կամ քանակ և կամ չափն,  
Պարտաւոր ենք նորան ողջամբ հանել Յունաց ծովափրն  
Հասուցանել ի Հոմ քաղաք և կայսեր ձեռք աւանդել,  
Նա մեզ նորա զեղեցիութեան համար ոչինչ չէ պընդել:



Ջ Ի Ն Ա Կ Ի Ր .

Ճըշմարիտ է այդ ամենայն. բայց և նամակն կարդացին,  
Հրփսիմէ կոյս կարէ լինել և մեր քաջին ամուսին.  
Եթէ արքայն բարեհաճի՝ պիտի ի Հոմ ուղարկէ,  
Եպա թէ ոչ նա իւր տիկնանց մէջ ևս պահել կարող է:

Ն Ե Ր Գ Ի Ն Ա Պ Ե Տ .

Հրփսիմէն թէ չըքնաղ կոյս է՝ կարէ լինել հարձ միայն,  
Մեր թաղուհիք միշտ եղել են դրստերը լերանց կովկասեան.  
Եհա Երկիրորդ մեր Արաաշէս՝ որոյ կին էր Սաթիինիկ,  
Նայնպէս զուտար է Ալան աղդի մեր թաղուհին երջանիկ:

Բ Ա Գ Ա Ր Ա Տ Ա Ս Պ Ե Տ .

Ընդէր ես զու այդպէս խօսում. Վաղարշակին մոռացանք,  
որ Բազարատ իմ համանուն նախնեոյս զուտորըն հարսն արար:

Ն Ե Ր Ք Ի Ն Ա Պ Ե Տ .

Այնպէս հարսունք երբ են պակսել, կամ միթէ այժմ սակաւք կան,  
 Տիկնաց Տիկին աւանդութեամբ է օրիորդ լեռնական .  
 Օտարազգի տիկնայք անգամ չեն համարված թագուհի,  
 Եւ ոչ նոցա ծնունդ որդիք երբէք ժառանգ են զահի .  
 Այն մի միայն Արշամն էր՝ որ թագուհիէն չէր ծնած,  
 Եւ Հայաստան ձեռքն էր ձրգել՝ մինչ Արտաւազդ կայր բռնած .  
 Մէկ միտքըդ բեր երրորդ Տիգրան և նորա կին Ռոփիին,  
 Այն ցեղէն են Առափսանեանք, բայց ոչ ժառանգք են զահի :

Օ Տ Ա Յ .

Այս ևս պարզե էր Պարթևաց՝ որ ազգի մէջ տարրացաւ,  
 Արշակունիք հետերն բերին, իշխանաց մէջ փրոզեցաւ .  
 Այդպէս չէին մեր հին նախնիք Հայկակայ տան Հայկազնեայք,  
 Միակին էր ցեղ Արուանդեան՝ Տիգրան, Վահէ դիւցազնեայք :  
 Երբոր Պարթևք հասան մօտիկ՝ Հայք հաճեցան ընդունել,  
 Որովհետև Յունաց ազգէն յանչափս էին տաղտկացել .  
 Բայց լրսերով՝ որ Պարթևք ևս նրման ուրիշ ազգերուն,  
 Բաղանակին են . խընայեցին իւրեանց անմեղ զըստերեուն,  
 Որ չըդառնան Արշակունեաց կըրից համար խաղալիկ,  
 Արքունեաց մէջ նոցա վերայ իշխող չընին ներքինիք .  
 Խօսք կապեցին՝ որ Հայք չըտան իւրեանց զըստերք արքային,  
 Այլ թագաւորք իւրեանց համար լերանց մէջէն ընտրեն կին :  
 Մեր նահապետք հին տոհմերէն էին ընտրում կենակից,  
 Նա էր միայն լինում նորա բոլոր կենաց ուղեկից .  
 Իրաւի է կայ երզոց մէջ որ օտար ևս առել են,  
 Բայց այդ հողիւ է համարվում որպէս մէկն ի հազարէն :  
 Անուշաւան Համբիկի հետ, կամ Աստարէկ, Օլամիրըն,  
 Բանաստեղծք են բազմեցուցել մեր հին նախնեաց զահերըն .  
 Մեր նահապետք և թագաւորք ըզգոյշ էին այս բանում,  
 Օտարաց հետ ամուսնութեամբ չէին այնչափ մեղկանում :  
 Իւրեանց զըստերքն տալիս էին Հայազգի լաւ պատանեաց  
 Եւ զահակից էին անում զըստերքն իւրեանց համազգեաց :

Ոչ թէ միայն թագաւորին, այլև նորա թագուհւոյն,  
 Ազգն էր ընտրում իւրեան մէջէն, ժառանգ զընում աթոռոյն .  
 Տիկին լինում էր մեր մէջէն, ազգին ծանօթ, մըտերիմ,  
 Եւ ոչ հանգոյն օտարազգեաց զարանակալ ոխերիմ :  
 Հասակակից աղջըկերանց մէջէն նա չէր բաժանվում,  
 Չէր ասում թէ թագուհի եմ, սէզ ու յոխորա չէր վարվում .  
 Լըսուած չէ թէ մէկ թագազարդ օրիորդի ազգականք,  
 Նախարարաց մէջ քան վամեն հաշուած լինին պատուականք .  
 Թէ դուստր լինում էր թագուհի, հայրն ու մայրն և եղբարք,  
 Մընում էին՝ որպէս առաջ ևս մեզ նրման նախարարք .  
 Իշխան անուն էլ չունէինք, ըստրուկ անգամ չունէինք,  
 Վամ նահապետք, կամ ազգապետք, կամ նախարարք կասուէինք .  
 Որովհետև արքայուհւոյն ազգն էր տալիս աթոռք,  
 Վասն այնորիկ չըկայր նախանձ, հաճում էին բոլորք .  
 Բաղում անգամ թագաւորի մօտ միջնորդ էր թագուհին,  
 Ազգի բաղձանքն և ցանկութիւնն հասկացնում էր արքային :  
 Տիկնայք բամբիշք և օրիորդք տիւ և զիշեր անընդհատ,  
 Արքայուհւոյ բողբոսիքըն կանգնած էին շըրջապատ :  
 Ինչ որ չէին կարողանում առաջ տանիլ ծերերըն,  
 Ի սէր ազգի էին զըլուտ բերում նոցա դուստրերըն :  
 Թագուհին չէր գերեց նրման յարկ կանանւոյ արգելած,  
 Ներքինապետ նորա վերայ լըրտես և դէտ չէր կարգած .  
 Մենք ևս էինք թագուհիին ամենայն ժամ տեսանում,  
 Մեր կանայք և մեր զըստերք ևս թագաւորի մօտ գընում .  
 Տիգրանուհեայ կարգադրութիւնքն Համասիխուին են տըլել,  
 Մեր նահապետք և թագաւորք աւանդութեամբ ըստանձնել :  
 Երբ Վաղարշակ ընտրվեցաւ՝ մենք մեր պայման յայանեցինք .  
 Մեր զըստերաց դէմ կանանւոյ յարկի զըռներն փակեցինք .  
 Վաղարշակ ևս յօժարեցաւ որ կին առնու լեռներէն,  
 Եւ այս դատաւ սովորութիւն կամ մէկ օրէնք այն օրէն :  
 Չէինք ասում Վաղարշակին թէ քեզ աղջիկ մենք չենք տար,  
 Այլ պատմութեան փորձով ցուցինք որ կունենայ պըտուղ չար .

Ազգ իւր նախնի սովորութեամբ Տիկին յօժար է ընտրել,  
 Այլ ընտրութիւնն այն չէ կարող երկրորդել և երեքինել:  
 Ազգի մէջ կան այնպէս մարդիկ՝ որ իսկ և իսկ կը կամին,  
 Իւրեանց զըստերքն տեսնել զըշտոյ և արքայի ամուսին.  
 Այս պատճառաւ ազգի մէջ ևս պիտի ծագեն շրջութներ,  
 Մեր արքունիք եւրս դ.սունան այնպէս՝ որպէս Պարսիցն էր:  
 Իայց Բագարատ օտարածին այս ազգային մեր պայման,  
 Քանզեց ինչպէս որ սովոր են հրէայք քանդել ամեն բան.  
 Ազգ կամեցաւ Տիգրանայ թագն Վաղարշակին նըւիրել,  
 Բագրատ խընդրեց դեսպանական պաշտօնն ինքեան աւանդել.  
 Գընաց քրծնեց աղուէսարար՝ Վաղարշակին մօտեցաւ,  
 Գուսարն տըւեց ի հարսնութիւն՝ ասպետութիւն ըստացաւ.  
 Ազգ ևս տեսաւ և ճանաչեց Բագարատի արածըն,  
 Որ նա գործոց վըկայութեամբ հաստատեց իւր խորհածըն.  
 Իայց հարկաւոր համարեցաւ այն ժամանակ լուութիւն,  
 Կարևոր էր՝ մակեդոնեանց դէմ՝ Պարթևաց զօրութիւն:  
 Շուտ երեցան չար պրտուղներն. Վաղարշակ իւր աներին,  
 Տըւեց ազգաւ իշխանութիւն թագ դընելոյ արքային:  
 Ժառանգական իշխանութիւն մեր ազգի մէջ չէր լըսուած,  
 Նահապետք էլ, ազգապետք էլ էին ազգի կամքն ընտրած.  
 Թէպէտ սակաւ էր պատահում որ ազգ թողու ժառանգըն,  
 Եւ օտարին ընծայ բերէ ժառանգական պարծանքըն,  
 Իայց միշտ ազգըն որդւոց մէջէն արժանաւորն էր ընտրում,  
 Ապա եթէ լաւըն չըլնէր, դէպ մօտիկ լաւն էր դիմում.  
 Այլ հընարիւք Բագարատի այդ ցեղ դառաւ թագադիր,  
 Յետոյ այլք ևս ըսկըսեցին փառքին ելնել ի խընդիր.  
 Եւ Վաղարշակն առիթ զըտաւ նախարարներ սահմանել,  
 Ժառանգարար որդւոց յորդիս իշխանութիւնը բաժանել.  
 Իայց մեզ այդ այժմ չէ խոչընդակ, արքայն ի կամս ազատ է,  
 Եթէ հաճի շուխիսիմէին տալ տիկնութիւն՝ յոյժ մարթ է:  
 Տ Ի Գ Ա Տ.  
 Գընաւ ուրեմն ներքինապետ՝ իմացում աուր բամբիշին,  
 Որ իւր ընտրած մեծուհիներն փութով ուղղէ դէպ այդին.

Նորա երթան և լաւ նային թէ ի՞նչպէս է այն աղջիկ,  
 Որոյ համար կայսրն գրել էր թէ՛ է յոյժ գեղեցիկ.  
 Իայց մի՛ գուցէ թէ իրատութիւն կամ բըռնութիւն գործածեն,  
 Եւ այդ չընչին պատճառներով մեր մէջ շրջութ բորբոքեն.  
 Մեր աշխարհին խաղաղութիւն է հարկաւոր որ ծագի,  
 Քանի՞ տարի է որ պակսել են նորամէն ոտք Պարսկի:

ԳՆՏՆԻՐ Ե.

(Տեսարանն ցուցանէ զայդին, և ի նմին զհնձանն՝ յորում կան կուսանք, և բազմութիւն արանց  
 և կանանց շուրջ զհնձանաւն Մտաննն ի ներքս Վարդուհի և Սլաւդիս տիկնայք, որոց ընդ-  
 առաջ էլանէ Գայիանէ: Կուսանք կան մեկուսի յանկեան ուրբք.)

ՎԱՐԳՈՒՀԻ (Խտաւերէն).

Ողջոյն ընդ քեզ Տիկին շքեղ, մեր աշխարհէն էք եկել,  
 Ո՛վ կը կարծէր թէ մենք մէկ օր այստեղ կարենք ձեզ տեսնել:

ԳՆՏԻԱՆԷ (Խնդազին).

Աշխարհ՝ ծովէ, մենք նաւակ ենք՝ անդեկ, անթի՝ մէջ ծովու.  
 Ալքը նորա աներևոյթ միշտ խաղաղիկ ենք հովու.  
 Փըչեցին հողմք՝ մեզ աստ բերին, դեռ հաստատ չենք իմանում  
 Թէ ի՞նչ մըրբիկը և փոթորիկը են մեր հանդէպ պատրաստվում:

Կ Լ Ա Ի Գ Ի Ա.

Հայաստանում ձեր առջևն ոչինչ փորձանք մի կարծէք,  
 Սիրեցէք այս բերրի աշխարհ, նոր հայրենիք հաշուեցէք.  
 Մենք ևս եկել ենք ի Հուռայ, բարբառներս են քաջ յայտնում,  
 Մեր սիրելեաց հովանոյ տակ օտարութիւն չենք ըզգում:

ԳՆՏԻԱՆԷ (զուարթագին).

Իրաւ Հոռմ էր մեր բնագաւառ, բայց երբէք չէր հայրենիք,  
 Մեր Հայրենեաց մէջ ո՛չ թախիծ, ո՛չ սուգ, ո՛չ մահ կըլնին.  
 Գէպ այն կողմն է անց կացել խաչ իւր ուսին մեր Փեսայն,  
 Մենք էլ նորա արինազանգ ճանփով գընում ենք միայն:

ՎԱՐԳՈՒՀԻ (զարմացմամբ).

Այդ ո՞ր աշխարհ է անթախիժ, անսուգ, անմահ՝ երջանիկ,  
Եւ ո՞վ է այն ձեր խաչարարձ գնացած Փեսայն գեղեցիկ.  
Վառանից չափ էք դուք թուով, փեսաներդ էլ են այնքան,  
Այլ ինձ միայն մէկ փեսայի անուն հընչեց քո բերան:

ԳԱՅԻԱՆԷ (հրճուածք).

Այո՛ մէկ է մեր գեղեցիկ անմահ Փեսայն երկնաւոր,  
Որ մեզ կոչել է վաղ ուրեմն յիւր հարսնութիւն փառաւոր.  
Ամենքեան այն մէկ հատին ենք սիրահար կաթողին,  
Ո՛վ է կարող լինել երբէք հանդոյն այն սուրբ Փեսային:  
Հարսնարանի դուռն է միշտ բաց, այլ ճանփան է նեղ, անձուկ,  
Անդ չեն մըտնում բեհեզ՝ կերպաս, ո՛չ մարգարիտք, ոչ ալուճք:

ՎԱՆԻԳԻԱ (շորհաշուք).

Ձեզմէն մէկին սիրահար է հըզօր Փեսայն փառացի,  
Հըռիփսիմէ հաճոյացել է ինքնակալ արքայի.  
Փառք ու պատիւ, սէր խընդութիւն այսուհետ են ձեր բաժին,  
Երեւմուտք նոր պիտի փայլեն շքեղ տեսլեամբ այն կուսին:

ԳԱՅԻԱՆԷ (Ժպտանք).

Հըռիփսիմէն արհամարհեց Հոռմայ բարձր աթոռն,  
Նորան հըզօր ինքնակալն էր կարկառել սիրտն ու ձեռքն.  
Այն իմ գոված սուրբ Փեսային նախ նա պիտի հարսնանայ,  
Յետոյ մենք էլ նորա յետնէն, որ մեզ հետ Լս միանայ:

ՎԱՐԳՈՒՀԻ (բարեմարդութեամբ).

Վուք միացէք ո՛ւմ ձեր կամք են, Հըռիփսիմէին մեզ տըւէք,  
Այդքան ազնիւ աղջկունք էք, միայն մին մեզ շնորհեցէք.  
Մենք բըռնութեամբ չենք պահանջում, խընամախօս ենք եկել,  
Հոռմէական միահեծանն նըրան իւր հարսն է ընտրել:

ՀՈՒՓՍԻՄԷ (երեսէն քօղ հանկով).

Ինձ թողութիւն արա՛ Տիկին՝ որ խօսք ձեր եմ ընդհատում.  
(Վարդուհի և Վլադիա ապուշ կրթեալ հայն յերես նորա).  
Հոռմէական մեծ ախիտութեան զիս արժանի չեմ տեսնում.

Իշխան Հոռմայ պարտ է ընտրել իւր հարսնութեան այն կուսին  
Որ ի սրտէ սիրում լինի հըռչակաւոր իւր փեսին.  
Իմ սիրտ արդէն լի է սիրով, խոցուած սիրոյ նետերով,  
Նախձըկուած է բեւոռներով և սըսակի փուշերով.  
Վէպ լերդակողմ է զիս խոցել հողեպահանջ սուր Պեղարդ  
Վառաթեւն է յայսըմհետէ կենաց իմոց միայն զարդ:

ՎԱՆԻԳԻԱ (շառագնեղով).

Ինչի՞ այդպէս անյուսութեամբ ես քանքարտում գեղեցիկ,  
Նոր սէր կարէ քեզ վերըստին կացուցանել երջանիկ:

ՀՈՒՓՍԻՄԷ (հոգեզմայլութեամբ).

Հինըն ո՞վ է կարող հանել, որ սիրտ իմ նոր սէր խընդլէ,  
Սէր եմ տըւել մէկ փեսայի իմ մանկութեան օրերէ.  
Սըրտումս այլ Լս բաց տեղ չեկայ՝ որ նոր սիրով շողալովե  
Այս մէկ սիրով՝ ինչպէս հըրով պիտի յաւերժ փաղաղվե:  
Վուստր եմ Հոռմայ՝ չեմ ուրանում, բայց սիրահար հընութեան  
Նախանձաւոր առաքինեաց զիւցազն տիկնաց պատմութեան.  
Սարինացի աղջկերանց պէս իմ փեսային մըտերիմ,  
Պայքարի մէջ կանգնիլ միջնորդ ընդէր պիտի վեհերիմ.  
Պորցիայի նման ցաւերից ընդէր պիտի զանգիտեմ.  
Մինչ իմ մահուամբ բազմայ կենաց վերականգնել բաջ զիտեմ.  
Լուկրետիոյ զազանի դաշնակ չէ ինձ արդէն հարկաւոր,  
Իմ շըրջապատս աներեոյթ կան միշտ բանակք բիւրաւոր.  
Վ իրզինիոյ հանդէտ Հայր իմ զիս կը զոհէ իւր ձեռքով,  
Եւ կուսական արեանս հեղումն Հայք կը լըցնուն պարծանքով:

ՎԱՐԳՈՒՀԻ (Թախձագին).

Հըռիփսիմէ ջան, մենք քո արեան չենք բընաւին ծարաւի.  
Վեզ ո՞վ կարէ վընաս ինչ տալ՝ երբ պըսակվիս թագուհի.  
Չարդ պիտի լինի զահին Հոռմայ՝ պարծանք համայն տէրութեան,  
Վեզ միշտ ունին երանի՛ տալ տիկնայք, չըշտոյք պետութեան.  
Ինքակալն է քո փեսացուն, քո հանդէպ բնաւ վիշտ չըկայ,  
Ի՞նչ պատճառաւ ես յուշ բերում Վ իրզինիա, Պորցիա.

Ի Հում մընաց այն նախատինք Օգոստոսի յաջորդաց,  
Ազրիպպինայ և Պոպպէայ պարուք անզուպ մեծուհեաց.  
Թէ Հայաստան պարկեշտութիւնն է նախընտիր կանանց զարդ,  
Մաքուր վարուց դէմ չեն կրբրում գազանք անգամ, ոչ թէ մարդ:

ԿԼԱԻԴԻԱ (կարեկցութեամբ).

Նախկին սուրբ սէր՝ որ Հայաստան՝ կայ տակաւին Հաստատուն,  
Արեկին ի Հում վերադարձոյց ինքնակալ կայսրն իմաստուն.  
Ասիական հեշտախտութիւն՝ որով Հում էր զազրացած,  
Սասանեանց հետ դարձեալ նրստան Պարսից գահումն աղտեղած:

ՎԱՐԴՈՒՀԻ.

Բարեբաղիբ, Ասորեստան, Մարք, Յոյնք խորին տրզմերումն  
Անդրնդասոյզ կորան դնացին, չեն երևում արդ երկրումն.  
ԵյԼ Հայաստան որ անբասիր համեստութեամբ է ծաղկած,  
Տրոգատայ հետ անարատ վարք իւր և ի Հում էր զըրկած:

ԿԼԱԻԴԻԱ.

Սոցա այսպէս պահպանուիլն պարկեշտութեան է պարզե,  
Յոյս ունինք որ երկու աշխարհ այն մեծարեն յարատե.  
Եյ՛ Պարթևք բերե՛լ էին մոլութիւնք ինչ հետերըն,  
Բայց Հայոց մէջ քիչ են սրփուել իւրեանց տրզեղ ոստերըն:

ՎԱՐԴՈՒՀԻ.

Երդ թագաւորք միայն համեստ կոյս են ընտրում հարնացու,  
Հայոց պէս Հում՝ առաքինի անուան է սոսկ տարփածու.  
Թէպէտ Հրզոր արքայն Տրոգատ վեշտ մեծ ունի կայսերէն,  
Բայց ի պատիւ քո տիկնութեան դուցէ մերթէ այն սրտէն.  
Արեկին ի սէր իւր առնու քո ծիրանափայլ փեսացու,  
Աշխէն տիկին բեղ հետ երթայ մինչև ի Հում հարնածու:

ՀՌԻՓՍԻՄԷ (բողբոկելով).

Ընմահ Փեսայ, դու ինձ հասցուր քո աննուաղ օգնութիւն:

ԳԱՅԻԱՆԷ (հեռանալով դեպի հնաժայտարին).

Յիսուս Աստուած՝ հրաշագործեա և այս փտանդէս փրկութիւն:

ԿԼԱԻԴԻԱ (առ Վարդուհէ).

Չարմանալի աղջկունք են, ի՞նչ պատճառ կայ երկիւղի:

ՎԱՐԴՈՒՀԻ (շարժեցմամբ).

Եյս օրիորդ չունի բաղձանք երբէք լինել թագուհի:

ԿԼԱԻԴԻԱ.

Չըզուեցրել են խեղճ կուսանին Հոռմայեցոց մոլութիւնք:

ՎԱՐԴՈՒՀԻ.

Եփսոս նախնեաց բարի անուան, անհետ կորեան մեր հնութիւնք:

ԿԼԱԻԴԻԱ.

Մոռանանք այն մահուած հնութիւն, Հայաստանին միտ դընենք,  
Բարեբաստիկ ճանչնանք մեզ ևս՝ որ այս աշխարհ հասել ենք.  
Մեր կանացի պարկեշտութիւն աստ բարուք է ճանաչվում,  
Լըկտութիւններն ոտքի տակ են, և ոչ որ ևս չէ գովում.  
Հայք լաւ ազգ են, համեստ, պարկեշտ, առաքինի և զօրեղ,  
Կաւկասամերձ սերունդէն են, համ ուժեղ են, համ ուշեղ.  
Ես շատ դոհ եմ իմ վիճակէս, ի՞նչ էր մեր կեանք Հրոռմում.  
Մեռած չէի՞նք բարոյապէս, այսպէ՞ս էինք մենք կենում:

Պ Ա Տ Ա Ե Ր Օ.

Տեսարանն ցուցանէ զգահիճն Տրոգատայ՝ ըստ առաջնոյն, ուր այժմ ժողովեալ են և Տիկնայք՝  
պարաւեալ զթագուհեաւ Աշխէնիւ, և ամենայն Աագանին նախարարաց և իշխանաց հան-  
դերձ բարձրաստիճան պաշտօնէիք արբունեաց: Մտանն ի ներքս Վարդուհի և կուգի  
խնդալին:

Տ Ր Դ Ա Տ.

Բարեաւ եկիք, չըքնաղ Տիկնայք, ի՞նչ լաւ համբաւ էք բերել:

ԿԼԱԻԴԻԱ.

Քեզ ողջութիւն, արքայ հրզօր, ձեր հրամանքն ենք կատարել.  
Գնացինք այգիք, մրտանք հրնձան, տեսանք պանդուխտ աղջկանց,  
Սայսր իրաւամբ է պահանջում անդիւտ գոհարն մէջ ականց.  
Տեսանք աչօք Հոփսիմէին, և քաղցր ձայնն լսեցինք,  
Ես մոռացայ կանգնած տեղս՝ այգեստանն էր, թէ երկինք:



Վ Ա Ր Գ Ո Ւ Հ Ի

Հազար և բիւր աղջկանց մէջ՝ նորա հանդոյնն չի լինիր,  
Մեր դիցուհեաց մէջ ևս կարծեմ որ համանմանն չըլեր:

ԱՇԽԵՆ (զուարթագին).

Եթէ այդպէս հազուագիւտ է, ընդէր պիտի կայսեր տանք,  
Լաւ չէ՞ որ մեզ հարսըն դառնայ, և մեր տան մէջ ունենանք:

Կ Լ Ա Ւ Գ Ի Ա

Թէ ճրջմարիան խոստովանիմ, իմ խորհուրդ ևս էր այդպէս,  
Բայց յայտնել՝ ոչ յանդրգնեցայ՝ պատկառելով զըշխոյէս:

Ա Շ Խ Ե Ն

Ո՞վ գիտէ՝ թէ կարծում էիր՝ որ ես պիտի յաչաղեմ,  
Եւ իմ Վաջիկ Պարթեազին հարսն բերելոյն ոտխեմ:

Վ Ա Ր Գ Ո Ւ Հ Ի

Հրոխիսիմէ զարդ և պարծանք կըլնի շայոց արքունեաց,  
Նա քեզ կըլնի փոխան զբստեր՝ մեծ թագուհիդ թագուհեաց:

Տ Ր Դ Ա Տ

Թէպէտ իւրք երախտապարտ չեմ զիս կայսերն համարում,  
Եւլ ոսնակոխ առնել նորա խընդիրն ամօթ եմ հաշվում:

Ա Շ Խ Ե Ն

Թէ և բազմօք երախտապարտ լինիս շնորհաց այն կայսեր,  
Բայց քեզ պարտքէդ ազատել է անպարտել քո սուսեր.  
Ամօթ՝ քեզ չէ, այլ նորան է՝ որ մէկ աղջիկ է խնայել,  
Եւ շրջէի նըւաճողին սիրտն արեամբ լի է ճանփել:  
Ես քանի որ կերպացում եմ քեզ յանդիման շրջէի,  
Արիւնս սառչում երակացս մէջ, սիրտս մընում է ամայի...  
Սարի աղջիկ եմ վայրենի, ակն ընդ ական պահանջեմ.  
Սիրենի տեղ շոխիսիմէն է, ես քո կայսր ոչ ճանաչեմ:

Տ Ր Դ Ա Տ

Մէկ օրիորդ արժէ՞ որ մենք մէկմէկու դէմ խոժողինք,  
Միթէ՞ առանց աղջկերանց են մընացած մեծ լերինք:

Վաջիկ (զուարթագին).

Հերիք՝ որքան մեր լեռներէն այստեղ եկան աղջկուներ,  
Թող մէկ քանի շոռմէն էլ զան մեր զերդաստան նոր հարսուներ.  
Շոռմայեցի արքն են դաժան, տիկնայք միշտ են հաճելի,  
Տես թէ որքան վայելուչ են Սլաւդիա և Վարդուհի.  
Երբ զընում եմ նոցա տըներն՝ հոգիս լըցվում է խընկովք,  
Միթէ՞ արվում եմ նոցա քաղցրիկ խօսակցութեամբ, խորհրդովք:

Տ Ր Դ Ա Տ (ժպտանօք).

Մէկ ժամանակ մահապարտ էր Արտաւազդ՝ որ Վարդուհի  
Շայ տիկնանց մէջ իմ հրամանաւ զբտել էր բարձ և տեղի:

Ա Շ Խ Ե Ն

Խոսրովիկիս համար ես ևս շոռմէն կառնում հարսնացու,  
Մինչև այն օր թող շոխիսիմէ սովբեցնէ ինձ իւր լեզու.  
Ամենայն օր կայսերական դրոնէն պակաս չէ դեսպան,  
Ես բընաւին չեմ հասկանում երթեկեկի շրթանց բան,  
Այն ժամանակ ամեն խորհուրդ, ամեն պատգամ կիմանամ,  
Եւ իմ մըտաց զօրութեան չափ ատեանում խօսք կունենամ:  
Գուք էք ասում որ ձեր նախնեաց բարեհրոչակ թագուհիք,  
Միշտ եղել են խորհրդակիցք, ելմուտ արել արքունիք.  
Ես մնացել եմ աստ մեկուսի, յարկ կանանոյ է իմ վայր,  
Իմ հօր տան մէջ ես ապրել եմ այնպէս ազատ՝ որպէս այր:

Տ Ր Դ Ա Տ

Ես կամում եմ՝ որ շոռմայ հետ վերջանայ մեր ամեն բան,  
Ոչ ինձ անտի թող պատգամք զան, ոչ սուրհանդակ, ոչ դեսպան.  
Տասնեհինգ ամ ոգորում եմ ընդդէմ Պարսից միայնակ,  
Վասն էր շոռմէն ցարդ չերեցաւ մէկ լեզուն օժանդակ:

Ա Շ Խ Ե Ն (երթնացուցեալ զաւլ).

Տասնեհինգ ամք են որ այդ խօսք միշտ լըսում եմ քո բերնէն,  
Գարձեալ ահա կամենում ես յարդել պահանջ այդ շոռմէն.  
Ե՞րբ ես նեղուել Պարսից կողմէն, ե՞րբ ես շոռմայ կարօտել,  
Ոչ ապաքէն ամեն կըռուի մէջ շայոց զօրք են յաղթել:

Թէ միշտ այդպէս լինին մեր գունդք վառ, կազմ, պատրաստ, էր պիտի  
Երբէք լինին Հայք կարօտ ինչ Հռոմայ կողմէն նրպաստի:  
Թող Հռիփսիմէն կանգնի միջնորմ անջրպետ ձեր երկուսին,  
Եւ Հռոմ լսէ՛ որ այն կուսան առաւ անուն քո Հարսին.

Տ Ր Դ Ա Տ.

Մըքայուհի՛ դու հաճել ես Հռիփսիմէին որդեգրել,  
Եւ տիկնութեամբ քո ամուսնոյս հաղորդելով հարսն առնել.  
Բայց դու նորան դեռ տեսած չես, միայն օտարք են գովում,  
Տեսնենք ես ևս նոցա գոված օրիորդին եմ հաւնում:

Վ Ա Ր Դ Ո Ւ Հ Ի.

Միթէ կարնս արատ զրնել Ափրոդիտեայ արձանին,  
Որ Տիզրան մեծ է բազմեցրել յԱշտիշատայ մեհենին.  
Բայց Հռիփսիմեայ հանդէպ վէմ է անշունչ անշարժ՝ գործ ձեռաց,  
Եյս օրիորդ պիտի կապտէ ամեն պարծանք դիցուհեաց:

Տ Ր Դ Ա Տ.

Վարդուհի՛ դեռ չէ բաւական իմ այն կուսին հաւանին,  
Ով է կարող ապահովել և նորին իսկ յիս հաճին.  
Հռոմէական գահէն փախչողն՝ Վաղարշապատ կրնդունի...  
Անհընար է՝ թէ Հռիփսիմէ ինձ իւր կամօք հարս լինի:

Ա Շ Խ Է Ն.

Ի՞նչ ես խօսում քանջ իմ Տրդատ, այս ճոխութիւն որ տեսնէ,  
Պիտի սոցա գին չիմանայ, կոխէ՞ առուն, անգոսնէ՞:

Տ Ր Դ Ա Տ.

Աշխէն Տիկին՝ գիտե՛ք՝ թէ Հռոմ ի՞նչպէս քաղաք է,  
Երկայնութեամբ կամ լայնութեամբ քանի՞ փարսախ կրճածկէ.  
Միջումն ի՞նչպէս որդոստայք կան շրջապատած տուներով,  
Եւ զարդարած կոթողներով, յաղթանակի զըռներով.  
Այնպէս մեծ մեծ շինուածներ կան, որ ամեն մէկ ապարանք,  
Պուլ կուտան մեր Վաղարշապատ, չթողով հետոյ նըշմարանք:

Ա Շ Խ Է Ն.

Սակաւ են մեր մեծ մեծ լեռներ, և դաշտեր լայն ընդարձակ,  
Ուր երբ կամինք զբօսանք կեյլինք ձիարշաւօք համարձակ.  
Երկոտասանամեայ էի բնութեան ծոցում զարգացած.  
Մէկ օր դեռ չէ Վաղարշապատ սիրտս ու հոգիս նեղացած:

Տ Ր Դ Ա Տ.

Չեր Ալանաց սարուձորէն ով էլ որ գայ Հայաստան,  
Այնպէս կը ընի՛ ինչպէս դաշտէն՝ երբոր միտնես բուրաստան,  
Վաղարշապատ համեմատեալ թերէք գետոյ ակերուն,  
Օրդ Արայի է մարմանդից՝ հանդէտ Գողթան երգերուն:  
Թէ չընէի ես Հռոմ տեսած, կ'մտածէի քեզ հանգոյն,  
Աչքիս մեծ ինչ Վաղարշապատ կրցուցներ իւր ճոխութիւն,  
Գիտնս թէ ինչ քար է պորփիւր, մարմարին ի՞նչ վէմ է,  
Ափրոդիտեայ չքնաղ արձան ահա իսկ այն նիւթէն է:  
Այն հրաշակերտք որ Հռոմն են արդ լայն և երկայն փայլեցնում,  
Ամեն կողմերն ուր և դառնաս այն քարերով են պրճնում:

Ա Շ Խ Է Ն.

Տրդատ մի թէ մոռացել եմ ինչ որ ինձ միշտ պատմել ես,  
Թէ Հռոմում ի՞նչ մեծ մեծ շինուածք տեսել և մէջն բնակվել ես.  
Եւ Պաւղիա և Վարդուհի և Արաւազդ են պատմել,  
Ես այն ամեն ունիմ մշտբումս պահած և չեմ մոռացել.  
Բայց մեր փոքրիկ Վաղարշապատ Հռոմայ հետ չեմ փոխիր,  
Եւ Հռիփսիմէն էլ իսկ և իսկ ինձ համամիտ համարիր:

Տ Ր Դ Ա Տ (աւ Վարդուհի).

Թէ հրաւիրենք այն աղջկան մեր ապարանք՝ ի՞նչ կասէ.  
Վ Ա Ր Դ Ո Ւ Հ Ի.

Այն օրիորդ չը կարծեմ թէ յօժարութեամբ գալ կուզէ.  
Ա Շ Խ Է Ն.

Ես ինքս կերթամ և կըբերեմ, բըռնութիւն չէ հարկաւոր.  
Վ Ա Ր Դ Ո Ւ Հ Ի.

Չեմ կարծում թէ գալ յօժարի այն օրիորդ գեղաւոր.  
Ա Շ Խ Է Ն.

Չարմանում եմ ձեր խօսքերուն, մարդ կը ընի որ չուզենայ,  
Որ հիւսիսոյ միապետին փառօք պատուով հարսնանայ:

Հովիտիմեայ կեանք այս իմ տան մէջ պիտի ՚ընի շար ցընծութեան,  
Ո՛ր կարէ նա զըտնել այսքան համախրմբումն խընդութեան:

S T U S:

Այդ մի՛ ասեր՝ իմ թագուհի՛, Հովիտիմեի թողած կեանք,  
Չի յաջողէր փոխարինել Հայաստանի ինչ վարձանք,  
Ի՞նչ պիտի տանք օրիորդին՝ ի տեղի այն թատերաց,  
Տեսարանաց և հանդիսից յաղթանակաց կայսերաց:  
Թէ Հովիտիմե ունենար կամք վայելել կեանք մեզ հանգոյն,  
Չէր անարգիր և չէր թողնիր Հռոմէական պերճութիւն.  
Գիտուն թէ ինչ տարբերութիւն կայ ի մէջ մեր և Հռոմայ,  
Ինչ որ ի մէջ խեցեաց բրտի և անթոյց զուտ ոսկեայ.  
Միթէ խըշտիք մեր գեանափոր՝ ապարանից դէմ կուգան,  
Ճըռընչաձայն սայլք եղնածիգք՝ կառնց կանգնին յանդիման.  
Ինչ որ աշխարհ ունի աղնիւ, ընտիրքն համայն են ի Հռոմ,  
Մեր այս դարպաս հանդէպ նոյին չընչին իմն է որպէս գոմ:

Ա Շ Խ Է Ն (գ ժ ղ Ֆ ե ա լ):

Բաւական է՛ իմ կենակից, գովեստ քո է չափազանց,  
Վաղարշապատ գահ է փառաց քո իսկ նախնեաց դիւցազանց.  
Հընգետասան ամբ են ահա մինչ դարձար քո հայրենիք,  
Ե՛ր չարարիր մայրաքաղաքդ հանգոյն Հռոմայ՝ գեղեցիկ:

S T U S:

Սին դու՛ ոչ թէ տասնեհինգ ամբ, այլ տասնեհինգ դարք պէտք են,  
Որ Հայաստան վայր թօթափէ այս բըրտութիւնն իւր շընքէն.  
Գարձեալ նորա մէջ չի ծաղկիր Հռոմայ հանգոյն մէկ երկիր,  
Միթէ չէ՞ արդ հազարամեան մեր հինաուրցն Արմաւիր.  
Որ օր զըրի ոտս Հայաստան՝ իմ ցանկութիւն սոսկ այն էր,  
Որ Հռոմայ լաւ յատկութիւններն Վաղարշապատ ըտանձնէր.  
Ինքնակալ եմ հանգոյն կայսեր, և հրամանք իմ ոչ դառնան,  
Իայց ազգային այս մակարդակ՝ հրամանք իմ ոչ ամբառնան.

Աչքերս բացի՛ հասկացայ որ արքունական հրովարակ,  
Մէկ հատ խընձոր ոչ մարթանայ ներկել ի գոյն կարմրորակ.  
Հրաման իմ փոյթ է կատարուել՝ ինչ հանել եմ ի չարիս,  
Այլ քնացել է միշտ անկատար՝ ինչ արել եմ ի բարիս:  
Երբ Գրիգորի վըճիւ եղև՝ դեռ կէս բանիցս բերանս էր,  
Որ Գրիգորի չըրեցան և հետք ոտից զերթ ըտտուեր:  
Այլ ազգաշահ ինչ որ արի՛ կարկուտ զարկեց ի ծաղկի,  
Շատն էլ այնպէս յօդ ցընդեցաւ՝ որպէս բան ի փոթորկի:  
Այնքան խոր է մեր ազգ սուգել այս բըրտութեան արդմերըն,  
Որ չէ կարող մէկ թագաւոր հանել այն իւր օրերըն.  
Թէ մէկ արքայ ըսկիզբն անէ, միւսն անշուշտ կը խանգարէ,  
Հասարակաց է կուրութիւն, ուժ միոյն ինչ ոչ զօրէ:  
Վամեցայ ես փողոցք ուղղել՝ որ գոնէ իմ կտօք շըրջին,  
Տըրտունջ տըխմար ժողովրդեան՝ շուտ հասաւ իմ ականջին,  
Չէր էր ասին՝ որ Տըրդատին՝ հռոմէամու կոչեցինք,  
Յիմարացանք՝ որ ազգադաւ Արտաւազդին լըսեցինք:  
Մըտածեցի՛ թէ ի՞նչ օգուտ որ ես կառքով պըտըրիմ,  
Հայոց Տիկնանց սայլք ու եղներն միշտ պըղտորեն պարզ սիրտ իմ.  
Ես սոս ձիոց երամբ պահեմ՝ ազգ իմ իշոց չը համնին,  
Ես քառայարկ դարպասք կանգնեմ, Հայք խորափախ կարծարին:  
Շատ ճիզն եղի իմ ազգի մէջ մուծանել զիր, դըպրութիւն,  
Գուրմբ կանչեցին թէ այդուիկ՝ շուտ կը վերջանայ հայութիւն.  
Նախանձայոյղ է ժողովուրդ իւր հընութեանց կուրօրէն,  
Իայց ամեն մէկ քայլափոխում անարգ խաբուած քուրմերէն:

Ա Շ Խ Է Ն:

Վըշտացած ես՝ Տէր իմ Արքայ՝ որ այսքան ամ չես մարթել,  
Հռոմայ լաւ լաւ յատկութիւններն ազգիդ ծառոյն պատուատուել,  
Թէ կառք, թէ ձի, թէ լայն փողոցք, թէ զիր լինին հարկաւոր,  
Ազգ կը հնարէ՛ ինչպէս հնարել է այլ պիտոյք բիւրաւոր.  
Ի՞նչ որ ելնէ թագաւորէն՝ ազգ այն կասէ բըռնութիւն,  
Հին վէճ է այս, որ երկոցունց կըխրամասէ միութիւն:

Այլ արքայի հրովարտական գէմ ականջներն իրցանողք,  
 Յրդասացից շողփաղփ բանից են լռելեաց բացանողք.  
 Լաւ երգարանք պահիր ձեռիդ, ինչպէս անում են Ալանք,  
 Նոցա բերնով յաջողութեամբ յառաջ կերթան քո հրամանք.  
 Վարդուհին էր միշտ ինձ պատմում թէ Յունաց մեծ դիւցազունք  
 Միակ ծընունդ են քերթողաց, զորս երկնել են քերթութիւնք.  
 Մեծն Ալեքսանդր՝ ականակուռ զըզըցի մէջ է պահել,  
 Ինչ որ մէկ կոյր երգարանի կոկորդէն է դուրս բրդխել:  
 Թող ազգ՝ նոցա բերնէն լռես, թէ պիտոյ է դրարութիւն,  
 Քո ազգի մէջ շուտ կու ծաղկի Աթենական կրթութիւն:  
 Է՛ր քուրմերուն չես համոզում որ միշտ այն բան քարոզեն,  
 Ինչ միանգամ արքայական ազգօգուտ կամք քո կ'ուզեն:  
 Չեն տեսնում որ ամեն քրքումերն ունին երգեր առանձին,  
 Խրաքանչիւրն է ներբողում անդրիք իւրոյ մեհենին.  
 Արամազդայ կուռք կան յԱնի, Աթենասին է ի Թիւ,  
 Անահիտին՝ է Լըրիզա՝ ուր Պրիզորին կայր տանջել.  
 Եփեսոսին՝ կայ Բագառինջ, Ափրոզիտին՝ յԱշտիշատ,  
 Ուր Վահագնի առնապատկեր՝ ընդունում է նրէր շատ:  
 Ամեն տեղ էլ կան քրքումպետք՝ որ երգեր են մրտածում,  
 Եւ նոցամով ժողովրդեան արծաթ ծոցերն են ածում:  
 Թէ ազգիդ մէջ ցանկանում ես դադարիար ինչ տարածել,  
 Անշուշտ պիտի տազաչափից բանդիւններով տաս ածել.  
 Երբոր առնունք Հռիփսիմէին քաջ Արքայիդ հարսնութիւն,  
 Ես ջանք կանեմ ո՛չ թէ միայն երգոց տալ նոր ուղղութիւն,  
 Որ ազգի մէջ չերգեն այլևս Արամազդայ հարսանիք,  
 Այլ այն՝ որում մինչ ցարդ կարօտ են մնացել մեր հայրենիք.  
 Այլ և ընկեր կառնում ինձ հետ՝ Ալադիա և Վարդուհին,  
 Որ կրթութիւն տարածանեմ ի մէջ աիկնանց աշխարհին.  
 Բայց արդ՝ Տէր իմ, հրաման արա, որ ես երթամ այգեստան,  
 Հռիփսիմէին աիկին անուամբ մուծանել մեր զերդաստան:  
 Տ Ի Պ Ա Տ.  
 Տիկին՝ ո՛չ ինձ և ո՛չ քեզ բնաւ է վայելուչ անդ երթալ,  
 Լաւ է որ այլ աիկնայք երթան, սիրով դրողեն դարպաս գալ.

Բայց շուարած եմ զըլնովին, ի՞նչ կանեմ այն աղջկան,  
 Թէ չերևի հաճոյ հոգւոյս, և չտամ անուն աիկնութեան.  
 Իսկոյն առ կայսր պիտի յըղեմ պատգարակի մէջ բազմած,  
 Բաւական է որքան սոք իւր փըշովք ժայռիւք են մաշուած:  
 Թէպէտ վըստահ եմ որ աիկնայք ընտրութեան մէջ չըվրիպին,  
 Այլ չեմ յօժար օտար աչօք ընտրել գահին իմ Տիկին:  
 Չ. Ի. Ն. Ա. Կ. Ի. Բ. (Սարգսէլ).  
 Պետական կայսեր ասում են թէ բերել է այն պատկերը,  
 Որոյ միայն տեսեամք վառվել է սէր ի սիրտ կայսերը:  
 Ա Շ Խ Է Ն.  
 Ապա տեսնեմ, պըտըտեցէք, դուցէ պատկերն զբանրվի.  
 Օրիորդի գեղեցկութեան չափը նովաւ կը յայանուի:  
 (Չինակիր և այլ պաշտօնեայք գնացին).  
 Տ Ի Պ Ա Տ.  
 Թէ այն պատկերն զըրկել է կայսրն, ընդէր իմ ձեռք չէ հասել,  
 Ամ թէ դեսպան ի՞նչ պատճառաւ է այն այստեղ դէն զըձել:  
 Մ Ա Մ Գ Ո Ն.  
 Պէն զըձելով՝ չէր դէն զըձիր, այլ մոռանալ կարող էր.  
 Օ Տ Ա Յ.  
 Այսեր դեսպան այնպիսի իր մոռանալ ո՛չ յանդրգնէր:  
 Ա Ր Տ Ա Ի Ա Ձ Դ.  
 Չարմանք մեծ է՝ որ այն պատկեր սոսկ զինակիրն է տեսել:  
 Օ Տ Ա Յ.  
 Խեղճ Պրիզորի ո՛վ, ի՞նչ լինեն, զինակիրն չէր քեզ ասել:  
 Մ Ի Հ Բ Ա Ն.  
 Ինձ թուի թէ զինակիրն էր դիմաւորել դեսպանին,  
 Վասն այն և է արժանացել տեսութեան այն պատկերին:

Գ Ե Ս Կ Ե Բ Ե Ս

Գրծուար ի՞նչ է զինակիրէն հարց-փորձ անել, իմանալ,  
Տեսնենք թէ այդ անդեկութիւնն ուստի՞ կարաց ունենալ:

Ա Գ Ը Թ Ա Ն Գ Ե Ղ Ո Ս

Ջինակիրն կուգայ իսկոյն՝ երբ պատկերըն ներս բերեն,  
Բարեօք կընէր որ Երտաւազդ տեղեկանար նորամէն.  
Մի՛ գուցէ թէ կայսր առ արքայ այն պարզէ է ուղարկած,  
Վասն է՞ր պիտի կայսերական ընծայն մինայ անարգած:

ՊԵՏԿԵՐ Է

(Խըտիւն առ գրան դահլճին՝ ուր անբհանդակն անապարէ):

ՍՈՒՐՀԱՆԻԱԿ (Լերգափրփուր ներս վազելով):

Պատկերն առած բերում էինք, խրճանցաւ հոյլ խուժանի,  
Եւ Ջինակիր ճըմըլվեցաւ կոխան ասից ի խուանի:

ՕՒԼՅ (Դասն ժպտանօք):

Գնացէք այժմիկ՝ տեղեկացէք թէ այն պատկեր ո՞վ բերեց...  
Եւ Ջինակիր միթէ ճանճ էր, որ ոսնակոխ ճըմըլուեց  
(Առանձին). Երանի՞ թէ տասնեւհինգ ամ յառաջ լինէր ճըմըլուած,  
Եյժմիկ Գրիգոր մեզ բարձակից կընէր ի մէջ մեր բազմած.  
Եւ իմ սանիկ Խոտրովիդուխտ...  
(Դոռն բացուեցաւ, և պատկերը ներս բերին, ամենքեան սրանշացան):

Ա Շ Խ Է Ն

Եստուծուհի է այս աղջիկ, քո հարսն է սա՛ քաջ արանց.  
Արլաւդիս՝ դու ես տեսել, սա կա՞յ մէջ այն աղջկանց:

Ս Լ Ա Ի Գ Ի Ա

Հըռիփսիմէն քան զայս նրկար է չափազանց գեղեցիկ.

Վ Ա Բ Գ Ո Ի Հ Ի

Նորա քընքուշ շարժուածք՝ նորան ցոյց են տալիս ճնաշխարհիկ:

ՏՐԴԱՏ (այլ յայլժ):

Հընգեստասանտեայ պարտիք տես թէ զիմրդ հատուցան,  
Եյն Սիրենէ դըշտոյի տեղ այս կոյս եկաւ Հայաստան.  
Եյո՛ քո պարզէ է Ենահիտ այն եռանդուն սիրոյն վարձ,  
Որով Գրիգոր քո նախատիչ տարագրութիւն առ անդարձ:  
Թէ Հռիփսիմէ է արդարեւ պատկերի պէս գեղեցիկ,  
Ես համարձակ կարեմ փեսայ զիս համարիլ երջանիկ. (Աւ Աշէէն)  
Գու կին վեհանձն՝ մեծ է քո զոհ, սիրոյդ չէք չափ և սահման,  
Քեւ պարծեսցի յայսրհետէ մեր հանուրց մայր Հայաստան.  
Որպէս պարծէր Տիգրանուհեաւ, որոյ քաղցր է յիշատակ,  
Նոյնպէս քո զոհ անօրինակ լցի տիկնանց օրինակ. (Աւ ամենքին).  
Թող գան Հռոմայ լեզէոնաց պարբ մինչ յափունս Գայլ գետոյ,  
Թէ որո՞յ դէմ ունին մըրցիլ՝ ի միտ կառնուն այն յետոյ.  
Նորոգ կաննեան մարտ կը խըմբեմ՝ քան զԱննիբալ յոյժ վատթար,  
Գարձուր Վէրոս՝ լեզէոններս կանչել, հուտամ անդադար:

Ա Շ Խ Է Ն

Եյլ աւելի խօսիլ պէտք չէ, թող հանդերձին հարսանիք,  
Արլաւդիէ և Վարդուհի տարէք հարսին աւետիք:

ՏԻԿՆԱՅԲ (ամենքեան պար առեալ երգեն և կարակեն):

Մենք էլ կերթանք այգեստանեայք՝ հարսին լինել հարսնածուք,  
Մեզ հետ թող գան արբունի կառք, գուսանք, փողարք, պարերգուք.  
Տիկնայք շքեղ պատգարակօք և զարդարած սայլերով,  
Ծառայք, նաժիշտք զըրաստներով, ամենք փուռած ջահերով:  
Թող տեղ ոսկի տեղայ կըրկին և մարգարիտ տարափէ,  
Եւ Երարատ նոր զարդարուի, — հարսն է այսօր Հռիփսիմէ:  
Երբայ հըզօր՝ հանէ յանձնէդ երկաթակուռ զըրահներդ,  
Եւ զգեցիր փեսայութեանդ մարգարտայեռ հանդերձներդ.  
Հազի՛ր պայծառ քո ծիրանիք և բեհեզներդ շողողուն,  
Ոսկեճամուկ ծածկոյթ լոզկիդ և ապարօշք փողփողուն:  
Գօտիդ կապէ ականակուռ, ընդ մէջ քո աճ և սուսեր,  
Որ տեսեամբ քո հոգեղմայլած նոր հարս ձօնէ քեզ իւր սէր:  
Թող միռանայ Հին Հայաստան Երտաշխի հարսանիք,  
Իմանայ որ Մասեոց պարծանք չէ՛ պլանեան Սաթիինիկ.

Այնպէս երգեր, այնպէս վէպեր հընչեն քեզ մեր վիպասանք,  
 Որոց նրման չեն բնաւ տողած մեր գողթնացի երգաբանք:  
 Լուսափայլ ամպ է Հռիփսիմէ զեփիւռներով մեզ բերած,  
 Կենդանարար ջուր բրդեցնող ջերմնատաղնապ ժամ ցողած,  
 Իւր տարափով կը զովացնէ Հայաստանի ծարաւը,  
 Լը չէ կարող մեզ սոչորել զըժոխաշունչ հարաւը:  
 Հազարակնեան աղբեր նրման կըխոխոջան նոր վըտակը,  
 Ընջուր ոսին քարերու մէջ կերթան առուք և գետակք:  
 Կոռոզանեն Հայաստանի անբեր ամուլ սարերըն,  
 Ծաղկունքներով կը լըբըրվին մեր հովիտք ու ձորերըն.  
 Քաղցրաշունչ նոր դարուն կուգայ մեր այգեաց և պարտիզաց,  
 Ներքոյ երկնից նոր կըլըպին ձայն կրգեցիկ թըռչնակաց.  
 Նորահըրաշ կըզարդարվին ձորք, և բըլըակք, սարաւանդք,  
 Գալարագեղ կըպերճանան դիւրք, առապարք, դարեանդք:  
 Ծափ ըզծափի կըհարկանեն յաւերժահարսն, համբարուք,  
 Ազատ Մասեաց քաջք կ'ելանեն հանդէպ հարսին նուազերգուք:

(Երթան).

Յ Ե Ղ Ա Ն Ա Կ Հ Ի Ն Գ Ե Բ Ո Ր Դ

Պ Ա Տ Կ Ե Բ Ա

(Տեսարանն ցուցանէ զհնման այգեստանեաց, ուր Տիկնայք որպէս հարսնածուք Հռիփսիմեաց մտանեն նուազարանօր և բազմութեամբ դրանիկաց և մանկաւիկաց և օրիորդաց: Ընդառաջ ելանէ Գայիանէ, կուսանք կան յանկեան համախումբ):

Կ Լ Ա Ի Դ Ի Ա

Յընծութեան կնք աւետարեր Հայոց Մեծաց արքայէն,  
 Որ հարսնութեան է հրաւիրում, ըզհրաշագեղ Հռիփսիմէն:

Գ Ա Յ Ի Ա Ն Ե (դուարթ).

Շ նորհակալ ենք, ազնիւ Տիկին, քո բերկրառիթ աւետեաց,  
 Շ իւղ ի բերան երագեղովդ նոր աղաւնի ես Մասեաց.  
 Բազում ամբ են որ Հռիփսիմէ ունի անուռն հարսնութեան,  
 Եւ հրաւիրած է յառազատ անպարագիր բերկրութեան:

Վ Ա Բ Գ Ո Ի Հ Ի

Միթէ քան զայն մեծ բերկրութիւն կայ ի վերայ աշխարհի,  
 Լըրբ օրիորդ հըրաւիրվի ի հարսնութիւն արքայի.  
 Տըրդատ մի է և ոչ երկու, Հոռո՛ չէ տեսել համազոյգ,  
 Աթղէտեան իւր հասակ առնէ շքեղ զարքայն զայն սոռոյգ:

Հ Ո Ւ Փ Ս Ի Մ Է (ի բաց եղեալ խոստ չքօշն).

Այն նոր հրաւեր՛ զոր ինձ առնէ Արքայն՝ Հայոց տիկնութեան,  
 Լ՛ աւետիք՝ որ առաքէ Փեսայս վասն իւր հարսնութեան.  
 Նոր բացուեցաւ իմ յանդիման առազատ սուրբ հարսանեաց,  
 Ինձ ընդառաջ են վողվաղում պարք անմահից հրաշալեաց.  
 Բարեաւ մնա՛ իմ Մայրապետ՝ որ հոգեպէս զես ծընար,  
 Եւ մինչ ի դուռն հարսնարանին ողջամբ, ուրախ, զես տարար.  
 Կացէք բարեաւ և դուք քորք իմ՝ որ ինձ եղէք ցարդ ընկեր,  
 Եկայք զուարթ զես հանդուդէք Փեսային իմ առնթեր:  
 Ողջոյն սարէք առ սուրբ Նունէ դէպ Սըժիսիթա ի հիւսիս,  
 Եւ զիմ համբոյր առաքեցէք առ Մանէ կոյս սիրելիս.  
 Յանկարծ երկունք շուրջ պատեցին Հայաստանի փըրկութեան,  
 Գուք աստըստին առէք վերջին ողջոյն քեռ ձեր հրամարման,  
 Երբ ըսկըսիմ ըմբշի հանդոյն դէմ վըշապի ողորիւ,  
 Չեմ յաջողէր յայնժամ ձեզ կամ համբոյր տալ կամ համբուրել.  
 Աղօթեցէք՝ որ ժամանէ ինձ օգնութիւն Փեսայիս,  
 Եւ յաղթանակ իմ կանգնեցցի ի տեղոջ մեծ հանդիսիս.  
 Գարձիք ի Հոռո՛ և աւետիս տուք ամենայն ծանօթից,  
 Թէ Հռիփսիմէ ջաղխեաց ըզղըւիս հընոյ օձին թլւնալից.  
 Գարձիք հողւով, զի ձեր մարմինք այսօր ինձ հետ միասին,  
 Պիտի փըթթեալ վարդից նրման կանանչ բըլըում տարածին.  
 Ես կոյս տարեալ թագաւորի, և դուք ածեալք ըզհետ իմ,  
 Ի աթերեան գետեղերաց ինձ ուղեկից մրտերիմ.  
 Մի՛ ևս դարձցէք ըմպել անդ ջուր՝ յոր յորդ հոսէ մեր արիւն,  
 Լըրասի մտքուր է յիւր ընթացս, և ակն բրդխէ զովութիւն:  
 Լըր ինձ փեսայ՝ Տըրդատ արքայ, արդ հարսնածու կըլինի,  
 Նորա այսօր սուր կ'միացնէ ըզմեղ ընդ մեր Փեսայի:

Փեսայն Անահ է և շրջոր, ընդառաջ է մեզ եկել,  
 Գրուներ Եղեմեան անձառեւիաց յանդիման մեր է բացել,  
 Ո՛վ թէ որքան մերձ է առ մեզ, երեսք նորա տեսանին,  
 Ե՛կ յառագաստ իմ բերկրական՝ սիրալրական ձայնք լսին,  
 Բայց և ձեզ ևս նոյն ձայն հընչէ՝ հռոմայեցի օրիորդք,  
 Իմ խաչակիր կենացս ընկերք, համակ կարեացս բաժանորդք.  
 Միահողցն մեզ լսելի եղև բարբառ Փրկչական,  
 „Մի՛ երկընչէք՝ իմ Սերուհէք, զի ընդ ձեզ եմ յաւիտեան“.  
 Մեր յաւիտեան արդ առ դուրս կայ, քայլափոխ մի՛ և հասցէ,  
 Եւ գարշապար մեր կազդուրեալ ի սեամ նորին կոխեցէ,  
 Երբ հաստատեմ ոտս ի ստորին երկայն սանդղոցն աստիճան,  
 Գուք ևս իսկոյն աճապարեալ մրտէք յայն սուրբ հարսնարան,  
 Ի հընձանէս մինչ յապարանս, ի դարպասէ մինչ այն սեղ,  
 Ուր Սուրբ Փեսայս է ինձ սպասում՝ ձեռին սրտակ հրաշագեղ,  
 Երկու քայլք են և ոչ աւել. մին պիտի՛ ընի բրնձութեամբ,  
 Իսկ միւս կընի իմ կուսական անօրինակ ճրգնութեամբ:

Կ Լ Ա Ի Գ Ի Ա.

Ի՞նչ բրնձութիւն՝ Հօիփսիմէ ջան, քեզ ո՛վ կարէ մերձենալ,  
 Վեզ համար մենք սայլ ենք բերել՝ ուր ութ եղինք կան լծեալ.  
 Վեզ համար աստ ոսկեճամուկ բեհեզներ կան պատրաստած,  
 Եյդ քո զգեստիկ չէ վայելուչ արքայական հարսանեաց:

Հ Ռ Ի Փ Ս Ի Մ Ե.

Ինձ կառք ահա հըրանութեայք ի վերուստ են վայր իջնում,  
 Որպէս երբեմն Եղիային, ինձ ևս նոյն է պատրաստում.  
 Գուք զեռ չգիտէք՝ որ ես կամու՛ գալ ձեր դարպաս չեմ յօժար,  
 Բայց ես զիտեմ որ բրնձաքարչ պիտի տանիք շատ դրժար.  
 Իմ Փեսայիս խաչահանուք համայնք կորուստ զընացին,  
 Իմ չարչարողք յետ տան աւուրց կացցեն առ դրան Եղեմին.  
 Ով հասցընէ ձեռն իւր առ իս քարշէլ բրնձի յապարան,  
 Ես ևս բրնձի պիտի քարշեմ այն անձն ի զիրկ վրելութեան:

Եյս իմ հնտսի ձորձիկներս՝ պիտի աւել պատրուովն,  
 Բայց այս զգեստիկքս են վայելուչ Սուրբ Միածնի Հարսնացուին:  
 Ինչ բրնձութիւն որ ինձ կանէք փոքր ինչ յետոյ քան զայս ժամ,  
 Պիտի հընչէ ծագս աշխարհի՛ յապուշ կըրթէ յարժամ:  
 Երբ սեղ ոսկի տեղայր երբեմն ի հարսանիս Սթինկան,  
 Չհարդ խընէր ամբոխ խուճապ որսալ ոսկի դահեկան.  
 Եյնպէս պիտի խընին զինև խուճան ռամկին յայսմ աւուր,  
 Որ մղօն տացեն ինձ յայն հանդէս՝ ուր սպասէ ինձ դահճին սուր:  
 Ինչպէս երբեմն յանապատին փութայր ամբոխն առ աւար,  
 Մինչ մանանայն երկնատեղաց ծածկէր զանթիւ տաղաւար,  
 Եյնպէս այսօր ծերք և տղայք պիտի փութան քաղել զես,  
 Չի վաղվադեալ արագեցցեն զմուտ իմ ի ծոց Փեսայիս:  
 Թէպէտ կամու փութայր փեսայս մինչև ի լեռնն Գողգոթա,  
 Եյլ ուղեկցաց չըկայր համար՝ որք երթային հետ նորա:  
 Ես ծանր փայտէն տրկարացած բրնձի ընդ քարչ էր տարվում,  
 Յօժարութիւն հոգւոյ՝ մարմնոյ անզօրութեան չէր օգնում:  
 Իմ խաչափայտ է հարսնութիւն՝ որ ես յանձնէս մերժում եմ,  
 Եյլ Փեսայիս հետ միանալ մահուամբ՝ այժմէն վազում եմ.  
 Թէ ինձ ուղիղ առաջնորդէք՝ ուր պիտի ընի իմ վախճան,  
 Ես խընդագին պիտի զիմեմ երգելով երգ հարսնութեան.  
 Բայց ըստ որում նորա միակ ճանապարհն է ձեր դարպաս,  
 Վասն այնորիկ ես ինքնակամ չեմ զըլլրիւր յայդ վընաս.  
 Ես չեմ երթար յայն ձեր դարպաս խընայելով յաշխարհ ձեր,  
 Չի մուտ իմ անդ հրաւիրեցէ ի գլուխ նորին՝ հուր, սուսեր.  
 Որպէս դարպաս Պիղատոսի, Հերոդէսի, Այսիափայ,  
 Ընհետ լիցի յերկրէ յաւերժ այն ապարան Տըրդատայ.  
 Եյս՝ անորք ճակատագիր ունի յապայն տնօրինել,  
 Ընդ որ յերկնից Հարսնարանիս կայ ինձ բազում արտասուել:  
 Չի անթողլուփք կը մեղանչէք Հոգւոյն Արթոյ հայհոյմամբ,  
 Եւ ձեր հողիք կը շողախէք անմեղ արեան իմ հեղմամբ:  
 Մի՛ հրաւիրէք զես յայն դարպաս՝ Տիկնայք Հայոց գեղեցիկ,  
 Մինչ չեմ մրտեալ յայն ապարան՝ կացցէ նա միշտ երջանիկ.

ԵՂ զե անդ իմ սկիզբրն կառնու դառն աղետից նախերգան,  
 Վասն այնորիկ տոյժ հատուցէ լռիկ վրկայն բըռնութեան :  
 Գուք պիտի իմ դէմ գործ դընէք անպատմելի բըռնութիւն,  
 Չեր անողորմ գործոյն լինի վրկայ անթիւ բազմութիւն :  
 Այգեստանէն փողոց փողոց թագաժառանգ նոր հարսին,  
 Պիտի ընդ քարշ տանիք բըռնի ցղուան մեծի դարպասին :  
 Գարպաս՝ դարպաս՝ պիտի պահեն գոնէ չընչին հետք քարանց,  
 Յայն օր երբ իմ այս ողբ լըսվի հեռի Մասեաց ի բարձանց :  
 Ուր քո փոշւոյն երկրպագութե՛ք՝ քո յիշատակ մուսցեալ :  
 Հանցին ներքուստ բազմադարեան աւերակաց հողացեալ :  
 ԵՂ ձեր փայլուն դիպակք այսօր պիտի ծածկին ի փոշոյ,  
 Ինչ որ ունին այն խուժանի ոտք ամբառնալ ի գետնոյ :  
 Թէպէտ դեռ նոր է արեգակն Վաղարշապատ լոյս սըփռել :  
 Բայց իմ արեան մէջ չէ կարող այսօր շողերն ծաւալել :  
 Լապտերք և ջահք դահճաց ձեռին պիտի լոյս տան իմ մահուն :  
 Յիմ մերկութիւն չի հանդուրժէր անկանիլ ակն արևուն :  
 Եյն թովչարար հրապոյրք գեղոյս՝ որում Տըրդատ կաթողնի,  
 Պիտի դահիճք յաղարտ վարեն սայրիւք անգութ դաշոյնի :  
 Եւ Տըրդատ իսկ անպարտելի՝ որ կործան եղ ըզլուչէ,  
 Ի գօտեմարտ անգոր կուսիս՝ պիտի պարտեալ ամաչէ :

Վ Ա Ր Գ Ո Ւ Հ Ի :

Ե՛ր ես այդպէս անյոյս խօսում ով գեղահրաշ Հոփսիսիսէ,  
 Բըռնադատող քեզ ո՞վ կայ արդ, եկեալդ ազատ ի Հռոմէ :  
 Ո՞վ է տեսել թէ բըռնութիւն ի գործ դըրուի դէմ հարսին,  
 Բո դէմ արած բըռնութիւններն՝ ամթ բերցեն Մասիսին :

Հ Ռ Ի Փ Ս Ի Մ Է :

Թէպէտ հազար և բիւր բազուկք պիտի ընդ քարշ զես տանին,  
 Յերեկ ողջոյն արք և կանայք պիտի խոնջեալ տատանին :  
 Եյն վեթխարիք՝ որ կը շարժեն լիբինք անգամ ի տեղեաց :  
 Պիտի յոգնին յաղթահարեալ և պարտասին իմ դիմաց :  
 Չը կարելով յափըշտակել և ամբառնալ զիս ձեռօք,  
 Պիտի ստիպին կալ ձեռնթափ յուսահատեալ պատկերօք :

Բայց մինչ արև հասցէ յիւր մուտս՝ ես կը մերձիմ յապարան,  
 Ուր հարսանեաց լինի հընչում բերկրապատար նուագարան :  
 Ո՞վ ձայն փողոյ, տաղի, սրբնդի, առ որ մերթ դաշտ դեէրեան,  
 Տայր արձագանս դէմ հրամանի աստուածամարտ բըռնութեան :  
 Եւ մերթ Մինայ հանդէպ որթ ուն տես զամբոխին կաբաւել :  
 Յորոյ ի տոյժ հաս Միոնի յՕր Ուրբաթուն արտասուել :  
 Տըրդատ պիտի դիմաւորէ արքայական հարմնացուխ,  
 Եջըն ընդ անթովս եղեալ քաղցրիկ՝ սանդուխտն ի վեր հանէ զիս :  
 Հրամաններ տայ ճրագունք վառել, ըսկիզբն առնել հարսանեաց :  
 Օ՛իս հրաւիրէ ընդ իւր բազմիլ ի գահ փառաց թագուհեաց :  
 ԵՂ ես ունիմ որպէս արձան անշարժ կանգնիլ ի միջի,  
 Մինչ նախարարք, չըքնաղ Տիկնայք բըռնեն պար մէջ դահլիճի :  
 Կուգայ Տըրդատ ձեռնէս բըռնել տանիլ դէպ յայն պերճ գահոյք :  
 Ուր արդ Եշխէն բազմի, բայց նախ բազմեալ կային այն դըշխոյք :  
 Որք ընդ ոտիւք են ունեցել թագ սպարօշք արքայից :  
 Որոց յաղթել են Երտաշէսք, Տիգրանք՝ պարծանք հրակոյից :  
 Ոհ իմ արիւն չի ցամաքիր, այլ բազում դար կը մընայ :  
 Օր ըստ օրէ հընանալով պիտի յազգիդ ծանրանայ :  
 Ենողորմ է ձականագիր, Ողայի պէս և Տըրդատ :  
 Պիտի անդէն անդ զգեանէր երբ ինձ տայր սուգ անփարատ :  
 Երբ Միածնի ծոցէն կը քրէք յափափել զիս հարսնրս իւր :  
 Երբ օգնութեան Վերնոյն ընդդէմ մերկէր նանիր զուժոյն սուր :  
 Բայց իմ Փեսայն յիմ արտասուս՝ որ զգարշապարս իւր թացցէ,  
 Գըթասիրեալ՝ զարդար ցատումս իւր յայս զիշեր մեղմեցէ :  
 Օ՛ի ի վաղև հայեցեսդ յիմ անօրինակ ճըգնութիւն :  
 Բարձր իւր բազկաւ հարուածեցէ կրկնապատկեալ բըռնութիւն :  
 Լուսով ճրագի ելցէ ի յոյզ խոր Վեիրապի մութ խորշից :  
 Ուր տասն և հինգ ամ կայ անլոյս մին Տըրդատայ ի զոհից :  
 Որ երբ տեսնէ՝ թէ ո՛չ ամօք փաղաքշանքն են համոզում :  
 Ոչ ողորանք, ո՛չ աղաչանք, ո՛չ սաստ լըսել եմ ուզում :  
 Ես ևս պիտի ի գործ դընէ կրակնելով այն բըռնութիւն :  
 Ինչ՝ ողջոյն տիւ գուն գործեց ինձ ցոյց տալ ուսմկին բազմութիւն :



Հարսն ու փեսայ պիտի կաղմենք ըմբշաց հանդոյն նոր կրօնէս,  
 Արքայական դահլիճ դառնայ գօտեմարտի ասպարէս,  
 Հարսնէորաց պարք անթով հանդիսատես եղիցին,  
 Հարսին խրճատք և կրշտամբանք որպէս տարափ տեղասցին:  
 կայլակք քրրտանց յորդ հոսեսցեն ի Տրդատայ երեսաց,  
 Խոնջմունք ընդ վայր բողոքեսցեն դէմ ծանրութեան այն լողկաց:  
 Ի բաց ղիցէ արքայական իւր տառատոկ ծիրանի,  
 Ար ի Հռոմայ յանօթ առեալ յարքայէն արդ գործ դընի:  
 Այս քրքափնք զուր պիտի հեղու ազգ այսուհետ բազում դար,  
 Երբ իւր երկրէն հեռի վարեալ պանդուխտ ընկնի քարէ քար:  
 Այլ այն լողիկ հռոմէական յանձնէ մերժել չը զօրէ,  
 Վիաներայ շապիկ հանդոյն թէ և անշէջ միշտ այրէ:  
 Տեսնէ Տրդատ՝ որ հարսնացուն չի լնում ինքեան անձնատուր,  
 Եւ հըսկային մրդօն տալով աստ ա՛յդ փըշում զերթ փետուր:  
 Ծիծաղելով դուրս կըվազէ՝ որ սառն ջուր տայ երեսին,  
 Եւ միւսանգամ ոգի առեալ տայ կըրկնութիւն հանդիսին:  
 Տրդատ՝ ես քո ատելին չեմ, ես ինքն եմ քեզ սիրահար,  
 Եւ ուրախ եմ՝ որ այս ուղւոյս դու ուղեկից կըլցար:  
 Վու կրտանիս՝ զիս Փեսիս մօա՝ որ քեզ համար տեղ ընտրեմ,  
 Վու զիս կուտաս Հայաստանին՝ որ ձեզ լուսով զարդարեմ:  
 Տրդատ՝ յիբան յապաղում է հեղումն արեանս կուսական,  
 Այնքան ընդ վայր չարչարվում է այս քո աշխարհ սիրական:  
 Թէ յեռանդն զիս յուղարկէիր ծոց Փեսայիս անմահի,  
 Երդ զիս միջնորդ կունենայիր վասն փրկութեան աշխարհի,  
 Արքայ՝ այժմէն եմ տեսանում այն արտասուք ջերմագին,  
 Ար հանդերձեալ ես յորդ հեղու խառնել յարիւն քո հարսին,  
 Հարսին՝ որ զիւր սուրբ ողջակէզ պիտի հանէ ի սեղան,  
 Չեռամք չըքնաղ իւր փեսայիդ որպէս նոր զոհ հաշտական:  
 Փեսայ՝ եկ և մի դանդաղիր՝ արժանաւոր ախոյեան,  
 Այն Անմահին, այն Հրգօրին՝ Ար ինձ տայ ձեռն օգնութեան:  
 Ես ոչ քեզ եմ արհամարհում, և ոչ այն բարձ տիկնութեան,  
 Ար ինձ սիրով է պարզեում իմ սիրելին Հայաստան:

Ես իմ արիւն գողացել եմ եօթնաբլուր այն Հռոմէն,  
 Ար ինձ տուել է կեանք ծնընդեամբ՝ ծիրանակիր իմ տոհմէն:  
 Իւրի արիւնս յաշխարհ Հայոց խառնել յարիւն Վանդրխոյ,  
 Ար ցարդ փայլէ լապտերի մէջ վառեալ անշէջ ըստ ձիթոյ:  
 Բայց ազգ ո՛չ իմ, ո՛չ Վանդրխոյ պիտի ձանչնայ գին արեան:  
 Ար իւր վերայ հըրաւիրէ օրհասին շանթ անպայման:  
 Կուգայ կըրկին անյաղթ Տրդատ՝ իւր ըմբշամարտ կատարել,  
 Մինչ արեգակն իւր ձառագայթ յերկրէ կընի թաքցըրել:  
 Ար իւրմբի նոր ճակատամարտ, կը զօրանայ օրիորդ,  
 Ար մթագնին երեսք Վաջին որպէս ամպրոպ թընպայորդ:  
 Ար սրտամտի Հըսկայ Արքայն, կը բորբոքի որպէս հուր:  
 Նորա ցտաման ցոլացեալ բոց՝ կոյս կը մարէ որպէս ջուր:  
 Երկու բազիկէն բուռն հարեալ դահլիճում կուպրտոյթէ,  
 Անգօր կուսանն իւր յաղթանակ դէմ դիւցապնին կնորոգէ:  
 Բայց այս նըւագ չի հանդուրժէր Հըսկայն մատանց մանկական,  
 Ի տախտապար լայն դահլիճին պիտի գլորվի ի կործան:  
 Կոյս կը ձնդքէ իուռն ամբոխի դիզարարեալ թանձրութիւն,  
 Չի յաջողէր զիս արգելուլ խաժամուժի բազմութիւն:  
 Մինչ կոյս կեղնէ ի դարպասէն ընդ մի ի դրանց դահլիճին,  
 Արքայն կ'եղնէ ընդ միւս դուռն՝ հրաման տալով դահլիճին:  
 Ար կրտամահ կեանքն բառնայ անօգնական այն կուսին,  
 Ար յանձնառու չ'եղև կըրել զքաղցրիկ անուն իւր հարսին:  
 Ահա այսպէս պիտի լինի այսօր կենաց իմ վախճան,  
 Օհ ի մթան խոր խաւարէ փոյթ ելնէ ձեր Հայաստան:  
 Աղջոյն տարէք Աշխէն Տիկնոջ՝ թէ չեմ նորա ախոյեան,  
 Չեմ հետամուտ իւր ծիրանեաց և ոչ թագին տիկնութեան:  
 Ինձ կոյսը Հռոմայ որդեծնութեան աղագաւ էր հրաւիրում,  
 Ար իմ որդին դահակալէ կայսերական աթոռում:  
 Ես քո քաղցրիկ Խոսրովիկին ընդդիմամարտ չեմ ծընիւր,  
 Իմ ծընունդով լոյս կը փայլէ Հայաստանեայց ձեր երկիր:  
 Երանի՛ր թէ փոյթ ձանաչէք իմ հոգևոր մայրութիւն,  
 Յուեժարար կերջանկանայ Արշակունեաց տէրութիւն:

Սանդուխտ կուսի անպարտ արիւն երկու հարիւր քառասուն  
 Եմ յապաղեալ նահանջեցոյց Հայաստանի փրկութիւն .  
 Եյլ իմ արիւն հանդերձեալ է ճեպել զիջումն Միաճնի,  
 Որ հարսնարան ինձ հաճեցաւ կանգնել յիւրում տաճարի .  
 Երկու հարիւր քառասուն ժամք հազիւ իցեն դեռ անցեալ,  
 Մինչ յանդընդոց խոր Վերապին փայլեցոց լոյս ցորացեալ :

Կ Լ Ա Ի Դ Ի Ա .

Չարմանում եմ, կոյս թագադնեայ՝ որ այդ ձախող խորհրդով,  
 Մերժում ես այն ձեռն և սիրտ՝ որ կարկառեալ են քեզ սիրով .  
 Եյն որ փեսայն է որ հարսին անմեղ արեան ծարաւի,  
 Եյն ի՞նչ հարսն է՝ որ իւր փեսայն՝ նորա ուժէն զըլլովի :

Հ Ռ Ի Փ Ս Ի Մ Է .

Եթէ չըլնէր ինձ կարկառած Եջն իմ Ենմահ փեսայի,  
 Չէի կարող ես բաց մերժել սիրտ և բազուկ Արքայի .  
 Իայց ես խընդրակ չեմ ամուսնոյ, փեսայս ի Հոռոմ կայ խարուած,  
 Տըրդատ երկրորդ է յայն կարգի՝ որոց սիրտ մնաց ինձ ձօնած .  
 Թէ ցանկայի երկրի փառաց՝ Հոռոմն էր յաւէտ նախընտիր .  
 Եյլ իմ փառք չեն յայսմ աշխարհի, ընդ փոյթ կերթամ յայլ երկիր .  
 Ենմահ փեսայս՝ ուր ուղղէ իմ ընթացք յայսմիկ աշխարհի,  
 Չը հաճեցաւ՝ որ իմ արիւն՝ յերկիր Հոռոմայ հեղանի .  
 Եռաջնորդեց ինձ յայս քաղաք՝ ուր պիտի իւր Տուն հիմնէ,  
 Եւ ուր պիտի փեսայութեան իւր հարսնարան նոր շինէ .  
 Ուրախ եմ ես՝ Արլաւդիէ, ուրախ՝ տիկին Վարդուհի,  
 Որ ունիւնդի՛ր էք այս վայրկեան կենացս վերջին իմ բանի .  
 Ո՛չ անադան, այլ այսօր իսկ կը հարսնանամ Հըզօրին,  
 Գուք իմ ողջոյն պիտի ամբողջ հասուցանէք Գրիգորին .  
 Եսէք թէ ես եկայ Հոռոմէն՝ որ զնա հանեմ մութ զըբէն,  
 Արծեմ որ ձայնս նա լսում է՝ արդէն յիւր խոր Վերապէն .  
 Երբ Հարսնածուն իմ թագակիր կարմիր արեամբ զես պըճնէ,  
 Թող նա որպէս փեսաւէր՝ զես ընդ Միաճնին միացնէ .

Եյն Միաճնին որ կիջանէ Վաղարշապատ քաղաք նոր,  
 Ուր իւրեանց հիմք պիտի տեսնեն անշարժ հաստեալ ազգ բոլոր .  
 Ո՛հ՝ այս հընձան ևս կըլնի ազգի համար նոր տաճար,  
 Սորա մէջ ևս պիտի լըպի իմ Փեսայի սուրբ բարբառ .  
 Եւ դու Տիկին՝ իմ մայրագիր, վաղիւ յայս ժամ միասին,  
 Ընդ իս պիտի միջնորդ ազգի կանգնիս հանդէպ Միաճնին,  
 Որ մինչ վասն իւր կանգնէ հրաշիւք երկնահանգոյն նոր խորան,  
 Մեզ համար ևս պիտի կերտել տայ տաղաւար եռբաժնեան .  
 Ո՛չ Պետրոսէն ունի լըսել, այլ ինքնին մեզ ասացէ,  
 Թէ մեզ բարեք է աստ լինել, և Հայն զեւ Հայր ծանիցէ .  
 Եյլ այն խորան՝ որ Միաճին արացէ իւր օթեան,  
 Եղեցի նոր Նոյեան Տապան՝ Հայաստանեայց փրկութեան .  
 Եյն խորանի հիմունք հաստատ ոսկի ուռամբ կ'արմըրցնէ,  
 Եւ նորա մէջ փոխան Նոյի՝ Մեկքիսեղէկ կ'բազմեցնէ :

Վ Ա Ր Դ Ո Ի Հ Ի .

Հաւատա ինձ՝ Հոփսիմէ ջան, որ չեմ բան ինչ հասկանում,  
 Մեծ զըղջումն է ինձ պաշարում՝ որ քեզ զուր ենք նեղացնում .  
 Եյդ եռանդնոտ քո բարբառիլն առողջութեանդ է վընաս,  
 Աղաչում եմ քեզ թագուհի, որ ամբոխմանցդ վախճան տաս :

Հ Ռ Ի Փ Ս Ի Մ Է .

Եւ դու Տիկին՝ լեր միամիտ, որ վերջ եղև իմ բանից,  
 Ահա հասին պարբ և երամք արքունական ծառայից .  
 Որպէս արդէն պիտի տեսնէք իմ գուշակած բըռնութիւն,  
 Նոյնպէս պիտի ճիշդ կատարուի իմ ամենայն ճըզնութիւն :

Պ Ա Տ Ա Ե Ր Ի .

(Տեսարանն ցուցանէ ի վաղիւ անդր զգահիճ արքունական, ուր նստեալ կայ ի գահի արքայն Տրդատ  
 Ի խորս մտատանջութեան, պատահողեալ զգետնուք . յաջմէ նորա Աշխեն զշտոյն թախտեալ, և առ  
 Ընթեր նորա խորովիկ շուարեալ . յահեկէ արքային՝ խորովիգուխտ տխուր . նախարարք կան յոտս .  
 և տիկնայք սեւզգետեալք պար առեալք զգլխոյիւք . Մտանէ ի ներքս դահճապետն) .

Տ Ի Դ Ա Տ (առ դահճապետն) .

Ընդէր մըտար այս բազմականս, կամ քեզ ո՞վ է հրաւիրել :

Դ Ա Հ Ճ Ա Պ Ե Տ .

Եկե՛լ եմ՝ քեզ տալ համար թէ զհամրդ եմ կամքդ կատարել :

ՏՐԴԱՏ (ժպտա յերեսն) .

Պատմէ՛ , ի՞նչպէս քո քաղցր պաշտօն կատարեցիր յաջողակ :

Դ Ա Հ Ճ Ա Պ Ե Տ .

Գայիանեայ և ընկերաց բարձաւ յերկրէ յիշատակ :

ՏՐԴԱՏ (բարձրաձայն) .

Ի՞նչ ես խօսում, Գայիանէն և իւր ընկերք որո՞նք են :

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՍ (սասանելով) .

Քա՛ջ արանց, իմ Արքայ եղբայր, դատապարտեալ կանայքն են, Որ երկու ժամ քան զայս առաջ հրաման տրւիր խողխողել, Որովհետեւ քո կամաց դէմ էին նոքա բաջաղել :

ՏՐԴԱՏ (չուարեալ) .

Ի՞նչ կանայք են՝ չեմ իմանում, Կը խողխողվիլ պիտէին, Մի՛թէ կանանց դէմ կըռիւ կայ, արք չըկան ի պայքարին :

ԱՇԽԷՆ ՏԻՍԻՆ (արտասուք յաջ) .

Ըզգաստացիր՝ անյաղթ առիւծ, մի՛թէ՞ այսօր չես յիշում, Որ երեք կին կային բանտեալ յառանձնական սենեկում :

ՏՐԴԱՏ (աչքերն վառելով) .

Ի՞նչ պատճառաւ էին կանայք բանտարկեալ ի սենեկի .

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՍ (հեկեկալով) .

Այն Հռիփսիմեայ մայրազիրն էր :

ԱՇԽԷՆ (նոյնպէս հեկեկալով) .

Խըրատտուն իւր սանիկի :

ՏՐԴԱՏ (հետաքրքիր) .

Վասն էր ապա էք հեկեկում, ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել, Վամ մայրազիր կամ խըրատտու՝ դարպասն էին էր եկել :

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՍ .

Երբ Հռիփսիմէն երեկոյին քեզ հարսնանալ յանձն չառաւ, Մայրապետըն հրաւիրեցինք՝ համոզելոյ պատճառաւ :

ՏՐԴԱՏ (զարմացմա՛ր) .

Ո՞վ հարսնանալ չը յօժարեց, ո՞վ կամեցաւ համոզել :

Վ Ա Ր Դ ՈՒ Հ Ի .

Հռիփսիմէին քո հարսնութիւն չը կարացինք տալ ուզել :

ՏՐԴԱՏ (խրթնեցուցեալ զօնս) .

Չը . . . . . ուրի . . . . . սի . . . . . մէ . . . . . ուր է ապա, Կը ձեր մէջ չէ երևում :

Դ Ա Հ Ճ Ա Պ Ե Տ .

Նորա մարմին՝ ո՞վ գիտէ թէ՛, ո՞ր թըռչունքն են արդ ծըւում :

ՏՐԴԱՏ (չափազանց անհամարձակ) .

Աշխէն Տիկին՝ դու երեկ մէկ քաղցրիկ խորհուրդ ունէիր, Պիտի չըքնաղ կոյս Հռիփսիմէն աթոռակից անէիր, Ապա ընդէր չես կատարում հաճոյական քո ձեռնարկ . . . . . Արշակունի բազմակնութիւն զես չի առնէր անուանարկ :

ԱՇԽԷՆ (փարելով եւ համբուրելով զարքայն) .

Ես քեզ համար աթոռակից շատ օրիորդք կը բերեմ, Գուռ մէկ փոքր ինչ հանգըստացիր, — քո դարչապար համբուրեմ :

ՏՐԴԱՏ (չուարթացեալ) .

Օ . . . . . ըրի . . . . . որդք . . . . . շա՛տ . . . . . նոցա մէջ կայ չընաշխարհիկ Հռիփսիմէ, Որ փոխանակ Միրենէի դիք ձօնել են ի Հոռմէ .

Այս յունական Ափրոզիս չէ . իսկ մերազնեայ Անահիտ Գէմ Չըռչի յաղթանակի տրիտուր շնորհել փեսայիդ :

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՍ .

Յոյժ ողորմած են անմահ դիք, և տրիտուր քո արութեան Արեգական նրման փայլուն չըքնաղ հարսունք քեզ կուտան :

ՏՐԴԱՏ (դասն ժպիտ է շրթունս) .

Ապա ընդէր էր Հռիփսիմէ առ խաչեղնաւն բողոքում ,  
Մինչ ես շքեղ Հռոմայեցին առ սէր էի ողորում :

Օ Տ Ա Յ .

Հռոմայեցի բամբիշ չէ պէտք Հայոց ազգին և երկրին :

ՏՐԴԱՏ (զգաստանաւով) .

Ընդդէմ կամաց իմ աշխարհի չեմ անուանէր զոք տիկին :

Ա Ր Տ Ա Ի Ա Ջ Դ .

Ազգ և երկիր քեզ սիրում են վասն այնորիկ առաւել ,  
Որ դու ազգի ազնիւ աւանդք ջանադիր ես պահպանել :

ՏՐԴԱՏ (խոփու) .

Միթէ ընդդէմ է իմ ազգին Հռիփսիմէի հարսնութիւն .  
Միթէ նովաւ Աշխէն պիտի կորցրնէ իւր տիկնութիւն :

ԱՇԽԷՆ (դժկամակ ժպիտ յերեսն) .

Պրիսկէ վասն իւր ամուսնոյն Հռիփսիմէին չէր ընտրել .  
Միայն ես եմ որ չեմ կարող փեսայիս ձօն ինչ բերել :

ՄԱՆԱՃԻՉՐ (խուճապ) .

Երբ մեր բամբիշն յօժարամիտ աթոռակից է ընտրել ,  
Ո՞վ է կարող յանդրգնութեամբ նորա կամաց զիմադրել :

ՏՐԴԱՏ (խղճալի) .

Աշխէն Տիկին , չքքնաղ բամբիշ , Հայաստանի մայր զրթած ,  
Ո՞ւր է շքեղ այն օրիորդ որ ինձ հարսն էր հանդերձած : (Յակնզին)

Երէկ երկու ձեռքէն բրնձնած կաքաւեցինք ընդ երկար .

Ափսոս՝ որ նա առ խաչեղն էր աղաղակում անդադար : (Յանկարծ՝  
զզգաստացած) . Խոսքովիղուխտ , երէկ իմ առն էր Հռիփսիմէայ հարսնարան .

Ե՛ր են լռել ձայնք քրնարից , է՛ր չէ հընչում նուագարան : (Սկսան նուագել) .  
(Դարձուցեալ զաշխի տիկնայց) .

Այո՛ երէկ՝ թէ Հռիփսիմէ , թէ Պայիանէ , թէ ընկերք՝  
Իմ հարսանիք էին եկել անշուք , անզարդ , սևազգեստք .

Երևի թէ դուք ևս նոյնպէս նրմանելով Հռիփսիմէայ ,  
Սևազգեստաւ էք ժողովել ի հարսանեաց տան նորա : (Յետոյ) .

Մինչ Հռիփսիմէ չըղայ դահլիճ պրճնեալ ի զարդ հարսնութեան ,  
Թող լռեն ձայնք երաժշտաց , լռեն սրբինդ , նուագարան : (Լեցնել) :

(Յանկարծ տեսեալ զդահլիճայեան) .

Ես քեզ այսօր զՊայիանէն յանձնեցի՝ որ պահպանես ,  
Ուր Հռիփսիմէս կայր ապահով , անդ և զմայրն բազմեցնես .

ԴԱՀՃԱՊԵՏ (զարհուրեալ) .

Պայիանէն ինձ յանձնեցիր իւր ընկերք խողխողել .  
Չ՛յանդրգնեցայ քո հրամանին տալ կատարումն յապաղել :

ՏՐԴԱՏ (բարկութեամբ) .

Ի՞նչ արիր :  
ԴԱՀՃԱՊԵՏ (ահասարտու) .

Բաժակ մահու արբուցի :  
ՏՐԴԱՏ (սրտմտութեամբ) .

Ո՞ւր :  
ԴԱՀՃԱՊԵՏ (ի ծունկս անկեալ յերկիւղէն) .

Պայիանէին և երկուց ընկերաց :  
ՏՐԴԱՏ (ցամամբ) .

Որո՞յ հրամանաւ :  
ԴԱՀՃԱՊԵՏ (զուրկն յերկր եղեալ) .

Հրամանաւ քո , Տէր իմ Արքայ :  
ՏՐԴԱՏ (անդորր) .

Ղըլուխդ փրցուր և ուղիղ կաց , ինձ պատասխան սուր կարգաւ ,  
Վեղ ո՞վ ասաց զՊայիանէն մահուամբ առնել կենազրաւ :

ԴԱՀՃԱՊԵՏ (աւով) .

Գու ինքն՝ Արքայ՝ հրամայեցիր , և ըստիպաւ պընդեցիր ,  
Հաղիւ կարցայ համախըմբել ըզդահլիճս իմ ցանուցիր :

ՏՐԴԱՏ (անհամբեր) .

Յետոյ :  
ՏՐԴԱՏ (անհամբեր) .

ԴԱՀՃԱՊԵՏ (արտասուք).

Յետոյ առի երեք կանայք՝ հանի ընդ դուռն քաղաքին,  
Բարձրաւանդակ բլրի վերայ գրկատեցան երեքին:

ՏՐԴԱՍ (զարմացմամբ).

Գայիանէն ևս գրկատեցաւ:

ԴԱՀՃԱՊԵՏ (ցաւագին).

Այո՛ Տէր իմ, հասի գլուխն:

Տ Ր Դ Ա Ս.

Գայիանէին ո՛վ էր բերել, և ի՞նչ առթիւ էր եկել:

Բ Ա Գ Ա Ր Ա Ս.

Երբ հնար չեղև շփոխմէին զխորդ և իցէ համոզել,  
Գայիանէին սայլով բերինք և երկու կոյս ընդ նրմին,  
Որ համոզէ շփոխմէին առնուլ անուն քո հարսին:

ՏՐԴԱՍ (առ Սըռկ).

Այժմ ո՛վ կարէ շփոխմէին ամոք բանիւք համոզել,  
Որ յօժարի անբռնադատ փեսայութիւնն իմ ուզել:

ՍԼՈՒԿ (սարսափելով).

Միթէ Աստուածք՝ որ պաշտում ենք՝ մեզ չեն տար մէկ՝ Գայիանէ,  
Որոյ ամոք բանիւք յողոք դայցէ կուսանն շփոխմէ:

ՏՐԴԱՍ (ուրախ դարձոյց երեսն, եւ տեսեալ զԲագարատ).

Է՞ր ես լռեւլ՝ Բագարատունի, և չե՛ս լինում խօսակից,  
Վո՞ արքայի հարսանիքն է, անոյշ զինուոյ բաժակ լից:

Յաւուրց մեծին Վաղարշակայ քո ցեղն է միշտ թագադիր,  
Սարգարտազարդ պերճ ապարօշ շփոխմէիս գրկին դիր:

ԲԱԳԱՐԱՍ (ե փոշուկս).

Խարայէլի Տէր Սարաթ այց արասցէ աշխարհիս,  
Ուրախութիւն պարգևեցէ քաջի արանց՝ Արքայիս,  
Թէ շփոխմէ ընդ Շամունեայ չէ թագապսակ զարդարած,  
Շայաստանում նորա գրկեոյն ո՛չ զոյ արժանիւթ պսակաց:

ՏՐԴԱՍ (զուարճաբ).

Թէպէտ և լաւ չեմ հասկանում՝ բայց Գրիգորէն եմ լռեւլ,  
Տէր Սարաթ՝ նա էր կանչում, ըստէս յիշում Խարայէլ:  
Բանիրուն ես Բագարատ ջան, քեզ կը կարգեմ քրոմայետ,  
Եւ թագադիր՝ և քրոմայետ, համանգամայն զօրապետ:

ԲԱԳԱՐԱՍ (ձեռքերն վերա՛սարձ).

Աստուած քեզ տայ առողջութիւն, ես միշտ զո՛հ եմ քո շնորհաց:

ՏՐԴԱՍ (ընդ կատակս).

Ո՞ր աստուծոյն ես աղօթում:

Բ Ա Գ Ա Ր Ա Ս.

Իմ կրօնիւ Մի է Աստուած:

ՏՐԴԱՍ (յանաք անելով).

Ես լաւ մարդ չեմ՝ Բագարատ ջան՝ որ քո լեզուն չեմ կրտում,  
Մի՞տքդ է Տիգրան Արտաշեսեան ի՞նչպէս էր ձեզ կոտորում:  
Թէպէտ նորա պապ կին արաւ Բագարատայ դուստր օրիորդ,  
Բայց չը խնայեց Բագարատունեաց կրօնի համար ծոռն յաջորդ:  
Թէ քո Աստուած՝ շփոխմէին կարողանայ համոզել,  
Խոստանում եմ նորա անուն ամենայն անդ քարոզել:  
Որ՝ ո՛վ կուզէ՝ թող դաւանի այնպէս՝ որպէս Բագարատ:  
Ասեմ բնաւից թէ մի միայն նորա կրօնն է անարատ:

Բ Ա Գ Ա Ր Ա Ս.

Աստուած բնաւին չէ փորձրվիր:

ՏՐԴԱՍ (դարձոյց երեսն եւ ետես զարքայորդին).

Խոսրովիկ ջան, ուրա՛խ ես:

Խ Ո Ս Ր Ո Վ.

Ունենալով անձինս պաշտպան՝ աստուածանման հայր քո պէս,  
Ընդէր պիտի չընլիմ ուրախ՝ մինչ քեզ առողջ եմ տեսնում,  
Վո՞ դիւցափառ զըւարթարար բերկրալիր ձայնն եմ լսում:

Տ Ր Դ Ա Ս.

Երէկ ես քեզ խոստացայ որ Խոր վերապին այց առնենք,  
Այս հարսանիք որ վերջանայ անշուշտ պիտի անդ դիմենք:

Ես էլ, դու էլ, զըշխոյ մայրդ էլ, Խոսրովեղուխտ, Հռիփսիմէն,  
Արդէն որպիսոքն արքունական թող այն կողմ որս պատրաստեն:

(Յանկարծ դարձաւ առ Մանածիհր):

Գու ասացեր՝ ո՞վ է կարող Տիկնոջ կամաց դիմադրել,

Երբ նա կամաւ ըզՀռիփսիմէն աթռակից է ընտրել:

Ապա ընդէր է դահճապեան զայն օրիորդ թագընում:

(Յետոյ բունն հարեալ զօճեաց Դահճապետին):

Ասա՛ ո՞ւր է իմ Հռիփսիմէն, ընդէր ես իմ սիրտ մաշում:

ԴԱՀՃԱՊԵՏՆ (կիսամեռ):

Հռիփսիմէն հասաւ արդար արքայական պատուհաս:

ՏԻԳՒԱՏ (հետաքրքրութեամբ առ Աշտուազդ):

Այն հրաշագեղ յաւերժահարսն կարէ՞ր առնել ինչ վընաս:

ԱՐՏԱՒԱԶԴ:

Նա քո հրամանն ապախտ արար յանձրն չառաւ հարսնութիւն:

ԱՇԽԷՆ:

Արտաքոյ մեր յուսոյն շարժեց քո անկողար բարկութիւն:

ՏԻԳՒԱՏ (առ Օտայ):

Չը գիտէ՞ք որ՝ ցասկոտ եմ փոքր, ինչպէս եղև Գրիգորին,  
Օխճաւ ցասումնա՛ բայց անագան, մինչ կայր ի խորս Վիրապին:

(Յետոյ դարձաւ առ Ալուկ):

Ե՛րբ շարժեցաւ իմ բարկութիւն, ցասնուլ հարսին արժա՞ն է:

ԱՆՈՒԿ (ահիւ եւ դողութեամբ):

Չափազանց էր յանդրգնութիւն՝ որ քեզ եցոյց Հռիփսիմէ:

ՏԻԳՒԱՏ (ցամամբ ոտքն զգետնի հարկանելով):

Իմ հարսնացուի բարուց դատելն՝ քեզ էր յանձնած, անպիտան:

ԿԱՆԻԿԵԱ ԵՒ ՎԱՐԳՈՒՅԻ (յառաջ վազեցան):

Ներեա՛ւ Արքայ՝ ծառայիս քում, ո՞ղջ լեր եւ կեաց յաւիտեան.

Ինչ Հռիփսիմեայ վիճակեցաւ՝ ինքն էր յառաջ դուշակել,

Կանխագուշակ նորա բանից յովա մի անգամ չէ վրիպել:

Հռիփսիմէն հարսնախօսի պաշտօն մեզ էր յանձն արած,  
Նորա ազգու պերճ խօսքերէն մնացել էինք պապանձուած:

Ինչ դարպասումն աչօք տեսանք՝ կանուխ էինք այն լսել,  
Երանի՞ թէ յետ լսելոյն չէինք նոյնպէս և տեսել:

ՏԻԳՒԱՏ (հետաքրքր):

Արլաւդիէ ի՞նչ էք լսել, կամ ի՞նչ տեսել, չը գիտեմ,

Չեզ հրաւիրակ առ Հռիփսիմէ էի զըրկել՝ արդ յիշեմ:

Իայց դուք չ՛եկիր և ոչ բերիր Հռիփսիմէն պատասխան:

ՎԱՐԳՈՒՅԻ:

Նորա բըռնից չէինք կարող խելամըտիլ յաւիտեան:

Օխճիդ՝ պիտի հասկացնէինք նորա և իւր Փեսայի

Անճառեղի առնչութիւնն՝ որ ի մէնջ կայր յոյժ գազանի:

Մենք դեռ այն ինչ էինք յիշել փեսայութեան քո անուն,

Որ նա ասաց՝ թէ պիտի իմ դէմ գործ դընեն բըռնութիւն:

Այն բըռնութիւն՝ այո՛, եղև, բայց յոյժ յետոյ՝ մօտ ճաշու,

Երբ ձեռն արկին ընդ քարշ ածել, մենք էլ մնացինք հարսնածու:

ՏԻԳՒԱՏ (յուսարեկ հայելով յառաստաղն՝ բունն ի ձախտ):

Ընդ քարշ... ածել... զՀռիփսիմէ... Տրդատ՝ մեռի՛ր, մի՛ ապրիր,  
Խաժամուժի՛... ձեռքն են հըպել... Հռիփսիմէի՛ն՝ իմացի՛ր:

Ո՞վ յանդրգնեց ձեռք երկընցնել աստուածուհեաց պրսակին,

Ա՛յդպէս պիտի Հայք պատուէին անհարսնացեալ իմ տիկին:

Արլաւդիէ և Վարդուհի՛՝ դուք տեսա՞ք այն բըռնութիւն,

Որ իմ հարսին անխիղճ հասոյց հայ խուժանի բըրտութիւն:

Երբ և լսակ այս վատ համբաւ անշուշտ ի Հոռմ քաղաքի,

Ո՛րքան արատ պիտի բարդէ ի զըլուխ իմ խեղճ ազգի:

Այս ի՞նչ է որ դուք էք արել՝ ա՛յ մարդակերպ գազաններ,

Աշխէն տիկին, Խոսրովեղուխտ՝ լսել էի՞ք այս անցքեր:

ԽՈՍՐՈՎԷԼԻԿՈՒԽՏ:

Մենք ընդ առաջ մինչ զընացինք՝ Հռիփսիմէ կայր առ դըրան,

Խաժամուժի մէջ չէրեցաւ մէկ բըռնութեան ինչ նըշան:

Պատառ պատառ էին եղել միայն ձորձիկը Հռիփսիմեայ .  
Գոհար ականց սապատք կային ի ձեռս տիկնանց ընդ Ալաւդեայ :

ՏՐԴԱՏ (շուարեալ).

Յուշ ինձ եկաւ դիմաւորածս արքայական հարսնացուիս ,  
Աջս ընդ անթոյն եզի քաղցրիկ սանդուխտն ի վեր հանելս .  
Հրամայեցի ճրագունք վառել , առնել ըսկիզբն հարսանեաց ,  
Հրաւիրեցի ընդ իս բազմիւ ի բարձ՝ ի գահ թագուհեաց :  
Այնուհետեւ էլ չզգիտեմ՝ թէ Հռիփսիմէս ո՞ւր թագեալ ,  
Հարսանիքս էր՝ ուրան էի , սենեակք շատ են , ո՞ւր մշտաւ .  
Ես կարծում եմ՝ թէ նա խուսեց առանձնական այն սենեակ ,  
Ուր թագուհիք են զարդարվում յապարօշ և ի մանեակ .  
Աշխէն տիկին՝ գուցէ քո գուտար արդ պատրաստ կայ զարդարուած ,  
Ե՞ր չես բերում՝ որ աստ բազմի արքայակերպ պըսակուած . (Ամենքեան լան)  
Ի՞նչ եմ տեսնում . արտասվում էք . մի՛ գուցէ թէ մէկ վատ բան  
Ե պատահել Հռիփսիմէիս հանգոյն այն սուգ բրուութեան .  
Աղաչում եմ Աշխէն տիկին՝ յայտնի ասա՛ մի ծածկեր ,  
Ի՞նչ է դիպել Հռիփսիմէիս , քո կըշտին չէ՞ր այս գիշեր :

ԱՇԽԷՆ (կականաւոր).

Գո թըշնամուոյն պատահի այն՝ ինչ Հռիփսիմեայ է դիպել :

ՏՐԴԱՏ (տաամանելով).

Չընի՞ թէ քաշքաշելին նեղացած է խօթացել .  
Ո՞ր սենեկում են պաղպաջունքն՝ այց ելանել եմ կամում ,  
Իմ նոր հարսին հիւանդութիւնն ինձմէն է՞ր էք թաքցընում .  
Ես այս գիշեր չեմ կափուցել երկուց աչացս թարթիչներ .  
Ահա երէկ հագած բեհեզք . . . . պատան պատան են եղեր :  
Ո՞վ բրբռեցիք իմ ծիրանիք , լօղիկս ո՞վ է պատառել ,  
Գըրապանակս կախ է ընկած , օձեացս ո՞վ է բուռն հարել :

ԱՇԽԷՆ (լաւով).

Ըմբշամարտի պայքար եղև , քո հարսին ոյժ փորձեցիր .  
Մինչև յերկրորդ պահ գիշերոյն մըրցմանց ճրգամբք անցուցիր .

Չորձք Հռիփսիմեայ պատառոտեալ ի քարշ քարշմանց խուժանի ,  
Օուէն ծուէն թօթափելով չէին ծածկոյթ մերկ մարմնի :

ՏՐԴԱՏ (երկրայելով).

Ե՞ն մըրցեցայ նոր հարսին հետ , մի՞թէ հարսն իմ էր ըմբիշ ,  
Ո՞վ էր լսել՝ թէ ի վէգ գայ յօր հարսանեաց հայ բամբիշ :

ԽՈՍՐՈՎԻԳՈՒՍՏ (լաւով).

Երբ ներս մշտաւ աստ ի դահլիճ՝ արձանացաւ Հռիփսիմէ ,  
Ամեն հրաւեր քո քաղցրամոք հերքեալ մերժեց իւր անձնէ .  
Գու կամեցար ողոք բանից հետ և մեղմիկ գործ խառնել ,  
Նա դէմ դըրեց զօրեղ բազկիդ , զըրգիս էարկ առաւել :

ԱՇԽԷՆ (լաւով).

Ես եմ միայն այս գործոյ մեջ ի սիրզբանէ յանցաւոր ,  
Թէ երթայի՛ կը բերէի նորան դարպաս՝ փառաւոր :

Վ Ա Ր Դ Ո Ւ Հ Ի

Ո՞վ էլ կուզէր՝ թող երթայր անդ , կամաւ բերել չէր կարող ,  
Ես չը դիտեմ՝ կընի՞ այլ մարդ՝ մահուն այնքան փափագող .  
Մենք ասում ենք՝ հրաւիրակ հնք Հայոց Մեծաց Տիկնութեան ,  
Նա ասում է՝ թէ այդ հրաւեր աւետիք է բերկրութեան ,  
Որ իմ արիւն ձեռամբ դահճի պիտի այսօր հեղանի ,  
Եւ այս օրհ մեծ պիտի զըրվի ի Միածնին սեղանի .  
Այդ Միածին չը հասկացայ՝ թէ ո՞րպիսի փեսայ էր ,  
Որ Հռիփսիմէ ըստեպ մերձ իւր յերկնից իջած տեսնում էր :

ՏՐԴԱՏ (մոտանջութեամբ).

Այդ Գրիգորն էլ էր շատ կըրկնում երբ ի տանջանս չարչարվում .  
Նորա աչացն էլ Միածին , այլ մեզ անյայտ՝ երևում :

Կ Ա Ա Ի Դ Ի Ա

Նա Գրիգորին ողջոյն ղըրկեց և մեզ յանձնեց հասցընել ,  
Եւ կարծում էր թէ Խոր վերապ իւր ձայն կարէ ժամանել .  
Այնպէս խառն էր նորա խօսքերն՝ որ մենք ինչ ո՞չ հասկացանք ,  
Այլ ամենի ճիշդ կատարուածն տեսանելով զարմացանք .

Նա ասաց նախ իւր ընկերաց թէ ձեր մարմինք իրմբովին,  
 Պիտի փրթթեալ վարդից հանգոյն կանանչ բըլրում տարածվին.  
 Յետոյ ասաց իւր մայրազրին՝ վաղիւ յայս ժամ միասին,  
 Ընդ իս պիտի միջնորդ ազգի՝ կանգնիս հանդէպ Միածնին.  
 Գարձեալ ասաց՝ որ այս հընձան կըլնի ազգին նոր տաճար,  
 Սորա մէջ ևս պիտի լըսուի իմ Ֆիսայի սուրբ բարբառ.  
 Ամենայն ինչ կատարվեցաւ, իւր հետ ընկերք զընացին,  
 Եւ մէկ հիւանդ այն կուսերէն զընաց ի մէջ հընձանին.  
 Այս առաւօտ և մայրապետ հանդերձ երկու ընկերօք,  
 Միւս բըլրում իւր կեանքը կընքեց՝ հարեալ դահճաց սուսերօք:

ՏՐԴԱՏ (յուշ իւր դառնալ կամելով):

Արլաւդիէ՛ լաւ չիմացայ, թէ ի՞նչ ասել կամեցար,  
 Նախ Գրիգորին՝ յանձնած ողջոյնն տալոյ համար խօսեցար.  
 Ուստի՞ զիտէր՝ թէ Գրիգոր կայ Խոր վերապի մէջ թաղուած,  
 Կամ թէ ի՞նչպէս կարէր կարծել՝ թէ նա կենդան է կեցած.  
 Յետոյ ասիր՝ թէ նորա խօսք կատարուեցան ճըշդապէս,  
 Հռիփսիմեայ հետ ընկերակիցք խառնիլ կալան ուղք պէսպէս.  
 Այն մայրազիր Գայիանէն զհարդ նորան կը հասնէր,  
 Որ դեռ այսօր վաղ առաւօտ իմ դարպասում ի բանտ էր.  
 Յետոյ դահճի սրբով մեռաւ ի՞նչպէս միջնորդ վանն ազգի  
 Ընդ Հռիփսիմեայ ի միասին կանգնէր յատեան Միածնի:

ԿԼԱԻԳԻՆ (պատկառելով):

Գուշակութիւնքն մենք լըսեցինք, և կասկած ինչ էլ չըմնաց,  
 Եւ կատարման մանր հանգամանք օկանատեսք են պատմած.  
 Երէկ այսօր երեք տեղ են արեամբ կանանց ոռոզվել,  
 Պաղարշապատ երեսնևեօթն աղջկանց մահ է տեսել:

ՏՐԴԱՏ (աչքերն պատռտելով):

Այն աղջկանց մէջ՝ Հռիփսիմէն ևս՝ կայր թէ չըկայր, այն ինձ ցոյց.

(Ալաւդիս գլուխն կախեց և լռեց):

ՏՐԴԱՏ (առ դահճապետն):

Հռիփսիմէ ևս կոտորածի մէջ կայր թէ ոք ապրեցոյց.

Դ Ա Հ Ճ Ա Պ Ե Տ.

Ո՞վ էր կարող զնա ապրեցնել, բայց թէ միայն՝ քո հրաման.  
 Այն քո հրաման երէկ տըրուեց յաղագս անշուշտ իւր մահուան:

ՏՐԴԱՏ (ծամածուռ):

Ուրեմն ո՞չ գոյ արդ Հռիփսիմէ, և Հայոց մէջ չըկայ ոք,  
 Որ յաջողէ տալ Հռիփսիմեայ իմ ըղձալին կեանք նորոգ:

Խ Ո Ս Ի Ո Վ:

Այս աշխարքէն ելաննէն է միայն դիւրին իմ հայրիկ,  
 Իսկ վերադարձ տեսանելով ո՞վ է եղել երջանիկ:

Տ Ր Դ Ա Տ.

Եթէ ես ևս այս աշխարքէն կարողանամ ելաննել.  
 Արդեօք կարեմ Հռիփսիմէիս այն աշխարքում տեսաննել:

Խ Ո Ս Ի Ո Վ:

Միթէ հայրիկ՝ Հռիփսիմէին քան զես աւել ես սիրում,  
 Որ նորան լոկ տեսանելոյ համար ինձ որք ես թողում:

ԱՇԽԵՆ (ի ծունկս անկեալ):

Տըրդատ արքայ՝ Տէր իմ զըլեոյ, սիրոյ իմ այս է արխուր,  
 Որ Հռիփսիմեայ համար իսպառ թախծանացդ ես անձնատուր:

ՏՐԴԱՏ (կանգնէ զնա և համբուրէ):

Աին դու՛ ես չեմ արժան սըրտիդ, սիրոյդ եղէ դաւածան,  
 Հռիփսիմէին դըրի միջնորմ՝ երկուցս սըրտից միութեան.  
 Իմ սիրտ արդ չէ այնպէս մաքուր՝ որպէս երէկ և յեռանդն,  
 Այլ ևս չիք իմ հոգւոյ միջին վաղուց սիրոյ ջերմ եռանդն:  
 Տանևհինգ ամ քեզ ունելով՝ չէի յիշել Սիրենէն,  
 Այլ այն սէր չէր իսպառ շիջած, զոր արծարծեց Հռիփսիմէն.  
 Կարեվեր խոցը կան սըրտիս մէջ՝ սիրոյ նետերն են դըրել,  
 Տըկարացել եմ ցաւերէս, այլ չեմ կարում համբերել:  
 Ա՛շխէն՝ դու ես տիկին Հայոց, Խոտրովիկս է իմ յաջորդ,  
 Իմ քաջիկ հօր անուան, արեան, փառաց միակ ժառանգորդ.  
 Ես յօժար եմ՝ այսուհետև թող նա լինի թաղաւոր,  
 Եւ դու լինիս արքայամայր՝ Տիկին տիկնանց փառաւոր:



Իսկ ես կերթամ ի սար ի ձոր մեկուսանալ յաշխարհէ,  
Ի ընակիլ մերձ այն սեղերուն՝ ուր արդ բնակի Հռիփսիմէ:

ԱՇԽԷՆ (դարձեալ անկանի ի ծոնկս).

Թէ կայ հնար ինչ՝ Հռիփսիմեայ հետ և ես յօժար եմ բնակիլ,  
Ոչ թէ Տիկին Հայաստանի, այլ Հռիփսիմեայ մայր կոչիլ.  
Բնդէր պիտի մեկուսանաս արքայական թողուս փառք,  
Ես Հռիփսիմեայ բամբիշութեան սիրալրական կուտամ կարգ.  
Ի այց ի՞նչ անենք, ուստի՞ գրանենք, անդարձ խուսեց Հռիփսիմէն,  
Ամեն անգամք են բաժանվել նորա անրիժ մարմինէն.  
Այն բազուկներն՝ որ քո բազկաց անյաղթ ուժոյն ժուժեցին,  
Արինազանդ բեռնախոց աստ անդ ընկած կան դետնին.  
Այն քաղցրախոս անոյշ լեզուն՝ որ յերկինս էր բողբոսմ.  
Ճնտանել տանջանաց մէջ չէր իւր դահճաց ողբում,  
Առաջ այն է կրտրել ձրգել՝ արեան ծարաւ դահճապետ,  
Ապա չորից ցրցից կապել զոտս և ըզձեռս դահճաց ետ:  
Այն լուսափայլ երկու աչերն արուսնկի ախոյեան,  
Գահճապետ իւր մազլահանդոյն ճանկով բըրեց, բաց եհան:  
Այն արգանտ՝ ո՛ւր՝ ո՛վ գիտէ ի՞նչ արքայք պիտի բնակէին,  
Գաշոյն պատուեց, և փորտիք վայր սորեցան ի գետին:  
Այն մարմին որ սպիտակութեամբ գերազանց էր քան զայն ձիւն,  
Որ յաւիտեան ծածկեալ ունի Մասեաց անհաս բարձրութիւն,  
Այն մարմին որ իւր քրնքշութեամբ առաւել էր քան զբամբակ,  
Յորոյ մանուածս գողտրիկ մատունք պատաղեալ կան բովանդակ.  
Բոցով ջահից խանձոտեցաւ՝ հրակէզ մաշուեց ո՛չ հապճեպ,  
Որ յընթացս յամբ երից ժամուց տեսցէ միշտ մահ իւր հանդէպ:  
Վերջապէս այն իրան՝ առ որ էիր այնքան կաթողին,  
Մինչդեռ շունչ կայր՝ հերձաւ ի չորս, թաւալեցաւ ի գետին.  
Հուսկ և գրլուխն՝ զոր բաղձայիր թագապրսակ զարդարել  
Փողոտեալ վայր անկաւ յերկիր՝ մինչ կայծ կենաց չէր մարել:

ՏԻՒՆՏ (անդորր).

Ուրեմն՝ տիկին՝ էլ յոյս չըկայ, մեռաւ զընաց Հռիփսիմէն:

ԽՈՍՐՈՎԻԴՈՒՄՏ (ի ծոնկս առնթեր Աշխենի).

Աստի կենաց առաւ վախճան, այլ անմահ է նա արդէն,  
Մեր հոգեց մէջ կայ նրկարած սքանչելատիպ իւր պատկեր,  
Եւ յայտնութիւնն փայլակնաձև պիտի տեէ անըստուեր.  
Ի այց մէկ յուշ ած՝ Տէր իմ Արքայ, և իմ անցեալ որբութիւն,  
Յօրէ յորում մըտի յԱնի, զինորդ անց իմ մանկութիւն.  
Ես ի սէր քո կըրկին սիրոյ վէրք թագցըրի ի սըրտիս,  
Կեանքէս աւել վեր դասեցի ըզսէր եղբօրդ, սէր ազգիս:  
Երկու չըքնաղ պատանեկիկք եղեն կուսիս սիրահար,  
Թագազրկեալ սըրտիս ձեռիս խընդիր էին անդադար.  
Գու քաջ գիտես՝ արքայ եղբայր՝ որ իմ սիրտ ևս քարեայ չէր,  
Նոցա սիրոյ զուգակըշեռ կարէր իւր մէջ ունիլ սէր:  
Եւ ո՛չ մին էր ինչ անարժան՝ ո՛չ հասակաւ, ոչ տոհմիւ,  
Մին էր Շապուհ՝ որ խոստանում էր զիս պըճնել հօր թագիւ.  
Եւ երկրորդն էր իշխան Սիւնեաց դիւցազնականն Ապիրատ,  
Որ իւր մահուամբ ի մարտին գոռ ինձ սուգ եթող անփարատ:  
Սա բարեկամ Օտայի տան բնակէր ինձ հետ միասին,  
Եօթն ութ ամօք գորով երէց՝ ընտելացանք երկօրին.  
Մեր զբօսանք էր անտարանջատ, մոտ և ել մեր բացարձակ,  
Սիրոյն մերոյ վըկայ էին քաղաքակիցք բովանդակ.  
Երբ կարկառեց՝ իւր ձեռն առ իս թոյլտուութեամբ հայրազրիս,  
Ես ասացի՝ դեռ չեմ անկախ տէր ձեռին իմ և սըրտիս.  
Այ իմ եղբայր թագաժառանգ, երբ դայ առնու մեր հօր գահ,  
Յայնժամ իմ սիրտ և ազատ աջ կերկրնցընեմ քեզ անահ:  
Նա մեծարեց իմ պատասխանս: Գեռ չ'գիտէինք թէ այլ ո՞ք  
Իմ հարսնութեան կայ ի խընդիր, ոտիս փեսիս անողբ.  
Ապիրատի զինակիրն էր՝ մէկ պատանի գեղեցիկ,  
Չըքնաղերան, ճարտարամիտ, դիւցազնակերպ և քաջիկ:  
Մի օր մինչ ես օրիորդաց հետ պարտիզում կըզբօսուի,  
Յուշիկ եկաւ այն զինակիր՝ ընկաւ ոտքերս ի գետնի.  
Ասաց՝ դու ինձ չես ճանաչում՝ Խոսրովիդուխտ կոյս դըշխոյ,  
Ես եմ ժառանգն Սասանեան տան՝ մահապարտի ծնողի քո:

Ահա քանի ամբ բոլորին՝ որ ծառայի խաղամ զեր,  
 Եւ այս վիճակ զիս ձրգել է մի միայն քո անյոյս սէր.  
 Կամ եկ ինձ հետ երթանք ի Պարսա՝ որ անեմ ինձ թագուհի,  
 Կամ յետոյ նոր դեսպանութեամբ կըցորդ լինիս իմ գահի:  
 Մխարբս բերի Տիգրանուհեայ՝ Աժդահակին հարսնանալ...  
 Եղբայրդ իմ դեռ ոչ գայր մեր հօր թագ և աթոռ ըստանալ.  
 Ենկեղծ սիրով քո և ազգի մերժեցի այն քաջ բաղուկ,  
 Որ զիմ փեսայն՝ զիւր ակոյեան զգեանեց մարտին յայն աղմուկ:  
 Երբ Գայլ գետոյ մօտ երկրքին հանդիպեցանք իրերաց,  
 Եւ ես լալով քեզ պատմեցի առիթ իմոց արտասուաց.  
 Գու ի Գրիգոր ակնարկեցեր՝ որպէս փեսայ ինձ ընտրեալ,  
 Չը կամեցար ի միտ առնուլ՝ որ սիրտ իմ էր խոցոտեալ.  
 Բայց երբ վառվեց քո բարկութիւն՝ Գրիգոր վարվեց Խոր վերապ,  
 Հողիս՝ որ կայր ցարդ ամայի՝ դարձեալ լքաւ զուրկ, պարապ.  
 Եյնուհետև անուամբ մեր դից ուխտելով ինձ կուսութիւն,  
 Ի սէր եղբորդ յանձին կալայ մինչև ի մահ այրութիւն.  
 Գու այս զոհերս մոռանալով Հռիփսիմէի սոսկ ի սէր,  
 Ի լերդակողմ գերդաստանիդ սեւեռում ես սուր սուսեր:  
 Թէ Հայուհ հինձ գերի բրունէ և խընդրէ իմ հարանութիւն,  
 Ի չանալ իմ ողբըանաց՝ ի ձեռն առնու բրունութիւն,  
 Ի՞նչ ես կարծում՝ Երբայ եղբայր, կարող է ինձ համոզել,  
 Որ ինձ նորա փեսայութիւնն ներեմ կեղծիւ գէթ ուզել:  
 Երդ սիրական միակ եղբայր՝ այս է ի բէն իմ խընդիր,  
 Ի սէր այսքան մերձաւորաց՝ Հռիփսիմէին մոռացիր:

Ա Շ Խ Է Ն.

Հռիփսիմէին հազիւ տեսանք մինչ ձեռն արկիք ի վեզ գալ,  
 Նա վըստահ էր որ չես կարող նորան բրունի տիրանալ.  
 Չեր գօտեմարտ ինձ այնպէս էր այն միջոցին երևում,  
 Որպէս թէ իւր Փեսայն անդ էր, և նա էր նրան զօրացնում:  
 Ինձ հաւատա՞ դու քաջ արանց՝ որ Հռիփսիմեայ Միածին,  
 Որպէս նա միշտ անուանում էր աներեղոյթ իւր փեսին,

Չէր մեզ պէս մարդ մահկանացու, այլ մէկ անմահ էակ էր,  
 Որ կամ յերկնից էր վայր իջած, կամ անդունդէն ելած էր:  
 Հռիփսիմեայ խօսք յոյժ նրման էր երկուց անձանց զըրուցաց,  
 Որ առանձին տեղում լինին սրտէ ի սիրտ խօսակցած:  
 Նորա ամեն ըմբշութեան հնարք ակնարկութեամբ էր լինում,  
 Ինչ որ փեսայն գաղանի սաղրում, հարսն էլ նոյնպէս էր շարժում:

Ա Ա Ր Կ Ո Ւ Հ Ի.

Պատանի կոյս քրսանամեայ՝ ո՞վ կը կարծէր թէ զօրէ,  
 Ոչ թէ միայն ընդդիմանալ, այլև յերկիր զըլորէ.  
 Սոսկավիթիար քաջ Հըռչէի՝ ուլն հանգէտ նուաճողիդ,  
 Եւ զինաթափ ընկրճողիդ, և ձերբակալ անողիդ.  
 Գու Ենաէոս էիր անյաղթ, Հերբուլէսի նա հանգոյն՝  
 Վեզ գետինէն վեր բարձրացոյց՝ որ վայր ձրգէ դիւրագոյն.  
 Եմաչեցար Երբայ Սանիկ՝ համաժողով ակումբէն,  
 Որ խուրձի պէս քեզ վեր ամբարձ և կործանեց Հռիփսիմէն.  
 Գըլիէդ գըրվեց խոյր, ապարօշ, ջախջախվեցաւ ճեղննակ,  
 Ոտքէդ յայսկոյս յայնկոյս ոստեաւ սանտարանման քո մուճակ:  
 Նա մէկ դրունէն ճրդքեց ելաւ, դու էլ միւսէն դուրս ելար,  
 Գահճապետին ի՞նչ ասացիր, մեզ իմանալ չկայր հնար:

ՏՐԿԱՍ (առ դահճապետն).

Ի՞նչ ասացի քեզ, դահճապետ.

ԴԱՀԱՆՊԵՏ (ի ծունկս անկեալ).

Հրամայեցիր երթալ հասնիլ և կրտտամահ փողոտել.  
 Եւ համակ հոյլ սեւազգեստից անդամ անդամ յօշոտել:

ՏՐԿԱՍ (երեսն դարձուցեալ ետես զՌազարատ).

Բազարատ ջան՝ կոյ աշխարբում մի այսպէս այլ օրինակ,  
 Որ թագաւոր մոռցած լինի իւր հրաման կամ հրովարտակ:

ՅԱԿԱՐԱՍ (գողմով).

Յաւխտեան կաց՝ Երբայ Հըրգօր, մեր մատենանում կայ զըրած,  
 Որ թագաւորն Բաբելացոց՝ իւր երազն էր մոռացած.

Հաւաքեց իւր զխնոց՝ հարցուց, թէ ի՞նչ տեսայ երազումս,  
Որովհետեւ զարհուրել եմ, չէ մնացել ինչ էլ մըտքումս :

ՏՐԴԱՍ (ծիծաղելով նստաւ ի դահաւորակի) .

Ի՞նչ լաւ բան է . պատմէ՛ Ռազրատ, կամիմ այդ հին անոցք լըսել .

ԲԱԳԱՐԱՍ (երկեղազին) .

Երբայ՝ ողջ լիւր, այն թագաւոր ահեղ երազ էր տեսել .  
Երբ զարթել էր՝ մոռացել էր, հրամայել էր իւր զխնոց,  
Որ ասեն թէ ի՞նչ էր տեսածն, և մեկնութիւնն երազոց .  
Մէկ մանկլաւիկ պատմեց տեսիլն, բացատրութիւնն էլ արեց,  
Երբայն նորան այս պատճառաւ շատ մեծութիւն պարգեւեց :

ՏՐԴԱՍ (յուշիկ էլ ի դահէն և նստաւ ի գետնի) .

Ի՞նչպէս եղաւ երազ մոռցող թագաւորի վերջ կենաց .

ԲԱԳԱՐԱՍ (կարկամելով) .

Նա շատ անզեղջ մեղաւոր էր, վերէն Տէրն էր բարկացած .  
Մէկ օր ընկաւ ժողովրդեան մէջ աղմուկ և խռովութիւն,  
Թագաւորի դէմ վառվեցան, արքայն կորոյս տէրութիւն .  
Գաշտերն փախաւ խեղճ թագաւորն, կորոյս և միտք մարդկութեան,  
Չինքը կարծում էր թէ եղել է անասուն և անբան :

ՏՐԴԱՍ (պառկեցաւ ի վերայ գետնոյ) .

Ես ևս այդպէս եմ արդ կարծում՝ որ էլ Տրդատ արքայ չեմ,  
Չը լինի՞ թէ եզն եմ դառել, ապա մէկ լաւ բառաչեմ . (Բառաչէ .)  
Չէ՛ դեռ հորթ եմ, չեմ եզնի չափ, ձեռքս ու ոտներս են փոխվել,  
Երկու կըճղակք են երևում, հինգ հինգ մասներս են կորել :  
(Աշխէն, Խոսրովիդատ և Խոսրով ըզրպատն ի ծունկս անկան լալով) .

Ա Շ Խ Է Ն .

Երբայ՝ զըլխոյս թագ և սըսակ, էր ես դու մեզ վախեցնում,  
Տես՝ Խոսրովիկը զխնոր սարսեալ գունաթափ քեզ է նայում .  
Ո՞վ ասաց՝ թէ դու փոխուել ես, Տրդատ Երբայ չես արդէն,  
Ո՞վ ասաց՝ թէ ոտից ձեռաց նախկին կերպերն կորել են :

ՏՐԴԱՍ (ինայելով տիկնոջ արտասուքն) .

Աշխէն Տիկին՝ այսուհետեւ ի՞նչ ապացոյց է պիտոյ,  
Արձգակներ են յայանի վըկայ, որ նրման եմ արջաոյ .  
Բնորատ՝ այն թագաւորի անունն ի՞նչ էր՝ չիմացայ ,

ԲԱԳԱՐԱՍ (կիսամեռ) .

Նարուզողոնոսոր կ'ապլէր, աշխարհակալ էր՝ Արքայ :

ՏՐԴԱՍ (սյլանդակ փպիտով) .

Այդ՝ առաջ էլ՝ մինչ մարդ էլ՝ զըժուար մըտքումս կը մընայր,  
Այժմիկ դառել եմ անասուն, լեզուս անգամ չէ յարմար .  
Ես կ'անուանեմ Վընթիանոս, բայց դու ուղիղ հասկացիր :

ԲԱԳԱՐԱՍ (ձեռներն վեր ամբռնալով) .

Տէր և Աստուած Երրահամու՝ դու յօգնութիւն մեզ հասիր :

ՏՐԴԱՍ (զուարթազին) .

Խոսրովիկ ջան, եկ որ այսօր՝ անդարձ խոստմունքս կատարեմ,  
Հեծիր վըրէս յուշիկ հանդարտ՝ որ Խոր վիրապ այց տանեմ :  
(Խոսրով զարհուրե) .

Մի՛ վախենար՝ արքայորդի, չեմ խաճատեր, չեմ գաղան,  
Մէկ անվընաս անասուն եմ, եզն եմ, կով եմ, այլ անբան .  
(Խոսրով խուսափէ զհետ մօր) .

ՏՐԴԱՍ (չորբոսանի ձեացեալ) .

Մի՛ յապաղէր՝ Խոսրով որդեակ, մերձենում է ճաշու ժամ,  
Մինչ երեկոյ չեքք հասանիր, ճանիին կըլնինք տարաժամ .  
(Խոսրով թագուցեալ զհետ մօրն լայ . ՏՐԴԱՍ զեռալով մերձի առ Խոսրով եւ յափշտակեալ զնա հեծուցանէ ի վերայ իւր, և չորբոսանի ընթանալով՝ ստէ) .

Երգեօք հանգինս ես Խոսրովիկ, նիստ հաստատուն, մի՛ զողար,  
Թամբ կամ համետ չեն պիտոյ քեզ, ամուր հեծիր առնարար .  
Վո տիք ունէր Աղեքսանդրոս Մակեդոնեան ինքնակալ,  
Որ սանձարկեալ աշտանակից ըզըլազլուխ բուկէփալ :

Խոսրով ԻՊՈՒԽՍ (մերձի առ ամբին, որ կանգնէր առ դրան) .

Խիտ շարուցեք որ չելանէ արտաքս յայս մեծ դահլըճէ .

Ա Մ Բ Ո Ւ Ն .

Այնուհետեւ ո՞վ կազատէ ընդդիմացողքն ի դահլէ :

ՏՐԴԱՍ (առ ամբոխն):

Մի երկրնչիք՝ ես չեմ արքայ, Խոսրովիկս է թագաւոր,  
Յայսրմհետէ նորան պիտի լլսէ դահիճ կամ զինուոր: (Ամբոխն ԼՍ):

Տ Ր Դ Ա Ս:

Ճանփայ տուէք, էր էք ողբում, որ ես արտաքս ելանեմ.  
Խոսրովիկս խոստացել եմ պիտի Խոր վիրապ տանեմ:

ԱՇԽԷՆ (առ ԼՍ):

Ձիով զընա՛, կառքով զընա՛, Խոսրովիկիդ հետ դարձիր,  
Թէ հրամայես՝ մենք ևս կուզանք, Տրդատ փորը ինչ զգաստացիր:

ՏՐԴԱՍ (խշճալով տիկնոջ):

Եսս՝ Տիկին՝ ի՛նչ անեմ որ սրբուէդ երկիւղն հեռանայ.

ԱՇԽԷՆ (աղաչելով):

Երկու ոտիցդ վերայ՝ կանգնիր, որդւոյդ էլ թող՝ որ զընա:

ՏՐԴԱՍ (հանդարտ):

Խոսրով՝ իջիր, մայրդ յօժար չէ, որ կըռնակով քեզ տանիմ,  
Երբ թէ ձիոյ դաւակ հանգիստ է քան լայն թիկնամէջ իմ:

(Խոսրով իջանէ ուրախութեամբ):

ԱՇԽԷՆ (յողոր անկեալ):

Եւ դու Տրդատ՝ արդէն կաց յոտն, ելլուք արտաքս միասին,  
Հրաման արա՛ հանել ձին կամ արքայական քո ջորին:

ՏՐԴԱՍ (ըտխմազին):

Եյտուհետե չունիմ կամք ինչ, և ունայն է իմ հրաման,  
Թէ ես հրաման չունենայի՝ չէր պատահիր այսքան բան.

Եռէք ձեռէս սուր, մահապէն, վճռանդաւոր յիմ ձեռին,  
Որպէս նեա ի ձեռս սղայոց, սուսեր ի ձեռս երեսին.

Պահճապեան էլ թող հեռանայ, ջրէրք դահճաց թաք կենան,  
Խաղաղութիւն է ամեն տեղ, զինուորք զէնքերն մերկանան.

Ո՛հ, ո՛ւր էիր՝ Աշխէն Տիկին՝ երբ ցայտէի կայծակունք,

Է՛ր չքասար ինձ օգնութիւն՝ մինչ ունէին զես երկունք.

Երկունք անզուսպ մոլեգնութեան, կատաղութիւն բարկութեան,

Ենսանձ ցատումս սրբամիտութեան, անչէջ բորբոք զայրացման:

Երկու էին յիշեցուցիչք՝ որ կարգել էր Վաղարշակ,  
Ուր պատաղեալ էին արդեօք՝ որ ինձ թողին միայնակ.

Մինչ Ղարիգորին տանջում էի՝ էր չէին ինձ հարցընում,  
Թէ ո՛ր ազգի սովորութեամբ էի յայնժամ ես վարվում:

Պաեռ Հռոմէն նոր էի դարձել՝ ուսեալ նոցին հընութիւն,  
Երբէք մրտէս չէի հանել Պորսենայի պատմութիւն.

Մինչ Սկեփոլայ իւր աջ բազուկ խարուկի մէջ էր խորվել,  
Որ մահաբեր հարուած տալոյ ժամանակն էր սըխալվել:

Ի՞նչ փառաւոր էր մընացել նորա զործոյն յիշատակ,  
Եմեն ծընող իւր զաւակին այն էր բերում օրինակ:

Ի՞նչ յանցանք էր գործել Անակ՝ որ ի սէր իւր հայրենեաց,  
Խողխողել էր զիմ հայր Խոսրով որպէս ըզզուի թըշնամեաց.

Նա վասն իւրոյ թագաւորի կեանքն յողջակեզ էր բերել,  
Որ Հայաստան մահապարտ էր՝ իւր հայրենիքն էր վըրկել:

Եւ ես նորա Ղարիգոր որդւոյն այնպիսի մահ մատնեցի,  
Որոյ սարսուռ զես՝ տի տանջէ՛ մինչ կամ յերկրի կենդանի:

Աշխէն Տիկին՝ երբ որ տեսար թէ զո՛ւր էր իմ բըռնութիւն,  
Է՛ր մօտ չեկար՝ որ սանձես իմ զազանական բարկութիւն.

Է՛ր թողիր՝ որ դահիճ երթայ կատարել իմ հըրաման,  
Որով պիտի Հռիփսիմէիս հասնէր հարուած չար մահուան:

Ա Շ Խ Է Ն:

Ո՛չ թէ միայն ես ասացի, այլև զըշխոյ իմ տալըս,  
Պահճապետին վըրիպեցոյց աղիողորմ իմ լալըս.

Նա կարծեց թէ ես խընդրել եմ, դու զլացել ես զըթութիւն,  
Եսաց՝ միայն արքայական հրաման կուտայ վըրկութիւն.

Մինչ ես ըզքեզ որոնելով զըտի յորսայս ի մթնան,  
Պահճապետ իւր գործ կատարեց, զո՛հ՝ մատնեցաւ ճանկ մահուան:

Տ Ր Դ Ա Ս:

Ո՛չ ապաքէն մեր երկոցուն միշտ մի էր կամք. մի հրաման,  
Է՛ր ներեցիր դահճապետին անսաստ բերել առ քո բան:

Ա Շ Խ Է Ն:

Երբ լսեցի դահճապետէն քո հրամանի զօրութիւն,  
Որ արդիւն էիր ամեն միջնորդութիւն, թողութիւն,

Ազաչեցի դահճապետին որ համբերէ գէթ ժամ մի,  
 Մինչև ես քո ներողութեան առնեմ զանմեղն արժանի:  
 Չը դիտէր որ՝ թէ ո՞ր թաքեար, զբաի ըզքեզ անագան,  
 Առ ամենայն պաղատանս իմ չը արւիր ինչ պատասխան:  
 Տեսնելով քո վատթար վիճակ՝ Հովհաննէին մոռացայ,  
 Քեզ յուշ բերել բրժըշկական հընարներով փութացայ.  
 Կամում էի մինչ ի վաղիւ յապաղել քո հըրաման,  
 Այլ ինձ ահիւ սասանեցոյց անյոյս երկիւղ իմ մահուան:

ՏՐԴԱՏ (վրասդին)

Միթէ ես նոր Կամբիւս էի Հայաստանի աթոռում,  
 Որ իմ աիկնոջ սէր և պատիւ չունենայի իմ սըրտում:  
 Կամ միթէ միւս Ներսէս էի՝ որ իմ կենաց կըցորդին  
 Անօրինակ խրժիրթութեամբ տայի մահու ցանցորդին.  
 Խորովիս չափ խելք չունեցան երբեմն իմ ծեր նախարարք,  
 Երէկ ասաց՝ միթէ որդւոյն յանցանք կատուին հօրն արարք.  
 Վասն էր նորան չը բերիր հետդ որ ինձ ասէր համարձակ,  
 Թէ հայրիկ թիւր է դատակնիքդ՝ խրժմրտանաց հակառակ:

Ա Շ Խ Է Ն

Երբ խրմբեցաւ ձեր մենամարտ՝ Խորովիկ կայր անդ բազմած,  
 Իայց յեա սակաւ ժամանակի յիւրում բարձի խոր նիրհած:  
 (Մտեալ զանթողն ամուսնոյն).

Երթանք՝ Տըրդատ պատրաստ է ձիդ, երթանք ի դաշտ ծաղկածին,

ՏՐԴԱՏ (երթալով հիւանդաբայլ).

Երթանք բամբիշ Հայաստանի, երթանք՝ Աշխէն իմ Տիկին,  
 Ես քեզ անհուն ցաւ առթեցի, վիշտք չի մերժեր այց հովտաց,  
 Ոչ զուարճալի տեսիլ դաշտաց, ոչ փառական շեմակաց:  
 (Ամենեքին աշտանակեն. Տըրատ երթայ յառաջ).

Տ Ր Դ Ա Տ

Ո՛ր կողմ երթանք՝ Խորովիղուխա, դու ես այսօր ուղեցոյց:

Խ Ո Ս Ր Ո Վ Ի Դ Ո Ւ Խ Տ

Արտաշատայ կողմերն երթանք՝ Խորովին Խոր վերայ ցոյց: (Գնան).

ՏՐԴԱՏ (յանկարծ զկայ առնու).

Ի՞նչ անձոռնի զործ ենք զործում, արջառ՝ ձի կը հեծանէ.  
 Ես չորս ոտքով պիտի զեռամ, ինձ վայելուչ զնայք այն է:  
 (Կամենում է իջանել ի ձիոյ).

Ա Շ Խ Է Ն (ալով, մինչ նախարարք հայթայթում են արդելել).

Արքայ՝ ինայէ քո խեղճ աիկնոջ, Խորովիկիդ խընայէ,  
 Տիկնանց ողբոց՝ լըր խելամուտ, ժողովըրդեանդ լաց նայէ:

Տ Ր Դ Ա Տ

Ժողովըրդեան լացն արդար է, իւրեանց արքայն կորուսին,  
 Չորքոտանի արջառ փոխան կայ Տըրդատայ զիւցազին:

ՕՏԱՅ (լուսի).

Իմ ծերութեան շընորհ արա, Արքայ, Հըզօր՝ հանդարտի՛ր.  
 Ալաբիդ մէջէն այդ սև խորհուրդ ի բաց մերժէ, փարատի՛ր:

ՏՐԴԱՏ (անկատակ).

Նայէ ձեռներս՝ Հայրիկ քաղցրիկ՝ այս Տըրդատայ ձեռներն են,  
 Որ արտասուօք համբուրեցիր՝ երբոր դարձաւ ի Հումէն.  
 Ո՞ր էն մատուներս. երկու կըճղակք հանդոյն խողի կըճղակաց,  
 (Յաղթանակաւ). Արդ իմացայ՝ որ արջառ չեմ, խող եմ անարգ կենդանեաց:

Վ Ա Ր Դ Ո Ւ Զ Ի (սաինքն լաց արած).

Ի՞նձ մեղկըցիր՝ իմ Տըրդատիկ, այս ըստինք քեզ յուշ լեցին,  
 Միտքըդ բեր այն իմ աշխատանք՝ որ քեզ դիւցազն կըրթեցին.  
 Միթէ ըստինքս կըճղակներով էիր գողարիկ շօշափում,  
 Ահա փափուկ նոյն մատուներն են, ամենքս մատուկք ենք տեսնում:

ՏՐԴԱՏ (տարակուսեալ).

Ես ի՞նչ անեմ՝ որ ձեր աչաց զօրութիւնն է խանգարուել,  
 Հաւաստի եմ՝ որ ես խող եմ, ի ներքուստ եմ փոխարկուել.  
 Օր ըստ օրէ կը մեծանամ, վարազ կըլնիմ ամեհի,  
 Երբ կընձանամ՝ չէք մերձիր ինձ առանց զողի և ահի:

Խ Ո Ս Ր Ո Վ Ի Դ Ո Ւ Խ Տ

Տըրդատ՝ դու ինձ այսօր տըւիր՝ որ ուղեցոյց քեզ լինիմ,  
 Աղաչում եմ՝ Արքայ եղբայր՝ սիրով ընկալ աղերսն իմ:

ՏՐԴԱՍ (զուարթերես):

Ո՛չ թէ միայն պիտի այսօր իշխես ինձ և ամենուն,  
Այլ և մինչև վերագառնայ իմ կորուսեալ մարդկութիւն:

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՍ (լաւով):

Թող քո ասածն լինի՝ եղբայր, ձիոյդ վերայ հանդարտ կաց,  
Ուր որ կամիս՝ այն կողմն երթանք, այց ելաննք մեր դաշտաց:

ՏՐԴԱՍ (խոփուեալ):

Խող՝ երբ տեսար ձիոյ վերայ, Խոսրովիզուխտ՝ ըզգաստ լըր.  
Թողէք որ ես վայր իջանեմ, ինձ չէ ախորժ խըրատ ձեր:

ԱՐՏԱՒԱԶԳԻ (արասուօք):

Արբայ, ո՞ղջ լըր. թէ այս ամեն լըսէ Շապուհ՝ ի՞նչ կընի.

ՏՐԴԱՍ (ժպտալով):

Շապուհ կուգայ՝ զես կու բըռնէ, կանէ խորաիկ սեղանի:

ԱՐԴԱՒԱԶԳԻ (կականալը):

Հայք ի՞նչ աննն:

Տ Ր Դ Ա Ս.

Թող որ որդեակս Խոսրովիկս դահ զըննն.

Եւ խողնին պարարտ բառնան այն Շապուհի սեղանէն:

Արգար ինձ պես փիղ չէ՞ր դառել՝ մինչ գնացել էր Պարսկաստան.

Ես խող դառայ գահիս վերայ, ինձ խող շինեց Հայաստան:

Վարդուհի դու էիր պատմում ողիսականն Հովերի,

Ընկերք Յուլեայ չէի՞ն առել ճըշգրիտ պատկեր խողերի.

Երբ ընկել են Պիլգեայ կողմն. իսկ ես կայի յիմում տան,

Որ կանգնել էր իմ պապ Վաղարշ արքայական ապարան:

ՎԱՐԴՈՒՀԻ (ամօթխածութեամբ):

Ասած չէի՞ թէ այն սուտ էր, բանաստեղծէն հընարած:

ՏՐԴԱՍ (վստահարար):

Թէ այն սուտ էր՝ այս ըստոյգ է, որ ես արդ եմ խողացած.

Վարազանման և կընձթակերպ. խօսում եմ թէ խանչուս եմ:

Վ Լ Ա Ի Դ Ի Ա.

Վաղորիկ բարբառդ է մարդկային, և չես երբէք կընձթաղէմ:

ՏՐԴԱՍ (անձնապաստան):

Չեր տեսութիւնն է ձեր պատրիչ. բայց ես իսկ եմ խող դարձած:

Ա Շ Խ Է Ն.

Ես քեզ սիրում եմ Տըրդատ ջան, և չեմ խողի կին եղած:

Տ Ր Դ Ա Ս.

Ես որ առի քեզ յԱլանայ՝ էի չքնաղ պատանի,  
Փեսայութիւն իմ պարծանք էր Աշխադարայ արքայի:

Ա Շ Խ Է Ն.

Պու դարձեալ նոյն ես Տէր Արբայ, փոփոխութիւն ինչ չունիս,  
Վո այդ ծաղկեալ հասակիդ մէջ՝ քընքուշ բան զայլ պատանիս:

Տ Ր Դ Ա Ս.

Կամ թոյլ տըէք ինձ որ զեռամ, կամ տարէք դէպ այն կողմեր,  
Ուր Հուփսիմես է թաք կեցել, ինձ այց չեկաւ այս գիշեր:

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՍ.

Միթէ կամիս աչօք տեսնել աղետալի այն վիճակ.

Որով նորա մարմին տըրվեց անգութ մահուն ի ճարակ:

ՏՐԴԱՍ (զայրագին):

Ես խող եմ խող, պիտի մրանեմ նորա արեան տըղմերն,  
Որ ձեացրել են այն դաշտում կարմիր փըրփրած լըճերն:

Ա Շ Խ Է Ն.

Վո Խոսրովիկ կը զարհուրի թէ տեսնէ այն դիակունք.

ՏՐԴԱՍ (դժկամակեալ):

Թէ դիականց երկիւղ ունի, կափուցանէ՝ թող աչկունք.

Առիւծ՝ կորիւնն իւր զարգացնում է դիականց պատամամբ,

Արծիւ իւր ձագ ճանաչում է յարեգական լոյս յառմամբ.

Երանելի կընի իմ ազգ՝ երբ դա նըստի թագաւոր,

Որ աղջրկանց դիակունք իսկ են արդ զըմա ահաւոր...

Թողէք երթամ.

(Շրջապատն զՏրդատ՝ Մամգոն, Արտաւազդ, Ալուկ, Օտայ, Մանածիհր, Բագարատ և այլ աւագորեարն. յանկարծ Տրդատ մերկէ գտւրն եւ ամենքեան ցրուին):

ՏՐԴԱՍ (ծիծաղելով):

Պուք արդարև հաւատացիք թէ ձեզ պիտի հարկանեմ,

Իմ սիրելի նախարարաց արիւն հեղեալ տեսանեմ.

Իմ Ալեաստեանք՝ մի՛ երկրնչեք, Ալեքսանդր՝ չեմ Փիլիպպեան,  
Ինձ գիներբուք չեն հարբեցրել, այլ Հռիփսիմեայ հոս արեան:

ԱՇԽԵՆ (խեղատեսիլով ընդառաջ սրայն).

Չիս խողխողէ՛ քաջ իմ առիւս, յիմ գլուխ իջցէ քո հարուած:

ՏՐԴԱՏ (մեղհանալով).

Ի՞նչ մեղք ունիս՝ ամբիժ տատարակ, չգիտեմ՝ ի՞նչ է քո յանցուած:

(Սուսերն ձգեց ի բաց).

Արձղակաց սուր անվայել է, թող Արտաւաղդ այն պահէ:

(Ապարոշն աւեալ ի դիտոյն ընկեց).

Բազարատ, առ գլխոյս այս խոյր, թագադիր ես, պահպանէ:

(Իշխանք դարձեալ շրջապատեցին).

ՏՐԴԱՏ:

Արձղակ չունի յարմարութիւն՝ որ սանձ ձիոյն ունենայ:

(Արձակէ զանձն յահեկէ, Օտայ բուռն է հար զանձէն).

ԱՇԽԵՆ:

Չգոյշ կացէք Մամզոն, Ալլուկ, որ ի թամբէն չընկնի նա:

ՏՐԴԱՏ:

Խող չէ կարող նըստիլ ի թամբ, նորա տեղին գետինն է (Սահե):

(Ի գլուխը Տրդատայ ի գետին ամենեքին ցրուեցան, որ ամբակակոխ չլինի).

ԱՇԽԵՆ:

Ինձ օգնեցէք՝ որ վայր իջնեմ, նորան բարձէք ի գետնէ:

(Իգանէ ի ձիոյն օգնութեամբ Օտայի).

ՏՐԴԱՏ (հարձեպ մերկանայ զլողին եւ ձգէ ի բաց).

Օտայ՝ առ այս ե լաւ պահէ, Հռիփսիմէն է շօշափել,

Մատանց տեղերն թէ նըշմարես՝ բեր ե սուր ինձ համբուրել:

Բայց Հռիփսիմէս անիծում է ինձ՝ որ նորա կեանք բարձի:

ՎԱՐԳՈՒՆԻ:

Ո՛չ Տրդատիկս՝ միշտ Հռիփսիմէ՛ ըստատում էր քո դարձի:

Երբ առաջին գօտեմարտէն խոնջած յօգնած դուրս ելար,

Նա խանդակաթ սիրով վառեալ յետ էր կոչում անդադար:

Թէ քեզ փեսայ չէր ընդունում, իւր հարսնածու էր կոչում,

Եւ քո սուսեր՝ ընդ փեսային միացուցիչ ձանաչում:

Եսաց. „Տրդատ՝ քեզ չեմ ստում, ես ինքն եմ քեզ սիրահար,

„Եւ ուրախ եմ՝ որ այս ուղւոյս դու ուղեցոյց երեցար:

„Գու կը տանիս զիս փեսիս մօտ՝ որ քեզ համար անդ ընարեմ,

„Գու զիս կուտաս Հայաստանին՝ որ ձեզ լուսով զարդարեմ:

„Տրդատ՝ արքան յապաղում է հեղումն արեանս կուսական,

„Այնքան ընդ վայր չարչարվում է այս աշխարհ քո սիրական:

„Թէ յեռանդն զիս յուղարկէիր ծոց փեսայիս անմահի,

„Արդ զիս միջնորդ կուեննայիր վասն փրկութեան աշխարհի:

„Արքայ՝ այժմէն եմ տեսանում այն արտասուք ջերմագին,

„Որ հանդերձեալ ես յորդ հեղուլ՝ խառնել յարիւն քո հարսին:

„Հարսին որ զիւր սուրբ ողջակէզ պիտի հանէ ի սեղան,

„Չե՛ս ամբ չքքնաղ իւր փեսայիդ: որպէս նոր զոհ հաշտական:“

ՏՐԴԱՏ (խանդաղատեալ).

Իրան է այդ, սուտ չեն ստում՝ իմ մայրազիր Վարդուհի,

Ինձ հարսնածու էր Հռիփսիմէ կարծում ի ծոց փեսայի:

Գիտէ՞ր որ ես պիտի ողբամ, բայց արտասուքս են ցամքել,

Ե՛յլ հոգւոյս մէջ արեան աղբերք վազ են ըսկսել խոխոջել:

ՎԱՍԻԳՐԻՍ:

Վեզ Հռիփսիմէ վեր էր դատում քան ըղձօմնայ ինքնակալ,

Թէ չունենար անմահ փեսայն՝ քեզ յօժար էր հարսնանալ:

„Գողացել եմ ասաց արիւնս եօթնալեռնեան այն Հռոմէն,

Որ ինձ տուել է կեանք ծնընդեամբ ծիրանակիր իմ առհմէն:“

Վեզ անուանում էր իւր փեսի արժանաւոր ակոյիան,

Այն հըղօրին, այն անմահին՝ որ զազա էր նմա օգնական:

ՏՐԴԱՏ (չարժեալ ի գիտ՝).

Ալազիէ՛ ստոյդ է այս, նա հանեց խի իւր բերնէ:

ՎԱՍԻԳՐԻՍ:

Այ՛՛ Արքայ՝ կամի՛ս՝ հարցուր, թող Վարդուհին վըկայէ:

Այս ես ասաց՝ „Չէք արհամարհ ո՛չ դու, ո՛չ բարձ Տիկնութեան,

„Որ ինձ սիրով է պարգևում իմ սիրելին Հայաստան:“

Տ Բ Դ Ա Տ (գժդ շեւաւ):

Եւ ես նորան մահ նիւթեցի, արիւննարբու դազան չեմ,  
 Այն մարգարտի դին չմնացայ, թողէք խողի պէս խանչեմ.  
 Որք օրիորդ՝ անհայր՝ անմայր՝ ի շայատան հիւր եկած,  
 Յօշ յօշ արած անդամ անդամ ի կեր թըռչնոց կայ ընկած.  
 Ո՛վ շուրիսիմէ, այն փեսայիդ՝ որում եղեր մրտերիմ,  
 Աղաչում եմ քեզ տար նրէր՝ այս խողերնի մարմին իմ:

(Ահաւ պատառուող հանդերձներն՝ մինչև խոյաւ մնայ մերկ):

Տ Բ Դ Ա Տ:

Չէ վայելում մարդկային ինչ խողացելոյն ի ներքուստ.  
 Մի՛ սպասէք որ խողանայոյս ձայն գայ վըկայ ի վերուստ.  
 Այս մերձակայ ճահիճներում շամբուտ տեղեր կան բազում,  
 Թողէք որ անդ կեանքս անցընեմ, ձեզ ի զուր վիշտ չ՛աւելում.  
 Գընա՛ Տըրդատ յեղէգնուտ տիղմ, չունիս մարդկան մէջ տեղի,  
 Քեզ այն կուսի անպարտ արիւն չիտար անդորր մէջ հողի:

(Գնում է չորքոտանի դեռալով, եւ ամենայն բազմութիւնն նորա յետնէն մինչև ի շամբուտս նա մտաւ ի տիղմ, իսկ այլք կան չըջապատ):

Տ Բ Դ Ա Տ:

Աշխէն և դու Խոսրովիդուխտ՝ ըզգուշացէք Խոսրովիս,  
 Որ նա բարուք հեղիկ լինի և չըմանի վարաղիս.  
 Այս բընութիւն՝ շում սովընցայ, ուր երբ նոր աչք բաց արի,  
 Ծանրակուտի ազգապարծանք խոհեմութիւնն զանց արի.  
 Գազանաց մէջ բընակվելով ի մարդազայլ փոխուցայ,  
 Յարդ գայլ էի, այլ արդ դիտեմ՝ որ ի ներքուստ խողացայ:  
 Խող եմ անշուշտ. բայց եղուկ ինձ, որ ազգիս մէջ խողութիւն,  
 Փոխանցական ախտից հանգոյն պիտի սքփուէ խօթութիւն.  
 Բազումք կրնին սոսկ կեղծեօք խող, այլ շատք ըստոյդ խողանան,  
 Ոմանք բարուք աղտեղասէր, ոմանք վարուք զազրական.  
 Ոմանք գորով ճիս և հարուտ կը թաւալին ի տըղմի,  
 Եւ բազումք ևս յաղքատութեան մաշուին ցըղուռն մութ շերմի:  
 Ամեն վիճակ ճահիճ կանեն, որ թէ մէկէն ելանեն,  
 Միւսըն անշուշտ պատրաստի կայ՝ որ անդ խկոյն մրտանեն:

Ս՛անցանեն դարք թաւալքըրը, հընոց փոխան նորք կուգան,  
 Այլ Տըրդատեան այս խողութիւն չի՛նիր որ տան մուացման.  
 Թէ և իմ ազգ առողջանայ, գըտնէ պատկեր մարդկային,  
 Աչք և բերան, ձեռք, ոտք և գըլխ, և ամեն ինչ ըստ կարգին,  
 Սակայն ախանջն կըմնայ խողի՝ որ ձայն խրատուց չըլտէ,  
 Թէ և ինքն իսկ Անահիտ գայ և փըրկական բան ասէ.  
 Թէ նախարար, թէ զօրավար, թէ իշխան, թէ նահապետ,  
 Թէ մըշակ, թէ վաճառական, թէ զեղջուկ, թէ քըրմապետ,  
 Իւրաքանչիւր՝ իւր տըղմի մէջ անդորր հանգիստ կընընջեն,  
 Թէ և յերկնից կայծակ ճայթէ, ախանջք շարժեն կըխանչեն:

(Պատկեցաւ տըղմի մէջ):

Վ Լ Ա Ի Դ Ի Ա Ե Լ Ա Ա Բ Դ Ո Ի Է Ի:

Խոսրովիդուխտ, Տիկինն Աշխէն չէ կարող մեզ ունին դընել,  
 Մենք շուրիսիմեայ բերնէն լըսածն հարկ ենք համրում քեզ պատմել.  
 Ասաց «Ուրախ եմ Ալաւդիէ, ուրախ աիկին Ալարդուհի,  
 „Որ ունկընդիր էք այս վայրկեան կենացս վերջին իմ բանի.  
 „Ո՛չ անագան՝ այլ այսօր իսկ կը հարսնանամ շըզօրին,  
 „Գուք իմ ողջոյն պիտի ամբողջ հասուցանէք Գրիգորին.  
 „Ասէք՝ թէ ես շումէն եկայ՝ որ զքեզ հանեմ մութ գըբէն,  
 „Կարծեմ որ ձայնս լըսում լինի արդէն յիւր Խոր վերապէն.  
 Երդ կարծում ենք՝ որ պիտոյ է՝ ի Խոր վերապ զք զըրկել,  
 Եթէ Գրիգոր կենդանի է, զնա փութապէս աստ բերել.  
 շըրիսիմեանք բըժըլկութիւն էին շնորհում հիւանդաց,  
 Յուսալի է՝ որ Գրիգոր ևս՝ դարման հասցնէ մեր վըշտաց:

ԽՈՍՐՈՎԻՒՈՒՆԻՏ (առ Օտայ):

Օտայ՝ շայրիկ՝ երթ յԱրտաշատ, եթէ Գրիգոր է կենդան,  
 Փութով բեր աստ՝ որ փարատէ՝ մէգ արքայի խօթութեան:



ՊԵՏԱԿԻ ՎԵՐՁԻՆ

(Տեսարանն ցուցանէ զհրապարակի ի դաշտի ի մէջ Վաղաշապատ քաղաքի եւ բլրոյն նահատակութեան Հօփփախմեայ, ի ստորոտս որոյ ժողովեալ կան ամբոս արանց եւ կանանց՝ ճերոց եւ տղայոց, որք տեսեալ թէ Տրդատ Արքայ ելեալ ի տղմոյ եւ խուսեալ ի նոցանէ գնաց անդ, դիմեցին եւ նոքա զհետ նորա, եւ ակնկալեն դարձին Օտայի եւ գարտեան (Արքայն) Գրիգորի: Եւ ահա ելանեն ընդ դուռն քաղաքին այլ ամբոս, ի միջի որոյ երեւին սեւազգեստեալ եւ ի թուխս համակեալ Աշխէն Տիկին, խոսորովորուխս զշխոյն, եւ Արքայորդին խոսրով, եւ Վարդուհի եւ Վրադիա եւ աւագանին եւ բազմաբոլ անկիանց, եւ խառնին ընդ առաջնոց: Եւ ի նմին ժամու Սուրհանդակ ճեղքեալ զխուռն խուժան խաժամուժի զայ յանդիման թագուհոյն եւ ասէ):

ՍՈՒՐՀԱՆԳԱԿ (մեծաձայն)

Աւետիք են, աւետիք են, Գրիգոր կենդան է, և զայ,  
Նորան իւր հետ զրաստուց վերայ բարձեալ բերում է Օտայ:

Ի ՈՍՐՈՎԻԳՈՒՆԻՍ

Սուրհանդակ մէկ լաւ պատմիր մեզ, ի՞նչպէս զրտաք կենդանի:

ՍՈՒՐՀԱՆԳԱԿ

Նոյն խակ օրըն՝ որ Արքային եղաւ ցուցանք նըշանի՝  
Ելանք աստի դէպ Արտաշատ, ուղիղ գնացինք խոր վերապ.  
Մեր գալուստ անդ ժողովորդեան վերայ սրփոնց հող, տաղնապ,  
Հարցնում էին՝ էր էք եկել լսել էին՝ որ Արքայն  
Ընկել է այն անօրինակ ախտ մեկամաղձ խօթութեան:  
Օտայ ասաց՝ թէ եկել ենք՝ որ հանենք խոր վերապէն,  
Եյն Գրիգորին՝ որ տարագրել էին Գայլոյ գետափէն:  
Մոռացվել էր անդ Գրիգորի անուն, ո՞չ զոյր յիշատակ,  
Չարմանք փրովեց ժողովորդեան բազմութեան մէջ բովանդակ.  
Համարեցան թէ և Օտայ է այլոց պէս խելազար,  
Որովհետեւ լուր էր հասել՝ թէ շատք եղան դիւահար:  
Երբ լսեցին թէ Գրիգոր անդ հընգետասան ամ կանխաւ  
Էք տարագրած, կարծում էին որ վաղ է լեալ կենազաւ:  
Խոր վերապ մէկ նեղաբերան ջրհորի պէս խոր գուբ է,  
Վըրէն մէկ մեծ և տափարակ վէմ կափարիչ և խուփ է:

Օտայ խընդրեց բազմութենէն որ այն մեծ սալն քաց մերժեն.  
Հարիւրաւոր մարդիկ հազիւ կարցան շարժել տեղւոյն:  
Օտայ զլուխ իւր վայր կախեց մէջ զնոնափոր մութ խոր գուբին,  
Նորա հետ շատ Արտաշատցիք նոյնպէս զլուխներն կախեցին.  
Չարմանալով ասում էին թէ այն խոր գրի յասակում,  
Զահեբի պէս լոյս է վառված, երկու մարդ են երևում:  
Ես էլ զլուխս վայր կախեցի՝ յայտնի տեսայ՝ որ Գրիգոր,  
Հեան ունէր մէկ երիտասարդ լուսափայլ և թեւաւոր.  
Օտայ կախեց խոր գուբի մէջ երկայն անթափ նոր պարան,  
Սանչեց, Գրիգոր՝ շարժիր պարանս՝ եթէ յիրաւ կաս կենդան:  
Պարանն շարժեց և ձայն լսուեց՝ „Գու ես Օտայ՝ զխոսմ ես,  
Եյս վերապէն ինձ հանելոյ համար հրաման բերել ես“:  
Օտայ կըրկնեց. թէ կարող ես՝ բըռնէ պարանս և դուրս ել.  
Գրիգոր ելաւ, հերքն ըսպիտակ, մարմինն ածխոյ զոյն առել:  
Արտաշատցիք նայում էին վըրէն միայն զարմացած,  
Մէկն էլ չասաց՝ թէ արդեօք սա չուզէ՞ ուտել, չէ՞ քաղցած:  
Օտայ խկոյն տարաւ և լուաց Գրիգորին մէջ բազանեաց.  
Եւ նոյն օրն խակ ճանփայ ընկանք: Հասել էինք արդ այգեաց՝  
Որ ինձ առաջ ուղարկեցին, իրանք նոյնպէս հեռի չեն.  
Գուցէ արդէն հանդարտաբայլ քաղաքադուռն հասել են:

(Խուժանի մէջ մեծ շարժումն և ի հեռուստ լսում է ձայն)

Եկան, եկան Օտայ, Գրիգոր, գրբաստներէն վայր իջան,  
Ճանփայ տըւէք՝ որ անց կենան, ամբոխ ուամկի և խուժան:

(Օտայ եւ Գրիգոր մերձենան սու թագուհին)

ԳՐԻԳՈՐ

Ողջոյն ընդ քեզ՝ Տիկին Հայոց, ողջոյն համբուն հայ ազին,  
Առողջութիւն տալ Արքային՝ կեանքս պահպանեց Միածին:  
Եյլ դուք առաջ ինձ ցուցէք այն նահատակաց սուրբ նըշխարք,  
Որով պիտի լուսաղարդվին Հայաստանեայց լայն աշխարհք:

ԱՇԽԵՆ ՏԻՍԻՆ (թախեալ)

Երթանք այն կողմն՝ ուր կան մարմինք Հրօփփախմեանց կուսանաց,  
Որոց անպարտ մահ բոլորիցս եղև առիթ արտասուաց:  
(երթան և խօսին)

Գ Ր Ի Գ Ո Ր

Բանբիշ՝ դու և քո գերդաստան չէիք հաղորդ այն արեան,  
 Այլ այն մահ էր միակ հրաւէր Հայաստանի փրկութեան:  
 (Յետեալ զՎարդուհի եւ զԵրեմիա՝ որք երթային զհետ Խորովիդիտոյ, ասաց ԳՐԻԳՈՐ).  
 Երկուհարկեր քառասուն ժամն՝ որ Հռիփսիմէ ժամադրեց,  
 Ահա հազիւ թէ լրացել էր, այլ փրկութեան լոյս փայլեց:

Վ Ա Ր Գ Ո Ւ Հ Ի .

Առ քեզ ողջոյն կայ ապրսպրած անմիջապէս հասցընել:

Գ Ր Ի Գ Ո Ր .

Հռիփսիմէի ողջունի ձայնն տասն օր վաղ է ժամանել.  
 Ես իմացայ նորա գալուստն երկայն ճանիփով ի Հռոմէն,  
 Որ ինձ հանէ ազգի համար լոյս ծագել այն մութ դուրէն:  
 Երթանք յառաջ մէկ քանի քայլ անդ ուր նընջէ Հռիփսիմէ,  
 Տրդատ Արքայն ողորմելի վիճակաւ մեզ սպասում է:  
 (Հասանն ի բլուրն, ընդառաջ ելանէ Տրդատ չորքոտանի զեռալով աղմուշադախ յոտից մինչ ի  
 գլուխն, եւ ասէ ի հեռուստ).

ՏՐԴԱՏ (բարձրաձայն).

Նայէ Գրիգոր՝ Հռիփսիմէիս մարմինն ի՞նչպէս կայ ընկած,  
 Բայց այս ցերեկն է մի միայն՝ որ երևում է մեռած.  
 Ես ահա այս ինքն գիշեր բնաւ չեմ աստի հեռացել,  
 Ի՛նչ անցք որ աստ են անցանում՝ ամենն աչօք եմ տեսել:  
 Ամեն գիշեր՝ երբ արեգակն մրտանում է ծովի տակ,  
 Յերկնից իջնում է պատանի՝ լուսացնում դաշտն բովանդակ.  
 Պատանին է արծրաթև՝ շարժապատած լոյս ամպով,  
 Լուսոյ միջին բիւրաւոր գլուխ չքնաղ փայլուն իւր կերպով.  
 Հռիփսիմէ և ընկերակիցք զարդարուած են վեր կենում,  
 Ինչպէս որ ես հարսիս պրճնեալ տեսնել էի ցանկանում.  
 Պայիանէն և իւր ընկերք, և մէկ հիւանդն հընձանէն,  
 Հաւարվում են այս տեղ ուր կայ թագուհոյ պէս Հռիփսիմէն:  
 Այնուհետև մինչև ի լոյս լինում է պար, խընդութիւն,  
 Եւ Հռիփսիմէայ հզօր փեսային անլուելի օրհնութիւն:

Ինձ ասում է միշտ Հռիփսիմէս՝ թէ կանցնի քո խօթութիւն,  
 Խոր վերագի խորշէն կուգայ Հայաստանի փրկութիւն.  
 Այժմ իմացայ՝ Միածին որ յիշում էիր անդադար,  
 Է՛ Հռիփսիմէայ Ամահ փեսայն. բայց դատաւոր է արդար:  
 Ես չուզեցի ականջ դրնել քո փրկարար քարոզին,  
 Եկանջներս եղև խողե, ես հանգոյն մեծ վարազին...  
 Տես՝ Գրիգոր ջան՝ չեն հաւատում որ ներքուստ եմ խողացած,  
 Չեռներս կրճղակ չե՞ն մատանց տեղ միայն երկու պրճեղնած:

ԳՐԻԳՈՐ (արտասուօք).

Ես հաշտեալ եմ՝ Տրդատ Արքայ, ցաւ է ինձ քո խօթութիւն,  
 Իմ Արարչէն Մարդասիրէն քեզ հայցել եմ թողութիւն.  
 Արդ բըժըղեմ ըզքեզ անուամբ Տեառն Յիսուսի Վրիստոսի,  
 Որ քո միտքէն իսպառ հանես՝ թէ առել ես կերպ խողե.  
 Ե՛լ յո՞տն կաց, առողջացի՛ր, օգնի՛ր ազգի շինութեան,  
 Որ աստ պիտի կանգնէ տեղի Հռիփսիմէի հանգրստեան:

ՏՐԴԱՏ (զգաստացեալ յառնէ ամպերով).

Հաւատարիմ ըսպասաւոր Այն՝ որ դեռ չեմ ճանաչում,  
 Այլ ինձ փութով ծանօթացնել՝ Գրիգոր՝ քեզ եմ աղաչում.  
 Յիսուս Վրիստոս Հօր Միածինն՝ որ Հռիփսիմէ է սիրել,  
 Եւ իբր Ամահ Սուրբ Փեսայի իւր հարսնութիւն նախընտրել,  
 Ես ևս պաշտել եմ խոստանում փոխանակ մեր Անահտի,  
 Երբ որ առնես եղբայրդ ծառայ քո Աստուծոյն ճըշմարտի:

ԳՐԻԳՈՐ (կականալիք).

Հրաման տուր նախ Արքայ Հայոց՝ որ քեզ զըրկեմ այն սիրով,  
 Որով օր մի զըրկախառնեալ երդուեալ էինք մեր սրբով.  
 Ես քո հոգին ունիմ լուանալ մաքրիչ ջրով այն բաղանեաց,  
 Որ Հռիփսիմէայ Փեսայն սրբեց մէջ յորդահոս յորձանաց.  
 Վասն այն մարմնոյդ սև տիղմերէն ես բնաւ երբէք չեմ զզվում,  
 Իմ Արքայի անաղտ հոգւոյն այս իմ համբոյր եմ նուիրում.  
 Ես ևս այսպէս էի սեցել տասնևհինգ ամ ի զըբին,  
 Որպէս իմ աղտք սրբեցան ջրով՝ քոյդք ևս այնպէս կը սըրբին:  
 (Գրիկս արկեալ համբուրնն զերեսս).

ՏՐԻԱՏ (որում զգեցուցին շորձս):

Գրիգոր ջան ինձ մէկ բացատրէ՝ ի՞նչպէս մնացիր կենդանի. Եւսքան տարի քաղցած ծարաւ ի խորշս այն Խոր վերապի:

Գ Ր Ի Գ Ո Ր.

Ով որ պահեց Գանիէլին առիւծների զըբումըն, Եւ պահպանեց Յոնանին էլ զըլիին կիտի փորումըն. Եւ ինքն երեք օր ի ժանխս մընաց մահու վիշապի, (Ձեզ կրպատմեմ ժամանակին,) հասաւ ինձ յիմ տագնապի. Բայց քեզ՝ Երբայ՝ հարկաւոր է ջուր կըրկնակի բաղանեաց, Եւ աջ մարմնոյդ, յետոյ հոգւոյդ, ապա բոլոր հայրենեաց:

ՏՐԻԱՏ (համբարէ զաջն սրբոյն Գրիգորի):

Եյն ջուր պիտի՝ դու մեզ շնորհես, Լուսաւորիչ մեր կանպնխս, Քո հոգևոր ճընողութեամբ՝ մեզ միւսանգամ ճընանխս:

Գ Ր Ի Գ Ո Ր (համբարէ դնա):

Ինչ որ բան զայս տանն օր առաջ զուշակել էր Հռիփսիմէն, Եյն մի առ մի պիտի լրանայ՝ ձեզ լոյս ծագէ Միածնէն. Եյն և Սանդուխտ էր զուշակել՝ Թաղէոսի ճըզնութիւն, Եւ Հռիփսիմեայ արիւն ճեպեց Հայաստանի փըրկութիւն:

Վ Ե Ր Զ.

Գրեաց ի Ռեբու ի դատակերան քարաբաշեանց, Երբունին ԳԱՐՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

ի 1874, հոկտեմբերի 1.

ՎՐԻՊԱԿՔ ՅՊԱԳՐՈՒԹԵԱՆ.

ԷԼ ՑՈՒ

ԳՐԵԱԼ Է,

ԸՆԹԵՐՑԻՐ.

3	19	յօգուդ . . . . .	յօգուտ
5	10	յիշատակի, ըստ տենչանաց . . . . .	յիշատակի ըստ տենչանաց,
6	22	պահեալ, 2այնք . . . . .	պահեալ, 2այնք
9	1	Հռիփսիմէ . . . . .	Հռիփսիմէ
—	13	Հայաստանի . . . . .	Հայաստանի
10	14	միթէ քաջութիւնն . . . . .	միթէ մեր քաջութիւնն
16	21	քո կուրութիւնն, ի՞նչ . . . . .	քո կուրութիւնն ի՞նչ
19	17	պաշտամանց . . . . .	պաշտամանց
25	16	էլ զեղեցիկ . . . . .	էր զեղեցիկ
27	19	Այն լաւ լուր չէ՛, . . . . .	Այս լաւ լուր չէ՛.
33	12	մտաջութեան . . . . .	մտաջութեան
35	6	Հըզոն . . . . .	Հըզոն
—	16	ջար, . . . . .	ջան
—	17	վըլտեր, մի՛ աւելցուր. . . . .	վըլտերս մի՛ աւելցուր.
36	21	անուն մէջ . . . . .	անուն մեր մէջ
37	22	հարուածներ . . . . .	հարուածներս
42	22	սըրբով . . . . .	սըրբով
43	23	(պակաս է տող) . . . . .	Ամեն անցնող այն աղբերն կածէ ի ծոց ի զըրպան.
—	—	սոկեայ . . . . .	սոկեայ
44	15	Գըրախտ . . . . .	Գըրախտ
47	22	այց . . . . .	բայց
48	18	ես գըրեմ. . . . .	էլ գըրեմ.
50	4	Սամայէլ . . . . .	Սամայէլ.
52	8	ըսպանեցինք զինքն . . . . .	ըսպանեց ինք զինքն.
—	30	Առաջ թողլով եկան իրանց . . . . .	Առաջ եկան թողլով իրանց
—	31	Մահ իւր սրաբերան մանգաղաւ . . . . .	Մահ սրաբերան իւր մանգաղաւ.
—	—	շահեցնել. . . . .	շահեցնել.
55	25	(պակաս է) . . . . .	Որ Հռոմայ մէջ արտօնութիւնքս հաստատ պահեմ
—	—	—	յաւխտեան.
56	9	Սամայէլ . . . . .	Սամայէլ.
59	13	հարամ . . . . .	հարամ
61	8	կը շօղիլի . . . . .	կը շօղիլի.
—	14	չես յանդըզնի . . . . .	չես յանդըզնիք
62	11	կախուած . . . . .	կախուած.
66	6	Պրոտերիոս . . . . .	Պրոտերիոս (Սամայէլ)
—	21	Ամեն զինուոր չէր . . . . .	Ամեն զինուոր չէր
69	11	Դիոկլետիան, . . . . .	Դիոկլետիան,
—	19	կայազգի . . . . .	Հայազգի
70	23	գըլտոյդ . . . . .	գըլտոյդ
—	29	Իշըխային . . . . .	Իշըխային
71	21	կայսր . . . . .	կայսր
72	28	Հռոմայ միջու մըն . . . . .	Հռոմայ միջու մըն.
77	22	ըտեսք . . . . .	ըտեսք.
78	6	մանամայրըն . . . . .	մանամայրն է,
81	13	թէ կամ ունիք . . . . .	թէ կամք ունիք
86	7	ճածուծ . . . . .	ճածուծ
87	26	արբայ . . . . .	Արբայի
94	13	Հօր աւուրց . . . . .	Հօր աւուրց
—	29	մասնէր եղեալ . . . . .	մասն էր եղեալ
121	3	Ուր երբ . . . . .	Ուր՝ երբ
127	3	Այս՝ քո պարգև . . . . .	Այս՝ քո պարգև
129	20	համբարէլ . . . . .	համբարիլ.
130	7	Միահողցն . . . . .	Միահողցն

1111111111

1111111111

1111111111

180	180	180
179	179	179
178	178	178
177	177	177
176	176	176
175	175	175
174	174	174
173	173	173
172	172	172
171	171	171
170	170	170
169	169	169
168	168	168
167	167	167
166	166	166
165	165	165
164	164	164
163	163	163
162	162	162
161	161	161
160	160	160
159	159	159
158	158	158
157	157	157
156	156	156
155	155	155
154	154	154
153	153	153
152	152	152
151	151	151
150	150	150
149	149	149
148	148	148
147	147	147
146	146	146
145	145	145
144	144	144
143	143	143
142	142	142
141	141	141
140	140	140
139	139	139
138	138	138
137	137	137
136	136	136
135	135	135
134	134	134
133	133	133
132	132	132
131	131	131
130	130	130
129	129	129
128	128	128
127	127	127
126	126	126
125	125	125
124	124	124
123	123	123
122	122	122
121	121	121
120	120	120
119	119	119
118	118	118
117	117	117
116	116	116
115	115	115
114	114	114
113	113	113
112	112	112
111	111	111
110	110	110
109	109	109
108	108	108
107	107	107
106	106	106
105	105	105
104	104	104
103	103	103
102	102	102
101	101	101
100	100	100
99	99	99
98	98	98
97	97	97
96	96	96
95	95	95
94	94	94
93	93	93
92	92	92
91	91	91
90	90	90
89	89	89
88	88	88
87	87	87
86	86	86
85	85	85
84	84	84
83	83	83
82	82	82
81	81	81
80	80	80
79	79	79
78	78	78
77	77	77
76	76	76
75	75	75
74	74	74
73	73	73
72	72	72
71	71	71
70	70	70
69	69	69
68	68	68
67	67	67
66	66	66
65	65	65
64	64	64
63	63	63
62	62	62
61	61	61
60	60	60
59	59	59
58	58	58
57	57	57
56	56	56
55	55	55
54	54	54
53	53	53
52	52	52
51	51	51
50	50	50
49	49	49
48	48	48
47	47	47
46	46	46
45	45	45
44	44	44
43	43	43
42	42	42
41	41	41
40	40	40
39	39	39
38	38	38
37	37	37
36	36	36
35	35	35
34	34	34
33	33	33
32	32	32
31	31	31
30	30	30
29	29	29
28	28	28
27	27	27
26	26	26
25	25	25
24	24	24
23	23	23
22	22	22
21	21	21
20	20	20
19	19	19
18	18	18
17	17	17
16	16	16
15	15	15
14	14	14
13	13	13
12	12	12
11	11	11
10	10	10
9	9	9
8	8	8
7	7	7
6	6	6
5	5	5
4	4	4
3	3	3
2	2	2
1	1	1



ԳԻՆՆ ԱՄԵՆԱԹՆ ՏԵՂ Է ՐՈՒՐԼԻ.

«Ազգային գրադարան»



NL0333657

